

Ա Յ
ՄԱՏԵ
ՆԱԳԻՐ
ՆԵՐ

ԱԳԱԹԱԳԵԼՈՍ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՈՑ



“Աղվետական գրող”
հրատարակչություն

= Երևան
1977

Աշխարհաբար թարգմանություն ներածականով
ու ծանոթություններով

ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԻ

Խմբագրական կոլեգիա՝

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ Ա. Ա., ԱՐՐԱՀԱՄՅԱՆ Ա. Գ., ԱՐԵՎԵԱՏՅԱՆ Ս. Ս.,
ԴԱՎԻԹՅԱՆ Մ. Հ., ԽԱՉԻԿՅԱՆ Լ. Ս., ՄԻՐԻՃԱՆՅԱՆ Լ. Վ., ՄԿՐՏՉՅԱՆ
Վ. Ա., ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վ. Ս.

Խմբագիրներ՝ Արքահամյան Ա. Ա.

Առաջնելյան Վ. Գ.

ԵՊՀ Գրադարան



SU0157187

Ա 70303 (10x7) .07. 75 «Ճ»
701 (01) 75

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՆԵՐ

Ազաթանգեղոսի Հայոց պատմությունը և դարի հայ մատևագրության դասական երկերից է, որը զեռ միջին դարերում համաշխարհային տարածում է ունեցել: Մինչև օրս հայտնի է մոտ երկու տասնյակ խմբագրություն, (որոնցից մեկը և Հիմնականը ներկա թարդմանության դրամարդագիրն է) միջնադարի ինք լեզուներով՝ հայերեն, հունարեն, արարերեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն, եթովպերեն և ուսուլուներեն: Հայ դասական մատևագրության այս գոհարը սեկն է անգնահատելի արժեքներից, որ հայր մուծել է համաշխարհային մշակույթի զանձարանը, իսկ նրան առնչվող խնդիրները բանասիրության ամենաբարդ հարցերից են¹:

Հնագոյն պատմիչը, որն ակնարկում է նրա գոյության մասին՝ Փավրատու Բուգանգն է, նա իր սկասամության մեջ հայտնում է, որ Գրիգոր Լուսավորի և Տրդատ թագավորի գործունեության պատմությունը իրենից առաջ արդեն զրված է²:

Ասկայն առաօին հայ պատմիչը, որ հստակ կերպով խոսում է Ազաթանգեղոսի պատմության մասին՝ Պագար Փարուցիցին է: Հայ պատմագրության այս անդրանիկ երկի մասին նա գրում է. «Հայոց պատմության առաջին գրքերի սկիզբը զնենով ստույգ կերպով պատմեց երանելի այր Ազաթանգեղուար՝ Սասանի որդի լոնակալ Ստարացի Արտաշիրի կողմից Արտեանի սպանությունից սկսած մինչև Հայոց աշխարհի կոռապաշտության տգիտությունից [Տրամարումը] և ձմերիտ աստվածապահաշտության ընդունումը սուրբ հահատակ Գրիգորիոսի ձեռքով, որի անունով էլ գիրքը կոչում են Գրիգորիսի»³:

Տես՝ Հ. Անասյան, Հայկական մատևագիտություն, Ա., Երևան, 1959, էջ 151—213:

2 Փաւասառի Բուգանգացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 17:

3 Պագարայ Փարուցւոյ Պատմութիւն Հայոց, 1904, գլ. Ա:

Մովսես Խորենացին ես քաջ ծանօթ և Ազաթանգեղոսի պատմությանը, բնդ որում պատմահայրը տեսել է, ոչ միայն աշխատ մեր ձեռքի տակ եղած խմբագրությունը, այլև այն կորած խմբագրությունը, որի սոսկ հունարին և արարերին թարգմանություններին են մեզ հասել: Ազաթանգեղոսի պատմությունից իր բաղած հատվածների վերջում Խորենացին նշում է՝ «որպէս ուսուցանէ քեզ Ազաթանգեղոս»¹:

Ազաթանգեղոսի պատմությունն իր ժամանակին այնքան կարելոր նշանակություն ունեցող երկասիրություն եղել, որ օտարների հետ գավանաբանական վեճերի ժամանակ հաւերն այն վկայակոչել էն: Աերեսով պատմության մեջ հիշվում է, որ Նման մի վեճի ժամանակ Ը, դարի սկզբին հայները «ունեին պատրաստական անդ բնդ իսթանս պղիր սրբոյն Գրիգորի»²: Ըստ Մովսես Կաղանկատվացոյ այս մատանը Հայ նախարարները ձեստեղ բերեցին պարսից սրբունիքում արթավից արթավից անդի ունեցած մի վեճի ժամանակ: Երբ կասկածի տակ էր առնվում, թե արդյոք Հայ նախարարները ունե՞ն բարձի ու պատվի ընդունված կարգ³:

Այս մատյանը հիշված է նաև ըոլոր հետագա Հայ պատմիների կողմից: Միայն այլես մոռացվել էր Գրիգորիսի զիրք անունը և պարզաբես կոչվում էր Պատմություն Ազաթանգեղոսի: Հովհաննես Դրսախանակերտցին նրա հեղինակին կոչում է «աջոպակ պատմագիրն Ազաթանգեղոս»⁴, իսկ Կիրակոս Գանձակեցին ստուգաբանում հեղինակի անունը իր հունարեն իմաստով՝ «Ազաթանգեղոս որ թարգմանի բարի հրեշտակի»:

Ազաթանգեղոսի պատմության տվյալները վերաբերում են դեպքերով հարուստ մի ժամանակաշրջանի:

Հայոց թագավորությունը պայքար էր մզում հանուն իր Հոյրության պահպանման և ներքին քաղաքական իրազրության կայունացման: Եթե Ա և Յ դարերում Հայաստանում թագավորում էին Արշակունի զահակալներ, որոնք այս կամ այն Պարթև Արշակունի արքանի աղջականն էին, ապա Ի դարի վերջում Վաղարշակ Երկրորդ (186—193) թագավորից բակըսակ արքեն ժառանգական դարձավ Հայ Արշակունիների իշխանությունը: Գ դարում Հայոց թագավորությունը Հոռմի հետ դաշնակյած կատաղի

1 Մովսեսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, 1913, զիրք Բ, գ:

2 Սերես Սպիտակոսի պատմութիւն, Երևան, 1939, էջ 124:

3 Մովսեսի Կաղանկատուացոյ Պատմութիւն, 1860, էջ 82:

4 Պատմութիւն Ցովհաննու կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867, գլ. Ը էջ 49:

5 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 6:

պալքար կը մղում 226 թ. Պարսկաստանում Արշակունիներին տաղալած և իշխանության գլուխ անցած Սասանյանների դեմ, որոնք ձգտում էին իրենց ազդեցությանը հնթարկել հարեան պետությունները:

Ազգաբանգեղոսի Պատմությունն սկսում է Հնաց Պարյին Արշակունիների անկման ու Սասանյանների իշխանության գլուխ անցնելու գեպրերի շարադրանքով: Հայ Արշակունիներից Խոսրով արքան իր պարագած առջմակիցների վրեմբ լուծելու համար հարձակվում է Սասանյան իրանի վրա և ասդատակ սփռում: Զիարողանալով զենքով դիմադրել Հայոց արքային՝ Սասանյան Արտաշիրը Հայաստան է ուղարկում Անակ Պարթիին, որը դավադրաբար սպանում է Խոսրովին: Հայերը կոտորում են Անակի տոհմը, սակայն նրա որդուն՝ մասուկ Գրիգորին որոշ մարդիկ փախցնում են Կեսարիա: Պարսից թագավորը առիթից օգտվեռ, հարձակվում է Հայաստանի վրա, նվաճում Երկիրը, իսկ զահաժառասդ Տրդատը Հռովմում հրաշապիտ իր քաջադրություններով և միսամարտի է զորս դալիս գոթերի թագավորի դնմ, վրեկելով Դիոկեսահանոս կայորին: Վերջապես Հայոց գահածառանզը Հռովմի օգնությամբ պարսիկներին արտաքսում է Հայաստանից և վերականգնում Հայոց թագավորությունը:

Այնքան ակներեւ է վիպական տարրի օգտագործումը՝ Ազգաթանգելոսի պատմության աշարակունում (ինչպես նաև մասամբ այլ բաժիններում), որ Մ. Արեգանը որոշ հատվածներ նորից հարածոյի վերածելով փորձում է մի նմուշ տալ այն մեծ վեպից, որը կոչվում է «Պարսից պատերազմ»: Այս վեպի հատվածները մնում են նաև Փավստոս Բուզանդի և Սեբեսի մոտ, ընդ որում Ազգաբանգեղոսի ու Բուզանդի մոտ գտնում ենք վեպի ամբողջությունը, սակայն որիս զույգով և ոչ այն կարգով, որ պատմվել է ժողովրդի մոտ: Հետաքրքրական է Տրդատ թագավորի քաջությունը գովերդող հասկածը.

«Ի՞րեւ զակն Տրդատ

Որ սիդալովն աւերեաց զթումբս զետոց

Եւ ցամաքեցուց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց

Հաջորդող հատվածներում Ազգաթանգեղոսի Պահամությունը տալիս է Գրիգորի նահատակության, Հոփիսիմյան կույսերի նահատակության և վերջապես Հայոց աշխարհի դարձի պատմության հրաշապատում շարադրանքը:

Կեսարիայում բրիսառնեական ուզով դաստիարակված Գրիգորը գալով Հայաստան ծառայության է մասում Տրդատ թագավորի արքունիքը, սակայն երբ արքան իմանում է, որ նա չի երկրպագում հեթանոս աստվածներին, սարսափելի տանջանքներ է տալիս, որոնք մի առ մի նկարագրված են բնագրում: Վերջապես չկարողանալով բնկճել Գրիգորին, արքան հրամակում է նետել նրան Արտաշատի Խոր Վիրապ կոչված անվոր բանտը:

Այդ ժամանակ Դիոկեսահանոս կայսեր Հայածանքներից Հայաստան են

փախչում մի խումբ քրիստոնյա կույսեր՝ Գայանեի գլխավորությամբ։ Նրանք հաստատվում են Վաղարշապատ մայրաքաղաքի մոտ զանվոր մի հնձանում, որը դառնում է Նրանց մենաստանը։ Կույսերը ապակե ուրունքներ են պատրաստում և դրանով ձարում իրենց ապրուստը։ Նրանց մեջ էր իշխանական ընտանիքից սերած գեղանի Հոփիսիմեն, որին Տրդատ թագավորը ուղում է կնության առնել։ Հոփիսիմեն մերժում է, սակայն թագավորը նրան բռնի բերում է պայտա։ Զկամենալով ենթարկվել արքայի ցանկությանը, Հոփիսիմեն կույսը մենամարտում և ապա փախչում է պարատից Հետապնդողները նահատակում են նրան իր ընկերունիների հետ։ Նահատակվում են նաև Գայանեն և մյուս կույսերը։

Կույսերի նահատակությունից հետո Տրդատը դիմա։ Այդա լիովացած ընկնում է անապոնները և եղեղնուանները։ Այդ ժամանակ թագավորի քրոջ՝ Խոսրովիդուխտին երազի միջոցով հաշտնվում է, որ միայն Խոր Վիրապում գտնվող Գրիգորը կարող է բուժել թագավորին։ Օտա նախարարը դուրս է բերում Գրիգորին, որը բուժում է դիմա։ Արքային։

Գրիգորը տեսնում է մի տեսիք։ Նրան հայտնվում է, թե Վաղարշապատում պետք է եկեղեցիներ կառուցվին։ Տեսիքի համաձայն Միաւճի իշած վայրում կառուցվում է մայր տաճարը (Էջմիածին), Հոփիսիմենի նահատակված վայրում՝ Հոփիսիմենի տաճարը։ Գայանեի նահատակված վայրում՝ նրա անվան տաճարը, իսկ հնձանի տեղում՝ մի ուրիշ տաճար (Շողակաթ)։

Գրիգորը սկսում է հեթանոսական մեհյանները քանդել։ Նախ Վաղարշապատից Արտաշատ ճանապարհի վրա քանդում է Տիր աստծու տաճարի բագինը, իսկ Արտաշատում՝ Անահիտի տաճարը։ Նա դիմում է Հայաստանի արևմտյան գավառները, որ կենարունացած կին շատ տաճարներ՝ Դարշանադյաց գավառի Թորդան գլուղում՝ Բարշամինա տաճարը։ Անի ավանում՝ Արամագդի տաճարը, Երևան ավանում՝ Անահիտական մեհյանը, Թիլ ավանում Նանեի տաճարը և Բագայառինում՝ Միհրի մեհյանը։ Այս բոլորի բագինները քանդելով՝ տաճարները իրենց կալվածքներով ու զանձերով Գրիգորը արամադրում էր եկեղեցուն։

Տրդատ թագավորը Գրիգորին, տասնվեց մեծագույն նախարարների ընկերակցությամբ հանդիսավոր կերպով ուղարկում է Կեսարիա ձեռնապրելու։ Նրա հետ էին Հայաստանի բղեշխները, թաղաղիր ասպեկտ, Մամի կոնյան սպարապետ, Ռշաունյաց, Մոկաց, Արծրունյաց և այլ իշխաններ։ Ղեռնդիոս հայրապետի կողմից ձեռնադրվելուց հետո Գրիգոր կուսափորից վերադառնում է Հայաստան և շարունակում իր գործունեությունը։ Տարոնում, ուր կային Վահագնի, Անահիտի և Աստուրիի սրբավայրերը, նաքանդում է բագինները, բռնագրավելով բոլոր մեհյանները իրենց կալվածքներով ու զանձերով։ Գրիգորն սկսեց կաղմակերպել հայ եկեղեցին, պատրաստելով եկեղեցականներ և ստեղծելով Լսդիսկուպոսական վիճակներ։

Այդ ժամանակ Տրդատ թագավորը լսում է Կոստանդիանոս կայսեր

քրիստոնեությունն ընդունելու մասին և մեծ շքախմբով զնում է նրա մոտ այցելության։ Նրա հետ կին բացի Դրիգոր կաթողիկոսից Հայոց թագավորության յորս բղեշխները, բազում նախարարներ, յոթանասուն հաղար ընտիր գործի հետ միասին։

Դրանից հետո տեսի և ունենում առաջին աիկենական ժողովը Նիկայում և Հայաստանից մասնակցում է Արիստակեսը, որն արդեն դարձել է Հայոց կաթողիկոս։

Դրիգորը իր կյանքի վերջին օրերը անց է կացնում մի մենավոր քարայրում (Մանյա այրք), և այնտեղ էլ ափանդում է Հոգին։

Դրիգոր կուսափր;ի այս հրաշապատում զործունեության պատմությունը հավանարար ունեցել է մի զրավոր աղբյուր (Կամ աղբյուրներ)։ Հենց Աղաթանգեղոսի պատմության առաջարանում նշված է, որ Եղել է մի նախնական գրվածք (Դ գարից), որը պատմել է Գրիգորի զործունեության և ընդհանրապես Հայոց դարձի մասին։

Խնդնուրույն հատված է Հոդիֆսիմյանց կույսերի նահատակությունը, ուր վկայարանական աարրը բավական ուժեղ է։ Խնդնուրույն է նաև Գրիգորի տեսիլքը, որը գեղարվեստական շարադրանքի մի գեղեցիկ նմուշ է։

Ազաթանգեղոսի պատմության հեղինակը մԼծ շափով օգտագործել է Աւտվածաշունչը, որից բազում վկայություններ կան։ Նա բազմաթիվ բառացի հատվածներ է քաղել նաև Կորյունի «Մաշտոցի վարքից»։

Ազաթանգեղոսի պատմության մեջ բոլորովին ինքնուրույն գիրք է Վարդապետությունը¹, որը զավանարանական, փիլիսոփայական գրականության մի արժեքավոր հուշարձան է։ Ակսում է արարագործության պատմությամբ։ Համնելով ապա հրեա մարդարեների ժամանակաշրջանը և վերջապես պատմում է Քրիստոսի հայտնությունը և առայլաների գործունեությունը։ Այստեղ կոչ է արվում հայ ժողովրդին ընդունելու ավետարանի բարողը, հիշելով Հոդիֆսիմյան կույսերին։

Ազաթանգեղոսի պատմության գիտական ուսումնասիրությունը սկիզբ առավ գեռ ԺՅ դարում, երբ լույս տեսան նրա հունարեն թարդմանությունը և լատիներեն համառոտ խմբագրությունը Հ. Ստիլտինգի ձեռովով՝ լատին և Վարք սրբոց շարքում²։ Վերջինս կասկածի տակ է առնում Աղաթան-

¹ The Teaching of Saint Gregory, transl. and comm. by R. W. Thomson, Cambridge Mass., 1970

² Acta Sanctorum, Septembris, t. VIII, Antverpiae, 1762, p. 320—402.

գեղոսի պատմության փաստերի հավաստիությունը, քանի որ այդ դեպքերից շատերի մասին հույսն և լատին մատենադիրները նման վկայություններ չունեն, իսկ մի մասն էլ ուղղակի անորամարանական է համարում:

Հ. Սույլտինգին հականառուց Մ. Զամշյանը¹ ժխտելով նրա վարկածները:

Ազաթանգեղոսի հայկական բնագրի առաջին խնամքով կատարված հրատարակությունը Վենետիկում (1835) ինչպես նաև հայադիտության մեջ քննական մտքի ներախտահանցումը խթան հանդիսացան այս երկի մասին հատուկ ուսումնասիրությունների երեան գալուն:

Դեռևս 1867 թվականին Ազաթանգեղոսը ֆրանսերենի թարգմանող Վ. Լանգուան² այն կարծիքը հայտնեց, որ հեղինակը չեր կարող է դարձում ապրած լինել և ել աշխարհիկ էր, այս և դարի եկեղեցական:

Ազաթանգեղագիտության մեջ լուրջ քայլ էր Ա. Ֆուտուրի պատմության մասին ընծայումը: Նա աներկրայորեն հայերեն Ազաթանգեղոսը համարում է բնագիր, իսկ հունարենը՝ թարգմանությունը Հունարեն Ազաթանգեղոսի սկզբնական այն հատվածը (Արտաշիրի ապստամբության մասին), որը հայերենի մեջ չկա, նա համարում է օտարամուտ տարր: Քանի որ նրա հեղինակը հակված է Սասանյանների կողմը, հակառակ հայերեն Ազաթանգեղոսի արամագրության Գուաշմիդի համար պարզ է, որ այս երկի հեղինակը և դարի հայ եկեղեցական է: Ազաթանգեղոսի մատյանում գոյություն ունեցող որոշ կրկնություններ և նույն դեպքի տարբեր նկարագրություններ նրան առիթ են տվել ենթագրելու, որ մատենագիրը տարբեր աղյուրներ և օգաագործելու:

Հունարեն Ազաթանգեղոսի, ինչպես նաև մ դ դարում կատարված հունարեն մետափրաստյան խմբագրության քննական հրատարակությունը Պ դր կագարդի ձեռքով և նրա բնագրին առընթեր գրած հավելվածը կարելոր քայլ էր Ազաթանգեղոսի ուսումնասիրման համար: Ազաթանգեղագիտության անցած ուղին ամփոփեց Բ. Սարգսյանը իր ծավալուն ուսումնասիրության մեջ³:

Ազաթանգեղոսի ուսումնասիրման համար կարելոր է Գեորգ Ասորի եպիսկոպոսի նամակում տրված Գրիգոր Լուսավորչի հակիրճ կենսագրությունը: Հ. Տաշյանը գտնում է, որ Գեորգ Ասորու թղթի և Սարգսյանը հայերեն բնագրի ու Հունարեն թարգմանության միջև տարբերություններ կան⁴: Աղյուրների հարցում Հ. Տաշյանը համամիտ է այն կարծիքին, որ

1. Մ. Զամշյան, Պատմութիւն Հայոց. Ա. Վենետիկ, 1784, էջ 668—679.

2. V. Langlois, Collection des histo:iens anciens et modernes de l'Arménie, t. 1, Paris, p. 100—101.

3. A. V. Gutschmid, Agathangelos, Zeit. d. Deutsch. Morg. Ges., Bd. XXXI, 1877, S. 1—60.

4. Բ. Սարգսյան, Ազաթանգեղոս և իւր բաղմաղարեան գաղտնիքն, Վենետիկ, 1890:

5. Հ. Տաշյան, էջ 86—87:

Նդաթանգեղոսի հայ իմբազիրն է Կորյունից քաղել և ոչ թե հակառակը Այս խմբագիրը բանափակություններ է կատարել նաև այլ աղբյուրներից:

Ազաթանգեղոսի պարկած գաղաքածության մեջ վեճերի առարկա՝ զարձած հարցերից է Աղաթանգեղոսի աղերսը Կորյունի. Փավստոսի, Խորենացու և ալլոց հետո Գ. Տէր. Մկրտչյանը գտնում է, որ Կորյունն է Ազաթանգեղոսի պատմության հեղինակը: Կորյունին նվիրված իր ուսումնասիրության մեջ Նորայր Բյուղանդացին հայարարում է, որ Դ դարում կրված Ազաթանգեղոսի կիրքը հացորդ դարում Կորյունի ձեռքով խարգմանվել է: Դայերենի¹:

Հակառակ Ազաթանգեղոսի պատմության մասին հայտնված բազմապիսի ու հակասական կարծիքների, այսուհետեւ բոլորը հետևյալ բնդուանուր եզրակացության են հանգում.

Հինգերորդ դարի կեսերին նախորդ դարից գոյության ունեցող պատմական և վկայարանական աղբյուրներից հայ եկեղեցականի ձեռքով խմբագրվէ և Գրիգորիսի գիրքը (Ազաթանգեղոսի Պատմությունը), որը տևել ու նկարագրել են Ղաղար Փարսկեցին և որիշներ: Ազաթանգեղոսի Պատմությունը թեև իր է վկայարանական տարրերով, այնուամենայնիվ նրա պատմական տեղեկություններից շատերը հավաստի են ու արժեքավոր:

Ազաթանգեղոսի Պատմության հեղինակի ինքնության հարցում չկա որոշակի պատկերացում: Տարբեր բանասերներ առաջարկել են Մեսրոպ Մաշտոցին կամ Կորյունին և կամ ընդհանրապէս ենթադրել են, որ այդ հեղինակը շատ մերձավոր անձնափորություն է եղել Կորյունին և պատկանել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտների շրջանակին:

Ազաթանգեղոսի Պատմությունը հայ պատմագրության անդրանիկ երեսն է: Կորյունի «Մաշտոցի Վարքը» թեպետ և ստուգապատում է, այսուհետեւ պատմական ժամանակաշրջան ընդդրկող երես չէ: Ազաթանգեղոսի Պատմության մեջ տրված է Հայաստանի Արշակունյաց թագավորության մի որոշակի ժամանակաշրջան: Կորյունը և մանավանդ Ազաթանգեղոսի հեղինակը Փավստոս Բռնանդի հետ միասին հայ պատմագրության դարձացման մի ուրույն աստիճան են ներկայացնում: Դրա հիման վրա զարգացավ հայ պատմագրությունը, որը հենց վաղ միջնադարում հասավ բարձր աստիճանի:

Ազաթանգեղոսի տարածման հարցում վճռական նշանակություն ունեցաւ նրա հունարենի խարգմանվելը, քանի որ, ինչպես արդեն հանրահայտ

¹ Կոռին վարդապետ և Նորին թարգմանութիւնք. գրեաց Նորայր Բիշ-պահացի, Տէղիս, 1900, էջ 14:

ժամատ է, Հունարեն խմբագրությունից են առաջացել այլալեզու գրեթե բոլոր խմբագրությունները:

Երկար ժամանակ Հունարեն Ազաթանգեղոսի միակ ձեռադիրը Համարվում էր Ֆլորենցիայի Լավրենտյան մատենադարասահ ԺԲ դարի գրչագիւր որի հիման վրա էր առաջին հրատարակությունը կատարել Հ. Մտիւթինը, իսկ Պ. Պը Լազարդը տվել էր բնական հրատարակությունը: Այս հրատարակությունից հետո, մանավանդ վերըն տասնամյակներում, պարզվեց, որ լավլրենտյան օրինակից բացի կան հունարեն Ազաթանգեղոսի բաղմաթիվ այլ գրչագրեր, թեև ցայսօր նա միակ ամբողջականն է: Ժ. Գարիտի և այլոց շանքերի շնորհիվ հայտնի գարձավ, որ Վատիկանում, Փարիզում և այլուր գոյություն ունեն հունարեն Ազաթանգեղոսի մի բանի ու ամբողջական գրչագիր օրինակներ, որոնց հնագույնը հասնում է Թ դար:

Տասներորդ դարում, երբ հունարեն Ազաթանգեղոսի հայտնի Արտաշիրի աստամբության հատվածը, արզեն կցված էր նրա սկզբին, Աիմեռն Սետափրաստեսը ամփոփեց այն և մտցրեց իր կազմած Հունարեն վարք սրբոցի մեջ:

Հունարեն Ազաթանգեղոսը և նրա մետափրաստյան խմբագրությունը տարածվել են միջնադարյան քրիստոնյա աշխարհում: Հունարեն Ազաթանգեղոսից է, կատարված լատիներեն համառոտ խմբագրությունը, որի ձեռագիրը դտնվում է Հռոմի Բարբերինի մատենադարանում: Հունարեն Ազաթանգեղոսի համաստումն է նաև վերջերս հայտնաբերված հունարեն համառոտ Վարքը, որ գտնվում է Սինայի Ա. Կատարինե վանքի Ժ—ԺԱ դարերի մի ձեռագրում¹:

Սետափրաստյան խմբագրությունն ունեցել է վրացերեն և սլավոներեն թարգմանություններ: Վրացերեն խմբագրությունը² 1081 թ. Կ. Պոլսում թեոփիլոս կրօնավորի ձեռքով կատարված ազատ թարգմանություն է: Կա նաև վրացերեն մի պատառիկ, որն ուղղակի հայերեն Ազաթանգեղոսի թարգմանությունն է, համարվում: Մլալոնական խմբագրությունները դեռ հատուկ ուսումնասիրման կարիք են զգում:

Սակայն հունարեն Ազաթանգեղոսը ամենից ավելի արարերեն թարգմանություններ է, ունեցել, որոնցից է, հենց վերջերս հրատարակված ամբողջական թարգմանությունը: Ազաթանգեղոսի պատմոթյան արարերեն խմբագրությունը գտնվում է Սինայի Ա. Կատարինե վանքի մի ձեռագրում, որն ընդօրինակված է, 1328—29 թվականին: Արարերեն Ազաթան-

¹ Վերջերս յույս տեսավ նոր քննական հրատարակությունը La version grecque ancienne du livre arméni en d'Agathange, édition critique par Guy Lafontaine, Louvain-la- Neuve, 1973.

² G. Lafontaine, Une Vie grecque abrégée de St. Grégoire L'Illuminateur, Le Muscon, LXXXVI, 1—2, 1973

³ Vita Sancti Gregorii Parthianensis, ed. L. Melikset Bek, Тbilisi, 1920.

գեղոսը թարգմանված է Հունարենից, սակայն մի այնպիսի ձևուազրից, որը շառ ավելի հարազատ է Եղել հայկական բնագրին, քան մինչեւ այժմ հայտնի ձեռագրերը ևսո ժ. Գարիբի զպտերեն միջանկյալ օրինակից է թարգմանված Գրիգոր Լուսավորչի արարերեն համառոտ վարքը¹, որ նա հայտնաբերել և լույս է ընծալել բնագրով ու լատիներեն թարգմանությամբ:

Իին արարերեն խմբագրությունները հայերեն Ազաթանդեղոսին առընչվում են հունարենի միջոցով, ապա իրենց հերթին իմք են դարձն եղովագերեն թարգմանության համար Մեր զարի սկզբին կիսարդում (Պորառվարիա) լույս տեսավ Ազաթանգեղոսի եթովագերեն համառոտ պատմությունը²: Հրատարակիլ Հ. Է. Պերեցը գտնում է, որ այս համառոտ խմբագրությունը կատարված է Եղիպատոսի վանքերից մեկում, սակայն զեռ որոշակի չէ, թե արարերեն ո՞ր խմբագրությունից է թարգմանված կամ համառոտված:

Վերոհիշյալ բորոր խմբագրությունները, որոնք անմիշականորեն վերաբերում են Ազաթանգեղոսի պատմության մեղ հասած հայերեն բնագրին՝ խմբագրությունների մի խումբ են կազմում:

Սակայն կա խմբագրությունների մեկ այլ խումբ, որի հայերեն բընագիրը զեռ չի հայտնարերված, բայց ձեռքի տակ ունենք հունարեն և արարերեն չորս թարգմանություններ: Բանասիրության մեջ սրանք ընդհանուր անունով, պայմանականորեն Վարք են կոչվում:

Ազաթանգեղոսի պատմության խմբագրությունների այն խումբը, որին Վարք անունն է, տրվում, մինչև մեր դարի սկիզբը բոլորովին հայանի չի Եղել բանասիրության մեջ:

Ազաթանգեղագիտության մեջ արմատական հեղաշրջում էր 1902 թվականին Ն. Մատի ձեռքով արարերեն խմբագրության հայտնարերումը³: Մրա ուսումնասիրությունն ու հրապարակումը պարզեց, որ մեղ հասած

¹ G. Garitte. Une Viei arabe de St. Grégoire d'Arménie. Le Muséon, LXV, 1-2, 1952.

² Vida de S. Gregorio patriarca da Arménia. Boletim da Sociedade de geografia de Lisboa, t. XIX, 1901.

³ Ն. Մատի հայտնարերած ձեռագիրը սկզբից պակաս էցեր ուներ Վերցերս հայտնարերվեց այս խմբագրության ամբողջական ձեռագիրը և լույս ընծալվեց սկզբնական հատվածը (Ա. Տեր-Ղետնդյան, Ազաթանգեղոսի արարական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը, Պատմարանասիրական Հանդես, 1, 1973):

Հայերեն Ագաթանգեղոսը միակ հայալեզու բնագիրը չափած լիներ. որ գոյություն էր ունեցել վաղ միջնադարում Հայոց դարձի նյութի շուրջը Ն. Մառը իրավագիրեն ենթադրեց. որ իր հայտնարերած արաբերեն խմբագրությունը պետք է թարգմանված լիներ հունարենից, որն իր հերթին պիտի ունենար հայերեն բնագիր օրինակ:

Ն. Մառի Ենթադրությունը հաստատվեց. երբ լեզվիցի հայության ու ու քրիստոնյա արևելքի զիտակ ժ. Գարիտը հրատարակեց իր հայտնարերած հունարեն նոր խմբագրությունը¹. Համեմատելով այս խմբագրությունը արաբերեն վերոհիշյալ խմբագրության հետ՝ ժ. Գարիտը այն եզրակացության հանգեց. որ արաբերենը իր որոշ մասերում հունարենի թարգմանությունն է: Այս երկու խմբագրությունները ժ. Գարիտի և ասլա Ն. Ակինյանի կողմից մկրտվեցին Վարք անվանը: Հունարեն նորահայտ վարդի հատուկ անունների. բնականության ու ոճի առանձնահատկությունները ժ. Գարիտի կողմից մկրտվեցին Վարք անվանը: Հունարեն բնագրից պետք է բարդմանված լինի:

1961 թվին Մակեղոնիայում (Ճարավսլավիա) Օքրիդայի ազգային թանգարանում հայտնարերից Ագաթանգեղոսի մի նոր հունարեն խմբագրություն: Այս բնագիրը իր շարադրանքով հարում է Ագաթանգեղոսի վարք կրոված խմբագրությունների դասին. որի հետեւնքով էլ բանասիրության մեջ Օքրիդայի վարք անոնն է ստացել:

Օքրիդայի վարքի սկզբնական մասը լրիվ համապատասխանում է հայուն Ակաթանգեղոսին (մինչև պարբ. 76) գրչական չնշին տարբերություններով: Դրանից հետո արդեն ինքնուրուցն է և այսպես արունակվում է մինչև վերջ: Անա այս մասը ժ. Գարիտը ուսումնասիրության հանդերձ հրատարակել է 1965 թվին²:

Օքրիդայի վարքի ազրյուրը դժվար է որոշել. քանզի տաշտմ մենք չունենք նրա նախատիպը: Թեև սկզբնական մասում հունարեն Ագաթանգեղոսի հետ նույնանում է, սակայն սկսելով այն սեղից, որ նա ինքնուրուցն է, հունարեն Ագաթանգեղոսի հետ շատ քիչ նմանություն ունի: Իսկ հայերենի հետ նմանության շատ կետեր կան: Վերջինիս հետ կապի նշաններից է նաև վարդապետությունից մի փոքրիկ հատվածի պահպանված լինելը այս նոր վարքում:

Օքրիդայի վարքի հետ սկսած կապ ունի նաև Գեորգ Ասորու 714 թվականին գրած նամակը: Ըստ ժ. Գարիտի սա է այն խմբագրությունը, որից ասորի մատենագիրը իր տեղեկություններն է քաղել և նույնիսկ որոշ տողեր ընդորինակել:

Ագաթանգեղագիտության մեջ մի նոր հայտնագործություն է վերջերս

¹ G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Vatican, 1946.

² G. Garitte, La Vie grecque inédite de St. Grégoire d'Armenie, Analecta Bollandiana, t. 83, f. 3--4, 1965.

յույս տեսած արարերեն «Հայոց կաթողիկոս սուրբ Գրիգորի վարքը»։ որը հրատարակել է Մ. Վան Էսրութը։

Սա գտնվում է Հակոբիկ ասորիների երրուսաղեմի ս. Մարկոս վանքի սի ձեռագրում։ զրգած ասորատառ արարերեն (Քարշունի)։ Նորահայտ արարերեն բնագիրը թարգմանված է ասորիներից 1732 թվին։ Բարերախտարար ձեռագրում նշված է, որ թարգմանված է 1178 թվականը կրող մի ասորիների ձեռադրից։

Մ. Վան Էսրութը մանրա համան բնագիրը է սույն բնագիրը։ որ նա հրատարակել է արարատառ և եկել այն եղակացության։ որ ասորինեն նախատիպր պետք է հաշերենից թարգմանված լիներ։ Մինչև այժմ Ազատանգելուսի պատմությանն առնչվող բնագրերից ասորիներն հայտնի եր միայն Գեորգ ասորու նամակը։ բայց լկար որևէ թարգմանություն կը մ խմբագրություն։ նոր հայտնարերված ձեռագրից առաջին անգամ հայտնի զարձակ, որ այդպիսին եղել է։

Իր կառուցվածքով ինքնատիպ է նոր վարքը։ Ակսում Անճատուկի ու Թագելոսի պատմությամբ, որը մինչև օրս Ազաթանգեղոսի պատմության ոչ մի խմբագրության մեջ չեր եղել։ Ազա շարագրում է Գրիգորի ու Տրդատի պատմությունը և մնացյալ բաժինները բատ Ազաթանգեղոսի հայտնի պատմության, միայն բաց թողնելով որոշ մասերը Վերջում հիշում է, որ Գարանսոյաց զավոսում թաղված Գրիգորի նշխարները Զինոն կայսեր ժամանակ բարեկաչտ հովիկ Ամրայի (Գառնիկ) ձեռով գտնվում և բերվում են Իորդան, իսկ Հերակլ կայսեր ժամանակ այսուել սեծ եկեղեցի է կառուցվում։ Հստ Մ. Վան Էսրութի սրա հայերեն բնագիրը պետք է խմբագրված լինի է զարի սկզբին։ իսկ հետագայում, մոտավորապես Ժ դարում, ասորիների է թարգմանվել։

Նկատի ունենալով Ազաթանգեղոսի բաղմայեկու խմբագրությունների ավշաները այժմ կարելի է հետեւալ եղակացության հանդիւ։

Ե զարում կազմիլ է մի խմբագրություն, որի հայերն բնագիրը դնու չի հայտնարերված։ բայց նրանից ծագող ուսնարեն և արաւերեն չորս խմբագրություն (վարք) արդեն հայտնի է։ Այս հայերեն բնագիրը, որը Ե զարի առաջին կեսում պետք է կազմված լինի, ըստ երեսութիւն հետագայում ատմիքանարար մոռացության է տրվել։

Մոտավորապես Ե զարի կեսերին կազմակորին է Ազաթանգեղոսի պատմության այն խմբագրությունը, որ մեզ հայտնի է իր հայերեն բնագրով և բացմաւելու թարգմանություններով։ Այս խմբագրությունն է, որ կանոնական է համարվել հայ եկեղեցու կողմից և օգտագործվել ամբողջ միջնադարում որպես մի նվիրական մասայան։

¹ M. van Esը օք՛, Un nouveau témoignage sur le rôle d'Agathange, Revue des Etudes Arméniennes, t. VIII, Pa: 1971, p. 13—167.

Ագաթանգեղոսի պատմական հավաստիոթյան հարցը ի սկզբանե հուզել է քանասերներին: Անկասկած Ագաթանգեղոսը պատմական մեծ արժեք ունի, սակայն չի կարելի անտեսել, որ նրա տարրեր մասերը նույն արժեքը չունեն, քանդի որոշ հատվածներ լի են վկայաբանական նյութերով:

Հայագիտության մեջ ամենից ավելի վեճերի առարկա դարձած նյութերից է Հայաստանի հեթանոս Արշակունիների ժամանակագրությունը: Իսկ այս հարցի ուսումնասիրման հիմնական հայկական աղբյուրներից է Հնաց Ագաթանգեղոսի պատմությունը. Մովսես Խորենացու և Սեբեոսի պատմության սկզբում զանվող Անանունի հատվածի հետ միասին: Ագաթանգեղոսի պատմության սարբեր խմբագրությունները ավալաներ են պարունակում Արշակունի Սանատորուկից մինչև Տրդատ Երրորդ թագավորն ընկած ժամանակաշրջանի համար: Ագաթանգեղոսի պատմության մեջ ինչպես նաև Անանունի և Մովսես Խորենացու մոտ հոսրով և Տրդատ թագավորների անձնագործության մեջ միավորված են Հայաստանի հոսրով և, Տրդատ և, հոսրով Գ և Տրդատ Գ անձնագործությունները:

Ագաթանգեղոսի պատմությունը հիմնական աղբյուր է Գրիգոր Լուսավորի կենոսագրության համար: Այս հարցի լուծման համար ավյաներ ունեն Ագաթանգեղոսի թե Հայերն, թե Հունարեն և արարերն խմբագրությունները:

Նա կարեռագույն աղբյուր է Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետության և քանդակագործության ուսումնասիրման համար: Նրս ավյաները Վազգարշապատ բաղարի կասուցվածքների հետազոտման համար անդուխարինելի են:

Ագաթանգեղոսի պատմությունը բացառիկ նշանակություն ունեցող աղբյուր է Հայաստանի հեթանոսական կրոնի ուսումնասիրման համար: Հայկական պանթեոնի զիրավոր աստվածն էր Արածագոր, որի տաճարը կար Անիում (Եփրատի ափին): Հայաստանում այնքան հարգված Անահի ողիցուհին բազմաթիվ տաճարներ ուներ տարրեր վայրերում՝ Արտավազ ուում, Երեկ ավանում, ինչպես նաև Աշախատում, ուր կային նրա, Վահագնի և Աստղիկ դիցուու երեք բաղինները: Հայտնի էին նաև Տիր ասոսու մեջյանը Երազամույն կորված վայրում (Արտաշատի մոտ), Մինքի տաճարը Բագայառինում, Թարշամինա մեջյանը Թորդանում և նաև զիցունու մեջյանը Թիլ ավանում: Մովսես Խորենացու ավյաների հետ միասին առ տեղեկությունները ընդհանուր պատկերացում են տալիս հայկական հելլանոսական սրբագրերի և ընդհանրապես կրոնի մասին:

Հեթանոսական մեջյանների բագինները քանդելուց հետո Գրիգոր Լուսավորից հիմք զրեց հայկական քրիստոնեական եկեղեցիներին և հաստատեց եպիսկոպոսական վիճակներ: Ագաթանգեղոսի պատմության ավյաները այս մասին շատ կարենու են Հայաստանի վագ միջնադարի եպիսկոպոսական վիճակների կազմագործումը և զարգացումն ուսումնասիրելու համար:

Ազաթանգեղոսի Հայոց պատմությունից մեզ հասել են երեսունի շափ ձևագրեր, որոնցից բանից ավելին գտնվում են Երևանի Մաշտոցյան մատենադարանում։

Ազաթանգեղոսի մեզ հայտնի հնագույն ձևագրերը վկենացի Մխիթարյան մատենադարանի կրնագիրն է, որի նախագրությունը բառ Հ. Տաշյանի ամենաուշը Թ—Փ դարերից է։ Այս երկաթաղիք կրնագիրը¹ ունի հատվածներ Առաջարանից, Պատմության առաջին մասից և Վարդապետությունից, իսկ վերջին պատմական մասը բոլորովին չունի։ Բանասիրական բացմանիվ հարցեր կարելի եր լուծել, եթե այս գրադիրն ընդգրկեր Աղամանգեղոսի ամրող բնագիրը։

Երևանի Մատենադարանում, որ կան Ազաթանգեղոսի մի քանի պատառիկներ (Փ—ԺԷ դարեր) ամրողական ձևագրեր կան ԺՇ դարից ինչպես նաև ԺԶ—ԺԷ դարերից։ Ազաթանգեղոսի ընտիր որինակներ կան նևի երուսաղեմի Ս. Հակոբյանց ու Վենետիկի Մխիթարյան մստենագործառաներում։ Փարիզի Ազգային գրադարանում և այլ վայրերում։

Ազաթանգեղոսի առաջին հրատարակությունը լույս է տեսել Ա. Պուտում, 1709 թվին (Էջմիածնի հրատարակություն), բայց Ալեքսանդր Զուղացի կառողիկոսի ձևորվ ընդորինակված մի ձեռագրի, իսկ տպագրին է Գրիգոր Մարգվանւեցին։ Սրա հիման վրա, ինչպես նաև նկատի ունենալով Ամիգում ընդորինակված մի անթիվական ձեռագրի, լույս է տեսել Ազաթանգեղոսի երկրորդ տպագրությունը՝ դարձալ Կ. Պուտում (Օթխազյուղ)։

Վենետիկի 1835 թվականի հրատարակությունը կատարվել է մի քանի ձևուագրերի համեմաւությամբ։ Բացի եղած տպագրի օրինակ, որից Մխիթարյան հայրերը օգտագործել են հինգ տարբեր վայրերում դանվող ձեռագրեր։ Ազաթանգեղոսի հաջորդ հրատարակությունները (Վենետիկ և Տրիեստ) սրա արտատպարթյուններն են։

Ազաթանգեղոսի Պատմության բննական բնագիրը լույս տեսավ 1909 թվականին, պատրաստված Գ. Տեր Մկրտչյանի (Միարան) և Ս. Կանայանցի ձևորվ։ Վազարշապատի մատենադարանի տաներկու ամրողական զրագիր և ճառընտիրներում գտնվող բազ Մայթիկ հատվածներ համեմատության են դրվել և ստացվել է մի համահավաք բնադիր, որը կարեվոր քայլ էր Ազաթանգեղոսի հայերեն հնագույն ձեր վերականգնելու համար։ Դիրախտարար հրատարակիչները Վաշարշապատում իրենց տրամադրության տակ չեն ունեցել Վկենացի կրնագիրը և կցկուր տեղեկություններ են քաղել Գ. Զարուհանալյանի գրքից², Ազաթանգեղոսի այս արժեքագոր պատառիկը լույս տեսավ մի քանի տարի հետո Գ. Գալեմքյար-

¹ Յուշաբան, էջ 67—160,

Հայկական հին դպրության պատմություն, Վենետիկ, 1897,

շանի ջանրերով՝ հնարավորություն տալով (մասամբ) լրացնել այն պակասը, որ կար քննական հրատարակության մեջ։ Մրա հետ միաժամանակ լույս աեսած խիստ քննադատական նոդվածում Նորայր Բյուզանդացին նշում է, որ ըոլոր առավելություններով հանդերձ 1909 թվականի հրատարակությունը դեռ քննական չի կարելի համարել։

Բացի միջնադարում կատարված բազմաթիվ թարգմանություններից՝ Աղամանգեղոսը անցյալ զարում գրաբար բնապրից թարգմանվել է, արդին դիաստական նպատակներով, իտալերենի և ֆրանսերենի։ Խոսերէ թարգմանությունը կատարել են Վենետիկի Միխիլարյան հայրերը՝ ըսնց առնելով Վարդապետությունը։ Այսաեղ կամ նաև հունարեն Ագաթանգեղուի առաջարանի թարգմանությունը։ Ֆրանսերեն թարգմանությունը կատարել Վ. Հանգուան դարձյալ Վենետիկի Միխիլարյանների օժննդակիութամբ։ Սակայն, ինչպես հենց ինքը՝ թարգմանիքը, նշում է իր առաջարանում՝ զանց և առել ոչ միայն Վարդապետությունը, այլև պատմության բաժնուն կրոնական բովանդակություն ունեցող շատ մասեր (աղոթք կամ քարոզ)։ Անգերեն թարգմանվել է միայն Վարդապետությունը Ո. Թումանի ձեռուով։

Ագաթանգեղոսի բնագրի լեզուն դասական կամ ոսկեդարյան (բատ Հ. Աճառյանի՝ մեսրոպյան) գրաբար է, այսինքն պատկանում է այն մատյանների թվին, որոնք գրված (կամ թարգմանված) են մինչև 460 թվականը։ Այն բոլոր գրվածքները (բնագրի կամ թարգմանություն), որ հասել են այս շրջանից, ըստ իրենց լեզվական հորինվածքի ու ոճի բաժանվում են չորս դասի՝ եզրիկան, եփիրեմյան, Կյուրեղյան և Ազաթանգեղյան (բայ Նորայր Բյուզանդացու՝ Կորյունյան)¹։ Վերջինս համարվում է պերճ, բազմազարդ, մթին ու հաճախ անկանոն²։ Այս դասի մեջ Ազաթանգեղոսի հետ մտնում են նաև Կորյուն, Բուղանդ, Մակարայեցիք և եղթաղ Աղեք՝ սանդրացի։

Ագաթանգեղոսը դեռ շունի աշխարհաբար թարգմանություն, թեև եղել է մի մասնակի փորձ, որը մնացել է կիսակատար։ Երկանի Մաշտոցյանը՝ Մատենադարանում կա մի ձևակիր թարգմանություն, որը զանց առն ողբ Առաջարանը, բնդգրիում է Պատմության առաջին մասը։ Թարգմանի անունը չկա, ոչ է՝ թվականը, սակայն երեսում է որ կատարված է ան ալ դարի վերջում կամ մեր դարի սկզբին։ Թարգմանիչը ձեռքի տակ է ու եցել ոչ թե 1979-ի քննական հրատարակությունը, այլ նրան նախորդուներից որևէ մեկը և թարգմանության մեջ շունի նրա մտցրած ուղղում։ Օրէնակ, թարգմանիչը խոսրով արթայի հարձակման նկարագրության մեջ գրում է՝ «իր պահակը» (զիւրոյ պահակեին), մինչդեռ լ.թի հնունան հրատարակությունն ուղարկործած լիներ, պիտի ուղղեր՝ «ճորա պահա-

¹ Նորայր Բյուզանդացի, Կորին վարդապետ և նորին թարդանութիւնք, Տիգիս, 1900, լ.շ 33։

² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1951, Բ, 78։

կինու Թարգմանություն է դեռ անի՞ւ ամ վի՞ակում է, որովհեան մի զեպքում հանդիպում ենք բայն» զերանվան, մի ուրիշ զեպքում «էն» բարբառային ձեին

Ներկա աշխարհաբար թարգմանությունը կատարել ենք Գ. Տեր-Մկրտչյանի Ս. Կանայանցի քննական հրատարակությունից, սակայն աչքի առց ունեցել ենք նաև Վիեննայի կրկնագիրը և տարբերություն նկատ գեպօւմ մացրել ենք բնագրի կամ ծանոթությունների մեջ։ Թարգմանության մեջ չենք ընդդրկել Վարդապետության ծավալուն հատվածը, որն իհարկե շատ արժեքավոր է և Ակադեմիկոսի բնագրի մի մասն է, այնուամենայնիվ առայժմ այն զանց հենք առել Անդրամեջտության գեպօւմ մեր թարգմանությունը համեմատել ենք Լանգլուայի փրանսերեն, ինչպես նաև վերոհիշյալ աշխարհաբար ձեռագիր թարգմանության հետ։ Աղաթանգեղոսի վերջին հատվածում (Հայոց աշխարհի դարձր), որտեղ առատ են Կորունի հայութանման և հաճախ տառացիունն համբնենող տողերը՝ համեմատել են Մ. Մելքոնյանի հետապահ Կորունի Բառացի հայութան հետ։

Գ. Տեր-Միտուսյանի և Ս. Կանայքանցի կողմից հանված Աստվածաշնչի վկարություններից թողել ենք ուղղակի ռկողումները, որոնք հրատարակիները չակերտուների մեջ են առել, իսկ առողջակի ակնարկները մեծ մասամբ չենք հնձել տողատակին նկատի ունենալով, որ անհրաժեշտության դեպքում բնիւթագործ կարող է դիմել գրաբար հրատարակությանը:



ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ

ԱՌԱՋԱԲԱՆ¹ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

1. Ա յավարկողների բուռն և բաղծալի իղձն է խաղաղությամբ հասնել նախահանգիստ. Ահա թէ ինչո՞ւ ընշաքաղց և օդտածարավ մարդիկ ընդուստ ալիքների վրա և ճրկածին օդին ընդդեմ մարտի են պատրաստվում. նրանց ի մի հավաքված բազմությունը, միացյալ ուժերով, թիավարում է կույտաշեն և երկաթե բնեոներով ամրացված սրբնիաց նաւկութը. քաջալերելով միմյանց, սրտերը լի կասկածով ու երկյուղով, ծիարձակ արշավում են կապույտ դաշտում անքայլ երթով և շընթացող ոտքերով թռչում են ծովի կուտանչաղեղ ալիքների ու ջրերի հորձանքների վրաւ Ուր բարկացայտ արիրները կուտակվում են լեռնաձև, խոնարհվում ելնէն. Երով ըստ քանրարավոր քնարահար Դավթի երգի «Ելում են— լեռնանում և իջնում են— դաշտանում»²:

Ապա ծփանքներից ազատվելով յուրաքանչյուրեն շտապում է իր զավառը. Մերձավոր սիրելիներին պատմում են այս զրույցը՝ ճանապարհին պատահած տաժանակիր անցքերը, անհանդիստ ալիքների հոսանքի վրա փոփոխական

¹ Սաղմ ձգ 8.

Ելեէջները, թե ինչպես շահութաբեր օգտի համար վտանգին ենթարկվելով և մահվան դեմ մաքառելով իրենց անձերը զրագի են դնում ի սեր բարեհաջող վաճառականության։ Քանզի թեսետ տեսնում են հողմակոծ տատանվող ալիքների ահեղ սաստկությունը, որոնք ըստ ծփանքի ուժգնության երիներանդ գույներ են ստանում, փոփոխական կարգով ու փրփրագեղ հաշորդում են իրար, ավագով շրջապահած ափը դիմելով՝ [նավարկողները] հրճվում են, որ ցամաք են հասել։

3. Իսկ նրանք որ բնդերբից խոխոչացող խոր անդունդի դիմաց ահարեկված օրհասական կախածուն են կանխատեսում, թեպետե տեսնում են, որ շարժված են ահարելու, սարսափելի, բազմածուփ զրերի վրա, այնուամենայնիվ հիշելով իրենց հաջողությունը՝ ջանում են դիմազրավել ահավոր ծովի ալեկոծությունը, որպեսզի թերեւ հարստությամբ վերադառնալով՝ յուրաքանչյուրի խնդությամբ իր ընտանիքին ցույց տա ձեռք բերածը, իսկ զրացիներին՝ պարծանքի արժանի վաստակը։ Կամենում են, ուր հարկն է, իրենց վրայից թոթափել աղքատ անունը և իրենց տառապայալ մերձափորներին ազատել գրավով ։ արկ այհանջող իշխանների բռնությունից։ իրենց բերած շահույթից վճարում են նրանց պարտքերը, որպեսզի թագավորների հարկատվության լծից աղատվելով՝ թէթեանան։ Այսպիսով նրանք բարություն են անում ընկերներին, պատվագոր ու հարգալի անուն վաստակում թշնամիների մոտ և ուրախություն պատճառում իրենց սիրողներին։

3. Սրա համար դաժան պայքարով մարտնչում են բարձրացող զրեղեն լեռների ու իջնող ծովային ձորերի մեջ, ջանում են իրենց անձերի փրկության միջոց գտնել, որպեսզի աղատվելով խռովահույզ ծանր բքախառն փոթորիկների պառուտներից՝ կարողանան հասնել խաղաղ նավահանգիստ։

Քանզի իսկապես շատ են այնպիսիները, որոնք ոչ թե ագահությունից են յահվան [վտանգի] ենթարկում իրենց, այլ աղքատության, կարիքի և հնետին տնանկության պատճառով չեն տատանվում վտանգի առջև, շտապում են

իրենց պարտականությունը կատարել, թերեւս կարողանան
գլուխները փրկել և պարտքերից իրենց ազատելի Պարտքերի
տակ ընկած լինելով, երազում են, որ թերեւս կարողանան
երկապատիկ օգուտ քաղելու ելքը գտնել, միաժամանակ զս-
հացնելով պարտապահներին, իսկ իրենց համար էլ ավելի
շատ շահ ապահովել:

4. Քանզի շատը նրանք են, որ այսպիսի սարսափելի
աղետների դեպքում հոժարում են չարշարանքներով վաճա-
ռականական գործի մեջ մտնել: Շատերն էլ կան, որոնց
իրենց հարստությունը երկրի օգտին են գործածում, թա-
գավորներին զարդարում են ծանրագին մարգարիտներով,
զանազան պատվական քարերով և երփներանգ գունագեղ
կերպասներով: Նաևս բարձրացնում են աղքատներին, փոքր
ինչ հարգանքի արժանացնելով և երկիրը զարդարում են
նոր ու շքնաղ բարիքներով: Նրանք բավարարում են կա-
րիքները՝ մեծամեծ օգուտներ տալով, կարիքավոր մարդ-
կանց պետքերն են հոգում, շատերին սնում են: Նրանք
բժիշկների տները լցնում են տեսակ-տեսակ անուշահոտ
ինկերով, օգտակար դեղներով, բժշկական տենչալի օգտա-
կար արմատներ բերելով, կարիքավորներին գուացնում են: Քաղաքների զարդ են նրանք և գավառների հպարտություն,
երկար ձանապարհների չափարարներ են, աշխարհի ձամ-
փորդներ և օտարություն ձաշակողներ: Նրանք ամենքին
խնդացնում են և շատերին ուժ տալիս, իսկ աշխարհին՝
կարողություն, մերկերին հագցնում են, քաղցածներին հա-
ղեցնում, ծարավներին արբեցնում են և հարուստների հա-
մար զանձեր հավաքում:

5. Թեևս նրանք բոնությամբ են հարկի տակ ընկած,
սակայն սովոր են վշտին դրմանալով իրենց անձերո
փրկել և այլոց ևս օգտակար կարող են լինել: Այնուհետեւ
հենց նույն սովորական իմաստությունը հաճելի դարձավ
նրանց համար:

Երթեւկողները սովորաբար ճանապարհորդելով և վա-
ճառականությամբ շրջելով, փոքր գործեր անելով՝ հազար-
պատիկ ու բյուրապատիկ են դարձնում: Ահա թե ինչու
խոյանալով համատարած ծովի հուղված բազմաթիվ ալիք-

ների մեջ՝ գրոհում են ոչ թե իրենց կամքով, այլ փշող քաւ-
մու հոսանքով, բռնի քշվելով լայնատարած Գործանքի վրա
տարութերվում են օգուտ զտնելու համար. իրենց անձերը
մասու և կենաց մեջ են դնում, անձամբ խորքերի [վտանգ-
ներին] են մատնվում, ընտրություն են կատարում մահու և
կենաց միջն և երկուսից մեկն է նրանց բաժին ընկնում:

6. Նույն այս ձեռվ տեսնում ենք, որ նման մի հարկա-
դրանք մեկ էլ հասնելով առավել ստիպում է նավարկել
իմաստության ծովի վրա, քանզի մարդկանցից ոչ ոք չ'
կարող ամենեին հանձն առնել նման քրտնաշան աշխա-
տանք. եթե հասած իշխանական հրամանը՝ ստիպելով
այս բանը շուտափույթ անել շտա: Եվ ո՞վ կարող է խրոխ-
տանալ ծովի անդունդի խորքերը քննելու, այլ [մարդիկ]
պարզապես երկար ճանապարհորդությունների մեջ վաճառ-
քի անձնական շահն են միայն կամենում ձեռք բերել:
Սույն օրինակով և մենք ոչ թե հանդինությամբ, երեխա-
յաբար և անմտորեն առաջ նետվեցինք, այլ ակամա ընթա-
նալով, ըստ հարկադրող իշխանների բռնի Գրամանների,
նավարկեցինք պատմության մատյանների այս ծովի վրա:

7. Քանզի թագավորական հրամանը հարկ դրեց մեր
մտավոր աղքատ գանձարանի վրա, պահանջելով մեզանից՝
անցած դեպքերի նկարագրությունը տալ և մատենադրել
մեզանում կատարված հայտնի պատմությունները: Սակայն
շափազանց ջանք ենք թափել մեր հետնորդներին թողնելու
դեպքերի շարքի դար առ դար հիշատակումը: Ոչ թե մեր
կամքով հոժարեցինք, հանձն առանք այն գործը կատա-
րել, այլ շկարողանալով ընդդիմանալ արքայատուր հրաման-
ներին, պատմելու ենք ըստ [այդ] հրամանների, որչուի
մեր ուժն է ներում:

Հանձն առնելով այդ աշխատանքը՝ սկսենք խոսքի
վաճառականությունը*, երկյուղածությամբ տանք պատմու-
թյան գեղեցիկ շարադրանքը: Ուստի կատարված դեպքերը և

* Խոսքի վաճառականություն չպետք է բառացի հասկանալ. սա կապ-
վում է հեղինակի ընտրած համեմատության հետ և նշանակում է խոսքի
շարադրանմբ:— Խմբ.

Մահկանացուների մատենագրությունը քննելով, մանրակիտ զննելով՝ մեկ առ մեկ, ըստ պատմության կարգի, օրենքի, ժամանակի և մեր ստացած հրամանների շարադրենք:

8. Իսկ հոգեոր արժեքների վեհությունը, որ աստվածասերների համար մեծություն է, նման է թանկագին մարգարիտի, նուրբ բոլորակածեն, լուսավոր, հաղվաղյուտ, որը չունի բիծ կամ արատ իր ճաճանչավոր փայլի մեջ, այլ առատորեն զարդարում է թագավորների վայելու թագերը և կամ Հնդկաց աշխարհից բերված թանկագին բարերի [նման], որոնք վայելու զարդով, խույրով ու պսակով զարդարում են թագավորին: Իսկ արդյոր այս բոլորը ինչպես կարող է ուրիշ մեկի կողմից հեշտորեն կտնվել, եթե ոչ երկայն ուղիներ անցնող վաճառականների կողմից, որոնք մեծ շարշարանքով երկար ճանապարհներում բավականաշափ պաշար օդտագործելով. մեծ ջանքերով գտնում են դրանք և զարդարում թագավորներին: Իսկ սրանց լույսի ճաճանչը, որ մենք վաճառքի ենք հանում, ոչ միայն թագավորի կլուխն է զարդարում, ի տես այլոց, այլև ամենքին է զարդարում, լուսավորում, ճոխացնում ամենքին է զոհացնում, միսիթարում, բժշկում, թաղավորներին շքեղացնում է փողփողուն վերջավորությամբ արտախույր պսակի նման, աղքատներին ճոխացնում է, թոթափում, բարձրացնում աղքակույտից և հավասարեցնում իշխաններին, ինչպես նաև երկրները լցնում է օրհնությամբ, իսկ տարին բոլոր՝ քաղցրությամբ:

9. Սրանք նաև կարիքներն են բավարարում երկնային առատությամբ, շարշարվածներին հանդիստ են բերում, առատ դարձան են տալիս լի ամենայն բարիքներով. նրանք կարող են բժշկություն տալ առանց դեղերի, խունկերի, արմատների, շենություն կարող են շնորհել քաղաքներին իրենց Տիրոջ մարդասիրությամբ. մեծացնել երկիրը՝ իրենց նահատակության աղոթքներով և ցույց տալ երկնային ճանապարհների ելքը առ Աստված բարձրանալու

* Հոգեոր արժեքներ կրող սրբերը:

Համար: Ուղեցույց են Աստծո արքայության ճանապարհ և ների: Նրանք են, որ իրենց Տիրոջ համար շարշարված մեռան, անմահացան և իրենց անունն ու խիզախության պըտուլները սոշխարհին: Կյանք էն նրանք ու փըրկություն նրանց համար, որոնք մեղքերով են աղքատացած, նրանք երկնավոր արքայի մեծության գանձ են՝ երկրում ժամկված, իրենց հավատքով խնդացնում են և ուրախացնում այնպիսիներին, որոնք Աստծով ճոխացած դանձում են: Նրանք հագցնում են մերկերին և նրանց, որ Աղամի նման մեղքերով մերկացած են, լուսավոր պատմումաններով զգեստավորում են, հաղեցնում են քաղցածներին, որոնք անգիտության մեղքերի պատճառով սովոր են, ծարավեներին արբեցնում են առաքինության բաժակով և երկնային դանձը տալիս են նրանց, որոնք առավելագույնն ունեն, քանզի ոով որ ունի, կտրվի նրան և կավելացվի»^{*}: Նրանք մարդասեր Քրիստոսի գթության դռները բաց են անում ամենքի համար: Հենց սրա համար էլ սիրեցին իրենց Տիրոջը ու սիրվեցին նրանից և բարեխոսությամբ բավարում են բոլոր կարիքները:

10. Այսպիսի մարգարիտը ոչ միայն հոգիների, այլև մարմինների զարդ ու պայծառություն է: Նման մարդկանց քարեխոսությամբ է, որ Աստված աշխարհին շենություն է պարզեցում, քանզի աստվածային գութը նրանց վրա իջնելով ողորմություն և քալություն է շնորհում աշխարհին: Ահա թե ինչու աշխարհիկ մեղքերի մրրկահուզ ծովի վրա նա 'արկ' ողները, իրենց վտանգեցին՝ համբերությամբ պատերազմելով ալիքների դեմ, սահմացին [ծովի] խորությունների վրա, հասնելու համար երկնային նավապետի խաղաղության նավահանգիստը: Աղատվելով դաժան բրից և հասնելով քաղաք՝ նրանք պարծանքի պսակ մատուցեցին լուսավոր թագավորին, պատրաստվելով հավիտենական ուրախության, թանկագին մարգարիտով առլեցում և պսակված հոգեոր լուսի թանկարծեք քարերով: Նրանք իրենց կյանքը վաճառքի հանեցին իրենց տանջանքի մատ-

* Մատթ. ԺԴ. 12 ԽԵ. 29:

նողների համար, մեծացան անանց հարստությամբ և առիարձի շինությունը կանգուն, անվթար ու անշարժ են պահում իրենց հավատքի նավերի վրա:

11. Խոկ այսպիսի վաճառքին ո՞վ արդյոք ի՞նչ գին կարող է տալ. այո՛ այո՛, շափազանց լավ. միայն [պետք է] հոժար կամքով, սիրով լսելիքը տրամադրել, հավատքով սրել ականջները, որպես պատրամների ընդունարան և իսկույն պատվական ծանրազին մարդարիտը, որտի [բարի] կամքով, զարդ կդառնա, որպես ականջից կախված դինդ Միայն խոնարհիք դլուխդ, և հոգեոր պատկը անմիջապես կդրվի զիսիդ ու դա կզարդարի քեզ առավել, քան թանկագին քարերը. Միայն համաձայնվիր արքայական կոշունքին և այն ծամանակ խորտիկների քաղցր անուշաթյունը քո քիմքը կպարարի: Միայն ծարավ եղիք սիրո, և իսկույն կենդանության աղբյուրը կհաղեցնի քո տոշորուն ծարավի երաշտը. Միայն մաքրիր քեզ աղտից, և իսկույն անթառամու լուսավոր զգեստը կզարդարի քեզ, առավել քան անուշանա շուշան ծաղիկը:

12. Արդ՝ ջանք հանձն առնելով մտնել պատմության մատյանների խորության մեջ, խոսքը կուղընմ նրանց, որ կամենում են իմաստությամբ ունկնդիր լինել օդտակար պատմությանս:

Արդ՝ հրաման է հասել ինձ՝ Աղաթանգեղոսիս, որ մեծ Հսոմ քաղաքից եմ, կրթված հայրենի գիտությամբ, սովորել եմ լատիներենն* ու հունարենը, ուսանել դպրությունը և ոչ խիստ անտեղյակ [մնացել] նշանագրերի արվեստին: Սրա հետ մեկտեղ եկել եմ Արշակունու արքունիքը, քաջ և առաքինի. ուժեղ և պատերազմող Տրդատի տարիներին, որը բուլոր նախնիներից կորովի լինելով՝ արիությամբ գերազանցել է նրանց, եղել է րմբշամարտիկ և պատերազմների մեջ հսկային վայել քաջություններ է գործել: Մեզ հրամայեց ոչ իր քաջագործությունները սուտ վիպասանել և ոչ էլ արժանիքներից ավելի քմազարդ առասպելները շափազանցել, այլ շարադրել եղած գեպքերը [տալով նկարագրությունը] հարափոխու ժամանակների հանգամանքների,

* բնագրում հոռմայերեն

Ժարտամբոխ պատերազմների, սրակոխ կոտորածների բազմանեղ արյան իրար բախվող անթիվ զորքերի, երկըրների [ժաղովուրդների] գերության, զավառների ավերածության, բաղաքների կործանման, ափանների ավերման, մարդկային բաղմությունը կոտորելու՝ քինախնդիր վրիժառության բաջության համար:

13. Արդ՝ ինձ հրաման է հասել Տրդատ մեծ արքայից կարգով զրի առնել ժամանակների դեպքերը, պատմելով նախ քաջ առորովի հայրենական պատերազմների ժամանակ կատարած քաջությունները, տերության մեջ տեղի ունեցած փոփոխությունները ամեն կողմ ուղղված հարձակումները, աղօքերի խռովությունը, քաջ առորովի մահը, թե որդեւկից, ինչու կամ ինչպես այդ պատահեց և կամ ինչ անցուդարձ կատարվեց. ազնվաճայր Տրդատի բաջության մասին, իր թագավորության ժամանակ արած զործերը: Եվ Աստծու սիրելի նահատակների մասին, թե ինչպես կամ ինչու եկամ, ծագեցին իրեն լուսատուներ՝ փարատելու համար մեղք մեր Հայաստան աշխարհից. Ան ինչպես իրանց անձերը սկիբարեցնեցին Աստծու ծշմարտությունը, կամ ինչպես մատված գլուխով այցելեց մեր Հայոց աշխարհը, մեծամեծ Հրաշքներ ցույց տվեց մի մարդու ձեռքով, որը համբերությամբ և հաղթությամբ տարավ բաղում ու տեսակ-տեսակ փորձություններ և կաշկանդող վշտի մեջ Արտաշատ բաղաքում մենամարտիկ եղավ երկպատիկ բոնության դեմ, հանուն Քրիստոսի հաջողությամբ դիմացավ և նահատակի անուն ժառանդեց: Հասավ մինչկ մահ և Աստծու կամքով ետ դառնալով այնտեղից մեր Հայոց երկրում վերակացու՝ դարձավ: Մտավ մահվան դուռը, ապա Աստծու կամքով վնրադարձավ, դառնալով Քրիստոսի վարդապետության պատշամագորը, Աստծու մարդասիրական հրաշագործ պատժից հետո: Իսկ երախտավոր Տրդատը, կամովին գժվարին կյանք ընարելով՝ ամենքին ցանկալի դարձավ, Աստծու շնորհներով իր բնաշխարհիկ հայրենիքի սրգին եղավ և հավիտենական կյանքի մերձավոր դարձավ:

* եպիսկոպոս կամ եպիսկոպոսապետ

14 Արդ, ինչպես նախապես գրել էինք, ոչ թե հին ավանդություններից տեղեկանալով այս [բոլորը] կարգով մատենադրել ենք, այլ մենք ինքներս ականատես ենք եղել անձնավորություններին և ներկա՝ հոգեոր գործերին և լուսավոր շնորհապատում վարդապետությանը, ավետարանական հրամանների համաձայն. և թե ինչպես լուսավոր վարդապետությունը, Աստծու շնորհիվ, բոլորից վեր դասվեց: Այս աստվածակարգ լժին հնազանգեցրեց թաղավորը իր ամրազջ [մողովրդին], մանավանդ ոչ թե նա էր [այդ անում], այլ մեծազոր Քրիստոսի կամքը:

{Կնկարագրենք} թե ինչպես մեւ չաններին սիրելով հիմնածատակ կործանեցին և եկեղեցու սուրբ հիմքերը կանգնեցրին: Կամ ինչպես իրեն (Գրիգորին) երկրի հովիլ նշանակելով վայելեցին նրա վարդապետությունը: Թե ինչպես Տրդատը կրկին զնաց Հունաց աշխարհը քատվածաեր Կոստանդիանոսի ժամանակ, որը Հունաց և Հռոմայեցոց երկրի թաղավորն էր, ուստի դրեց նրա հետ հաստատ մնալու աստվածապահատության մեջ և այնտեղից վերադարձավ մեծ պարդեներով, բազում փառքով և շատ վայրեր Տրդատը նվիրեց Աստծո [պաշտամունքին]: Այս ամենը մեկ առ մեկ, կարգով կտատմենք. նաև Վարդապետությամբ սրբի, որն արժանի եղավ հասնելու եղիսկոպոսական մեծ աթոռին, ժառանգեց հայրապետական անունը և առաքինության մեծ մարտիկը եղավ: {Կպատմենք}, թե որտեղի՞ց էր, որոնցի՞ց, ո՞վ, կամ ո՞ր տոհմից էր նա, որ արժանի եղավ աստվածատուր շնորհքով այս բոլորը գործելու:

15 Արդ, կհեծնեմ մտքի երկվարը և կանցնեմ հանճարի ասպարեզը, կուղեմ մտքի նպատակը: Թափ կտամ բազուկներիս ուժին ու կորովի մատներովս կսեղմեմ զրիշը, լեզվովս կարտահայտեմ մտքերս, և թող իմ շուրթերը կարողանան իմաստուն խոսքեր շշնչալ: Հաստատորեն կարգավորելով կպտտեցնեմ, կդարձնեմ խոսքերի պատմության անիվը, որպեսողի տիրաբար նավեմ ժամանակագրության ծովի ալիքների վրա: Կպատմեմ այս բաներն ստացող մարդկանց և մեր ժամանակներից հետո եկող ազգերին,

որոնք օրհնելու են տիրոջը*, և հայրենի մատյանները պրու-
տելիս թող այս ամենը պատմվի նրանց և հազորդվի կարգա-
վորված ծրագիրու:

16 Կարդալով Ավետարանի աստվածապարզկ ավետիս-
ները և կենաց խոսքը մեր Թորդոմյան աղղին և մեր Հայաս-
տան աշխարհում քարոզելու լրավածքը³, թե ինչպես կամ
ինչպիսի մարդու կողմից ընդունվեց այն և կամ ո՞վ էր նա,
որ այս նորոգատուր առարելական շնորհները իր վրա վեց-
նելով երեան եկավ այսպիսի աստվածեղեն շնորհը,
[կողատմենք] նրա լուսավոր վարդապետության և հրեշտա-
կակրոն առաքինի վարք ու բարքի, ազնվական համբերու-
թյան մասին այն շնորհալի մեծաղոր նահատակի, որը
Քրիստոսի իսոստովանողը եղավ և ճշմարտության վկանու
Թե ինչպես դրանից հետո նրա աղոթքներով շենություն ու
խաղաղություն, լիություն, պտղաբերություն ու բժշկություն
շնորհեց Աստված: Եվ թե ինչպես նրա աստվածասիրության
և Քրիստոսի պարգևած գորության շնորհիվ ընկավ փշրվեց
ունայնության պաշտամունքը և աստվածապաշտությունը
տարածվեց ամբողջ մեր Հայոց երկրում, Կամ թե ինչպես
եկեղեցիներ շինվեցին մեր Հայաստան աշխարհում և զընջ-
վեցին սնոտի պաշտամունքները, որոնք նախնիների սովո-
րական մոլորաւթյան հետևանքով իզուր ընդունված և մոլո-
րեցուցիչ, կեղծ բարերի ու փայտերի հիմարություններն էին
և անզդայության կոապաշտ թմրությունը: Այս բոլորը անմը-
տություններով արբեցած, մեղքերի շռայլությամբ զարհու-
րած, դիվահար մրուրով ընթանում էին շար ու ծովացած
մեղքերի մեջ:

Խոկ [Ս. Գրիգորը] Քրիստոսի կամքով արդարուսուց
քարոզ կարդաց մեր ամբողջ Հայաստան աշխարհին, որ-
պեսզի չկառլվեն մեղքերի զարշապարին** այս ծովանման
աշխարհում, այլ հասցնելով աստվածահոր շինության հող-
մախաղաղ անդորր նավահանգիստը՝ նրանց այնտեղ մշտեն-
չինական կյանքի օթևաններ պատրաստեց:

* Հմատ. Սաղմ. ձԱ. 19:

** Կամ չկանգնեն մեղքերի շավզի վրա:

17 Խսկ ես անցնելով, սահմելով, պտտվելով, հսրծանախոր, լայնանիստ, հարաճոճ, անդնդապտույտ, սարսռասեր, անջանփիստ, արշավասույր, Շողմավար, ջրակուտակ, խռովահույզ և մոլեգնած սրբնթաց ալիքների վրա ձգտել եմ հասնել կղզիներ, քաղաքներ և հեռաբնակ երկրներ՝ գտնելով, լցնելով մեծաբեռ ժանր ապրանքներ, թանկագին ու հարդի իրեր, որպես զարդ և օգուտ ու եկել ապահով տեղ եմ հասցրել ձեր օգտի համար:

Փութանք բացել մեր վաճառականական խանութների առևտուրը՝ վաճառենք ունկնդիրներին մեր աշխատանքի արդյունքները՝ ստանալով նրանց ունկնդրությունը և տալով մեր այս պատմությունը: Մանավանդ քո հրամանի համար, ով քաջ այր՝ Մեծ Հայրի Տրդատ արքա, բերելով մեր սուետորի շահը ի նպաստ երկրի շենացմանը՝ ավելացնենք քո զանձը մեր՝ նավաստիներիս ծովի վաստակով:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐՔԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

18. Երբ Պարթևների թագավորությունն իր վախճանին հասավ⁴, վերացվեց Վաղարշի որդու՝ Արտավանի տերությունը և նա սպանվեց Սասանի որդի Արտաշիրի ձեռքով։ Սու մի նախարար էր Ստահը⁵ զալառից, որ զալով միավորեց պարսից զորքերը, որոնք լքեցին, հեռացան, մերժեցին ու անարգեցին պարթևների տերությունը և հաճույքով նախընտրեցին Սասանի որդի Արտաշիրի իշխանությունը։ Արդ, երբ այս մահվան գույժը հասավ Հայոց Խոսրով թագավորին, որը Պարսից տերության մեջ երկրորդն էր, որովհետև նա, ով Հայոց թագավոր էր՝ Պարսից տերության մեջ երկրորդ [անձն] էր, — թեսկետև նա վաղուց էր բոթը լսել, [այնուհանդերձ] ոչինչ կարողացավ անել պատերազմի պատրաստության գործը ավարտելու համար։ Դրանց հե-

առ նա դարձյալ պատահած ղեղքերի համար մեծ տրտմության մեջ էր, որովհետև որևէ գործ չկարողացավ անել: [Աւատիյ] կատարվածի համար մեծապես տրտմելով նորից անցավ, եկավ իր երկիրը:

19. Արդ՝ մյուս տարեմուտին Հայոց թագավոր Խոսրովը սկսեց բանակ կազմել և զորք գումարնելու Հավաքեց աղվանից ու վրաց զորքերը և բացեց Ալանաց⁶ ու Ճորա Պահակի զոները⁷ զուրս բերեց Հոննիքի՝ զորքը, ասպատակ սիռեց պարսից երկիրը և ալշավից Ասորեստանի կողմերը մինչև Տիգրոնի զոները: Ավանելով ամրոց երկիրը՝ ավերց շեն արքերն բարեկարգ ավանները, ամբողջ շեն երկիրը թափուր ու ավերակ թողեց՝ [շանալով] մեջտեղից շիջնել կույցնել, բանզել ու հիմնահատակ անել և վերացնել գորսը տերությունը: Միաժամկետ զոկ զրեց մեծ քինախնդրավյամբ վեճել լուծել իրենց տռնոր Իշխանությանից զրկելու ամեար Զամար Եր վրեժը լիովին լուծել, սրովհետեւ մեծ քեն մներ և սխալաւությունից վազվու: Եր եկառ սպանում Եր՝ տառավինելով իր զորքի բազմությունը և հուսար զնելով նրա բառ սիլան վրա Շուտու: Յթ օգնության հասան ազգանները, լվինելու, ճիղբերը և կոսովերը⁹ ժիր ու քաջ այրուձիու մեծ բազմությամբ և ուժեղ պատրաստությամբ, իշրջեն նաև որիշնել: այն կողմերից, որպեսուի Արտավանի արյան վրեժը լուծեն:

20. Քանզի յեղետ ինքը մեծ տրտմության մեջ էր իր հարազատ տռնի, աղջակիցների համար, որոնք Ստանացու հետ լացող Թաղավորավյանն էին Հնադանդվիկ ու նրա իշխանության առակ մտել՝ համակերպվելով նրան, և, ինեւ Խոսրովը զեսպան էր ուղարկել իր տռնմակիցներին, որպեսզի իրեն օգնության գան, դեմ կանգնեն նրա թաղավորությանը քուշանների¹⁰ կողմերից ու իրենց բուն երկրից օգնությունը: Ճեղք մեկնեն քաջ ցեղերն ու սաղմիկ զորքերը՝ թիկունք լինելու, այնուամենայնիվ պարթիական տռնմերը, ազգապետները, նախարարներն ու նահապետները շանսացին նրան, որովհետև համաձայնվել, համակերպվել և հնազանդվի: Էին Սրատաշիի տերությանը՝ փոխանակ իրենց ազգատութիւնի տերությունը և եղբայրակցությունը [նախընտրելու]:

21 Սակայն Խոսրովը առավ իր զորքի բազմությունը և նրաց, որ այլնայլ տեղերից օգնության էին հասել պատերազմի զործում նիզակակից լինելու իսկ երբ Պարսից Բազավորը տեսավ հավաքված զորքի այդ բազմությունը, որ մեծ ուժով եկել հասել էր իր դեմ, ինքը ևս նրանց գեմ էլավ պատերազմի պատրաստությամբ Բայց շկարողացավ գիմադրել և փախավ նրանց առջեկց, իսկ [նրանք] հետապնդելով՝ կսարուցին Պարսից ամբողջ զորքը և դաշտերի ու ճանապարհերի վրա դիմումավայր սկսելով ու գաժանաբար կուտրելով՝ նրանց ահավոր հարկածներ հասցրեցին։ Հայոց թագավորը կստորածից մեծ հազմությամբ, բազում ավտրով և ցնօալի ուրախությամբ վեցադարձավ Հայոց կողմերը, Աքրարատ դավառը, Վաղարշապատ քաղաքը՝ անհուն ուրախությամբ, բարի անվամբ և մեծ ավարով։

22 Ապա հրանան տվեց բոլոր կողմնորը պատվիրակ ուղարկել, իրավաբաներ և պատասխանակիցներ ու պատասխանակիցների ըազիններին ուխտի գնալ, պաշտամունք կատարել աստվածների կուռքերին։ Իր Արշակունի տոհմի հայրենական պաշտամունքի վայրեմը մեծարեց՝ նվիրաբեկնով սպիտակ ցուլեր ու նոխազներ, ճերմակ ձիեր ու զորիներ, սուկեղեն աղծալեն զարդեր՝ փողփողուն ծովերով, պոտակներով ու չարաններով զարդարուն մետաքսե զգևստներ, ոսկի պսակներ ու արծաթե զոհարաններ, թանկագին քարերով լի գեղեցիկ անոթներ, ոսկի ու արծաթ, պայծառագույն հանդերձեր և գեղեցիկ զարդեր։ Մեկ հինգերորդ բաժին հանաց բերկած հարուստ ավարից և մեծ պարզեներ շնորհեց քարտերին, իսկ իր հետ եղած զորքին բնծաներ տվեց ու արձակեց։

23 Իսկ երբ Եկավ մյուս տարին, շափաղանց շատ զորք կուտակեց, գնդեր կազմեց, նույն զորքը կանչեց, այն զորքից էլ ավելի, ասպատակ սկսեց Ասորեստանի կողմերը, մանավանդ որ արարների զորքը օգնության էր եկել, և ավարելով ամրող երկիր՝ յուրաքանչյուր քաջությամբ դարձավ իր տեղը, Այսպես տասնմեկ տարի շաբունակարար ավարի մատնելով ավերեցին այն բուր երկրները, որոնք Պարսից թագավորության իշխանության ներքո էին։

24 Իսկ երբ Պարսից թագավորը տեսավ այս բոլոր շարիքները, որ նրա վրա հասան, նեղվեց, տառապեց, շփոթվեց, երկմտեց, ինքն իր մեջ մոլորվեց: Իր մտա կանչեց տերության բոլոր թագավորներին, կուսակալներին, նախարարներին, զորավարներին, պետերին ու իշխաններին և խորհրդի նստեցին: Աղաշում էր ամենը, որեւէ հնար փնտրել զտնել. տեսակ-տեսակ պարզեներ էր խոստահում: «Թերեւ զտնվի մեկը, ասում էր նա,— որ կարողանա վրեմքը լուծել»: Խոստանում էր շնորհել իր տերության երկրորդ գահը. Եթե միայն որեւէ մեկը կարողանար իր մեծ վրեմքը լուծել. «Միայն աթոռովս ես վեր կլինեմ նրանից [ասում էր], թեկուզ շատ անարդ մարդկանցից լինի, կամ թև պատվականներից: Խոստանում էր ամեն տեսակ պատիվներ, պարզեներ և վարձի հատուցում շնորհել:

25 Արդ՝ այս իորհրդի մեջ ոտքի ելավ պարթենների տերության մի զիխավոր նահապետ, որի անունն էր Անակ, մեջտեղ զայռվ խոստացավ վրեժ առնել իր աղղակիցներից իբրև թառամիներից:

26 Սկսեց նրա հետ խոսել [արքան] և ասաց. «Եթե միայն հագատարմարար այդ վրեմքը լուծես, ձեր պարթեական հայրենի իշխանությունը և պահավական սեփական տիրությունները ձեղ կվերադարձնեմ, թագավորական թագ դնելով՝ կհառավորեմ քեզ, երեւի ու փառավոր կղարձնեմ իմ թագավորության մեջ, և իմ երկրորդը կլինես»:

27 Պատասխան տվեց պարթեն ու ասաց. «Իմ աղղատոհմի մնացորդներին եթե ապրեցնես, ես և հարազատ եղբայրս այսօրվանից քեզ հրաժեշտ կտանք»:

28 Այն ժամանակ պարթեն իր եղբոր հետ պատրաստվեց հանդերձ ընտանյոք. կանանցով, որդիներով, ամբողջ գերդաստանով շարժվեցին, ճանապահն ընկան և, զննելով ուղիները. ելան, զազթելու պատրվակով գնացին Հայաստանի կողմերը, իբրև թե ալստամբվել էին Պարսից արքայի գեմ: Եկան հանդիսեցին Խոսրով թագավորին Ռւտիք լավառի եազնաղ բաղաքում՝ Հայոց թագավորության ձմեռանոցում:

Հայոց թաղավորը երբ տեսավ, ցնծությամբ ընդառաւ ելաւ ու մեծ խնդությամբ բնդունեց նրան, մանավանդ, որը սա կեղծավորությամբ ու դավով սկսեց խռուել նրա հետ և իր գալու հավատարմությունը ցույց տալի «Այն բանի համար եմ քեզ մոտ եկել,— ասաց նա,— որ կարողանանք միատեղ ընդհանուրի վրեժը լուծել»:

30 Արդ՝ երբ թագավորը տեսավ այս մարդուն, որ եկել էր իր մոտ ամբողջ ընտանիքով, վստահորեն հավատաց նրան: Այնժամ նրան պատիվ տվեց ըստ թագավորական օրենքների, հանեց նստեցրեց իր թագավորության նրկորդ աթոռին և ձմեռվա ամբողջ ընթացքում՝ ցրտաշունչ, հողմազունչ սառնամանիքի օրերը, ուրախությամբ անցկացրին:

31 Իսկ երբ հասան տաք օրերը, հարավահողմ գարնան գոները բայցվելու ժամանակը, հեռացավ թագավորը այդ կողմերից: Եկան իջան Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը: Եվ մինչդեռ ուրախությամբ հանգստանում էին, թագավորը մտադրվելով՝ զորք կաղմեց՝ նորից Պարսից կողմերը տրշավելու նողատակով:

32 Երբ Պարթևն այս լսեց, հիշեց այն երգումը, որ տվել էր Պարսից արքային: Հիշեց նաև պարզեների խոստումները և փափառքնեց իր բնիկ աշխարհ՝ տեսնել որը Պահլավ էր կոչվում, չար միտք հղացավ. իր հարազատ եղբոր հետ թագավորին մի կողմ տանելով՝ իրը թե զբունքի կամ նրա հետ խորհուրդ անելու նողատակով, և պողպատե սուսերները կես մերկացրած պահելով՝ հանկարծ անսպասելիորեն զենքերը բարձրացրին և թագավորին դիաթավալ անելով՝ զետին տուլալեցին: Իսկույն եղած իրողությանը իրազեկ դառնալով՝ ամբոխը աղաղակով զույժ բարձրացրեց. Ճիշ այս, մինչ այն՝ նրանցից յուրաքանչյուրը իր ձին նստելով փախուստի զիմեց:

33 Հայակույտ զորքի մեծամեծերը երբ այս իմացան, զունդ գունդ բաժանվեցին ու հետապեղեցին: Ամանը ցամաքով աճապարեցին հասնելու Արտաշատ քաղաքի դոների մոտակա կամուրջի զլուխը: Երասխ գետը հորդացած գալիս էր ափեափ, եցուն, աաոցահառու ձյունախառն, ելման շրերով իր վարարման շրջանում: Նրանց մի

մասն անցավ Վաղարշապատ քաղաքի կամուրջով, որը կողում է նաև Մեծամորի կամուրջ: Աճապարում էին որքան կարելի է շուտ հասնել Արտաշատի կամուրջի գլուխը: Ճանապարհների կիրճերում կանդնեցրին նրանց և շրջապատելով Տափերական կամուրջի մոտ գետավեժ արեցին: Իսկ իրենք այնտեղից դարձան վայով, ձիչով ու ողբով, և ամբողջ երկրը հավաքված թաղավորին էր սգում:

34 Եվ քանի դեռ զերմ շունչը նրա կրծքից չէր հեռացնէլ, և չէր հասել վախճանը, [թագավորը] հրաման տվեց ոչնչացնել նրանց ազգատոհմը: Այնժամ սկսեցին սուաննել ու կոտորել, մինչև իսկ շմողնցին մանուկներից այնպիսին, որը բնավ ազն ու ձախը չգիտեր: Նաև տոհմի իգական մասը սրի քաշեցին: Միայն պարթեակի որդիներից երկու փոքրիկ յանուկների՝ մի մարդ [երեխաներից] մեկի դայակների միջոցով փրկեց, որոնցից մեկին փախցրեցին Պարսից կողմերը, իսկ մյուսին՝ Հունաց:

35 Երբ Պարսից թագավորը այս ամենը լսեց՝ զվարճացավ, զվարթացավ, այն օրը ուրախության մեծ տոն արեց և ատրուզաններին շատ զոհ մատուցեց: Ձորք հավաքեց, շարժվեց զնաց ասպատակ սփռեց Հայաստանի կողմերը, խոսունն ու անասունը, ծերն ու տղան, երիտասարդն ու մանուկը ընդհանրապես գերի տարավ:

36 Այդ ժամանակ մի մարդ ավագակից ազատելով փրկում է Հայոց Խոսրով թագավորի որդիներից Տրդատ անունով մի փոքրիկ մանկան, [որին] դայակները առնելով փախցրին կայսեր արքունիքը, Հունաց կողմերը: Իսկ Պարսից արքան գալով այնուհետև Հայաստան իր անվամբ կոչեց այդ վայրերը և հունաց զորքը փախուստի մատնելով հալածեց մինչև հունաց սահմանները: Փոսեր փորելով սահմաններ հաստատեց և տեղի անունը դրեց Փոսից դրունը¹¹ այն վայրերում, որոնք կողմում էին Սույզն, Մնացած բնակիչներին տեղահանեց և երկրին տիրացավ:

37 Տրդատը զնաց կիկիանես անունով մի կոմսի մոտ դաստիարակություն և ուսում ստացավ, իսկ պարթեակի որդին, որը հունաց կողմերն էր տարվել, մեծացավ և ուսում ստացավ Կապադովկիայի Կեսարիա քաղաքում: [Մի ոմն].

տեր կանգնելով՝ դայակների միջոցով նրան դաստիարակեց Քրիստոսի արկյուղու և նա ուսանալով քրիստոնեական զպության հանգամանքները՝ ընտնլացավ Աստվածաշնչին, ճանաշեց ծիրոզ երկյուղը. նրա անունն էր Գրիգոր, Եռոք դայակներից տեղեկացավ իր հոր կատարած գործերը, Ելալու ու ոնց բղատին կամավոր ծառայելու Թաքցրեց իր անձը և ոչի՛ չէր հայտնում, թե ում համար, կամ որտեղից, ինչպես իր [հայտնիկիլ], և իր անձը ծառայության տալով հնագանդությամբ սպասարկում էր նրան:

38 Այդ ժամանակներում Հունաց իշխանը* հալածում էր Աստուծու Եկեղեցին: Իսկ երբ Տրդատը դդաց, թե Գրիգորը հաղորդակից է բրնութանեական պաշտամունքին, աշնու՞՛ սկսեց պատուհասել և տեսակ-տեսակ արհավիրքներ պատճառում նրան: Շատ անգամ բանտուրով, կապան, ուրով ու տանջանքներով նեղում էր, որպեսզի թողնի Քրիստոսի Երկրագությունը և ենթարկվի սնոտի աստվածներին պիղծ սրաշտամունքին:

39 Այդ օրերում զոթերի¹² իշխանը զորաժողով արեց և բազում գորք կուտակելով Եկավ պատերազմելու Հունաց իշխանի դեմ: Այսօրինակ պատղամ հղեց թե «ինչո՞ւ ենք անմտորեն Ելնում պատերազմի, մեր զորքը սպառում և միաժամանակ երկրին վտանգ ու տագնապ հասցնում: Ահավասիկ ես քո դիմ եմ զուրս զալիս իշրե ախոյան մեր զորքի միջից և զու էլ իմ զեմ՝ Հունական կողմից: Գնանք— Հասնենք մարտի վայրը և եթե ես քեզ հաղթեմ Հուններն ինձ կհնագանդվեն իսկ եթե զու ինձ հաղթես. մեր կյանքը քեզ կայտականի կհնագանդվենք քեզ և առանց արյան ու կոտորածի նոկու էլ զունքի համար էլ խաղաղություն կլինիս»:

40 Երբ Հունաց թագավորը այս ամենը լսեց՝ վայսեցավ, որով հետեւ չէր կարող հանձն առնել օրինավոր պատրաստությամբ զունդ առ զունդ ճակատել և ոլ էլ կարող էր սույն պատգամի պահանջին համաձայնվել, քանի որ տկար

* Հոռոմի հոգևորը.

սսկորներ ուներ և ահաբեկվելով զարհաւրեց ու չգիտեր ինչ պատասխան տալ այդ խոսքերին։

41 Այն ժամանակ թագավորը հրաման տվեց հրովարտակներ ու պատվիրակներ ուղարկել իր տերության իշխաններին ու զորքին, որպեսզի ուր էլ լինեն, շուտափույթ իրեն հասնեն։ Իշխանները, զորքն ու նախարարները շտապով նրա մոտ եկան։ Առավ նաև կիկիանեսն¹³ իր ձեռքի տակ եղած բունդը և շտապեց հասնել պատերազմի վայրը, ներկայանալու թագավորին, և Տրդատն էլ նրա հետ էր։

42 Երբ զորագնդերը զալիս էին, այնպես եղավ, որ Նկան և մտան մի նեղ տեղ, այգեստանի առուների մեջ, շտեմարանի հրապարակում, քաղաքի դռների մոտ, որովհետեւ կեսպիշերված ժամն էր, և քաղաքի դռները փակ էին։ Երբ զորքի բազմության ձիերին անասնակեր չոր խոտ շղտնվեց մինչև կեռ գիշեր, նայեցին ու տեսան որ քաղաքի պարսպից ներս անասունների բակում խոտի դեգեր էին մթերված և ոչ ոք չկարողացավ իր ձեռքը հասցնել պարսպին՝ բարձրության պատճառով։ Այնուամասն Տրդատը երավ և իջնելով [խոտը] դեգ-դեգ նետեց զորքերի մեջ, մինչև որ բավարարվեցին, իսկ վերակացուներին և բազմաթիվ շնորհց շատերին պարսպից այս կողմ զորքերի մեջ նետեց ու ինքն այնտեղից ելնելով իջավ։

43 Տեսնելով այսպիսի մեծ ուժ, կիկիանեսը զարմացավ, իսկ երբ առավոտը լուսացավ, քաղաքի դռները բացվեցին, և ամբողջ զորքը ներս մտավ։ Կիկիանեսն բոլոր մեծամեծները, սպարապետները, զորագլուխներն ու իշխանները ներկայացան թագավորին։

44 Ապա թագավորը պատմեց իշխաններին գոթերի թագավորի բոլոր պատգամները։ Այդ ժամանակ կիկիանուար սկսեց խոսել արթայի հետ և ասաց. «Թող իմ տիրոջ սիրոտը բալորավին լզարհուրի, քանզի այստեղ քո պալատում մի մարդ կա, որի միջոցով այս գործը զլուխ կգաւ։ Նրա անունը Տրդատ է։ Հայոթ աշխարհի թաղավորական տոհմից։ Եկ պատմեց նրա երեկոյան գործած բաջագործությունները։ Այնմասն հրաման տվեց, և Տրդատին բերեցին թագավորի առջև, ու նա կարգով պատմեց ամեն ինչ։ Ապա

Նարտի պատրաստության ժամ որոշեցին, առավոտյան պատերազմով իրար դեմ ելնելու:

45 Իսկ մյուս օրը առավոտյան հրամայեց (կայսրը) ծիրանի պատմուճանը Տրդատի վրա նետել, և զարդարեցին կայսերական զարդով, դցելով նրա վրա թագավորական նշանը, և ոչ ոք չգիտեր նրա մասին։ Հրաման ելավ ամենքին, թե սա ինքն իսկ կայսրն է, եվ առնելով զորքերի համակ բազմությունը, փողի ձայնով արագ մոտեցավ, մինչեւ որ կանգնեց թշնամիներին դեմ հանդիման։ Երբ միմյանց դիմաց կանգնեցին կայսերակերպն ու (գոթերի) թագավորը՝ ծիերին մտրակելով իրար հասան։ Այնտեղ կայսերակերպը հաղթեց թագավորին և բռնելով նրան բերեց կանգնեցրեց կայսեր առջև։

46 Այն ժամանակ թագավորը հույժ բարձրացրեց Տրդատին և մեծամեծ պարգևներ տվեց նրան, թագ դրեց զիխին և ծիրանի պատմուճաններով զարդարելով՝ պատվեց նրան։ Կայսերական զարդով շքեղացնելով՝ մեծարեց և օղնական բազում զորք հանձնելով՝ ուղարկեց նրան սեփական Հայոց աշխարհը։

47 Հաղթական մարտում քաջություններ գործելուց հետո Մեծ Հայքի Տրդատ¹⁴ արքան վերադարձավ Հունաց կողմերից. Թագավորը շարժվեց եկավ Հայոց կողմերը և հասնելով դուավ այնտեղ Պարսից մեծաքանակ զորք. որ երկիրը գրավել էր, հպատակեցրել. Շատերին կոտորեց և շատերին փախստական դարձնելով՝ պարսից կողմերը քշեց, իսկ Հայրենի տերությունը նվաճեց ու զորացավ նրա սահմանների վրա։

48 Մեծ Հայքի արքա Տրդատի առաջին տարում շարժվեցին եկան, հասան եկեղյաց զավառը, Երիզա գյուղը¹⁵, Անահիտի մեջանը, որպեսզի այնտեղ զոհեր մատուցեն։ Երբ անարժան զործը կատարեցին, իշան, տեղավորվեցին այն գետի ափին, որը Գայլ¹⁶ է կոչվում։

‘49 Թագավորը եկավ մտավ վրանը, ընթրիքի բազմեց։ Երբ գինովցան, թագավորը հրաման տվեց Գրիգորին, որպեսզի պատկներ ու ծառերի թավ ճյուղեր նվիրաբերի Անահիտի բագինին։ Սակայն նա հանձն շառավ աստվածների՝ երկրպագության պաշտամունքը կատարել։

50 Այն ժամանակ թագավորն սկսեց խոսել Գրիգորի հետ ու ասաց. «Մի օտարական ու անծանոթ մարդ էիր¹⁷, երկար մեզ միացար և ինչպես ես համարձակվում պաշտիլ այն Աստծուն, որին ես շեմ պաշտում»։ Եվ հրամայեց այդ օրը նրան հսկողության տակ առնել։ Մյուս օրը առավոտյան թագավորը հրաման տվեց և Գրիգորին բերեցին իր առջև։

51 Թագավորն սկսեց խոսել Գրիգորի հետ և ասաց. «Այսքան տարի ես քեզ ճանաշել եմ, և դու քո ամբողջ էությամբ հավատարմորեն ծառայել եմ, ինձ, և ես գո՞յ էի քո աշխատանքից ու մտադիր էի ապրեցնել քեզ։ Ինչո՞ւ շես կատարում իմ կամքը»։

52 Պատասխան տվեց Գրիգորը և ասաց. «Աստված հրամայել է, որ «ծառաները հնագանդ լինեն մարմնավոր տերերին»¹⁸, ինչպես որ վայել է, և ինչպես դու ինքդ վկայեցիր, որ ծառայել եմ քեզ իմ ամբողջ էությամբ։ Իսկ Աստուծո պատիվն ու պաշտամունքը շի կարելի որևէ մեկին տալ. քանզի միայն նա է արարիշը երկնքի ու հրեշտակների, որոնք նրա մեծության փառավորիշներն են, և երկրի ու մարդկանց, որոնք նրա ձեռքով են ստեղծված և որոնց պարտքն է պաշտել նրան ու կամքը կատարել, ինչպես նաև այն ամենի, որոնք ապրում են դրանց վրա թե ծովում, թե ցամաքում։

53 Ասաց արքան. «Իմացած եղիր, ի շիք դարձրիր այն վաստակը, որ ինձ մոտ ես վաստակել, և որին ես վկա եմ։ Արդ՝ այն կյանքի փոխարեն, որ դու պետք է վայելեիր, բազմաթիվ նեղություններ եմ տալու քեզ. պատվի փոխարեն՝ անարգանք, փոխանակ բարձ տալու և առաջ տանելու՝ բանու ու կապանք և մագ կտամ, որը մարդկային կյանքի հույսը

* Եփես. Զ. 31

Կկտրի, եթե հանձն շառնես աստվածներին պաշտամունք մատուցել Մանավանդ այս մեծ Անահիտ տիկնոջը, որը մեր ազգի փառքն է ու կենսատուն, որին բոլոր Շաղավորներն են սյաշտում, մանավանդ Հունաց թագավորը նա է բոլոր զդաստությունների մայրը, բարերարը ամրող մարդկացին բնության և դուստրը՝ մեծ, քաջ Արամազդի:

† 54 Դրիդորը ասաց. «Ես քեզ հավատարմությամբ ծառացեցի և երրեք իմ վաստակը ի գերեւ չեմ հանի, քանդի զրված է, Աստծու կողմից, «Յող ծառայեն մարմնավոր տերերին»», որովհետև նա է բարիքներ հատուցող Տերը. ես ոշինչ չէի ակնկալում քեզնից, որ ինձ հատուցես, այլ՝ Արարշից, որին իրեն սեփականություն պատկանում են բոլոր տեսանելի ու աներեւույթ արարածները»:

55 Իսկ որ ասում ես, թե նեղություն կտաս փոխանակ կյանքի, [ապա] դու, հանելով այս կյանքից՝ ինձ համար կավելացնես Քրիստոսի պատրաստած ուրախությունը, որի իշխանությունը հավիտյան է, արքայությունը՝ անանց և բարիքները՝ անպակաս: Եվ այս, որ ասում ես, թե փոխանակ պատիի՝ անարգանք [կտաս], ինձ հրեշտակների պատիվը կշնորհես, որոնք ցնծությամբ իրենց Արարշին են փառավորում:

56 Ասում ես, թե փոխանակ բարձ տալու և առաջ տանելու, բանտ ու կապանք կտաս: Երանի ինձ, այսպիսով իմ Տիրոջ կապանքների օրինակը ինձ վրա՝ կունենամ և նրա հետ ուրախ կլինեմ ու կցնծամ նրա գալստյան օրը: Մերծելով ինձ քո սեղանակիցը դարձնել, ահա սեղանակից կղարձնես հավատքի հոր՝ Աբրահամին և բոլոր արդարներին, որոնք ուրախ են լինելու Աստծո արքայության մեջ:

57 Իսկ որ սպառնում ես մահով, ապա խառնում ես ինձ Քրիստոսի գնդին, ուր բոլոր հրավիրվածներն են՝ հայրերն ու արդարները, մարդարեներն ու առաքյալները, նահատակները և բոլոր ընտրյալները:

58 Ասում ե՞ս՝ թե մահվամբ կկտրես իմ կյանքի հույսը, ի՞չպէս որ քո հույսն է կտրված, ապա [իմացիր որ] բոլոր

աստվածապաշտների ու աստվածաների հույսը զորագոր է։ Իսկ նրանք, որ քեզ նման են և պաշտում են համը ու անշռնչ և մարդկանց ձեռքով կերտված կուռքեր, արգարե հուսահատ են Աստծու ճշմարիտ կյանքից։

59 Այլ, որ դաւ կոչում ես մեծ Տիկին Անահիտ՝ գուցե եղել է այդպիսի մեկը երբեմնի ժամանակներում։ Քանզի գիշապաշտ կախարդությամբ և դեերի տեսակ-տեսակ ցընորբներով համոզել են այն ժամանակվա մարդկանց, որ մեհյաններ շինեն, կուռքեր կանգնեցնեն և երկրպագեն։ Նրանք ոչինչ են, ոչ չար, ոչ բարի գործ կարող են անել, ոչ կարող են իրենց պաշտողներին պատվիճել, ոչ էլ իշխամիններին անարգել, որոնց և դուք ցնորյալ պաշտում եք ձեր մտքերի ապուշության պատճառով, Եվ փոխանակ Աստծու, որի բարիքներն եք վայելում, պաշտում եք փայտեղենն ու քարեղենը, ուսկեղենն ու արծաթեղենը, որ Աստված է կարգել մարդկանց ծառայության, պետքերի ու փառավորության համար։

60 «Իսկ ինձ ցանկալի է ամենայն հնագանդությամբ և հավատարմությամբ պաշտել արարից Աստծուն, Որդուն և արարածներն ստեղծող Հոգուն, որն ստեղծել է ամեն ինչ, կարող է եղծանել և դարձյալ նորսգել իր ողորմությամբ։ Եվ մենք չենք հուսահատվում, քանզի պաշտում ենք կենդանի Աստծուն, որը կարող է մեզ կենդանություն տալ, երբ որ կամենա, թեպիտե մեռնենք, կենդանի Ենք։ Որովհետե ինչպիս Աստծու որդին մեռավ և ատպելց ու իր հարսւթյանը մեզ կենդանության օրինակ ցույց տվեց, որ Եթե մեռնենք նրա համար, կենդանի ենք մնալու, երբ Արարշի թագավորությունը հայտնվի իր արարածներին, երբ ամբարշտության պատճեն տրվի, անաշառ դատաստանով ստուգությամբ բոլորից առաջասարակ պահանջվի»։

61 Ասաց արքան. «Երբ ասում ես, թե քեզնից ակնկալություն չունեի և ոչ էլ պիտի ունենամ, ապա ես զիտեմ, որ դու մա՞ Ես ցանկանում և գերեզմանում իսկույն [կդանես] հատուցումը, ուր կան այն առաջինները, որոնք մեռան։ Շուտափությունը քեզ այնտեղ կուղարկեմ, ուր կամենում ես երթալու հսկ թե ո՞վ է այն Քրիստոս։ ցույց տուր ինձ, որ

զիտենամ, ո՞վ է այդ քո վաստակների հատուցողը, որին դու արարիլ ես կոչում։ Մի՞թե նա գերեզմանների գերակացու է, որին դու ցանկանում ես հասնել և կամ քո բանտի կապանքների արձակիչը նա՞ է լինելու։

62 Ա՞յս են արդյոք քո առած անպուկաս ուղախությունները, և կամ այդ ի՞նչ պայտաստ է, որ ես շղիտնմ, կամ այդ ի՞նչ ճրեշտակներ են, որ տոռում ես, կամ թե ի՞նչ է ձեր հույսը և մեր հուսահատությանց Հասրա զու ասու ինձ այս տժենը հանդիսաւ։ Սակայն թուզ չեմ տա անարգել աստվածներին, որոնց զու հուսակեցիր՝ ասելով, թե սոսկ մարդիկ են և նրանց իջեցրիր մա կեանացու էակի աստիճանի։ Ասսամիկ անու ոնք հաւաքիր աստվածներին և կամ մեզ իսկ թաւափօռներին՝ ասելով, թե թելաղարներ են թափավորները, որ պաշտում են նրանց»։

63 Ասուց Գրիգորը. «Թիրատուր Աստիւ որդին է, որի ծեռափ նա ստեղծեց և կազմեց աշխար ։ Նա կենդանիների և մեռյալների դասողն է, տերն ըստերաբնորին բարիքներով հատուցողը, իսկ շարագրեթներին միտժամահել շարիքներով։

64 Եա, ինչպես դու ինքդ առացիր, արդարն գերեզմանների վերակացու է պահպան, բահցի իր կամքովը մեռափ ու մտափ դերնգման և նու է պահում բույր մարդկանց ուկորները։ Իր հարաւթյամբ ապացուցեց և ցուց տվեց մեռների հարաւթյունը, որովհետեւ ինքն իսկ հարություն է կյանք, կենդանացնող է և բոլոր մարմինների նորսզիշ կենդանի է պահում մարդկացին ջունիր, վասնզի ինքը կենդանություն է, նորոգելու է մարդկացին շունչը՝ հաղնելով նրա ճարմինը և ապա հայտնի է դարձելու յուրաքանչյուրի հատուցամբ ըստ նրա վասահի։ Նա արձակելու է կուպաշտության կապանքներից նրանց, որ կապված են մեղքերին, և խզելու է անօրինության շղթան նրանց, որ քեզ նման են իսկ այն կապանքները, որոնցով դու սղառանում ես, ապա նա սպիր է զրանցից փրկել իրեն հռացողներին՝ ցուցարեկելով իր սղորմածության շնորհը։

65 Անոպակաս ուրախություններն այն են, որ իր սիրեցյալներին ու կոչեցյալներին, հրավիրյալներին ու պատ-

վիրտնապահներին անմահացնելու է իր աստվածությամբ, իսկ մեղավորներին կանմահացնի հավիտենական տանգանքներով. Նրա գալուստն այն է լինելու, որ գալու է այս ամենը կատարելու իսկ հրեշտակները նրա մեծության, աստվածության ու մշտնչենավոր արքայության սպասավորներն են:

66 Մեր հույսը սրա ակնկալությամբ սպասելն է, իսկ դուք հուսահատ եք, քանզի չեք ճանաշում ձեր Արարշին, որը ձեզանից վրեժ կլուծի նրա համար որ չեք փնտրել ձեր տեր Արարշին և չեք ճանաչել նրան, Արդարին նման եք ձիերին ու ջորիներին որովհետև նրանք չունեն իմաստություն և նույնիսկ մտքով եղից ու էշից էլ պակասամիտ գտնվեցիք քանի որ շճանաշեցիք ձեր ստեղծողին, որը երբ ժամանակը զա սանձով կձմլի ձեր կզակները այն բանի համար, որ չկարողացաք մերձենալ նրան*:

67 Իսկ որ ասում ես թե աստվածներին անարգեցի, ի՞նչ նշանակություն ունի նրանց համար անարգանքը քանի որ երրեց իրենց ցուց տրմած պատիվը չեն զգում, որպես մարդկան: ձեռքով պատրաստված և նրանց խելացնոր երադնելոց ստեղծված զոյացած: Քանզի առաջին մարդկանց կիրտած արձաններով հրապուրվեցին և իրենք կիրտեցին որով հենց այն ժամանակ էլ մոլորվեցին՝ զրկվելով Արարշի լույսից: Իսկ որոնք որ նրանց պաշտում են, հիրավի նման են անասունների, քանի որ [կուռքերը] «Բերան ունեն և շեն խոսում աշքեր ունեն և շեն տեսնում, ականջներ ունեն և շեն լսում, քթեր ունեն և շեն հոտոտում, ձեռքեր ունեն և շեն շոշափում ոտքեր ունեն և շեն քայլում, և շունչ չկա նրանց բերաններում: Նրանց նման կլինեն նրանք, որ ստեղծել են և հույս են գրել նրանց վրա»**:

68 Թաղավորն սկսեց խոսել ու ասաց. «Քանիցս քեզ խրատ ու պատվեր եմ տվել որ իմ առջե չկրկնեա քո առասպեկանաւան խոսքերը որ դու հարմարեցրել ու սովորել ես, և որ վայել չէ քեզ խոսել: Այդ սլատնառով ես քեզ խնայեցի

* Սաղմ. ՀԱ, 9:

** Սաղմ. ՃՇԴ, 16—18:

որպես վաստակավորի, որպէսզի ուղիղ կարգի դաս՝ պաշտելով աստվածներին։ Դու նրանց պատիվ զլանալով՝ սուտ արարիշ և համարում, և որոնք որ ճշմարիտ արարիչներ են, անարգում ես։ Նաև մեծ Անահիտին, որով ապրում է և կենդանություն ունի մեր Հայոց երկիրը, ինչպես նաև մեծ և արի Արամազդին, երկնքի և երկրի արարչին, նրանց հետ և մյուս աստվածներին անշշունչ և անմռունչ կոչեցիր։ Մեզ ևս ձգտեցիր անարգել՝ համարձակվելով ձիեր ու ջրիներ անվանել Եվ քանի որ բոլորին նաևսաւցիր, նույնիսկ համարձակվելով մեզ ևս անասուն անվանել, արդ ես բեղ տանջանքներ կաամ և սանձ կդնեմ քո կզակին, որ իմանաս, թե սին իսոսքերը, որ իմ առօք համճախ կրկնեցիր, անմիջապիս իրենց որդյունքը ավեցին։ Եվ այս քեզ համար մեծ պատիվ է, ասում է [Բագավորը], որ իւսուցի քեզ Հետ և մեծարեցի քեզ, իսկ դու ինձ պատասխան տվեցիր իբրև ընկերոց»։

69 Նրա ձեռքերը ետեր կապել տվեց, իսկ բերանին բերանակապ դնել տվեց, նրա մեջքի վրա աղի մեծ կտոր կախել տվեց, կրծքին գելարան կապեցին և զելարանի կասկերից պարաններ գցելով կապեցին ու մեքենաներով ապարանքի տանիքի բարձր տեղից կախեցին։ Այսպիս պրկված, կասկած մնաց յոմ օր։ Յոթ օրից հետո [թագավորը] հրաման տվեց և արձակեցին շարաշար ու դառն կապանքներից և բերեցին կանգնեցրին նրա առջև։

70 Սկսեց հարցնել նրան. «Ինչպե՞ս կարողացար դիմանալ, տոկալ, մնալ և մինչեւ այսօր հասնելի Արդյոք զգացի՞ր չափը. թե արդարն էշի և զորու նման շալակած բեռները սպահեցիր և անշարժ մնացիր բեռան հետ մեկտեղ։ Քանի որ համարձակվեցիր աստվածներին անարգել [ասելով] թե անշարժ են, դրա համար էլ հատուցեցին քեզ այսպիսի սկառուհաս իսկ արդ՝ եթե հանձն շառնես աստվածներին պաշտամունք մատուցել և զարձալ նման անարգանքներ կրկնես, առավել ևս շար փորձանքներ կանցնեն քո գլուզվ»։

71 Ասաց Գրիգորը. «[Հեթանոս] աստվածների մասին, որ ասում ես. թե աստվածներ են, դրանք իրականում ստեղծված են, որովհետև մարդկանց կողմից են պատրաստված

և ճարտար ձեռքերով սարբիլած արձաններ են, մի քանիսը փայտե են, ուրիշները՝ քարե, պղնձե, արծաթե, կամ ոսկե։ Նրանք երբեք չեն խոսում, չեն տրամարանում և չեն էլ մտածում ոչ ոչ և ոչ իմ մասին։ Դու ինքդ իսկ վկայում ես ինձ, թե իմ կրած տանջանքները երբեք էլ նրանց կողմից չեն թելադրիլած քեզ, որ կատարեաւ Ել կամ արդյոք երբեկից եմացել են անխոս քարերը մարդկային ցավերի մասին։

72 Բայց երբ ինձ վրա աղ ես կատել, որպեսզի կապանք-ներով շարշարվեմ, իմացիր, որ իմ հույսը իմ Տերն է, որի սեփականությունն են երկինքն ու երկիրը, նաև նրա գործակից Որդին և վերջապես բարեխոս Հոդին, որոնք կհամեմն իմ անմահությունը ճշմարտության աղի ստուգությամբ, որը չի անցնում։ Եվ [Տերը] կտա ինձ խոնարհ, թեթև պարզեների ամենահաճելի լուծը, որը հավիտյանս հավիտենից չի անցնում։ Նա բարձրացնում է խոնարհներին իր մարդասիրությամբ, մինչև անսպառ և անվախճան հատուցամբ, անվերջ ու անժամանակ և յոթերորդ դարաշրջանը մտնելու անորոշ նախասահմանված օրերը, երբ իր բոլոր հոգնածներին կհանգստացնի և պարզեներ կտա իր մեծությամբ։

73 Իսկ ովքեր քարեղեն կուռքեր են պաշտում, նրանց մասին մարգարեն ասում է. «Քարերի նման կիշնեն խորտակ ջրերի մեջ»*, և ովքեր փայտակերաւ քանոդակներ են պաշտում, այսպես է ասում նրանց մասին, թե «Նուր վառվեց աղարակի բոլոր ծառերի վրա, որը կայրի մեղավորներին և շի հանդիս»**, իսկ ովքեր արծաթեղեն և ոսկեղեն են պաշտում, այսպես է ասում. «Նրանց արծաթն ու ոսկին չեն կարողանա փրկել նրանց Տիրոջ բարկության օրը», Տերը կարող է ծանրության բեսներ կախել նրանց և բոլոր ընդունացների ու մեղավորների վրա, որոնք քեզ նման ամբարիշտներ են»։

74 Սրանից հետո հրամայեց մեկ ոտքից գլխիվայր կախել նրան և կախված վիճակում տակից աղբ ծխել ու

* Նեեմ. Բ, 11:

** Երեմ. է, 20:

գալար ճիպոտներով սաստիկ գանակոծեր, Տասը մարդ տանջեցին նրան, ըստ թագավորի հրամանի, և այնպես յոթ օր կախված մնաց:

75 Արդ՝ մինչեռ նա կախված էր կախաղանի վրա, այսպես սկսեց խոսել. «Դոհանամ քեզանից, Տեր, որ ինձ՝ ահարժանիս, արժանի զարձրիր քո պարգևին, քանզի սկզբից իսկ սիրեցիր քո ձեռքի ստեղծածներին և շնորհեցիր վայելչու:» յան զրախտի հանդստյան անտանջանք զվարձությունը Անմահ, անհող, հավերժական կյանքի ուրախ վիճակը պատրաստեցիր, եթե հաստատ մնայինք ծասից շճաշակելու պատվիրանին. ասացիր, թե «շուտեր այդ ծառից, որից պատվիրեցի շուտ Քւնդը կենաց ծառ կոչվածը չէր կարսդ կենդանություն տալ աստանց քո բարերար կամքի հրամանի, որը քո կամքն է, խոսքը և բարերարությունը և միաձին Ռոդիդ՝ քո պատվածության ծնունդը. և Սուրբ Հոդին. քեզանից բխելով լցնում է ամբողջ տիեզերքը և քեզ հետ է քո Միածնի հետ քո էռթյան մեջ:

76 Եկ եթե քո պատվիրանի վրա հաստատ մնայինք, Տեր, և պահենք այն պատվիրանները, որ դրել էիր մեր առաքինի լինելը փորձելու համար, մեզ կշնորհեիր անցավ, անշարժար, անբիծ, անհող անտրոտում և առանց ծերության կյանք: Սերնդագործելուց և բազմանալուց հետո, որը պատվիրեցիր մարմնավոր կյանքի համար, ոչ ամոթալի փառքը հագնելով որպես հանգերձ քո դրախտում, որտեղ զբեցիր մեզ և զբանից հետո, ինչպես Ծնովքին՝ ամուսնական սրբությունից ու որդի ծնելուց հետո նրան բարձրացրիր հրեշտակների կարգը, անմահության ուրախ վիճակին: Արդ՝ Եթե մնեք հաստատ մնայինք քո պատվիրանին, մեզ ևս ցուց կտայիր Ծնովքին իբրև օրինակ, որպեսզի երկնային վայելքից ու երկրավոր կարգերից հետո մեզ էլ Ծնովքի նման հրեշտակների կարգը փոխենք և միանգամից տանեիր քո արքայությունը. որը պատրաստեցիր կանխազ մեր փառքի համար, քանի դեռ չկար աշխարհը: Քանզի «այն ինչ աշքը չէր տեսել և

* Եղեկ. է, 19. Սովոն. Ա, 18:

** Ծննդ. Բ, 17 Դ, 11.

ականջը շէր լսել, և մարդու սիրաց շէր զգացել, առաջմանից պատրաստեցիր քո սիրելիների համար»* և որը կատագու, Տեր, նրանց, որ սիրեցին քո Միաձնի գալստյան օրը:

77 Արդ՝ երբ տեսավ թշնամին, որ մենք մեծարված ենք քո կամարար մարդասությամբ, նախանձեց մեր փառքի թագի պատվին՝ քո պատվին, որ դու տվեցիր՝ ասելով թե «իմ կերպարանքի նմանությամբ ստնղծեցի մարդուն և նրան ամեն ինչի տեր դարձրի»**: Քանզի բանսարկութշնամու նախանձի պատճառով ցոփացուցիլ հրապուցրները աշխարհ մտան և մարդկանց զրկեցին կանքից հանգստից, զու բարերարությամբ շնորհեցիր մարդկանց, իսկ նրանք կորցրեցին այն:

78 Իսկ երբ քո աստվածությունը զլլաց մեր մարդկային տկարությանը, մեղ չպրկեցիր զու բարերարությունից՝ շնորհիլ քո անսպառ ողպրմածությանը ներող երկալնամտությամբ երկիր ուղարկեցիր սուրբ մարդարեներին, իսկ քո սիրելիներին սրբնք երկրի լուսավորիչներ եղան, տուարեցիր հնմտանու աղպահի խռավարի մեջ, և անսիտ ու անօրեն մարդկանց կողմից ատելի դասնալով՝ հալածվեցին նրանք հայտնեցին քո լուսավոր խորարդիները և քարոզեցին քո կամքը և քո Որդու գալուստը աշխարհ, որը գալու եր հանցագործ մարդկանց մեղքերի պատիժներն ու տառապանքները իր վրա կրելու:

79 Նրանք այս բանը աշխարհում քարոզելու համար շարշարանքներով մեռան, տանջանքներով և պեսպես խռովանույզ փորձություններով ու դառնությունն հաշակելով ապրեցին աշխարհում իրենց շարշարողների մոտ քո ուսմունքը քարոզելու պատճառով իսկ նեղողներն ու թշնամիները տկարացան ու ընկան, Դրա համար իմ դեմ հարուցած պատերազմի մեջ իմ սիրտը լի վախենում ե ։ Եմ նղված ճակատամարտում քեզ եմ հուսացէ***: Ժամանակների վերջում հայտնեցիր քո կամքը. նախապես պատմէ՛ էի՛

* Ա. Շոռնթ. Բ. Թ1

Թոնդ Ա. 26:

ՀՄԴ. Սաղմ. Իջ. 2-4:

առաջին ազգերին քո սուրբ մարգարեների և քո սիրելի Որդու միջոցով, որին քո կողմից ուղարկեցիր, որպեսզի գա և ծնվի սուրբ կույսից հնչպես, օրինակ, առաջին կույս Եվայի միջոցով մահը աշխարհ մտավ, ապա նույնպես և այս կույսի շնորհիվ կյանքը մտավ աշխարհ։ Ինչպես Եվայի կողմից Կայենի^{*} ծննդյան շնորհիվ աշխարհ մտան անեծք ու քրտինք, շարշարանք, դող ու տատանմունք, նույնպես և կույսից քո Որդու ծննդյամբ աշխարհ կմտնեն երանություն, կյանք ու օրհնություն։

80 Դու աշխարհ ուղարկեցիր քո Միածին Որդուն՝ լուսի լուսը, կյանքի կյանքը, որ եկավ մեր մարմնի նմանությունը առնելու կույսից, որպեսզի մեզ հետ ունեցած նմանությամբ մեզ կրկին աստվածությանը միացնի։ Մարմնով ծնվեց կույսից և մարդացավ ու մարմնացավ մեզ նման, և կա ու կմնա ի փառու իր աստվածության իր աստվածությունը փոփոխում չկրեց, այլ նույնն է, ինչպիսին որ էր, է ե կա ու կմնա հավիտյան Հոդ և սուրբ Հոգու հետո։ Քանզի սիրեց մարդկանց և այդ պատճառով եղավ մեզ նման, որպեսզի իր աստվածության շնորհովը մեղ առավելության հասցնի, որը նրա ծնողի կամքն է։ Եվ նա կատարեց նրա կամքը, իր համբերությամբ փառ վորեց սրբերին՝ կրկեսկ ժանվան տանջանքների վշտալի անարգանքը, մահվամբ ու թաղումով հանդերձ։ Քանի որ մարդիկ սիրեցին պաշտել հյուսների՝ մարդադեմ, փայտագործ, ճարտարագործ արձանները, ուստի ինքն էլ մարդու պատկեր ստացավ, որպեսզի պատկերագործներին, պատկերասերներին իր աստվածային պատկերին հնագանդեցնի։

81 Եվ որովհետեւ մարդիկ սովոր էին մեռյալների անշանչ արձաններին երկրպագել, ինքն էլ մեռյալ արձան դարձավ իսակի վրաւ Մեռավ ու անշնչ ցոյավ, որպեսզի սովորական դարձածի միջոցով արագորեն հնագանդեցնի իր պատկերին իրեն կարի ցույց տալով խաչը և իր մարմինը դարձնելով աշխարհի կերակուր դրա միջոցով նրանց որսալու իր աստ-

* Բնագրում՝ Կահել

վածության մշտնչենավոր արքայության աբրունական ռեզանի համար:

82 Քանդակված փայտերի փոխարեն նա իր խաշը կանգնեցրեց ամբողջ աշխարհի մեջ, որպեսզի փայտի երկրպագելուն վարժվածները սովորական դարձածի միջոցով համաձայնվեին երկրպագել փայտե խաշին և նրա վրա եղած մարդադեմ պատկերին: Քանզի խաշի վրա այսպէս էր ասում, որը իմաստավորելով մարգարեն ասում է. «Ես եղա խոլի նման, որը չի լսում, համրի նման, որն իր բերանը չի բացում»*: Քանզի դու, Տեր, երբ զեռ չէր հաս' լ քո որդո՛ Հիսուսի այս ամեն տառապանքները կրելու ժամը, նախապես ասել էիր մարդարեի միջոցով, թե «քեզ կդարձն համր, և կկապեմ քո լեզուն քո քիմքին և կդառնաս մի մարդու նման, որի բերանում հանդիմանության խոսք չկա»**:

83 Քանզի մարդիկ սիրեցին սնոտի աստվածների պատկերների անխոս կուռքերը, այդ պատճառով էլ Աստծու որդին իր մարմնով մարդու կերպարանք առավ՝ մարդկային պատկերի նմանությամբ և ենելով բարձրադիր խաշի վրա, որպես բարձր դիտակետի, ցույց տվեց մարդկայինի առարածներին՝ անբարբառ մեռելությունը, ուստի տեսնելով նրան տիեզերքի բարձունքի վրա՝ ցնծացին, երկրսլագեցին և հնաղանզվեցին:

84 Եվ քանի որ մարդիկ սովոր էին անխոս կուռք՝ ըստ մեհյաններում ուրախանալ՝ զոհեր մատուցելով, դրա համար էլ քո Որդու զոհարերման ժամանակ զու կոչեցիր առնելով ասելով՝. «Իմ պարարտ կենդանին մորիված է, և իմ ճաշը պատրաստ է»*** ու բազմացրիր ուրախությունը ըստ իւալված Որդու համար և հագեցրիր ամբողջ տիեզերքը կենարար մարմնով, որը բավական կերակուր ու կննդանություն է քո բոլոր երկրպագուներին ամբողջ տիեզերքում: Խակ նրանք, որ չկամեցան հոգեոր սեղանի հարսանիքի

* Սաղմ. ԷՅ, 14:

** Եղեկ. Գ, 26:

*** Մատթ. ԽԲ, 4:

Հրավերքին գալ, նրանց պատրաստեցիր հավիտենական տանջանքներին, անանց դատաստանի անվերջանալի շարաշար մահվանը և նրանց քաղաքները շինեցիր, պատրաստեցիր գալիք բարկության տանջալի կրակների մեջ:

85 Եվ քանի որ մարդիկ ուտում և խմում էին դիցապաշտության զոհաբերվող անասունների արյունը, դրա համար նա իր արյունը թափեց փայտի վրա, քանզի փայտ [դնելով] քանդակված փայտերի փոխարեն, իսկ իր անձը՝ մարդագեմ ոլիղծ արձանների դիմաց և իր արյունը՝ արյունների ուրախ նվազների փոխարեն, դրանով իսկ նորոգում է նա մարդկային մարմնի դալարությունը: Եկավ նա իր արյամբ փըրկեց մեզ ստրկությունից և իր աստվածությամբ աղատեց շար մեղքերի ծառայությունից: Քանզի մենք ենք քո Արդու արյան զինը, նրա արյամբ ու մարմնով փրկվածներս ու ազատվածներս: Մենք չենք մեր անձի տերերը, եթե ըստ մեր անձերի համեմի կամքով ընթանանք և կամ ամեն մահկանացու մարդկանց կամքով, թեպետ և նրանք մեր մարմնական տերերը լինեն, Այնուամենայնիվ պարտավոր ենք նրանց պատվել, ինչպես դու էլ ես հրամայում. սակայն շպետք է քեզնից հրաժարվել մահկանացու մարդկանց ահի դիմաց, քանզի նրանք կարող են միայն մարմինը շարշարել, իսկ միաժին երդիդ, Տեր մեր Հիսուս Քրիստոսը, կարող է դցել հակիտենական տանջանքների մեջ, հոգով և մարմնով հանդերձ, անշեց կրակի և անմա՞ն որդերի մեջ:

86 Տուր ինձ, Տեր, զորություն, համբերելու իմ փորձության ցավերի նեղությանը և ողորմիր ինձ, ինչպես ողորմեցիր այն ավագակին, որը քեզ հետ մասնակից էր քո խաչի շարշարանքներին, և ցույց տուր քո մարդասեր շնորհների գութը, որով ապրում է ամրող երկիրն առհասարակ՝ արդարները և մեղավորները՝ շնորհիվ քո քաղցր ներողամբության: Շանզի քո արեգակը ծագեցնում ես թե շարերի, թե բարիների վրա և անձեռների մեջ աղջում արդարների ու մեղավորների վրա՝* և այսհնալով քո բարկությունը ցույց ես տալիս քո ողորմածությունը բոլոր մարդկանց առհասարակ:

* Մատթ. 6, 45:

**87 Ծնորհներ տուր ինձ, Տեր, համբերելու այս դառն
տանջանքներին, որոնցով կտտում են ինձ, որպեսզի ես ևս
արժանի լինեմ լուսավոր հավատքիս ավանդությունը պա-
հանալու, որ տվել ես ինձ քեզ ճանաշելու և քո կամքը կատա-
րելու համար, Քանզի չեն ամաշի քեզ հուսացողները, որոնք
մի անգամ պարծեցել են քո միածին Որդով՝ մեր Տեր Հի-
սուս Քրիստոսով, որին գու ուղարկեցիր: Դու նրան մահվան
ուղարկեցիր մեր մեղքերի համար, որպեսզի հանձն առնի մեր
հանցանքները ու պատժվի մեր մեղքերի համար, խաշի շար-
շարանքներով իր անձի վրա կրի մեր հանցանքների պատիճը
և պարգևների շնորհը տա իր հավատացյալներին:**

**88 Արդ՝ Տեր բարերար, որ ասացիր թե «Ես ձեզ հետ եմ
ամեն օր մինչև աշխարհի վախճանը»* բաց մի թողնի մեզ
քո ձեռքից, այլ զորացրու մեզ քո կամքով, որպեսզի կարո-
ղանանք համբերել հանուն քո մեծ անվան [մղած] պատե-
րազմին և հայտնի լին: իմեր՝ քո ծառաների, հավատքի
փառքը քո աստվածային տերության մեջ: Ուրացեսզի այս ևս
հայտնի լինի, որ քեզ հուսացողներին ոչ ոք չի կարող հաղ-
թել թշնամիներից, որոնք իրենց են թշնամի:**

**89 Այլ Տեր, խառնիր մեզ քո արդարների թվին հանուն
քո մարդասիրության, որով մեզ շթողեցիր զուր տեղը մեր
հայրերի մեղքերի, մեր նախնիների մոխրասպաշտության և
մեր առաջինների անօրինության մեջ, ճանաշել տվիր քո
աստվածության արարշադորժ էությունը, որ շկորշենք ունայն
հեթանոսության մեջ: Այլ զթացիր քո արարածներին, որ քո
բարկությունը իսպառ մեզ վրա չգա, քո զայրույթը մեզ
շմեցնի և քո ցասումը քո արարածների զեմ շղրդպի:**

**90 Արդ՝ զորություն տուր, Տեր, պատեղազմելու ու մեռ-
նելու քո անվան ճշմարտության համար և մյուս անգամ
փառքով վերածնվելու, երբ դարձյալ ուղարկես մեր յուրա-
քանչյուրի հատուցման կշիռ՝ մեր տեր Հիսուս Քրիստոսին,
որ մենք ևս զվարթ երեսով կանդնենք նրա առջեւ և քո սիրե-
լիների հետ հաղթության պսակն առնենք, քանզի միայն
դու ևս մնալու հավիտյան, իսկ բոլոր նյութական անցավոր**

* Մատթ. ԽԸ, 20:

արարածները մաշվելու են քո խոսքով, Դու ես միայն հավիտենական և մարդկանց իրենց ժամանակին ցորենի նման ամփոփում ես շտեմարանում և գարձյալ նորոգում։ Դու երկրից բուսցնում ես մարդկանց ոսկորները, գալարեցնում և արծիլների նման նորափետուր զարդարում քո սիրելիներին։

91 Տեր ցերեկլվա և խավարի ստեղծիչ, լույսի արարիչ, քոնն է ցերեկը և քոնն է գիշերը, որ լուսավորներ կարգեցիր կարիքների համար, որպես առաջնորդներ քո արարածներին, որոնք ապրում են քո երկրում։ Դու ստեղծեցիր երկու լուսատուներ տարիների, ամիսների, ժամանակների շրջանների համար, աշխարհում եղող օրերի շափերով ժամանակները բոլորելու համար։ Մեկը օրվա իշխանն է և նմանությունն ունի քո Միածնի անշեղ, անսլակաս, աննվազ ու անխափան լույսին, որ հայտնվելու է իր արդարներին հանդերձյալ աշխարհում, ուր չկան ոչ օրեր, ոչ գիշերներ, ոչ շաբաթներ, ոչ ամիսներ, ոչ տարիներ, ոչ ժամ և ոչ ժամանակ, ոչ տարիների և ոչ ժամանակի շրջաններ, բայց կա միայն Տերը և միայն նրա անունը։ Դու բարիքներով ես ուրախության հատուցում տալիս քո երկրպագուներին, որոնց բարիքները չեն փոփոխվում, և ոչ էլ խլվում են տրված պարզեները։

92 Իսկ գիշերային իշխանի երիթ, որ քո կամքով Միածնի նմանությունն ունի, իր մեջ մարմնավորում է հարության վերածնունդը, ցույց տալու, հաստատելու բոլոր երկրավորներին հարության հույսը։ Մանկության ժամանակ գնում է արևմուտքից մինչև արեւելք և կրկին ծերացած արեւմուտք հասնում քո կամքով։ Պատանիքլում, թաղվում է որպես զուշակ թաղված մեռելների հարության և քաջալերական մշկիլարաւթյուն է մատուցում արարածներին, նշում քո Որդու դալուստը երկնքից, իմացնում տիեզերքի նորողումը, տառացնում մեղավորների մաշումը, ոչնչացումը, դալատյան օրը արդարների հարությունը արքայության մեջ և ցույց տալիս մեղրերի մեջ մնացածներից կրկին հաշիվ սպահնեցելը։ Նա զուշակում է ոշնչացողի [տարբերությունը] հավի-

* Համտ, ԵԱ, Խ, 31:

տենականից, անցավորինը՝ հավերժականից, հնացածինը՝ իր նորոգչից։ Ես քո կամքով փոխում է իր կերպարանքը։ ինչպէս որ դու հրամայել ես, մինչև որ վերցվեն եղածների որինակները, որ դու պատրաստեցիր քո խոստումների կատարման օրվա համար, երբ բոլորին հատուցես քո Միածնի քո սուրբ Հոգու ձեռքով, բանզի քոնն է և քեզ է վայել փառքը հավիտյան և հավիտյան։

93 Տեր ամենակալ, որ պսակում ես քեզ հուսացողներին և կատարուա թեղանից վախեցողների կամքը, ինձ էլ արժանի արա Տեր պահեմ քեզ վրա ունեշած հույսս և այն մեծ Կրկուուզը, որ պատճառելու ես քեզ դիմագարձ և զող ամբարիշտներին և տուր ինձ համբերություն ավարտելու իմ ընթացքը այս նեղությունների մեջ, որտեղ գտնվում եմ։ Ով մեր ցավերի բժիշկ, որտաքեկների կազդուրիշ, նեղյալների անզորբի՛, կապվածների արձակիշ, սկավորների միաթարիշ, անհույսների հույս, խոռվյալների հանդիսա, հոգնածների նավահանդիսա, որ սիրով ես նաւում քո արարածներին և ամենքին կերակրում քո քաղցրությամբ։ {Հնարավորություն} տուր ինձ, Տեր, պսակ ընդունելու նրանց հետ, որտեղ արժանի դարձրի քո ան վան համաւ ոնելու և որոնց մահը փառավորված է քո առջեն, որպեսզի ես ևս արժանի լինեմ բարձրանալու քո սիրելի Արդու առջեն, երբ հափշտակի սիրելիներին իր լուսաւ հառապայիններում և իր բարկության հրով ճշմարտությամբ դատի տիեղերքն ամենալուն։

94 Բայց այս զոլապես, Տեր, քո ծառաներին, քո անվան սիրուն, որ հաղթենք թշնամու զորությանը և քո արարածների հանդեպ ունեցած քաղցր սիրով վերացրու ու փարատաիր կոապաշու հեթանոսության շար մեղրւ Դո՛ւ, որ անձդ զբեցիր քո ոչխարների համար, մի լքիր քո հոտը, որպեսզի ուղղություն տաս նրան, Քանզի միայն դու կարսկ ես ներել մեր մեղքերը և քավել քո արարածների հանցանքներն ու անօրինությունները, որ միայն քեզ պաշտեն, քո կամքը կատարեն և լինեն քո աստվածության փառավորիշները, ապրեն լստ քո դատաստանի և վայելեն

քո անճառ բարիքները, որպեսզի առանց ամոթի ու քաշվելու ամենքը արժանի լինեն կանգնելու քո մեծության առջև, իսկ սրանց անդեւ գործը անմեղություն համարես

95 Եվ որովհետեւ սովոր ես ոչնչից հարմարեցնել, անարժեքից արժեք դուրս բերել և ոչնչությունից արարածներ ստեղծել, շիողեցիր մարդկային ազդը իր կամքի քմահաճույքին, այլ զթալով նրան՝ ուղարկեցիր քո միածին Որդուն, որը եկավ արարածներին դարձրեց դեպի քո աստվածությունը և հրամայեց Ավետարանը քարողել ամբողջ աշխարհին: Միայն քեզ է վայել փառավորությունը և հւնց քեզ պետք է երկրպագեն բոլոր արարածները, քանզի միայն դու ևս փառքի ու պատվի արժանի: Արդ՝ քո բարերար շնորհներով զթա քո արարածներին և մեր Հայոց աշխարհի գավառներին, որպեսզի սրանք ևս ճանաշեն քեզ և քո միածին Որդուն, մեր Տնր Հիսուս Քրիստոսին, որը մեզ ուղարկվեց քո կողմից, առավ մեր մարդկային մարմինը և պատկերաց ու նմանեցրեց իր անձը իր իսկ ձեռքով ստեղծածներին, որպեսզի մարդկային մարմինը ստանալով՝ այդ նմանությամբ մարդկանց քեզ մոտեցնի Քանզի մարդիկ ի վիճակի շէին նայելու քո երեսին ու ապրելու, այդ պատճառով նա մարդկանց նմանություն ունեցավ, որ մարդկանց իր աստվածությանը արժանի դարձնի, որպեսզի Որդու աստվածությունը տեսնելով՝ մեզ նման մարմնի մեջ հարգենք նրան հոր բարերարությամբ, ու նրանից ստանանք քեզանից բխած սուրբ Հոգու բարերար շնորհները: Որ քո Ավետարանի պատգամները շնորհվեն այս երկրին, որ սրանք ևս ճանաշեն քեզ և քո՝ ամենքի նկատմամբ ունեցած բարերար շնորհի երախտիքը:

96 Բայց որ ամենքի հետ առատածեռն ես, մեզ ևս քո աստվածությանը վկա դարձրու, որ շահշարվենք քո անվան համար և մեռնենք հանուն քո ճշմարտության և հարություն առնելու քո երկին դալստյան ժամանակ: Քանզի դու եկար և միհար քո արարածների համար և մեր մահկանացու էությունը իւառնեցիր քո անմահությանը: Դրա համար և մենք մինչև մահ քո կենդանության վկաները կլինենք, որ իւառնվենք քո մարտիրոսների թվին և արդյոք ուրիշ

ի՞նչ կարող ենք անել բո բարիքների փոխարեն, եթե ոչ
մեր անձերը տալ քո պատվիրանների դիմաց, քո կամքին
հաճելի լինելու համար, որպեսզի քո արքայության ժառան-
գորդները լինենք նրանց հետ, որոնք քեզ հանու եղան, մեզ
անձերը պատարադ մատուցենք քո աստվածությանը, կորց-
նենք մեր անձերը և հարության օրը դարձյալ դտնենք,
անմեղություն հագած կանդնենք քո աշ կողմում, աջակողմ-
յան դասի գառների հետ, որոնք քո կամքին հնաղանդ են՝
ուրախություն պատճառելով քո սուրբին, որոնք սիրեցին
քո աստվածությունը և միաձին Որդուդ՝ մեր Տեր Հիսուս
Քրիստոսին Նա ճշմարիտ գառն եղավ և իր անձը քեզ
պատարադ մատուցեց համայն աշխարհի մեղքերի համար,
որ լինի հաճեցուցիլ ու բարեխոս արարչիդ ու արարուծների
միջև, իր աստվածային արքայության մեջ օթևաններ
պատրաստեց նրանց, որ մերձեցան՝ ընթանալով քո կամքով,
իսկ որոնք շկամեցան մտնել նրա գալստյան հնաղանդու-
թյան հաճության մեջ, նրանց հավիտենական տանջանք
խոստացավ:

97 Արդ՝ Տեր բարերար, որ եկար խոնրահվեցիր և մարդ-
կային կերպարանի ստացար, քո անձը ամեն տեսակ շար-
շարանքի ենթարկեցիր և չհրաժարվեցիր երեսիդ թքելու
անարգանքից, քո ծնոտը մոտեցրիր խփողներին, մեզ հա-
մար քացախ և դառն լեզի խմեցիր. քաղցրացրու բոլոր
մարդկանց սրտերը քեզ երկրպաղելու, որպեսզի հնաղանդ-
վեն քո ամենաքաղցր լծին և հավիտյան տանջանքներից
աղատվեն, քանզի աշխարհը լցվեց քո աստվածապաշտու-
թյամբ, իսկ այս մնացլաներն էլ դոնե շվրիտեն քս ճշմա-
րիտ ճանապարհներից, հրավիրվեն արքայության սեղանիդ
և քո համբերանիունը վայելեն, իբրև գառ եկար զոհվելու
ամենը համար և ուրախացրիր քո մարմնով, որը տվիր
ամենքին փրկելու համար՝ որպես հաճույքի աղբյուր քո
արյունը տվեցիր բմպելու ամբողջ աշխարհի կենդանության
համար: Դթա, որպեսզի հիշեն, դառնան և քեզ մոտ զան
երկրի բոլոր ծագերից, քեզ երկրպաղեն բոլորը, որոնք հող
են իշնելու*, և դու կարող ես կրկին կանգնեցնել, կենդա-

* Հմմա. Սաղմ. ԻԱ, 30:

նացնել և քո մարդասիրությանը արժանի դարձնել, որովհետև [այդպիսիք] քո իսկական արյամբ են փրկված և ազատված խավարի իշխանությունից։ Արդ, թող ճանաշեն քեզ նրանք, որոնց համար մեռար դու, քանի որ դրանք իսկ քո ծառաներն են և քեզ են երկրպագելու, որպեսզի քո սաստիկ բարկությունը մարդկանց վրա չգրա։

98 Դարձրու մեզ լույսի և ցերեկի որդիներ, որ քո անոնք իհառավորվի ամբողջ աշխարհի վրա, քանզի դու քո էությամբ, իսկությամբ և ինքնությամբ փառավորված ես քո մշտնչենավոր արքայության սեց։ Քո շարշարանքներով խոնարհարար շարշարանքի օրինակ՝ ինքը հալածվելով, քո սիրելիներին և հալածունքի օրինակ՝ ինքը հալածվելով, քո սրբերին ցույց տվեցիր, թե ինչ է տանջանքը՝ բռնցքահարության տանջանքի ենթարկվելով։ Իսկ մենք՝ հողեղեններս, ինչպես թվենք մեր շահարանքների նեղությունները, քանզի դու, Տեր, խոնարհվեցիր և ամեն ինչ հանձն առար, ամբողջ աշխարհի վիշտն ու շարշարանքը տարարւ Արդ՝ զորացրու ինձ, Տեր, տոկալու, դիմանալու այն նեղություններին, որոնց մեջ ես գտնվում եմ, որ ինչքան կարելի է երկար պարձենամ տանջալի նեղություններով և ես էլ հավասարվեմ քո սիրելիներին այն օրը, երբ հատուցես քո անողատում բարիքներով, որ պահվում է քեզ հուսացողներին հավիանականության մեջ»։

99 Այս ամենը խոսեց այնպես կախված դրությամբ, ե գրեցին նշանագրերի ատենակալ դպիրները, քանզի առողինչ էր համարում կախաղանը և բրածեծ լինելու տանջանքը, թեպետ ամբողջ մարմինը ջարդված էր ծեծվելուց։ Դեռ սրանից ավելին էլ խոսեց՝ զլխիվայր կախված վիճակում, և գրեցին ու մատուցեցին այն թագավորին, քանզի յոթ օր կախված էր մեկ ոտքից։ Դրանից հետո հրաման տվեց, և նրան այնտեղից իշեցրին։

100 Հայոց թագավոր Տրդատը սկսեց խոսել նրա հետ և ասաց. «Ի՞նչ [նպատակ] ունես և կամ ի՞նչ ևս մտադիր, իմ կյանքի ընկերակից լինե՞լ ինչպես որ մանկությունից ինձ հետ հոգնեցիր, թե՞ իզուր տեղը մեռնել քո դատարկ

մտքերի, ունայն խորհուրդների համար, որ հիմա էլ ունես»։ Նա պատասխան տվեց և ասաց. «Ես ձգտում եմ ելնել մարմնիցս և հավիտենական կյանք առնել, բայց դու հրաման տուր իմ մասին, որպես և կկամենաս, ինչ մահ էլ որ կառաջարկես ինձ համար»։

101 Արքան պատասխան տվեց՝ ասելով. «Չեմ տա այդ պարզեց, եթե քո մահվան վախճանը արագ է գալու և հանգըստանալու ես տանջանքներից, որ դու հավիտենից կյանք ես կոշում, այլ երկար տանջելու եմ քեզ, որ շկարողանաս արագ մեռնել, և տանջելու եմ երկար ու չեմ ներելու աստվածներին տված քո անարգանքը և քո համառությունը, որ շկամեցար պաշտել նրանց»։

102 Հրամայեց թերել փայտի կոճղեր և դնել ըստ ոտքի սրունջների ոսկորների և բարակ պարաններով ուժգին պրկել, մինչև որ արյունը նրա ոտքի մատների ծայրից ցայտեր, և ասաց. «Դիտե՞ս, կամ արդյոք զգո՞ւմ ես որեւէ ցավս։ Նա պատասխանեց ու ասաց. «Ինձ զորություն է տրված, քանզի խնդրել եմ արարածների Արարշից, որը ճարտարապետն է և արարիչը ամեն բանի՝ երեացողի և աներենույթի»։ Հրամայեց և դրանից արձակեցին նրան։

103 Հրաման տվեց թերել երկաթե թևեռներ, գամել ոտքի սերբաններին և այս ու այն կողմից բռնելով նրա ձեռքերից քայլեցնել այս կողմ և այն կողմ։ Արյունը հոսում էր իջում նրա ոտքերից և հույժ առատորեն ոռոգում գետինը. Դարձյալ ասաց նրան. «Ա՞յդ են քո Աստծու աներենույթ զորձերը, որ դու տեսնում ես»։

104 Ասաց նա. «Ճիշտ ասացիր, թե այս են իմ Աստծու աներենույթ զորձերը, որովհետև Շտկարությամբ է սերմանվում և զորությամբ ելնում, անարգությամբ է սերմանվում և փառքով հարություն առնում»*, Քանզի ոլալով են գնում նրանք, որ իրենց ցանելու սերմն են տանում»**, այսինքն դրանք վշտեր են և չարշարանքներ, որ հասնում են մեզ

* Ա. Կորնթ. ԺԵ, 43։

** Սաղմ. ՃԻԾ, 6։

աստվածապաշտության պատճառով։ Սակայն երբ ցորենի խորձը հնձի ժամանակ սերմանողներին մատուցի պարատ, բերրի պոտողը, նրա հետ և ուրախալի, բերկրավի Ցնծություն է բերում ամենքին»։

105 Թագավորն ասաց. «Խփեցեք աչքերին⁴, և թող նրան ուրախություն լինիս, Բոնցքահարեցին, սաստիկ ծեծեցին նրան։ Սկսեց հարցնել նրան և ասաց. «Ա՞յդ է ուրախությունը», Նա ասաց. «Այս, այս է, որովհետեւ լին մշակը շքրտնի սաստիկ շողին՝ արեահար լինելով, ձմեռային հանգըստյան օգտավետ ուրախության պաղաքեր արդյունքը չի հասկանած։ Արքան պատասխանեց և ասաց. «Դու հենց այստեղ շարշարվիր քո տանջանքների ծառայությամբ, որի մեջ գտնվում ես»։

106 Հրամայեց բերել ազ, բորակ ու թունդ քացախ և նրան դցել երեսն ի վեր, դլուխը հյուսնի մամուլի մեջ պըրկել, բթին եղեղի խողովակ դնել և դրանք բթի մեջ լցնել։

107 Դրանից հետո հրամայեց և բերեցին կաշվե մեծամեծ պարկեր, լցրին հնոցի մոխրով և մի բիշ թուլլ թողեցին, որ լրիվ լցվի ու շունչ առնելու հնարավորություն լինի և ներս անցնելով՝ վտանգի նրանւ Այն նրա զլիին հաղցրին, պարկի բերանը վւշին կասյեցին և վեց օր նրանով մնաց։ Մրանից հետո թաղավորք հրաման տվեց, ու բերին իր առջեւ և պարկը զլխից հանեցին։

108 Թաղավորը սկսեց խոսել և ասաց. «Որտեղից ես դալիս, թերեւ այն արքայությունից, որի մասին ստում էիր»։ Գրիգորը պատասխան տվեց ու ասաց. «Այս, հենց արքայությունից, որի մասին ասում էի, այնտեղից և՛ գալիս. որովհետեւ աստված ինձ արժանի արեց այս ամենը իմ անձի վրա կրելու իր անվան համար։ Արդարն ինձ համար կա այն արքայությունը, որը անանցանելի է, [ուր] մոխրի փոխարեն անթառամ ծագիկներ [կան] և քացախի փոխարեն՝ անսպառ ուրախություններ»։

* «Զաման լալոյ արտասուացն» բառացի նշանակում է արտասուքի ու լալու աման, այսինքն՝ աչք, բայց հավանորեն այստեղ խոսքը վերաբերում է գլխին.— Խմբ.։

109 Թագավորը զայրացած հրամայեց նրա ոտքերը կապել տիկերի փոկերին. գլխիվայր կախել, ձագար դնել նրա նստատեղին և տիկով ջուր լցնել նրա որովայնը։ Ապա հրաման տվեց, և իշեցրին այգոտեղից, ու սկսեց հարցնել նրան՝ ասելով. «Կկատարե՞ս իմ կամքը. թե՞ չես պաշտի աստվածներին. որոնք ամբողջ երկրի կրանքն են ու հիմքը»։

110 Պատասխանեց Գրիգորն ու ասաց. «Ես կերկրապատեմ իմ տեր Աստծուն, քանզի նա է արարիչը, կյանքն ու հիմքը և Որդուն, որն ստեղծող է համազոր ու համագործ և նրա Հոգին, որն իմաստությամբ լցուեց ամբողջ աշխարհը։ Իսկ կուած կուիած փորագրած ու ձեռագործ կուոքերը երբեք աստվածներ չեմ համարել և այլ կերպ չեմ անի, քանի զեռ շունչ կա իմ մարմնի մեջ։ Պատասխան տվեց թաղավորն՝ ասելով. «Քանի որ համարածակիցիր աստվածներին կուած ու քանդակված կոշել, պետք է փոխարենը [հաշիվ] պահանջենք»։

111 Հրամայեց նրա կողերը քերել երկաթե քերիչներսկ, մինչև որ նրա արյունով ամեն կողմ ոռոգվեց։ Սկսեց ասել նրան. «Արդ՝ Գրիգոր, որ այդպիսի տանջանքների մատնը-վեցիր, կկատարե ս իմ կամքը։ Ասաց նրան. «Ես պետք է պահեմ աստվածաւաշտոթյան ուխտը, որն իմ մանկությունից եմ սովորել, և նա կարող է ինձ փրկել ամեն մի նեղությանից, իսկ քեզ կնետի տանջանքների մեջ, քանի որ չես ճանաչում նրան և դեռ ուրիշներին ևս զարհուրեցնելով կատարեմ ևս հեռացնել նրա սիրո պաշտումից։ Թագավորը պատասխանեց. «Ա՞ւր է, թո Աստվածը, որը քեզ փրկի իմ ձեռքից և կամ դատի, որպես ասացիր. իր դատաստանով։

112 Հրաման տվեց և բերին երկաթե տատառկ բազում սուկասներով ու խիտ փուեցին զիտնին. մերկացրին Գրիգորին և մերկ զցեցին տատառկի վրա։ Նրա մարմինը ծակուռ-վեց ամբողջովին, քաշեցին ու թաղեցին տատառկների մեջ և նրան այնուեղ շրջշրջեցին մինչեւ որ ծակծկվեցին նրա մարմընի բոլոր մասերը ու նրա վրա ողջ տեղ շմնաց.

113. Մյուս օրը նրան բերեցին [թագավորի] առեւ Սկսեց հարցնել ու ասել. «Զարմանալով զարմանում եմ և խիտ շատ, թէ ինչպէ՞ս ես զու կենդանի մնում։ Ոչնչի ա՛զ

դրեցիր բավկնրդ և դեռ խոսում ես էլ, քանզի պետք է որ դու վաղուց վախճանված լինեիր այդ տանջանքներից»:

114. Պատասխանեց Գրիգորը ասաց. «Իմ տոկալն ու դիմացկունությունը իմ զւրությամբ չեն, այլ իմ Տիրոջ շնորհի ուժով և իմ կամքի հոյարությամբ, որ խնդրեցի նրանից, որպեսողի դու էլ փորձության ենթարկելով Աստծու ծառայիս, գիտենաս, թե ոչ ոք չի կարող նրան հուսացողներին վանն նրա սիրուց։ Քանզի նա ուժ և համբերատար զորություն է տալիս նեղություններին ու փորձություններին դիմանալու, որ քեզ նման անօրեններն ամաշեն իրենց ունայնության*, ամբարշտության և անհնագանդության համար ու ամսթով մնան այցելության ու հանդիմանության օրը»:

115. Եվ հրաման տվեց նրա ծնկներին երկաթե կապիճներ հազբնել, մեծ կուաններով հարվածել և կուխաղան բարձրացնել, մինչև որ նրա ծնկները հոշոտվեն։ Այսպես կախված մնաց Լրեք օր։

116. Չորրորդ օրը¹⁸ թագավորը հրաման տվեց և նրան իջեցրին կախաղանից ու բերեցին կանգնեցրին իր առջև Թագավորն սկսեց խոսել ու ասաց. «Տես դու, Գրիգոր, որ քեզ չփրկեց քո սնոտի հուլսը, որ դու ակնկալում էիր, և քեզ շագատեց իմ ձեռքից»։

117. Պատասխանեց Գրիգորը ասելով. «Դու տես, որ սնոտի են քո հուլսերը, քանի որ ոչ կարողացան ինձ համոզել, ոչ էլ վախեցնելի Այն որ դու ես պաշտում սնոտի է այնպես, ինչպես ե՞ն քո բոլոր մոլոր գործերը»։ Բայց տես, թե ինչպես քո տված տանջանքներից բոլորովին չվախեցա և քո ահավոր սաստը առ ոչինչ համարեցի, այլ իմ Տիրոջ զորությամբ մարտնչելով թշնամու դեմ, որը ծածուկ քո միջոցով պատերազմում է ընգդեմ ճշմարտության իմ մարմինը մատնեցի տանջալի կիզման, քանզի վաղ թե ուշ հնացած մարմինը քայլքայվելու է, որպեսողի գա ճարտարապետը և գտնելով մարդկանց որդիներին նույն հնացածը կրկին նորոգի։ Եվ նրանց, որոնց հոգիները գտնի պար-

* Սաղմ. ԽՌ, 4.

կեշտության, զգաստության, սրբության, քաղցրության, հեղության՝ աստվածապաշտության մեջ՝ կնորոգի, կզարդարի և կյանք կտա այդ հոգիներին նույն մարմնի մեջ, իսկ որոնց որ գտնի անօրենության, ամբարշտության, աստվածատեցության և կռապաշտության մեջ, թեպետև միառժամանակ նրանց մարմինը աճի, այլ նրանց նույն հոգով ու մարմնով կնետի զեհեն, անշեց հրի, հավիտենական տանջանքների մեջ, մանավանդ այնպիսիներին, որոնք քեզ նման կռապաշտության մեջ ենու:

118 Իսկ երբ թագալորն այս լսեց, բարկացալ այս խոսքերի վրա և ասաց. «Իմ փույթը չէ, թե քո Աստվածը քեզ կվերակենդանացնի, թե ոչ, ինձ այդ պետք էլ չէ» Բայց որ ասացիր, թե ինձ անշեց հուրը կնետի, ես քեզ այստեղ իսկ կայրեմ մարող հրով. տեսնենք ինչ կանի քո Աստվածը»:

119 Հրաման տվեց երկաթե պուտուկների մեջ կապար հալեցնել և մինչդեռ տաք վիճակում էր՝ զրի նման թափել նրա մարմնին. Այրեցին նրա մարմինն ամբողջովին և շմեռավ, այլ մեծ ուժով մնում էր և ինչ որ հարցնում էին, անմիշապես պատասխան էր տալիս:

120 Զարմացավ թագավորը նրա սաստիկ համբերության, դիմացկունության ու առկունության վրա և ասաց. «Ենչպե՞ս դեռ շռնչ ունեմ այսքան ժամանակ և շարաշար տանջանքների մեջ, որոնցով քնդ խոշտանգեցիս» Գրիգորը պատասխան տվեց՝ ասելով. «Չէ» որ նախապես ասել էի քեզ. թե կտեսնեն Աստծու ծառայիս հասներության օրինակը, քանզի նա զորություն է տալիս, որպեսզի ամոթով մնան նրանք, որ նրանից հեռու են և քեզ նման մարտընչում են նրա վեմ: Այսպես է նա ասում. «Չեզ չեմ թողնի և ոչ էլ վայր կցը եմ»: Արդ՝ այս է նրա պահպանությունն իր արւարածներին և սիրելիներին, որոնց նա պահում է իր հաւաքեպ ունեցած հավատքի մեջ, մինչ որ հատուցի նրանց իր դարստյան ժամանակակայ»:

121 Մինչդեռ Տրդատը խորհում էր այլ սիրաշահությամբ խռուել նրա հետ, և կյանք ու պատիվ խռոստանալ, որոնց

սումով մերժեցին մեզ, զրկեցին մեծ տերությունից Մանավանդ քրիստոնյա աղանդի մասին պատվիրում եմ ձեզ, որ եթե գտնվի այնպիսին, որ հաղար և բյուր դեպքից մեկ անգամ խափանարար լինի աստվածների պաշտամունքին, այդպիսին եթե գտնվի, [պետք է] շուտափույթ հայտնաբերի, և արքունիքից պարզեներ ու պատիվներ շնորհի հայտնաբերողին: Իսկ եթե որևէ մեկը չհայտնի կամ թաքցնի այդպիսինը, և ասլա դտնվի, մահապարտ կհամարվի, արքունի հրապարակը բերվելով կսղանվի, և նրա տունը արքունիքին կտրվի:

136 Արդ ինչպես որ ես շինայեցի իմ վաստակավոր ջրիգորին՝ իմ սիրելիին, որին հենց նման պատճառներով շարաշար ու սաստիկ տանջանքներով տանջեցի և դրանից հետո նրան տնմատշելի Խոր վիրապ նետել տվեցի, որպեսզի իսկույն օձերին կհրաշուր դառնա, նույնիսկ նրա մեծ լիառակը նկատի չունեցա ի սեր աստվածների ու նրանց ահու, ասլա թող ձեզ էլ ահ լինի և մահվանից երկյուղ, ուստի մնացեք աստվածների հովանավորության տակ և մեզանից բարին կգտնեք: Ողջ եղեք, իսկ մենք ինքներս ողջ ենք»:

137 Այդ ժամանակներում պատահեց, որ Դիոկղետիանոս կայսրը կամեցավ իր համար կին առնել և այնուհետև իր տերության բոլոր կողմերը սկսեցին շրջել նուասան ճարտար նկարիներ, և դեմքի ղեղեցկությունը, մրազարդ հոնքները ճշղրտորեն, հասակին հարմար, համապատասխան ներկերով նկարում էին տախտակների վրա, որպեսզի զեյդիմաց ցուց տան թագավորին՝ ի համույս նրա:

138 Այդ ժամանակ ղալով Հռոմ քաղաքը, գտան կույսերի մի արկելավանք, որոնք լեռներում մեկուսացած, բուսակեր, ժուժկալ, պարկեշտ և սրբանվեր կանայք էին, քրիստոնեական հավատքով լի, որոնք գիշեր ու ցերեկ և ամեն ժամանակ փառավորությամբ ու օրհնությամբ իրենց

աղոթքը արժանավորապես դեպի վեր առ Աստված էին ուղղում։ Նրանց զլխավորի անունն էր Գայանե, որն ուներ մի սան՝ աստվածապաշտ մարդու դուստրերից՝ թագավորական տոհմից, որի անունն էր Հոփիսիմէ²¹։

139 Երբ եկան հասան, բռնությամբ մտան առաքինի իշխանց սուրբ կայանը, տեսնելով պարկելշտագեղ Հոփիսիմէին, սքանչելի տեսիլքով ապշած, զարմացած՝ նկարը տախտակի վրա նկարեցին և թագավորին հասցրեցին։

140 Երբ թագավորը տեսավ Հոփիսիմէի կերպարանքի նկարի հիասքանչ վայելլությունը, կմտաղի ցանկության տոփանքով լցվեց, որովհետեւ հիմար, մոլեզին, անկարդ ցանկությունը ստիպում էր. [և նա] հարսանիքի ուրախության ժամ որոշելով տագնապով շտապեց հարսանեկան ուրախությունն անել։ Այդ ժամանակ շուտափույթ պատվիրակներ ուղարկեց բոլոր երկրները, որ ամենքը օժիտներ ու բնծաներ բերեին մեծ հարսանիքին և մեծ ուրախությամբ ամենքը առհասարակ զային արքայական փեսայի կարգը կատարելու ըստ թագավորական օրենքների։

141 Երբ առաքինի [Կույսերը] տեսան թշնամու գալտնածիգ նետերը, որով սովոր էր քրիստոսասեր սրբերին ծածուկ հարվածել, [հասկացան որ] թագավորը շարի գործիք է՝ դարձել։ Ինչպես այնտեղ դրախտում օձին միջոց զարձը-նելով, պատվիրանը մոռացնել տալու համար [ուստանան] մտավ առաջին կնոջ անզգամ ականջը, նույնպես և այստեղ անօրեն թագավորին դիմակ գարձնելով՝ նրա միջոցով մարտնչում էր աստվածաշեն եկեղեցիների դեմ։

142 Իսկ որոպայթադիր թշնամին թագավորին հապատացնելով, ամբարտավանացնելով, գրգռում էր նրան հալածանք հարուցելու աստծու եկեղեցիների դեմ, խելացնորեցնելով նրան, ստիպելով երկրապագել մեռելուի ուրվականներին, սնոտի աստվածների ոսկեղեն ու արծաթեղեն, փայտեղեն ու քարեղեն և պղնձակերտ արձաններին ու պիղծ պաշտամունք կատարել։ Ամբարտավանորեն բարձրանում էր՝ եկեղեցու հավատքի հաստատուն վեմը հարվածելու, [սահայն] վեմին ոչինչ չկարողանալով անել, ինքը վեմի վրա խորտակվեց։ Այնուհետև մոլեզին ամբարտավանությանը

ապավինելով բազում և անշափ վնասներ էր հասցնում Աստծու եկեղեցիներին:

143 Թայց երանելի, պարկեշտասեր Գայանեն սրբասնյալ Հռիփիսիմեի և իրենց այլ ընկերների հետ, չիշելով սուրբ ուխտը, իրենց ընտրած օրինավոր կրոնի գգաստության սրբությունը, ողբում էին իրենց անձերը նկարացուց հրամանի պատճառով, քանի որ պիղծ և անօրեն թաղավորը տեսնելու կը իրենց պատկերները Ճգնությամբ աղոթք մատուցեցին՝ օգնություն խնդրելով բազումողորմ Տիրոջից փրկելու այն փորձությունից որ հասել էր իրենց. Եվ աղաւանքի մեջ այսպես էին ասում նրանք.

144 «Տեր տերանց, Աստված աստվածոց, Հավիտենական Աստված, Աստված երկնքի, Աստված անձառ լուսի, որ ամեն ինչը Հաստատեցիր քո խոսքերով, ստեղծեցիր երկինքն երկիրը և նբանց բոլոր զարդերը, մարզը կերտեցիր երկրի հողից խմաստուն դարձրիր, բազմացրիր նրան երկրի վրա և բոլոր դարերում օգնական եղար նրանց, որ բեղ հուսացին:

145 Արդ մեզ ևս օգնիր. Տեր, այն պատերազմի մեջ, որով դու նեղում ես մեզ որպեսզի հաղթենք սատանակի նենդությունների սրովայիններին և թող փառավոր լինի չո անունը, Տեր և քր եկեղեցու զորությունը բարձրանա. որ մենք ևս արժանի լինենք քո պատվիրանները պահողների արքայության օթեանները հասնելու. Թող Տեր շապտերների մեջ ձեմի պակասություն լինի և մեր սուրբ ուխտի Հավատքի ճրադները շհանգչեն. Մեր լուսավոր հանասարհների վրա թող շհասնի կորստան Դիշերվա տիսուր մթացուցիչը, աւր ոտքերը լշեղվեն քումսազնաց շավիդներից և մեր քերի բիրները շկուրանան քո ճշմարտության զվարթարար ճառագայթներից. Թող մահատարած թոշունը շհափշտակի կհնաց բույսի սերմերը, որ մեր մեջ սերմանել է քո միածին Ռ. յին, մեր տեր Հիսուս Քրիստոսը, ապստամբ ղազանը շիւի քո սուրբ հոտի զդաստությունը, տպականիշ գալլը շհա լիի քո հոտի զառներին, և թող մեր ուխտի Ռշնամին շջրի քո առաքելական սուրբ եկեղեցու ոչխարներին:

146 Տեր Աստված մեր, որ առաքեցիր քո Միածին Որդուն, ար և կավ և ամրողը աշխարհը լցրեց քո իմաստուն հոգով, որպեսզի ամենքին Խրայելում աստվածատես գալիքնին Մենք լսեցինք, որ նա ասել է. «Թեպետ հալածեն ձեզ թաղաքից թաղաք, դուք փախչելով չեք սպասի Խրայելի թաղաքները մինչև իմ վերստին գալուստը»*:

147 Արդ՝ խնայիր, Տեր, մեր անձերին, որ ապավինեցինք քո սուրբ անվանը, որպեսզի շխայտառակվենք հեթանոսների պղծության անարգանքով և մեր սուրբ զգաստությունը մի հանձնիր նրանց վավաշոտ, անօրեն ու շնարարո լկտիւթյանը և մեր հավատքի կուսության մարգարիտը նրանց անբարշտության խողագնաց շավիզներին մի տուրո թող մոլորահողմ խարեւության և պղտոր ու վարար ջրերի անհագ հորձանուտը շշարժի քո սուրբ եկեղեցու հիմքերը, որոնք թաղմապատիկ արդար վիմերով շինվել են այն հաստատուն քարի վրա, որի ավարտման անկյան գլուխը եղալ մեր Տեր Հիսուս Քրիստոսը իր մարմնանալով, խաչի վրա մահվամբ, արյունը թափելով, հարությամբ և երկինք վերանուլով ու նստելով քո աստվածության ազ կողմը, ուր կար առաջ:

148 Արդ՝ Տեր, նայիր երկնքից՝ քո սրբությունից, որպեսզի չլինենք ավագի վրա շինված այն տան նման, որը խարխրեցին պես-պես փորձությունների նեղիշ խոռվությունները, այլ հաստատիր մեզ խաղաղության Ավետարանի ճշմարտությամբ և առաջնորդիր մեզ ըստ քո կամքի. Արժանի արալույսի հարսանիքի զիշերին. երբ զիշերը դերեկվա նման լուսավոր կդարձնես քո փառքի ճառագալիների ծագման ժամանակ, Ապրեցրու մեղ քո թների տակ, և մենք կհասնենք կամքի նավահանգիստը: Ծուր մեզ հնարավորություն նահատակության բաժակը խմելու, որպեսզի փոխարենը առնենք պսակը արդար գատաստանի օրը, երբ քո փառքը հայտնվիս:

149 Սրանից հետո սուրբ Գայանեն Հոփիսիմե սանով ու մյուս պարկեցա ընկերներով հանդերձ գնացին, հեռա-

* Մատթ. Փ, 13:

ցան՝ փախուստ տալով, որպեսզի իրնենց անձերը սրբությամբ պահպանեն Հողաթափալ, մեղսաթաթափ, մեղանշական, անօրեն ու դիվական մարդկանց խառնակությունից և արժանի լինեն Հույսի կենդանության և լույսի Հարության լիությանը հասնելու, առաքելական սահմաններով անվախճան ապրելու հանդերձյալ դատաստանի ժամանակ և գահի աջ կողմը մտնելով խոստացյալ բարիքներին հասնելու Անթառամ պսակներով զարդարված հինգ աստվածահանո կույսերի հետ, բարի գործերով լուսավորված դրախտի նորոգ վայելլության հանգստությամբ աստվածային փեսայի հետ արդարների բազմաժաղովին Աբրահամի սեղանակիցների անպակաս ուրախություններին լինել ժառանգորդ, ինչպես և Տերը Ավետարանի մեջ ասաց. «Ով իր բնակությունը թողնի իմ անվան համար, իմ մյուս անդամ գալստյան ժամանակ նրան հալիտենական կյանքի ժառանգորդ կդարձընեմ»։ Նրանք ոչ թե սոսկ ժամանակավոր մահվանից էին փախչում, այլ անտանելի կատաղի և անօրեն ցանկություններից էին ճողոպրում։ Ոչ թե [ուզում էին] սոսկ իրենց մարմինները երկրայինների տանջանքներից, զրպարտությունից ազատել, այլ իրենց Հոգիները սրբությամբ, առանց աղտևղության պահել անօրեն կրոնի մարդկանց անտուակ, պիղծ ու կեղտուոտ խառնակությունից։ Իրենց անձերը պատրաստել էին բանտի կապանքների ու պատիժների, մահվան և սաստիկ նեղությունների։ Տիրոջ անվան համար սահմանված, որպեսզի արժանի լինեն արդարության պսակին հասնելու Այս պատճառով, ի սեր աստվածային հրամանի, թողել էին իրենց ծննդավայրը ինչքն ունեցվածքը, մերձավոր ազգականներին ու տոհմակիցներին և իրենց անձերը հրեշտակային զվարի կարգով լուսավորել էին առաքինի վարքով, որպեսզի կարողանան տեսնել Աստծուն։

150 Այն ժամանակ նրանք եկան-հասան Հայոց երկիրը, Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը, որը նաև նոյնաբաղաք է կոչվում, Հայոց թագավորների նոտավայրը Այնուհետև եկան-մտան այդեստանների հնձանները, որոնք

շինված էին հլուսիս-արևելյան կողմում։ Սնվում էին իրենց ունեցվածքը քաղաքում վաճառելով, չունեին իրենց հետ ապրուստի միջոցներ, միայն թե նրանցից մեկը գիտեր ապակեգործության արհեստը, ապակյա ուզունքներ էր պատրաստում և իրենց օրական ապրուստի ու պարենի դրամն էին ճարում։

151 Այդ ժամանակ քիչ խոռվություն շրարձրացավ Հունաց աշխարհում։ ամեն կողմերում լարված որոնում էին, սուրհանդակներ ուղարկում, որ թերեւս կարողանան նրանց գտնելու Պատվիրակ Եկալ Մեծ Հայքի Տրդատ արքայի մոտ և ներկայացավ նրան Վաղարշապատ քաղաքում։ Երբ հրովարտակը մատուցեց նրան, սա վերցրեց այն ուրախությամբ։ Հրովարտակի պատճենն այս էր։

152 «Ենքնակալ կայսու Դիսկվետիանոսը մեր սիրելի եղբայր և աթոռակից Տրդատին, ողջույն։

153 Թող ի գիտություն լինի քո եղբայրությանը և մեր նիզակակցին այն շարիքների մասին, որ ամեն օր հասնում են մեզ քրիստոնյաների խաթերա աղանդից, քանզի ամեն բանում անարդվում է մեր տերությունը նրանց ուխտի կողմից, մեր թագավորությունը արհամարհվում է նրանցից և ոչ մի համեստություն չկա նրանց մեջ։ Մի ոմն խաչյալ մեռյալի են սպաշտում, փայտին երկրագում, սպանվածների ոսկորները հարգում և իրենց աստծու սիրուն մահը փառք ու պատիվ են համարում։ Մեր արդար օրենքներով դատապարտվում են, որովհետև մեր նախնիներին՝ առաջին թագավոր հայրերին, դաւնացնելով ծանձրացրին։ Մեր սրերը բթացան, իսկ նրանք զզարհուրեցին մեսնելուց, քանզի մոլորված են՝ ոմն խաչյալ հրեայի հետեւելով։ Ուսուցանում են թագավորներին անպատվել, իսկ բուն աստվածների կուռքերը՝ անարգել։

154 Նաև լուսավորների՝ արեգակի ու լուսնի զորությունը աստղերով հանդերձ արհամարհում են և համարում են նուլ-նիսկ այդ խաչյալի ստեղծածք։ Աստվածների կուռքերը անարգել սովորեցրին և ամբողջ աշխարհը նրանց պաշտամունքից հեռացրին, մինչև անգամ կանանց տղամարդուկանցից և տղամարդկանց կանանցից ողջ-ողջ հեռացնում են։

Թեսլետև տեսակ-տեսակ տանջանքներ տվյալներ նրանց, առավել ևս բորբոքվեց ու տարածվեց նրանց աղանդը և թևութեատ բյուրապատիկ սաստիկ արհավիրքներ գցեցինք նրանց վրա, սակայն նրանց արյան հեղումից առավել ևս ծաղկեց ու բազմացավ նրանց աղանդը:

155 Պատահեց, որ տեսա նրանց ուսմունքի աղանդից մի զեղեցիկ կույս օրիորդի և կամեցա նրան կնության առնել, սակայն հանդինեցին նրան ևս ինձանից խորամանկորեն հեռացնել: Նրանք ոչ ցանկությամբ փափաթեցին ինձ իրեն թագավորի, ոչ էլ իմ սաստիկ սպառնալիքներից որևէ վախ ունեցան, այլ իրենց աղանդի պատճառով ավելի ևս աղանդի, պիզծ ու դարշելի համարեցին ինձ և սնուցիչ դայակի միջոցով նրան թաքուն ուղարկեցին ձեր տերության կողմերը:

156 Արդ՝ փութաջան եղիր, եղրայր մեր, որպեսզի ուր էլ լինեն: այդ կողմերում, կարողանաս նրանց հետքը դտնել և նրա հետ եղածներին դայակով հանդերձ վրիժառությամբ մահվան արժանացնես, իսկ խաբված շքնաղաղեղ կուսին այստեղ ինձ ուղարկես: Իսկ եթե նրա գեղեցկությունը քեզ հաճո թվա. այդտեղ մոտդ կպահես, որովհետև նրա նմանը Հրբեք շղանվեց մեր Հունաց աշխարհում: Ողջ եղիր աստվածների պաշտամունքով ամենայն պատվով»:

157 Երբ ընթերցեցին սույն հրովարտակի թուղթը, արքան իմաստ հրաման տվեց՝ պատվիրելով, որ իր իշխանության բռնոր վայրերը մանրակրկիտ խուզարկումով փութաջան ոբոնեն: Շուտափույթ սուրհանդակներ ուղարկեց տարբեր կողմեր, որպեսզի ուր էլ դտնեն, անմիջապես մեջտեղ բերեն, իսկ ով որ դտնի նրանց, խոստանում էր մեծամեծ պարզեցներով հատուցել:

158 Մինչդեռ Հայոց աշխարհի սահմաններում քննության իրարանցման մեջ էին, այն սուրբ վկաները և կան թաքնվեցին արքայական նստավայրի մոտ, նույն թաղավորական Վաղարշապատ քաղաքում: Այն օրերից քիչ անց շուտով որոնումներով մեջտեղ բերվելով հայտնի դարձան:

159 Սակայն ճշմարտությունը և առաքինության նահատակները երբեք չէին կարող թաքնված մնալ, և ոչ լույսի ճրա-

գը [կարող է] ամանի տակ ծածկվել, ոչ էլ նստարանի ստվերի ներքո աներեւոյթ դառնալ, այլ ոսկով զարդարված աշտանակների վրա և պարարտ անուշահոտ յուղերով լի ոտկե կանթեղները, որպես արդարության հավատքի նշան, պետք է վառվեն և համապայծառ լուս [տան]: Որպես և հենց իրենք իրենց առաջին աղոթքների մեջ աղաշում էին, ինչպես և Տերն էր ասել իր սիրելիներին, թե «Տեսնեն ձեր բարի գործերը և փառաբանեն ձեր Հորը, որ երկնքում է»*:

160 Տեսնո՞ւմ ես, թե ինչպես բարի գործերի դիմաց Աստծու ճշմարիտ որդին չի խորշում իր ժառանգությունը տալ սիրելի ժառանգներին: Ինքը, որ էությամբ որդի է, անվեհեր մոտեցնում է պատվիրանապահներին իր էությանը, միայն թե մարդ այնպիսին լինի, որ նրա խոսքերը պահի, որպես թե խնդությամբ թանկապին մարզարիտ գտած լինի, զնի ու գուրգուրանքով պահի այն և առնելով պատվի նշանը, թագավորական պսակը՝ արքայականին մերձենա: Ահա որպես այս լույսի պատվականաթյուն երեաց մեր Հայաստան աշխարհի հեթանոսների առջև՝ ակամա, իսկ աստվածությանն ուղղված փառաբանության հնչյունները լցրին աշխարհը:

161 Արդ՝ նրանք գտնվում էին շենքերի հնձաններում, և Ֆրը հունաց մեծ թագավորի հրովարտակը հասավ Մեծ Հայքի արքա Տրդատին, պակաս խոռվություն շեղավ Հայոց աշխարհում, քանզի պահպանում էին պողոտաների և բոլոր դալառների ամեն անցքերը տարբեր կողմնը երնելով իրարանցման մեջ փնտրում էին: Իսկ մեկը, տեսնելով, ուատմեց նրանց մասին:

162 Երբ նրանց մասին իրողությունը հայտնի դարձավ, սպա երկու որ փահանատփակ շրջապատեցին նրանց՝ հետեակ դորքի մի լեզեռնի հանձնարարելով պահևլ նրանց այնտեղ, ուր գտնվում էին Ասլա երկու օր անց Հսիհսիմեի պարկեշտության ու շքնաղ ղեղեցկության համբավը հոշակվելով բաղմամբոխ հրապարակներում տարածվեց, և ամեն մարդ մյուսին իր զարմանքն էր հայտնում:

* Մատթ. ծ. 16,

163 Իսկ նրա գեղեցկությունը տեսնելու համար խուռներամբ քազմությունը կուտակված-դիպված հավաքվեց, նաև նախարարներն ու ավադանու մեծամեծերը նրան տեսության դալով՝ իրար վրա էին թափանում։ Ազնվական մարդիկ խառնիճաղանց ամբոխի հետ մեկտեղ դիպվում էին միմյանց վրա իրենց վավաշոտ, հիմար, ցոփ բարբերի, այլանդակ մըտքերի, գեղիս, անառակ հնիթանոսական սովորությունների պատճառով։

164 Իսկ երանելիները, երբ իմացան անմիտ ու վայրենաբարու մարդկանց անպետքությունը, ողբաձայն արտասուրքով, ձեռքները աշոթիքով լի երկինք բարձրացրին՝ փըրելուիցուն ինդրելու ամենազոր, ամենակալ Տիրոջից, որն առաջին անգամին փրկեց նրանց չար, զազրելի հեթանոսների անօրեն պղծությունից, որպեսզի այս մարտում նույնպես նրանց հաղթություն տա և հավատքի լուսավորություն։ Երեւները ծածկելով ընկել էին զետնին և պառկել՝ ամաշելով լիտի ականատեսաներից, որոնք հավաքվել էին դիտելու իրենց։

165 Ապա դրանից հետո թագավորին գարմացրին բազում մտերիմ ականատեսաները, որոնք եկել էին նրա գեղեցկությունը տեսնելու և պատմելու թագավորին։ Մյուս օրը առաջըստյան այդաբացին և նույնիսկ ավելի վաղ հրաման եկալ թագավորից, որպեսզի երանելի Հռիփսիմեին արքունիք տանեն, իսկ սուրբ Գայանեին այնտեղ պահեն՝ պարկեշտընկերներով հանդերձ։

166 Իսկույն արքունիքից շուտափույթ ոսկեպատ գահավորակներ հասցրին, սպասավորներով հանդերձ, հնձանի դուռը, քաղաքից դուրս, ուր նրանց կացարանն էր։ Նաև ազնիվ, գեղեցիկ, փափուկ ու պայծառ հանդերձներ և երեսելի գաղղարանքներ մատուցեցին նրան արքունիքից, որպեսզի զարդարվի և շուրջով ու պատվով քաղաք մտնի ու ներկայանա թագավորին, քանզի [սա] թեև չէր տեսել նրան, սակայն ըստ այն բոլորի, որ պատմել էին նրա վայելով գեղեցկության մասին, մտածեց կնության առնել։

167 Արդ՝ սուրբ Գայանեն երբ տեսավ, սկսեց խոսել իր

սանի հետ և այսպես ասաց, ուշիշիր, որդյակ իմ, որ թողեցիր, լքեցիր քո հայրենի մեծապատիվ, շքեղաշուք, ոսկեկուռ գահը, թագավորական ծիրանիները և ձգտեցիր Քրիստոսի թագավորության անանց ճառագայթարձակ լուսին, որն արարիշ է, կեցուցիշ ու վերակենդանացնող և իրեն հուսացածներին խոստացած անպատում բարիքները պահում էին եղ դու, որդյակ, որ անարգեցիր քո անցավոր կյանքի ծիրանին, արդ, ինչպես արդյոք քո զգաստության սրբությունը կերակուր կտաս շներին՝ այս օտար երկրում։ Քավ լիցի, որդյակ, եթե այդ այդպես լինի, այլ թող ընդունի մեզ՝ քեզնով հանդերձ, նա, որ մեզ մեր մանկությունից առաջնորդել է մինչև այս օրն ու այս ժամը, որին այժմ հասել ենք»։

168 Սուրբ Հոփիսիմեն երբ տեսավ շարերի այս ամրող ամբոխը և ինչ որ լուց իր դայակից, զինավավեց հոգու զենքով, իր տիրոջ զորությամբ, քանզի մանուկ հասակից զգեստավորվել էր հավատքով՝ որպես սպառազեն զրաներով։ Մեծածայն ուժով ճշաց խաչի նման տարածելով իր բազուկները՝ սկսեց այսպես ասել բարձրածայն։

169 «Տեր Աստված ամենակալ, որ ստեղծեցիր քո արարածներին սիրելի ու միաժին Որդու ձեռքով և երեկոյի ու աներեսութ արարածների հորինվածքներ կադաեցիր սուրբ Հովու միջոցով։ Դու ևս, որ ոչնչից անեն ինչին էություն տվեցիր և քո հրամանով են վարդում երեկոյի և աներեսութ բոլոր զորությունները երկնքում երկրի վրա, ժովի մեջ ու ցամաքում։ Քանզի դու ևս Տեր, որ չոսկ հեղաշնչեցիր ութերորդ դարաշրջանի²³ անօրեն պղծալից մտշլկանց և փրկեցիր քո սիրելի նույնն, որ քո հրաման խսոքը ուահեց, և խաչուման փայտով փրկեցիր շրջեղեղից։ Եթե այնժամ խաչի օրինակով փրկություն ավեցիր, այժմ էլ արանունը ճշմարտությամբ քո խաչի, որի վրա բարձրացար և թափեցիր քո արլունը ի բժշկություն մեր ցավերի».

170 [Դու] որ պահպանեցիր Արքահամին բանացիների անօրեն ազգների մեջ, փրկեցիր քո աղախին Սաստին մահվան պղծության նախատինքի ամոթից, զթացիր քո

հսահակ ժառային և պահպանեցիր քո աղախին Ռեբեկային^{*} անօրեն փղտացիներից, հանուն քո սուրբ անվան մեզ
մի լքիր: Սովորեցրիր մեզ, վարդապետեցիր և քո խոսքը
դրեցիր մեր բերանները, որպեսզի գրանով կարողանանք
փրկվել թշնամու որոգայթից, և ասացիր. «Իմ անունը ձեղ
վրա է Կողմած»^{**} և «զուք տաճար եք իմ աստվածու-
թան»^{***} և կամ թե «իմ անունը սուրբ պահեցեք ձեր սըր-
տերում»^{****} և գրիր քո խոսքը մեր մտքում խնդրելու քե-
զանից և ասելու. «Սուրբ լինի քո անունը»^{*****} մեղ վրա,
որ խնդրում ենք քեզանից: Եվ ահա բազում չարագործներ
հավաքված են պղծելու քո սուրբ անունը, որ մեզ վրա է
և քո անվան տաճարը: Զի թեակն և մենք տկար ու անօր-
ժան ենք, սակայն դու, Տեր, պահիր մեր անձերը անվայել
խաչտառակությունից:

171 Մարդասեր և քաղցր, որ մեղ նետեցիր այս փորձու-
թյան մեջ, քո զորությամբ օգնիր մեզ հաղթելու, բանդի քանն
է հաղթությունը և քո անունը հազմի մեղ պահելով զգաս-
սության հույսով: Սրանով մենք կմտնենք քո արդարների
խմբերի թվի մեջ և կառնենք վաստակների վարձը, որ տալու
ես և հատուցելու յուրաքանչյուրին, որը քո երկյուղի մեջ է
մնում և պահպանում քո հրամանները:

172 Դու որ փրկեցիր նոյին ջրհեղեղից, փրկիր և մեղ
ջրչապատող անօրինության հեղեղից, քանդի եթե գազան-
ներին ու անասուններին ապրեցրիր տապանում, առավել
ևս կինայես քո պատկերը (կրողներին), որոնք քեզ են
փառավորում և եթե սողուններին ու թռչուններին խնայե-
ցիր, որչափ ևս կինայես մեզ, որ անվանեցիր քո կամքի
տաճարը»:

173 Արդ՝ երբ այս բոլորը երավ, ամրոխի բազմությունը
ավելի կուտակվեց: Շատերը արքունի սպասավորներ էին,

* Բնագրում՝ Երեփիկա:

Քորեր, Ժ. 17:

** Ա. Կորնթ. Գ, 16 Զ, 19:

**** Ա. Պետր. Գ, 15:

***** Մատթ. Զ, 9: Ղուկ. ԺԱ, 2:

որոնք եկել էին նրան արքունիք տանելու և նախարարներ ու ավագանու մեծամեծներ, որոնք եկել էին նրան շքադիր պատիվ տալու և հետը արքունիք երթալու, որպեսզի տանեն նրան Տրդատ թագավորի կնության և Հայոց տիկնության համար:

174 Խսկ նրանք արտասվագոշ, ողորմագին ձեռքերը երկինք բարձրացնելով խնդրում էին կամարար Տիրողից փըրկել իրենց անօրեն, անարժան հարսանիքի պղծությունից: Թարձր աղաղակով մեծածայն ճշում էին և ասում. «Քավ լիցի մեզ, եթե հարստությունը մեզ խարի, կամ հաճույքը մեզ գայթակղեցնի, թագավորությունները մեզ հրապուրեն, հալածանքը մեզ նեղի, և կամ հարվածների տանջանքը փորձության ենթարկի, թեպետև բյուր տեսակի տանջեք մեզ: Կամ արդյոք կվախւենա՞նք ահավոր մահվանից, որ դուք ըերելու եք մեզ: Քավ լիցի մեզ, թե անցավոր կյանքը փոխանակենք հավլտենականի հետ, որն անանց է, քավ լիցի, թե ուրանանք է-ին, Աստծուն՝ ամենաստեղծիլին, որի տերությունը էությունից է հաստատված, բոլոր բարիքներն անփոփոխ են և ոչ անցողիկ: Բայց ոչ խորությունները և ոչ բարձրությունները, ոչ վշտերը և ոչ շարշարանքը, ոչ կապանքը և ոչ տանջանքը, ոչ հուրը, ոչ ջուրը և ոչ սուրը, ոչ դվարճությունը և ոչ պատրանքը, ոչ հարստությունները և ոչ ազգատությունը, ոչ այն աշխարհը և ոչ էլ այս աշխարհը, ոչ կյանքը և ոչ էլ մահը, ոչ ոք չի կարող մեզ հնացնել Քրիստոսի սիրուց, որ ոչ չետեն նրան նվիրեցինք և նրան կուսությունը, նրան ուանդեցինք մեր սրբաթյունները, նրան ենք մնում և նրա սիրուն ձգտելով սպասում, մինչև որ կանդիններ նրա դովության փառքի առջեւ, առանց ամօթի ու վայսի»:

175 Եվ սրբութեան որբառութեան եկալ երկնրում, ամբողջ ամբոխը ահարեկվեց, և մի լավեց, որ ասում էր նուանց, թե «Ոորացեք, ոյինդ կացեք, քաջալերվեցեք, բանզի ևս ձեզ հետ եմ, պահեցի ձեզ ունեն նանապահ հներում, անարատ վիճակում ձեզ րերի հասցրի մինչեւ այս տեղերը, որպեսզի այս տեղ ևս փասալորմի իմ անունը հյուսիսալին կողմերի հեթանոսնորի առջեւ Մանավանդ, դու, Հոխիսիմե, արդարի,

ըստ քո անվանր. մահվանից դեպի կյանք նետվեցիր^{*} Գայանեի ու քո սիրելիների հետ։ Մի վախենաք, այլ կզաք այն տեղը, որ ես ու իմ հայրը պատրաստել ենք, ուրախության անքննելի տեղը, ձեզ և նրանց համար, որոնք մի անգամ ձեր նման կլինեն»։

176 Այնպիս երկար որոտաց, մինչև որ մարդիկ նրա ակց Ուրեցին։ Շատերը տեղից վեր ցատկեցին, հեծյալների բազմաթիվ երիվարներ ահց աքացի տալով շատերին գետին տապալեցին և այլոց ոտքի տակ կոխոտելով սպանեցին։ Իրար վրա դիղված բազմությունից շատերը իրար արորելով սպանեցին, և մեծ կոտորած եղավ։ Աղաղակի ու վայնասանի ձայներ լսվեցին, սաստիկ շարիք ու արհավիրք հասավ մարդկանց և շատերը մեռան ու շատերի արյունը թափելով՝ հողը ոսոգեց։ Արդ՝ երբ այս խառնաշփոթությունը եղավ, կուտակված մարդկանց բազմության մեջ, արքունի Նեծամեծ սպասավորներից ոմանք զնարին պատմելու թաշակորին այս ամենց, որովհետև այնտեղ դանվեցին զրադիրներ, որոնք զրեցին ամեն ինչ և ընթերցեցին թագավորի աւցել։

177 Ասաց թագավորն. «Քանի որ չկամեցավ գալ իր կամքով պասաւուն, շքեղությամբ, թող բռնի բերեն մինչև ապահանք և նրան մտցնեն արքունի սենյակը»։

178 Արդ՝ սպասավորները բանի տարան սուրբ Հոփիսիւնին՝ յերի բարձրացրած, և ու քարշ տալով, իսկ նա աղաղակում էր և ասում. «Տեր Հիսուս Քրիստոս, օգնիր ինձն, Ամրող ամբ. որ նուա ահց փու էր հնչեցնում, և այդ քաջությունից երեսը թնդում էր։ Տարան, մոցրեցին բազավորի ակարանքը, իսկ երբ արդելափակեցին նրան սենյակում, սկսեց խնդրել Տիրոջից և ասել.

179 «Տեր զորությանց, դու ևս ճշմարիտ Աստվածք։ Դու ես, որ պատուեցիր Կարմիր ծովը և անցկացրիր քո ծողովրդին։ Դու ես, որ ամուլ քարից ջրի վտակներ բիւեցրիր և իմեւցրիր քո ծարավ ժողովրդին։ Դու ես, որ իշեցրիր քո

* Ըստ այս Ճոփիսիմե անունը դուրս է բերվում հունարեն բոլոր, որուական անցկացրիր պատուանք, և 9, էջ 100:—Խմբ.։

Ժառային՝ Հովեանին, Ֆավի Խոր անդունդները, ճանաչել տվիր բռ զորության չափը արտաքսելով նրան մարդկային էությունից և մյոււ անգամ կրկին առանց ապականության ողջանդամ դուրս բերիր և կենդանություն տվիր, այնպես որ նրա վարսից մի մազ անգամ չէր խախտվելու Դու ես ճշմարիտ Աստվածը որ Դանիւին, գազաններին որպես կերակուր նետելուց հետո՝ փրկեցիր ահավոր ժանիքներից և փառավորությամբ ապրեցրիր զրպարտյալին նեղիների առջև։ Դու վիրկեցիր նաև երեք մանուկներին, որոնց քեզ պաշտելու համար զցել էին այրելու, և ողջ ու անարատ պահպանեցիր Հրի մեջ, որպեսզի քո հրաշքները տեսնողները փառաբանեն քեզ։ Դու խոտաճարակ դարձրեցիր բարելացիների խիստ, անօրեն թաշավորին, որը շկարողացավ փառավորել քեզ այս հրաշքների համար, որ ցույց տվիր նրան։ Անսասունի կերպարանք տվիր նրան, անապատի գազանների հետ բնակեցրիր և վայրի ցիոների հետ նշանակեցիր նրա արտապայրը։ Դու կրկին անգամ ապրեցրիր քո աղախին Շուշանին²¹, երկու մահերից փրկելով, խայտառակաման սատկեցրիր անօրեն թշնամիներին և արդար փառքի պսակ շնորհեցիր ու կանգնեցրիր քեզ հուսացողներին։ «Դու սույն ինքդ կաս, և քո տարիները շեն անցնի»*, «Դու, Տեր, քո փառքը ուրիշներին շես տա»**. Դու ես, որ փառավորյալ եւ ամբողջ տիեզերքի մեջ***, և թող հեթանոսները շպղծեն քո սուրբ անունը։ Դու կարող ես ինձ փրկել այս պղծությունից, սրայեսզի կարողանամ սրբությամբ վախճանվել բո մեծ անվան համար։

180 Երդ՝ մինչդեռ սուրբ Հոփիսիմեն այս ամեն աղոթքները Աստծուն էր մատուցում, եկավ Տրդատ թագավորը մտավ սենյակից ներս, ուր նրան արգելափակել էին։ Երբ նա մտավ, բոլոր մարդիկ, ոմանք ապարանքից դուրս, իսկ մի մասը հեռավոր փողոցներում սկսեցին միասին երգել պարելով, վեր-վեր թռչելով, վագելով։ Կեսը բերդի մեջ,

* Աղմ. ձԱ, 28.

** Հմմա. հԱ. ԽԲ, 8, ԽԸ, 11.

*** Դան, Գ, 45.

մյուս կեսը քաղաքում լցվեցին խնջույքի, առհասարակ պատրաստվում էին շարսանեկան պարեր պարելու և կաթավելու հսկ տեր Աստված ուշադրություն դարձրեց իր սիրելի Հռիփսիմեին՝ փրկելու նրան, որպեսզի շկորչի այն ավանդը, որ գգուշությամբ պահել էր, և լսեց նրա աղոթքը՝ զորացնելու Հայերի և Դեբովրայի²⁵ նման, զորություն տվեց նրան, որպեսզի գիմանա անօրինության դաժան բռնությանը:

181 Արդ՝ ներս մտավ թագավորը և փորձեց բռնի միջոցներով ստիպել նրան իր ցանկությունը կատարել, իսկ նա սուրբ Հոգով գորացել էր, գազանաբար ոգորելով, առնաբար մարտնչում էր: Գրեթե ժամը երեքից մինչև տասը մարտնելով, թագավորը, որ շատ ուժեղ էր համարված, պարտվեց նրանից. Մինչդեռ նա Հունաց աշխարհում մեծ ուժի բազում օրինակներ էր ցույց տվել ու բոլորին զարմացրել և իր թագավորության մեջ էլ, երբ վերադարձել էր հայրենիք, բազում բաշտակործություններ էր կատարել: Նա, որ այնպիս ամեն ինչով հոշակված էր, այժմ մի աղջկանից պարտվեց, հազվագյուղ Թրիստոսի կամքով ու զորությամբ:

182 Երբ պարտվեց, Հոգնեց ու թուլացավ, դուրս եկավ ու բերել տվեց երանելի Գայանեին և վիզը պարան գցելով բերել տվեց նրան սենյակի դուռը, ուր ինքը ներս մտավ: Եվ սպառավորներին սլատվիրեց, որ ստիպեն շհրապուրվող Գայանեին դրսից ասել սենյակում գտնվող Հռիփսիմեին, թե կատարիր դրա կամքը, որ ապրենք՝ դու և մենք».

183 Իսկ նա հանձն առնելով խոսել իր սանի Հետ՝ մոտեցավ դռանը և խոսեց ներսում գտնվող Հռիփսիմեի հետ. «Որդյակ, թող Քրիստոսը քեզ պղծությունից պահի և զորավիդ լինի. քավ լիցի, որդյակ, եթե Աստծո կենաց ժառանգությունից դուրս գաս ժառանգելու համար անցավոր աշխարհը, որը ոչինչ է, այսօր կա և վաղը կկորչի»:

184 Երբ իմացան, թե ինչպիսի խրատ շտապեց տալ, քարեր բերելով խփեցին բերնին, մինչև որ ատամները թափվեցին, և ստիպում էին նրան թագավորի կամքը կատարել:

185 Իսկ նա ավելի ու ավելի էր պնդում՝ ասելով. «Քաջալերվիր, ամուր կաց, թանզի այժմ կտեսնես Թրիս-

տոսին, սրին փափագել ես Հիշիր, որդյակ հոգեխառն սնունդը, որով քեզ սնեցի, հիշիր աստվածային խրատը, որով քեզ դաստիարակեցի: Հիշիր իմ ու քո միասին կոած հալածանքը և մահվան բաժակը, որը միասին պետք է ըմպենք, Հիշիր նաև ամբողջ տիեզերքի հարությունը և մեծատան հանդիմանությունը: Հիշիր տանչանքների գեհենի հավիտենական այրումը. և արդարների անդակաս պարգևները, որոնք մեզ համար են պատրաստված: Հիշիր աստվածեղեն երկնային խոսքը, որ այսօր իսկ դու ինքդ լսեցիր քո ականջներով, որը քաջալերեց ու զորացրեց քեզ մեղնով հանդերձ և արծանի է դարձնելու իր խոստացած պսակին ու հանգստյանը, զորացնելու է քեզ մեղնով հանդերձ, որպեսզի աստվածային հավիտենական բնակության լուսեղնն հարկերի բնակիչներ դառնանք:

186 Այլ մեր Տերը, մեր թագավորը և մեր Աստվածը. որը մեզ համար խոնարհվեց դեսի անարգություն, մեզ անարդ չի թողնի, քանզի ասլավինեցինք նրա զորություններին. Աշխարհի փրկիչը կօդնի մեզ, որը շթողեց մեզ՝ իրեն հուսացածներիս, որ վայր ընկնենք, և արծանի համարեց իր խոսքերով քաջալերելու նա անարդվածներին մեծարող տեր է և ինքը զերծ կպահի մեզ՝ իր աղախիններին, բոլոր մեղքերից, ինչպես այսօր հենց լսեցինք, որ նրա ամենազոր ացը սկահպանեց մեզ և կպահի մինչև հավիտյան, միայն թե նրա սիրուց շհեռանանք: Նա կարթնացնի իր զորությունները և կգա մեզ ապրեցնելու, ու մենք Տիրոջ անվանը կդիմենք: Իր երեսը մեզ ցույց կտա, և մենք կապրենք, որովհետեւ նա է մեր փրկիլ Աստվածը, և նրա համար համբերեցինք շարունակ:

187 Հիշիր Տիրոջը, որ մեզ բարձրացնելու համար խոնարհվեց և իր արյունը թափեց խաչի վրա, մեր կյանքի ու մեր փրկության համար մահվան մատնվեց: Պահիր նրան քո մտքում և սրտովզ նրան օգնության կանչիր: Ահա քեզ օգնության են հասիլ և կզորացնեն քո բազուկները, ինչպես Դավիթ պատանուն զորացրին արջերի ու առյուծների դիմաց, որոնց նա այծի ուլերի նման պատառոտեց. բզիտեց: Նա որ վիթխարի հսկային լարդեց իր ծառայի՝ Դավիթի ձեռ-

քով, նույն ինքը կիսորտակի սրա անօրեն չարությունը քառագև:

188 Ով Դավիթի հավատքի մարգարեության դուստր և անված արգարությամբ իմ բազուկների վրա՝ Աստծու սուրբ ու փառավորյալ սեղանի առջև դաստիարակվեցիր դու, ով աղախին Քրիստոսի, որն այսօր իսկ իր հայտնությամբ, զիթությամբ ու մարդասիրությամբ մեզ հայտնվեց, և որին իմաստությամբ ինդրեցինք, նույն ինքը քեզ, մեղնով հանդիրձ, առանց ամոթի գեմ հանդիման նրան տեսնել կտա»:

189 Արդ՝ այս ամենը խոսեց սուրբ Գայանեն Հռոմեացիների լեզվով իր սանի հետ սենյակի դռնից, մինչդեռ թագավորը պայքարում էր սուրբ Հոկիսիմեի հետ, Բայց կային այնտեղ ոմանք արքունի սպասավորներից, որոնք լսում էին այս ամենը Հռոմեացիների լեզվով:

190 Երբ լսեցին այն բոլորը, որ Գայանեն ասաց իր սանին, հեռացրին այդ դռան մոտից, Թեպետ շատ անզամ կանահարեցին նրան ու երնսները ծեծեցին քարերով, ատամները թափեցին ու ջարդեցին նրա ատամնահիմերը, սակայն նա չփոխեց իր խոսքերը և աղջկան այլ բան շասաց, այլ սկզբում ասած առաջին խոսքերը նույնությամբ կրկնում էր:

191 Իսկ սա մարտնչելով նրա հետ օրվա ժամը տասից մինչև կիշերվա առաջին ժամը հաղթեց թագավորին. Սուրբ հոգով հզորացած աղջիկը ուժեղ հարվածներով պարտության մատնեց, վաստակաբեկ արեց թագավորին, որը թուլացած վայր ընկավ: Թագավորին մերկացրեց իր հանդերձներից՝ պատմումանը պատառ-պատառ եղած, թագի նշանը իրենից ընկած, խլված, ամոթալի վիճակում թողեց: Թեպետ իր զգնատն կը բզիկ-բզիկ պատառութած, և գուրս էր բերված նրա կողմից, սակայն ինքը հաղթող պահեց իր անձը սրբությամբ.

192 Ուժով բաց անելով տան գոները, գուրս եկավ, ճեղքեց մարդկանց ամբոխը, և ոչ ոք կարողացավ հաղթահարել նրան, Ընթանալով քաղաքի մեջ, ելավ բաղաքի արեվելյան կողմը Արեգ գոնով: Գնալով հնամանի մոտ, ուր առաջ իրենց կացարանն էր, ընկերներին ավետիթ տվեց ու ինքն

անցավ գնաց բաղաքից հեռու հյուսիսային կողմը արևելք ընկած մի վայր մի ավագուտ սարավանդ բարձրավանդակ, մոտիկ բուն պողոտային, որը տանում էր Արտաշատ քաղաքու

193 Երբ այնտեղ հասավ, ծունր դրեց, սկսեց աղոթել և ասել. «Տեր ամենայնի, ո՞վ կարող է քեզ հատուցել մեզ շնորհած քո բարիքների դիմաց, բանզի դու հաստատուն պահեցիր քո նկատմամբ ունեցած մեր հույսը և աղատեցիր մեզ գազանի պիղծ ժանիքներից, որն աղականում էր մեզ։ Բայց մենք էլ ինչ կարող ենք փոխարենք հատուցել, եթե ոչ մեր անձերը քո փրկության փոխարեն, որովհետեւ դու ինքդ արժանի արեցիր մեզ քո ծառայությանը, քո անունը կրելու, որով ապրեցրիր մեզ, քանի որ բացի քեզանից, Տեր, ուրիշ ոչ ոքի չենք ճանաշում և քո անունն ենք արտասանում շարունակ։»

194 Բայց լավ է, որ մենք մեռնենք քո սրբության մեջ, քան թե մեր ձեռքերը մեկնենք օտար աստվածներին. որոնք չեն էլ եղել, և հեթանոսների ամբողջ պաշտամունքն էլ ոչինչ է; Դու ես արարիշը, և ամեն ինչ քեզանից է ու քո միամին Որդով, առանց որի ոչինչ չի եղել, և «քո բարի հոգին թող առաջնորդի մեզ դեպի ուղիղ երկիր»^{**}, որը կտանի մեղ երկնավոր հավիտենական բարիքներին։

195 Ներկայանալու ենք քո Միածնի առջև, որպեսզի առանց ամոթի կանգնենք աջ կողմում, երբ ուղարկես նրան ոլուսո բնակության վայրերից նայելու երկրի բոլոր բնակիչներին^{***}, նա ստեղծեց մարդկանց սրտերը և նրանց բոլոր շործերին ուշաբիր է, քանզի մենք էլ քո ժողովրդից ենք քո արոտի հոտից և կմտնենք սիրելիների համար պատրաստված հարկերի մեջ։ Փութանք Տեր, դուրս ելնել այս հարմնից, խառնվելու քր սիրելի միաձին Որդու բանակին և նրանց թվին, որոնք սիրեցին մեր սեր Հիսուս Քրիս-

* Իս հզ. 13.

Սաղմ Ճիմ, 10:

Սաղմ. 14:

տոսի գալստյան օրը։ Ազատիր մեղ այս պղծությունից, իսկ եթե տանջանքներ տրվեն մեզ, քո անվան համար, պատրաստ ենք։ Դու մեզ չես զրկի, որովհետև դու, Տեր, ինքով վկայում ես ինձ համար, որ երկրավոր կյանքից ոչինչ եմ ցանկացել իմ մանկությունից. քանի որ նայեցի ու հավատացի քո ասած խոսքին, թե «Վայ ձեզ, երբ մարդիկ բարի ասեն ձեր մասին»*, այլ «Երանի ձեզ, երբ նախատեն ձեզ, հալածեն և ամեն շար բան սուտ տեղը ասեն ձեր մասին իով պատճառով. ցնծացեք և ուրախ եղեք»**։

196 Արդարն իսկ, Տեր, ցնծացինք և ուրախ եղանք այս պատերազմի համար, որ վիճակվեց մեզ, մարտնչելու քա սիրով, քանզի հաղթեց քո ամենահաղթ զորությունը և մեզ ևս հաղթել տվեց. Ուրախ եղանք այն օրերի փոխարևն, որ իսոնարհեցրին մեզ և այն տարիների փոխարեն, երբ շարշարանքներ տեսանք, նայիր. Տեր, քո ժառանգությանը ու քա ձեռքի զործերին և առաջնորդիր մեզ քո վերին քաղաքը, քո երուսաղեմը, որը բարձունքիդ վրա է, ուր հավաքելու հա բոլոր արդարներին, սրբերին և քո անունը սիրովներին։ Թող տեր Աստծու լույսը մեզ վրա լինի»։

197 Մինչդեռ երանելի սուրբ Հռիփսիմեն խոսում էր այս ամենը, ահա նույն գիշերը շուտափույթ այնտեղ հասան թագավորի իշխանները, դահճապետը դահճների հետ մեկտեղ և վառված ջահերը առջեները պահած։ Մոտեցան իսկույն, ձեռքերը և տեղը կապեցին և ուզում էին լիզուն կտրել, իսկ նա իր կամքով բացեց բերանը և, լեզուն հանելով՝ մեկնեց։

198 Ապա նրա վրայի պատառոտուն հանդերձները հանեցին ու գետնին շորս ցից խփելով՝ երկուսը ոտքերից, երկուսը ձեռքերից կապելով՝ պրկեցին նրան։ Մոտեցրին կանթեղները և մամերով այրեցին ու խորովեցին նրա մարմինը կանթեղների հրով։ Նրա գողը քարեր լցրին, աղիքները վայր թափեցին, և մինչդեռ նա կենդանի էր, երանելու աշքերը փորեցին. Ապա մաս-մաս հոշոտեցին նրան՝ ասելով.

* Ղուկ 2. 26.

** Սատր. Ե. 11—12։

«Ամեն ոք որ կհամարձակվի արհամարհել ու անարգել թագավորների հրամանները, նրա նման կկորչի»:

199 Իսկ կային և այլ սրբեր՝ այրեր ու կանայք, որոնք եկել էին նրանց հետ, ավելի քան յոթանասուն մարդ: Նրանցից ոմանք այդ ժամին այնտեղ հասան կամենալով հավաքել ու թաղել նրա մարմնի մասերը, սակայն նրանց սրի քաշելով կոտորեցին, մոտ երևուներկու հոգի:

200 Նրանք այս էին ասում. «Սիրեցինք քեզ, Տեր, քանի լսում ես մեր աղոթքի ձայնը, խոնարհեցրել ես քո բարերար ականջը, և մենք քեզ ենք ուղղում մեր ձայնը: Փառք քեզ, որ շզրկեցիր մեր անարժանությունը քո բարիքներից, ով մարդասեր, որ պահեցիր մեզ աշքի բիրի նման, և քո թերերի հովանու տակ ազատվեցինք բազմության անօրենությունից: Մեռնում ենք ահա քո փառավորյալ անվան համար»: Այս բանը միաբերան ասելով ամենքը կոտորվեցին:

201 Նրանցից մեկին հնձանի ներսում սպանեցին, ուր նրանց կացարանն էր. նա այսպես էր ասում կյանքից հրաժարվելու ժամին. «Գոհանամ քեզանից, Տեր բարերար, որ ինձ էլ շզրկեցիր, քանի ես հիվանդ էի և չկարսղացա քայլել ու իմ ընկերների հետ ժամանել: Սակայն դու, Տեր մարդասեր և քաղցր, իմ հոգին ևս ընդունիր ու խառնիր քո սուրբ վկաների գնդին, իմ ընկերների ու քույրերի բանակին, քո աղախին և մեր մայր Գայանե զլխավորին և քեզ սիրող ու մեր որդյակ Հոփիսիմեի մոտս: Այսպես խոսելով նա վախճանվեց: Նրանց բոլորի մարմինները քաշելով դուրս դցեցին, որպեսզի կեր դառնան քաղաքի շներին, երկրի զազաններին ու երկնքի թոշուններին»:

202 Իսկ թագավորը մոռացել էր նվաստացումը, որի համար պետք է ամաշեր, քանզի այնքան անվանի լինելով քաշությամբ գերազանցել էր պատերազմներում, հունաց ողիմպիական [խաղերում], հսկայի զորությամբ ասպարեզ գալով, բաղում քաջագործություններ էր ցույց տվել: Ոչ սակագ պատերազմներ էր մղել Եփրատ գետի այն ափին, արաբների՝ կողմերում, ուր և խիստ խոցված՝ ձիով դուրս էր

* Բնագրում՝ Տաճկաշ:

Եկել պատերազմից, Այնուհետև նու վերցնելով ձին,
զենք ու զենքերը և կապելով մեջքին, ալիքների վրա լուս
լով՝ անցել էր Եփրատ գետը։ Արդ՝ նա որ այսշափ հղոր էր
և ամբակազմ, Աստծու կամքով մի աղջկանից ուրարտից։
Սակայն նու չէր մտածում ամոթալի անպատճելունն. րի
մասին, այլ նրա զեղեցկությունը տեսնելու ցանկությամբ
վառված, տրտմել էր աղջկա մահվան համար և տիտոր
սպաւմ էր։

203 «Տեսեք, ասում էր, թե ինչպես քրիստոնյաների
կախարդական աղանդը մարդկային բազմաթիվ կյանքեր է
խլում՝ նրանց Հեռացնելով աստվածների պաշտամունքից։
Երկրավոր կյանքի վայելքները արգելում են և մահվանից
չեն դողում։ Մանականդ սրանշելի Հոփիսիմեի համար [եմ
ասում], որ կանանցից ծնվածների մեջ աշխարհում իր
նմանը շուներ։ Վասնզի սիրու նրա հետ է, և նա ամենեին
իմ մտքից դուրս չի գա, քանի կենդանի եմ և»։ Տրդատ
արքաս։ Ես քաջ գիտեմ հույների և Հոռոմեացիների երկրները
ու մեր պարթևների կողմերը, որը մեր ընիկ երկիրն է,
Ասորեստանը, արաբների²⁶ երկիրը և Ատրպատականը։ Եվ
ինչու մեկ առ մեկ թվեմ, քանզի բազում են այն վայրերը,
որտեղ ես հասել եմ խաղաղությամբ և բազում են այն
երկրները, սրոնք պատերազմելով ասպատակել և ավարել
եմ։ Սակայն ոչ մի տեղ չեմ տեսել նմանությունը այսպիսի
զեղեցկության, որը կորցրեցին այդ կախարդները։ Քանզի
այնպես զորացան կախարդանքները, մինչև որ ինձ ևս
Հաղթեցին»։

204 Վաղ առավոտյան նրա մոտ եկավ դահճապետը՝
Հրաման առնելու սուրբ Գայանեի սպանման համար։ Իսկ
նա երբ լսեց, սիրո պատճառով հուզված, հիմարացած և
ապշած լինելով, չհիշեց սուրբ Հոփիսիմեի մահը, կարծելով
թե կենդանի է, Մեծ ավագության, բարձի ու պատվի պարգե-
ներ էր խոստանում, եթե հանկարծ որևէ մեկը կարողանար
հնար գտնել աղջկան համբեկու՝ գալ իր մոտ։ Բայց նա
ասաց նրան։ «Այդպէս կկորչն քո բոլոր թշնամիները. ար-
քա, և որոնք աստվածներին և ձեր Ռազակորների հրաման-
ները կանարգեն, Սակայն դեռ կա այն կախարդը, որն

ապականելով կորցրեց շքնաղագեղ [աղջկան], ինչպես նաև կան նրա երկու ընկերները։

205 Երբ լսեց, թե մեռած է սուրբ Հոփիսիմեն, դարձյալ նույն տրտմության մեջ խորասուզվեց և, իջնելով գահից, նստեց գետնի վրա, լալիս էր ու սգում։ Դարձյալ հրաման տվեց առաքինի Գայանեի մասին, թե նախ լեզուն ծոծրակից հանել, և ապա սպանել նրան, քանի որ համարձակվել էր իր վնասակար խրատներով կորստյան մատնել այնպիսի կույսին, որն աստվածների գեղեցկությունն ուներ մարդկանց մեջ։ Իսկ նա սրա խրատների պատճառով համարձակվեց անշնորհակալ լինել աստվածներին, որոնք նրան գեղեցկություն էին շնորհել։ Այս բանի համար անհրաժեշտ համարեց նրան տանջամահ անել։

206 Արդ՝ ելավ դահճապետը նրան տանջամահ անելու. շղթայակապ հանել տվեց քաղաքից, հարավային դռան մոտ, այն ճանապարհի կողմը, որը տանում էր դեպի Մեծամորի կամուրջը, ուր ըստ սովորության սպանում էին բոլոր մահապարտներին, մի ճահճոտ վայրում քաղաքի շուրջը պտտվող խրամ փոսի մոտու նրանցից ամեն մեկի համար շորսական ցից տնկեցին։

207 Եվ մինչդեռ պատրաստում էին այս, սուրբ Գայանեն սկսեց այսպես խոսել իր ընկերների հետ մեկտեղ. «Գոհ ենք քեզանից, Տեր, որ մեզ արժանի դարձրեցիր քո մեծ անվան համար մեռնելու, հարգեցիր մեր հողեղեն էությունը, որպեսզի արժանի լինենք քո աստվածությանը, և ինձ էլ մասնակից դարձրիր քո սուրբ նահատակների՝ Հոփիսիմեկի ու նրա ընկերների մահվանը։ Արդ՝ շտապում և փափագում եմ հասնել նրանց, որոնք քեզ սիրեցին, և որախ եմ, որ կհասնեմ իմ զուստը ու որդյակ Հոփիսիմեկի ու իմ քույրերի և ընկերների ետևից։ Հիշիր, Տեր, որ «քո անվան համար մեռնում ենք ամեն օր, իբրև ոչխար, որ մորթվելու է տարվում»^{*}։ «Զարթնիր և մեզ ևս մի մերժիր հանուն քո անվան»^{**}։ Տուր մեղ քո հաղթությունը, իսկ շարը.

* Հմմտ. Խո. ԾԳ, 7։

** Հմմտ. Սաղմ. ԽԳ, 23։

Քր գործակիցներով հանդերձ կընկնվի քո փառքի ահից»,

208 Սրանից հետո մոտեցան ու պատաստեցին նրանց հանդերձները և պրկեցին նրանց՝ յալրաբանչյուրին շրս ցցի վրայ Շակեցին մորթերը, ոտքերի կողմից խողովակներ դրեցին և այնպես փշելով ողջ-ողջ մորթազերծ արեցին, եղեք սրբերին էլ ներքնից վեր մինչև սահնքները, ապա ծոծրակիները ծակելով, լեզուները այնտև լից դուրս քաշեցին։ Քարեր լցրին նրանց զոգերը և նրանց աղիքները որովայններից ցրելով հանեցին գոգները, և որովհետև դեռ կենդանի էին, ուստի սրով կտրեցին նրանց դլուխները։

209 Արդ՝ ամենը որ նրանց հետ միաժամանակ եկել էին հռոմեացիների երկրից և բոլորը միասին հասել մեր Հայաստան աշխարհը, ավելի քան յոթանասուն հոգի էին։ Իսկ որոնք սպանվեցին սուրբ տիկնանց՝ Գայանեի ու Հոփիսմեի հետ, նրանց հետ մեկտեղ, որ հշշվեցին նահատակվածների թվում, ընդամենը երեսունյոթ մարդ էին։

210 Նահատակվեց սուրբ Հոփիսիմեն սրբերի գասով մեկտեղ Հոռի²⁷ ամսի քսանլեցին երեսուներեք նահատակակից ընկերներով։ Իսկ Հոռի ամսի քսանյոթին սուրբ Գայանեն իր երկու ընկերներով, որոնք նրա հետ մարտընչեցին, պսակներ ընկունեցին և առան հաղթության թագը։

211 Արդ՝ վեց օր խոր տիսրության և անտանելի տըրտմության մեջ էր թագալորը, Հոփիսիմեի գեղեցկության նկատմամբ ունեցած տենչալի սիրո պատճառով։ Այնուհետև, որսի ժամ որոշեց, բոլոր զորքերին հրամայեց հավաքել բերել որսի զենքերը, տաղնապ գցել, որսի ցանցեր պատրաստել թակարդներ լարել։ Կամենում էր որս անել Փառական Շեմակաց²⁸ դաշտում։

212 Մինչդեռ կառքի վրա նստած թաղավորը քաղաքից դուրս էր եկել, իսկույն նրա վրա տիրոջ պատուհասը հասավ, և պիղծ դկը խփելով թաղավորին կառքից վայր տապալեց։

Անմիջապես սկսեց մոլեգնել ու ինքն իրեն ուտել և բաբեւ լացիների Նաբուգոդոնոսոր արքայի նման մարդկային բնույթից դուրս գալով՝ վայրենի խոզերի կերպարանքով։ իրեն նրանցից մեկը զնաց նրանց մեջ բնակվելու։

Այնուհետև մտնելով եղեղնուածը խոտաճարակ դարձավ, սաստիկ անզգայությամբ դաշտերում կոծելով իր մերկ մարմինը։ Թեպետև կամեցան նրան արգնյափակել քաղաքում, չկարողացան. նաև բնական ուժի սկառառով և ապա չդիմանալով նրա մեջ մտած դիվական ուժին²⁹։

213 Նաև քաղաքի բոլոր մարդիկ նույնարինակ դիվաճար եղած մոլեգնում էին, ու սաստիկ կործանում հասավ երկրին, թագավորի բոլոր մերձավորները, ծառաներն ու սպասավորները առհասարակ հարվածներ կրեցին ու ահավոր սուզի մեջ էին պատուհասի պատճառով։

214 Այն ժամանակ Աստծուց տեսիլ երեաց թագավորի քրոջը, որի անունն էր Խոսրովիդուխտու Արդ՝ եկավ պատմեց մարդկանց իր տեսիլքը՝ ասելով. «Ինձ տեսիլք երեաց այս դիշեր. մի մարդ լույսի նմանությամբ եկավ պատմեց ինձ, թու ձեզ վրա հասած հարվածներից բժշկություն չի լինի, եթե [մարդ] չուղարկեք Արտաշատ քաղաքը՝ այնտեղից բերելու կապյալ Գրիգորին։ Նա գալով կսովորեցնի ձեզ ցավերից բուժվելու դեղը։»

215 Երբ մարդիկ լսեցին, սկսեցին ծիծաղել նրա խոսքերի վրա։ Խոսեցին նրա հետ ու ասացին. «Ուրեմն դու էլ մուեղնեցիր, և դիվաճար եղար Խնչպե՞ս է, որ ահա տաւսնը-հինգ տարի նրան ցցել են սոսկալի Խոր վիրապը, և դու ասում ես, թե կենդանի է։ Որտե՞ղ են նրա սսկորները, նույն օրն իսկ, երբ նրան այնտեղ իշեցրին, օձերի հենց տհոքից նույն ժամին մեռած կլինի։»

* Տրդատի մասին այս ասվածը բխում է Հեթանոսի նկատմամբ քրիստոնեածած ատելությունից։ Առհասարակ քրիստոնյա պատմիչները իրենց բացասական վերաբերմունքն են արտահայտում այն գործիների հանդեպ, որոնք որևէ ձեռք հակառակ էին գնում կրոնական եկեղեցական ընդհանուր մուալենությանը։ Որպես մի այլ օրինակ հշատակենք Փ. Բուղանդի կողմից հայոց արքա Պապին վերագրված անհրմանքադրանքները։ Տես գիրք ե, զլ. ի՛մ.։

216 Սակայն նույն տեսիլքը դարձյալ երեաց կնոջն հինգ անգամ և սպառնալիքով կրկնեց, որ եթե տեսիլքը շուտու շպատմի, մեծամեծ տանջանքներ կկրի, և մարդկանց ու թագավորի հարվածները առավել նո կոստկանան մաշվամբ պեսպես տանջանքներով. Այդ ժամանակ նոսրովիդուիտը գնաց և մեծ երկյուղով ու զգուշությամբ պատմեց հրեշտակի խոսքերը:

217 Իսկ նրանք շուտափույթ այնտեղ ուղարկեցին մի ավագ նախարարի, որի անունն էր Օտառ, նա գնաց Արտաշատ քաղաքը Նրան վիրապի խոր բանտից հանելու. Երբ Օտառն եկավ հասավ Արտաշատ քաղաքը, քաղաքացիք նրան բնդառաց ելան՝ զայու պատճառը հարցնելու. Առաց նրանց, իւ «կապյալ Գրիգորին տանելու համար էյ էկել» նրանք զարմացած առհասարակ ասացին. «ո՞վ զիտե՞՞ ո՞վ է ։ Քանզի ահա շատ տարիներ են, որ նրան այնտեղ են պցել»: Իսկ նա պատմեց տեսիլքի դիպքերը և ամեն ինչ, որ եղել էր:

218 Եվ եկան բերեցին Երկայն ու հաստ պարաններ ու իրար կապելով իշեցրին ներքեւ Մեծ ձայնով աղաղակեց Օտառ նախարարը ու ասաց. «Գրիգոր, ուր որ ես, զուրս եկ, քանզի քո տեր Աստվածը, որին սիաշտում էիր, հրամաւեց հանել քեզ այդտեղից»: Սա անմիջապես ոտքի կանդնեց, իսկույն շարժեց պարանը ու ամուր բռնեց:

219 Իսկ սրանք, իմանալով, քաշեցին, վեր հանեցին նրան և տեսան, որ նրա մարմինը թխացել էր, ածուխի նման սեւացել. Իսկույն հանդերձներ ժատուցելով հազցրին նրան և խնդությամբ Արտաշատ քաղաքից առան-զնացին Վաղարշապատ քաղաքը. Այն ժամանակ սարսափելի տափնապալի ցավերից թաղավորը դեմ կողմից տարվելով՝ ելավ խոգերի երամից ու գնաց նրան ընդառաջ մերկ խայտառակ [վիճակում]: Իսկ նախարարները քաղաքից դուրս նրանց էին սպասում:

220 Երբ հեռվից տեսան նրանց՝ Գրիգորին Օտայի հետ մեկտեղ և այլ բազմաթիվ մարդկանց, որոնք նրանց հետ գալիս էին Արտաշատ քաղաքից, ընդառաջ շարժվելով,

Ճողեգնելով և իրենց ուտելով դիվահարում էին ու փրփրում նրա առջև:

221 Իսկ նա անմիջապես ծունկի գալով աղոթեց, և նրանք իսկույն զգաստացան. Ապա հրամայեց հանդերձներ գցել նրանց վրա, որ ծածկեն իրենց ամոթը, թագավորն ու նախարարները մոտենալով բռնել էին սուրբ Գրիգորի ոտքերից ու ասում էին. «Խնդրում ենք քեզանից՝ ներիր յեր հանցանքները, որ մենք քո նկատմամբ գործել ենք»:

222 Իսկ նա մոտենալով զետնից բարձրացրեց նրանց ու ասաց «Ես մարդ եմ ձեզ նման և ձեզ նման մարմին ունեմ, իսկ դուք պետք է ճանաշեք ձեր Արարշին, որն ստեղծել է երկինքն ու երկիրը, արեղակը, լուսինն ու աստղերը, ծովն ու ցամաքը և նա կարող է ձեզ բժշկել»:

223 Գրիգորը այնուհետև սկսեց հարցնել, թե ուր են դրված Աստծու վկաների մարմինները, իսկ նրանք ասացին. «Ո՞ր վկաների մասին ես ասում». ասաց նա. «Որո՞ք Աստծու համար մեռան ձեր ձեռքով», և նրանք ցույց տվին նրան այդ տեղերը: Իսկ նա գնաց, հավաքեց ու ամփոփեց նրանց մարմինները սպանման տեղերում, որովհետև զեռ այնտեղ էին: Տեսան, որ Աստծու գորությամբ նրանց մարմինները պահպանվել էին, Դեպի դագան էր նրանց մոտեցել և ոչ էլ շուն, թեև քաղաքի շրջակայքում էին, մոտիկ լայրում. Ոչ թոշուն էր վնասել նրանց և ոչ էլ հոտել էին նրանց մարմինները:

224 Իսկ նրանք պատանքի շատ հանդերձներ բերեցին, բայց երանելի Գրիգորը արժանի շհամարեց թագավորի կամ ուրիշների բերած պատանքները, այլ պատեց սրբերին՝ յուրաքանչյուրին իր հանդերձով՝ ասելով. «Առայժմ [այսպես] մինչև որ դուք արժանի լինեք պատել նրանց մարմինները»: Եվ հավաքեց առավ գնաց հնձանը, ուր նրանց կացարանն էր եղել և իր իսկ կարանը այնտեղ հիմնելով՝ օթևան դարձրեց: Երանելի Գրիգորը ամբողջ դիշերը աղոթում էր Աստծուն՝ նրանց փրկության համար և խնդրում էր որպեսզի դարձի գան և կարողանան ապաշխարության հնար գտնել:

225 Հետեւալ օրը թաղավորը, նախարարներն ու մեծամեծ ավագանին, խառնիձազանց ամբոխի բազմությամբ, և կան և ծունկի իջնելով սուրբ Գրիգորի ու Աստծու նահատակների սուրբ ոսկորների առջև՝ խնդրում էին և ասում. «Ներիր մեր բոլոր շար հանցանքները, որ քո նկատմամբ դորձել ենք, և մեզ համար խնդրիր քո Աստծուց, որ շկորշնը»:

226 Իսկ կապյալ Գրիգորը իսկույն սկսեց խոսել ու ասել. «Դուք ասում եք, թե «քո Աստվածը» Աստված ու արարի է. նա առնենազոր սրաբուխ բարերարությամբ անիմանալի ու աննյութական բանից դոյացրեց նյութական արաբածները: Նույն ինքը աստվածեղեն զորությամբ անտեղ, անվկայր, ոչինչ բանից հրամայեց հաստատել երկիրը: Ամեն ինչ ստեղծեց նա՝ ամենակալ, ամենաստեղծ ու ամենատեր Աստվածը: Նրան ճանաչեցեք, որպեսզի ձեր հանցանքների ցափերը բուժվեն այդ պատուհասից: Նա իր մարդասեր ողորմությամբ խրատեց ձեզ ըստ աստվածային իմաստության խոսքի, ինչպես ասաց իսկ, թե «Տերը ում սիրում է, [նրան] խրատում է, ծեծում է այն որդուն, որին հավանում է»*: Իսկ նա իր բարերարությամբ ձեզ կոչ է անում որդեգրվել նրան:

227 Իսկ Աստծու ճշմարիտ որդին ամոթ չի համարի եղբայր անվանել այնպիսիներին, որոնք կհամաձայնեն հորը երկրպագելու Սուրբ Հոգին իր սիրո երաշխիքը կշնորհի ձեզ՝ անանց ուրախությամբ զվարճացնելու համար ձեր սրտերը և կյանքի անմահություն կտա, միայն թե դուք դարձի գաք և ըստ նրա կամքի ընթանաք:

228 Այլ որ ասում եք «քո Աստվածը», ճշմարիտ եք, բայցի նրանք, որ ճանաշում են նրան, նա նրանց աստվածն է, իսկ որոնք չեն ճանաշում, թեպետ և նրա արարածներն են անմաս կմնան նրա խնամքից ու մարդասիրությունից: Սուկայն երկյաղածները մոտ են նրան և նրա հսկողությունը նրանց շուրջն է ու կպահպանի նրանց:

229 Իսկ թերեւ ասես, թե ո՞ւր է պահում երկյուղած-

ներին, քանի որ նրանք երբ մեր ձեռքն ընկան, շարչարվեցին ու մեռան, և մենք ըստ մեր կամքի դատեցինք նրանց: Տես որ աստված կամքավ մարդուն մահվան երանությունը և իր փառավոր երկրորդ գալստյան ժամանակ իր վերաբերմունքը ի հայտ կրերի՝ բարիցներ տալով իր սիրելիներին և նրանց, որոնք ճանաշում են նրան և նրա կամքն են կատարում:

230 Այլ տես դու, թե ինչպես իր տատվածության դորությամբ հաստատուն պահեց սիրելի սուրբ վկաներին և ոչ էլ բազում նեղությունները նրանցից որևէ մեկին երկուտեցին: Նա ձեր պղծությունից և անօրենությունից փրկեց նաև սուրբ երանելի Հոփիսիմեին՝ ընկերներով հանդերձ:

231 Թշնամու խարեական մեքենայությունը այն է, որ սկզբից իսկ խարել, պատրել է մարդկանց ու կորստյան ճանապարհների ուղևորներ դարձրել: Եվ կամ հենց ինձ՝ անարժանիս, իր բարերարությամբ արժանի արեց շարշարվելու իր մեծ անվան համար: Ինձ համբերություն տվեց, որպեսզի հասցնի երկնավոր վիճակին, ինչպես որ ասել է մեծ առաքյալ Պողոսը, որին դուք էլ արժանի կլինեք ճանաչելու և նրա խոսքերը վայելելու Քրիստոսի մարդասիրությամբ, թե՝ «Օրհնյալ է նա, որ մեզ արժանացրեց մանակից լինելու սրբերի ժառանգությանը լույսի մեջ»*: Եվ արդարեւ պարծանքով հասանք Քրիստոսի խաչին, քանզի Քրիստոսի շարշարանքներով պիտի վայելենք նրա կամքի ու նրա վարդապետության մեջ:

232 Արդ՝ ճանաշեցեք նրան, որը ձեզ խավարից կոչեց իր փառքի սքանչելի լույսին, մոտեցեք նրա շնորհների աթոռին և ողորմություն գտեք նրանից, որպեսզի թոթափեք անօրենության ամեն շար աղտ, ձեր անձերը կենդանի ջրով լվաք և արժանի լինեք ձեզ վրա հագնել փառքի լույսի պատմումանը:

233 Բայց սուրբ Հոփիսիմեի մասին հենց դուք գիտեք, թե ինչպես տերը պահեց նրան և փրկեց ձեր ձեռքերից ու անօրեն պղծությունից: Եվ դու [ով թագավոր] ինքող գ.՝

տես քո ոսկորների ամրության ու քաջության շափը և թե
ինչպե՞ս տկարացար մի աղջկա առջե, քանզի նրան պահեց
ամենատեր Քրիստոսի զորությունը։ Իսկ իմ մասին դու
ինքդ գիտես, որ ահա տասնհինգ տարի է, որ մնում էի խա-
վարշտին ու իոր ահազդու վիրապում։ Իմ բնակու-
թյունը օձերի մեջ էր, սակայն Տիրոջ ահից նրանք երբեք
չվնասուցին ինձ, ոչ էլ գար ։ ուրեցի նրանցից և ոչ էլ սիրու
Երկյուղ ընկալ, քանզի հուսացել էի ամենի արարիշ տեր
Աստծուն։

234 Իսկ այս մասին դիտեմ, որ տգիտությամբ ենք արել,
ինչ որ արել ենք, թալց, արդ՝ դարձի եկեք և ճանաշեցեք
Ծիրոշը, որունակ ողորմի և ապրեցնի ձեզ, սպանված ող-
քերին բարեխոս արեք, քանզի կենդանի են և ոչ մեռեր
ձանաշեցեք Աստծուն, որը ինքն է բոլորի տերը, այսուհետեւ
հրա ։ արուլցեր պիտի պաշտամունքներից, քարեղեն ու փայ-
տեղեն արձաթնդեն ։ սկեղեն, պղնձածույլ արձաններից,
քանզի սուս են ու սնոտի։

235 Զէ՞ որ նախապիս էլ խոսեցի ձեր մոլորության մա-
սին, թե թանձր խալիարի ստվերի մառախուղը նստած է
ձեզ սրտի աշքերի վւա, և խանդարում է ձեղ նայել, միտք
ածել ու ճանաշել Արարշին։ Արդ՝ եթե ևս աստվածությանը
ովաշտամբ մերձենալու որեւէ ուղղություն տեսնեի ձեզա-
նից, չէի դադարի դիշեր ու ցերեկ ձեղ համար աղաշելուց,
որ չկորչեք։ Այլ [խոռնք] Արարշի բազում մարդասիրու-
թյան մասին, որն անքնին ու անդատում է իր արարածների
նկատմամբ և համբերությամբ ներում է, լսում ու խնա-
լում շնորհիվ իր բազում զթության։

236 Առաջին ժամանակներում նա թույլ տվեց մարդկանց
գնալ ըստ իրենց կամքի, ինչպիս և ասել է. «Թողեցի
նրանց, որպեսզի իրենց սրտի ուզած ձեռվ ընթանան, և
ընթացան նրանք ըստ իրենց անձնական կամքի»։ Սակայն
ոյժմ արդեն կանչում է ձեզ իր փառքին ու անեղծությանը,
որպեսզի ժամանակորդ զառնաք հավերժ կենդանության, որը
չի անցնելու

* Սաղմ. 2, 13.

237 Արա համար էլ իր սիրելի նահատակներին ձեզ մոռ
ուղարկեց, որոնք իրենց նահատակությամբ վկայեցին
երրորդության միասնական տերությունը, ամեն ինչում ամե-
նից վեր Աստծուն, որը հավիտենական է, նրա արքայու-
թյունը հավիտենից է և տերությունն անվախճան։ Նրանց
իրենց մահը դրին որպես հավատարիմ հաստատուն կնիք
իրենց ճշմարիտ հավատի համար։ Ահավասիկ ձեր մեջ նրանց
ճառերն են պատմվում, որոնք կենդանի են աստծով և բա-
րեխոս՝ [նրան] տոնողների համար, և մենք մաղթում ենք,
որ իրոք բարեխոս լինեն առ աստված։ Քանզի աստծու հա-
մար մեռած լինելով կարող են շատերին մահվանից կենդա-
նացնել։

238 Ուրեմն նրանց միջոցով հաճեցրեք աստծուն, աստծու
որդու մահվան շնորհիվ, վասնզի աստծու որդին մեռավ,
որպեսզի արարածների մեռելությունը կենդանացնի։ իսկ
սրանք մեռան նրա աստվածության վկաները դառնալու
համար։ Առանց իր մահման նա չէր կարող մեղ կենդանու-
թյուն տալ, այլ արարածներին բարձրացրեց անարդության
աստիճանի իշնելով, ոչուսզի մեզ նման լինելով նա բարձ-
րացնի անարգներին։

239 Իսկ առանց սրանց վկայության, արդյոք կարելի
չէր հավատարիմ լինել Բայց այդ արգեց, որպեսզի բարձ-
րացնի նրանց, որոնք սիրեցին նրան։ Նույնպես և մեր շունչը
մնաց մեր մարմնի մեջ, թևակետ մեզ մարմնական նեղու-
թյուններ հասան, վշտեր ու անասելի ցավեր՝ բոլոր մարդ-
կանցից ավելի տանջվելով։ Նույնիսկ մի օր չէր կարող մարդ-
կային մարմինը տոկալ այն ահավոր շարշարանքներին։
Կամ թե արդյոք կարո՞ղ է մարդ լոկ մի օր ապրել այն
սարսափելի հոր վիրապում, ուր ես թաղված էի օձերի
մեջ, որպես շեղջերի մեջ։ և վխտում էին նրանք իմ մարմնի
վրա, փաթաթվում ինձ և խլրտում էին իմ մարմնի մասերի
վրա, սակայն տիրոջ մեծասքանչ ողորմությունը ինձ կեն-
դանի պահեց, նվ թեև արժանի չէի՝ ահավասիկ մշակում եմ
ձեր մեջ հոգիների ու մարմինների բժշկությունը։ Ճեր հոգի-
ների ու մարմինների բժիշկ դարձա ձեզ մատուցելու այն,
ինչ որ օգտակար է։

240 Ակսենք խոսել Աստծու բարերարության մասին՝ երկ-նային պատգամները ձեզ հաղորդելով, որովհետև եթե լսեք ճշմարտության խոսքը, Ավետարանի բարոգությունը, բոլորի Արարչի հրամանները, ապա փրկված և սրբված կի-նեք այս փոքր պատուհասից և կվայելեք հավիտենական կյանքը և սեղեք Աստվածային խոսքը և երկնքի արքա-յության բարությունը ձեր անձի վրա կընդունեք:

241 Միայն թե մաքրված լինեք ակամա տղիտության մեղքերից, բարալաշտությունից ու փայտապաշտությունից և Աստծու անճառ բարիքները կարողանաք ձեր անձի վրա ընդունել: Իսկ Աստծու սուրբ նահատակները, որոնց դուք շարչարեցիք, կարող են և ձեզ համար բարեխոսություն անել: Մեր խոսքերը, ճառերը, ջանքն ու վաստակը ձեղ օգուտ կտերմանեն, որ դուք բարեկեցիք երկարակյաց կյանք վայելեք երկրի վրա, իսկ երկնքում ձեղ ժառանգորդ կդար-ձնի հանուերձալ կյանքին:

242 Իսկ եթե չկամենաք լսել կենաց խոսքի բարողը, այստեղ վրեմի շարաշար հարվածներ խփելով կկոտորի ձեղ, օտար թշնամիների դատաստանին կհանձնի ու միանգամայն վրեժ լուծելով՝ մահվան կմատնի ձեզ»:

243 Երանելի Գրիգորը երբ այս ամենը խոսեց, առա-սարակ իրենց ձեռքերը օձիքին տանելով պատուեցին պատ-մուճանները: Թագավորն ու նախարարները և մարդկանց այլ բազմություն, գետնին ընկնելով՝ մոխրի մեջ թավալվում էին ու միաբերան ասում. «Արդյոք կարո՞ղ ենք Աստծուց թողու-թյուն հուսալ, քանզի կորած էինք մեր տգիտության մեջ ու խավար ճանապարհներում: Թողություն կգտնե՞ն մեր բազ-մաթիվ մեղքերը»:

244 Պատասխան տվեց Գրիգորը ու ասաց. «Մարդասեր է Տերը, համբերող ու բազումողորմ, գթացող է նրանց նկատմամբ, որոնք կդիմեն նրան՝ և եթե իրենից խնդրեն՝ կների նրանց»:

245 Իսկ նրանք ասում էին. «Մանոթացրու մեզ և հաս-տատիր մեր միտքը, որպեսզի կարողանանք խնդրել յան-

* Հմատ. Մաղմ. 26 15.

ՆԵԼՈՒՅ երեսը մեր Արարշի, որին չէինք ճանաշում. արդյոք կհամաձայնի՝ կը եղունի՞ մեր ապաշխարությունը։ Դեռ կա՞ դարձի տեղ և կամ արդյոք կտրված չէ՞ մեր կյանքի հույսը նրանից։ Կամ դու արդյոք չե՞ս հիշի քեզ հասցրած մեր շարիքները, կտա՞ս մեզ ուղիղ վարդապետությունը, ոխ չե՞ս պահի մեր նկատմամբ՝ շարսրտությամբ նայելով մեզ և չե՞ս շեղի մեզ ուղիղ ճանապարհցաւ։

246 Մարդիկ միասին աղաղակ բարձրացրին ու լաց եղան թագավորի հետ մեկտեղ, բոլորը ընկան և թալվալ-վում էին նրա առջեն՝ չկարողանալով մի քիչ հեռանալ նրանից, դիվական տանջանքների անտանելի հարվածների սաստկության պատճառով։ Քանզի, երբ մի քիչ հեռանում էին նրանից, դեմքն իսկույն վրա հասնելով կատաղեցնում էին՝ ստիպելով ատամներով իրենց մարմիններն ուտել։

247 Արդ՝ Սուրբ Գրիգորը երբ լսեց այս բոլոր խոսքերը, որ նրա առջև խոսնեցին, արտասուր թափելով ասաց նրանց. «Դուք գիտեք այն ամեն շարիքները, որ ինձ հասցրեցիր։ Ինչպես կարող էր մարդ տոկալ այնշափ շարշարանքներին, կամ որևէ հնար կա՞ր նույնիսկ մի ժամ դիմանալու. մարդ մնել օձի լոկ տեսքից հետու է փախչում, թող թե տասնհինդ տարի մնալ օձերի բազմության մեջ և ողջ փրկվել, տոկալ և շարունակ բնակվել նրանց մեջ։

248 Նախ այս բանում տեսեք Արարշի զորությունը, որն ամեն ինչ ստեղծել է ըստ իր կամքի և երբ կամենա կարող է ամեն մեկի բնույթը փոխեր և, նույնիսկ այն վնասակար թոնավոր գաղաններին, որոնք սարսափելի հորի մեջ էին. քաղցրացրեց անարժանիս՝ իր ծառայի նկատմամբ։ Թեելետե մենք անարժան էինք, սակայն ձեր օգտի համար պահեց մեզ և ցույց տվեց իր հրաշքների զորությունը։ Քանզի մեզ պահեց, որպեսզի ձեր մշակության գործին մոտենալով և ձեզ օգուտ բերելով՝ Աստծու մարդասիրությունը մեր միցոցով ձեր նկատմամբ կատարվի։

249 Կամ արդյոք հնարավո՞ր էր, որ մի մանկամարդ աղջիկ դիմադրեր հսկա տղամարդու, ինչպես տեսաք հենց ձեր աշքերով։ Ինչպես կարող էր դա հնարավոր լինել, եթե Աստված տված լիներ հաղթության իրավունքը իր

նահատակներին անարատությամբ պահպանելու ձեր անօրինությունից։ Արդ՝ այդ երանելի սրբերի մահվան համար, որոնց արյունը թափվեց ձեր երկրում, և արժանի եղան աստվածային շնորհներին ու նահատակվեցին և որի համար ողորմաց ձեզ և մեր Հայաստան աշխարհին։ Նրանց Բափած արդար արյան համար ձեր ապաշխարությամբ ահա քափություն շնորհեց ամեն ինչ պարզեռող Աստված։

250 Իսկ իմ մասին [Եթե խոսենք], արդյոք Աստծու հրամանով շէի՞ քարսպում ձեզ, թե՞ իմ որոշումն էր դա։ Եվ ինչպես կարող էր այդ լինել ։ Իսկ արդ՝ ես հնար ունե՞ի արդյոք հաւարձակվնել որևէ բան ձեզանից խարցնելու, այն էլ Աստծուց հրաման առած լինելով։ Հենց Խոր վիրապում էլ ես ամեն օր բաց աշբերով տեսիլքի մեջ տեսնում էի Աստծու հրեշտակին, որը մշտապես քաջալերում էր ինձ և ասում. ինչպես և այժմ էլ նույն տեսիլքը տեսնում եմ, որ ասում է ինձ, թե «քաջալերվիր, պինդ կաց. քանզի տեր Աստված պահեց քեզ, արժանի համարեց իրեն ծառայելու և բնութագիր միանալով. Քրիստոսի անապական պարգևներից քո վարձը առնես։»

251 Դուք ինձ գցել էիք Խոր վիրապը, մահվան սարսափելի տեղը, և ես այնտեղից Աստծու կամքով ողջանդամ ելաւ. Այս բոլորն ասելով ու թե իմ անձով եմ պարծենում, այլ որովհետեւ հնարավոր չէ թաքցնել Աստծու հրաշքները. Քանզի չի էլ թաքցվի, այլ պետք է պատմվի քանի որ ինձ զիրկեց մահվանից, մինչդեռ ձեր աշքում մեռած էի համարված, ինչպես որ զուք հենց ձեր կողմից վկայում օք. Իսկ դուք, որ մեռած էիք ձեր մեղքերի մեջ, ահավասիկ մեռյալներդ մեռյալիս ձեռքով կենդանանում եքս Վասնզի ինձ հանձնարարված է հաղորդել Աստծու հրամանները. Ճեզ դարձի բերել դեսի ճշմարտության ճանապարհը, որ հրաժարվեք քարեղեն, փայտեղեն, արծաթեղեն ու պղնձեկ կուռքերի ունայն պաշտամունքից. որոնք ոչինչ են և ոչ ոքի պիտանի, դարձ կատարեք դեսի կենդանի աստվածը, ըրեստեղծել է երկինքն ու երկիրը. ծովն ու ամեն ինչ. որ երամեջ կա և դեպի նրա խոսքը՝ միածին նրդին ու կենդանի ու

կենդանաբար Հոդին, որը մաքրիլ ու քավիլ է իր երկրպագուշ ներին ու փառավորողներին:

252 Իսկ եթե տեսնենք, որ դուք սրտանց ու հոժարությամբ դարձ կկատարեք առ Աստված, ապա Հաճույքով ու սիրահոժար կսկսենք ձեզ պատմել արարչության մասին, թե ինչպես բարի աշխարհն ստեղծվեց բարերարի ձեռքով, ինչպես վարվեցին աշխարհի կարգերը, Մարդկանցից ոմանք ըստ իրենց կամքի Աստծու հանդեպ կատարեցին Հաճելի բարություն, և եթե շարիք գործեցին, պատժվեցին այսուղև՝ երկրում: Թւ Աստծու որդին մարմնով աշխարհ եկավ անտրդությամբ և ինչպես վերջում գալու է նույն մարմնով և հոր փառքով և գալիք բարիքների ու հանդերձյալ դատաստանի մասին: [Պատմելու ենք], թե ինչպես առայժմ մենք պարտավոր ենք ընթանալ պատվիրանների ուղիով և ըստ Աստծու կամքի, թե ինչպես կարելի է գտնել ապաշխարություն և մեղքերի թողություն և ինչպես տգիտությամբ մեղք գործողները կարող են քավություն գտնել և ըստ Աստծու կամքի շարից փախչել և բարիք գործել, որպեսզի խոստացված բարիքներին հասնեն, և թե, ինչպես արժան է, գնալ Աստծու ճանապարհով: Այս ամենը կարգով մեկ առ մեկ պատմելու ենք պարզ լեզվով ու անլուր բերանով, որպեսզի Տերը իր մարդասիրությամբ ընդունի ձեր ասլաշխարհությունը և գույք արժանի լինեք մեր տեր Հիսուս Քրիստոսի միջոցով մարդասիրության շնորհների մեջ մտնելու:

253 Եակայն մենք սկզբից սկսելով, ձեզ ցույց կտանք աշխարհի ստեղծումը՝ բարերարի կողմից արված բարերարությունը, եթե դուք կամենաք օրտանց ունինդիր լինել ու հագատալ: Սակայն նախ և առաջ կսկսենք պատմել միակ մեծ բարերարի ու ապա նրա կողմից ստեղծվածների մասին: Եզ այս ամենը հօգուտ ձեզ աշակերտյալներիդ շտապում ենք կատարել ըստ աստվածային հրամանի, կարեռագույն համարելով նրա փոխարեն և նրա մասին ամենապատշաճ ամենահարմար խոսքերով արտահայտվել, քանի որ աստվածության մասին ենք չուսելու և գիտենք, որ նա է Հշմարիտ Աստվածը:

254 Սակայն ոչ ոք չի կարող անհաս էության մասին ճառել և ինչպես որ նա է, ոչ ոք չի կարող պատմել, որովհետեւ անհաս, անբավ, անպարփակ ու անքնին է, անմատուց ու անիմանալի է բոլոր արարածների համար, տեսողության համար աներեւույթ է, սակայն շնորհիվ իր հոգատարության ու գթության մոտ է բոլորին։ Մահկանացու մարդկանցից ոչ ոք նրան չի տեսել երբեք, և ոչ էլ հոգեղիններից ու հրեղեն հրեշտակներից որևէ մեկը։ Միայն փառարանված է բոլոր արարածներից, քանզի ամեն ինչ նրանից է ծաղում, բայց նա միայն ինքնագո է։

255 Սակայն արդար մարդիկ, որոնք արժանի եղան նրա արարչությունը ճանաշելու և երկրպագությամբ նրա կամքին հնազանդվեցին, մշտնչենականին հրամսնակատար դարձան և աստվածամերձ կյանքի մասին պատմեցին՝ առաջին դարերում անվանվեցին մարգարեներ, երրայեցի աստվածապաշտ ազգից, Աբրահամի գալակներից, որն իր աստվածապաշտության համար ընտրվելով՝ ամենայն ազգաց հայր անվանվեց ու որպես հավատքի գլուխ՝ պարծանքով նստելու է բոլորի աջակողմը և արդարն արժանի է հայր կոշկելու նույնակես և նրանից ծնված սերունդը առաջին և սեփական ժողովուրդ է կոչված։

256 Նրանց միջից ծագեցին մարգարեները իրեն աստվածապաշտառ պատգամներ ունեցող լուսավորներ, որոնք արժանի եղան հոգու աստվածային շնորհներին, ամենքին սովորեցրին Աստծու օրենքները, նրա կամքը ու երկնավոր հրամանների ուղիղ կարգը ամենքի առջև դրեցին, ինչպես նրանց մարգարեական մատյաններն են հավաստիորեն պատմում, որպեսզի բոլորի օգուտը մինչև վերջ լրանա։ Տիեզերքը լցրին կարգավորված ընթերցվածքներով՝ ցույց տալով աստվածեղեն խոսքերի մարգարեական արվեստը, որպեսզի բոլոր նրա խոսքերին հնազանդվողները կարողանան հայտնի տեսնել հենց իրեն՝ Աստծուն ըստ վերին կարգադրության³⁰,

257 Արդ՝ սուրբ մարգարեների աստվածապաշտ գնդերի միջից ելավ մի մեծ մարգարե, որին կոչում էին Մովսես և արժանի շինելով աստվածալին շնորհներին, ոկսեց՝ ուսու-

Եսնել ամենաստեղծ սկզբնագործ ժամանակի մասին, աշխարհամար աշխարհապատում մարդարեռությամբ ամենքին ավանդեց հշմարիտ գիտությունը։ Նույն ձեռվ մենք էլ հոգու ամենուսուց շնորհներով սկսենք ձեզ վարդապետել, ջանք դնենք պատմելու երկու աշխարհների մասին, որոնք քարերար Աստծու ստեղծածներն են, սկզբի ու վախճանի, անցավորի ու հավիտենական մշտնջևնավորի մասին։ Թող [Աստծու] խոսքերը մեր բերանում լինեն և մենք ցույց տանք օգուտը, իսկ դուք՝ լսեք. ընդունեք, հավատաք ու հեռանաք սատանայական շար գործերից՝ աստվածամուխ կյանքի ժառանգորդ դառնալով։

258 Արդ՝ սկսենք Քրիստոսի շնորհներով մեկ առ մեկ նախապատում նշաններով ձեզ պատմել իսկ դուք ունկնդիր եղեք ու սըտանց լսեցեք³¹։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԾԽԱՐՀԻՍ ՓՐԿՈՒԹՅԱՆ, ԴԱՐՁԸ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿԻ ԶԵՐՄՈՎ

716 Արդ, եկեք եղբայրներ, հասարակաց շինության գործը արագացնենք, որ ձեզանից էլ այդ պատուասները վերանան և ձեզ հասած խոռովությանը անմիջապես խաղաղություն հաջորդի. իսկ ձեզ գերսղ մոլորություններից՝ փըրկության դարձ լինի. Ահա ես աստծու բոլոր պատզամները կարգեցի ու առնասարակ ձեր լսելիքին մոտեցրի՝ լթաքցրնելով օգուտը՝ սկզբից մինչև վերջ ամեն ինչ պատմեցի ձեզ։

717 Եկեք ամփոփենք աստվածային գանձը, որպեսզի ես ձեզ բոլորիդ բժշկություն պարզեի. Խաղաղության հասթընենք նրանց [նահատակներին] և նրանց վրա շինենք մատուներ, միաբանության աղոթքի տաճարներ, շարունակ խնդրելով Աստծուց նախ հաշուություն, խաղաղություն և

սղորմություն աշխարհին՝ հավատքով, հույսով և սիրով և
դրա հետ մեկտեղ նաև կյանք ու Աստծու արքայությունը

718 Արպեսզի դուք ևս ազատվեք խավարի ամբարտա-
վան գործերի ժառայությունից և Աստծու լուսեղեն փառքն
ստանաք՝ սրանց աղոթքով ու բարեխոսությամբ առ Աստ-
ված, որ սրանք էլ ձեր անձերը հանգստացնեն ձեզ վրա հա-
սած պատուաներից ու տանջանքներից և սրանց միջոցով
հաշտվեք Աստծու հետ։ Սրանց մեջ բնակված տատվանու-
թյունը կգթա ձեզ վրա, եթե խոստվանությամբ, խոնարհու-
թյամբ, հավատքի հնապանդությամբ և պասով ճգնելով
հաստատեք ձեր սրտերում ու մտադրված լինեք՝ հրաժարվել
ձեր կամքի խորհուրդներից, արժանի լինե՛ սուրբ մկրտու-
թյան լվացմանը և մասնակից դառնալ այս սրբերի ժառան-
դությանը՝ հասնելով լույսի բախտին ու խաչի պարծանքին
«սրբ Կորցնողների համար հիմարություն է և ձեզ, որ գտաք՝
իմաստություն է, զորովիլյուն և Աստծու փրկություն»*

719 Ձեզ արժանի կանի Աստծուն որդեգրվելու, ջնշելու
ձեր մեղքերը, պարտքերը ներելու և ընդունելու ձեզ մոտ
եղած սրբերի պատկի մի մասը, որպեսզի դուք ևս Աստծու
փառավորիչներ դառնաք փառավորիչների դասից հաղոր-
դակից լինեք կցորդության, սուրբ Հոգու օրհնությամբ և
արժանի լինեք աշտվածության խորհուրդը ըմբռնելու
կվացվեք սատանայի աղտից, և թող նա ձեր ոտքի գարշա-
պարին կոխան լինի. մտնելով և հաղորդակից դառնալով
Աստծու սիրո հարսանիքին, ուտեք Աստծու որդու ճշմարիտ
գառան միուր և ըմպեք նրա արյունը Մասնակից դառնաք
Աստծու շարշարանքներին ու փառքին, հաղորդակից և մեկ
հոգի դառնաք ու նրան կցորդ լինեք նրա մարմնով և ար-
լամբի.

720 Թող այս նահատակները, նրա սղորմությամբ, ձեզ
համար ամուր բերդ լինեն, ամրության հզոր աշտարակ և
բարեխոսությամբ՝ վերակացուներ, որոնք բաշաբար արյուն
թափելով իրենց նահատակությամբ ձեզ տանելով կմոտեց-

* Հմմտ. Ա Կորնթ. Ա, 18.

ԱՅՍՏՃՈՒՆ, ՔԱՆՂԻ ՆՐԱՆՔ ՃԵՂ ՊԱՀԵԼՈՎ ցՈՒՅՑ ՄՎՀԻՆ ԻՐԵՆԾ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՊԱյՔԱՐԻ ՀԱՂԹՈՂ զՈՐՈՒԹՅՈՒՆԸ

721 ԵՎ ՈՐՈՎՀԵՏԿ Այսօր արդեն երեկո է, գնացեք հանգիստ քնելու, խաղաղությամբ ննջնցեք ու վաղվանից թող ՃԵՐ Հոգսը լինի ՆՐԱՆԳ ՀԱՆՂԱՄԱՐԱՆՆԵՐԻ ԿԱռՈւցՎԱԾՐՆԵՐԸ շինելը։ ՈՐԱԿԵՍՎԻ ՄՐԱՆՔ ԷԼ ՃԵՐ Այսաւեղ շինած ՀՈՂԵՂԵՆ ՀԱՐԿԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՃԵՂ ՀԱՄԱՐ ԼՈՒՍԵՂԵՆ ՀԱՐԿԵՐ պատրաստեն, որին ակնկալում ենք ՀԱՍ-ՆԵԼ ՄՐԲԻՐԻ ԲԱՐԵԽՍՈՍՈՒԹՅԱՄԲ, ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԻՆ. ՔԱՆՂԻ ՆՐԱՆ ԵՆ պատկանում ՓՎԱՌԸ զՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ պատիվը ՀԱՎՀԻՄՅԱՆՍ ՀԱՎՀԻՄՅԱՆԻՑ ԱՄԵՆՆԱՏ

722 Այս ասելով արձակեց ամբոխը, բայց թագավորն ու մեծամեծները նրա մոտից երբեք չմեկնեցին, քանզի ՀԱՐՎԱԺ ԷՒՆ ՍՄԱԳՈՎ ՈՒ ԱՀԱԲԵԿՎԱԺ. ԳԻՇԵՐ-ԵՐԵԿ ՆՐԱ ՉՈՒՐՁՆ ԷՒՆ և օթևանում էին նրա մոտ այգու մեզ, ՀՆԴԱՆԻ դռանը. ՔՈՒՐՃ ԷՒՆ ՀԱԳԵԼ և մոխրի վրա նստած վաԲՍՈՒՆՎԵՑ օր պաս էին պահում. Այսպես երանելի ԳՐԻԳՈՐ ՎԱՅՍՈՒՆՀԻՆԴ օՐ, զիշեր ցերեկ, անհանգիստ ու անղադար խոսում էր, խրատում, ուսուցանում ու հաստատում. ԻՐԻ իմաստուն թժիշկ ջանում էր օդնության դեղ գտնել, որպեսզի նրանք, ՀԻՎԱՆԴԻ ՆՄԱՆ, իրենց անձը մատուցեն, իսկ նա, իրու ճարտարապետ. ՆՐԱՆԳ բժշկի ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՄՅԱՆՈՎԻ

723 ԱՄԵՆՔԻՆ ՄԵՂՅԱԿ, ԽԵԼԱՄՈՒՄ ԷՐ ԴԱՐՃԱՆՈՒՄ և ոչ թե ԿԵԿՈՒՊԻՐ, ՓՈՎՀ ԿԱՄ ԱՆՃԻՇՄ ԽՈՍՔԵՐ ԷՐ ԱՍՈՒՄ, ԱՅԼ ՀԱՄԱԿ ԿԵՐՊՈՎ ՈՒՍՈՒցԱՆՈՒՄ ԷՐ՝ ԱԿԵԼՈՎ ՀԵՆԳ ԱԿՎԲԻՇ՝ ԱՉԽԱՐԻ ՔՆՆՈՂ. ԱՉԽԱՐԻ ԱՊԱՄՈՒՄ ԱՐԱՐՀԻՇ, ՄԻՆՉԵ ԱՍՏՃՈՒ ԲՈՒՆ ՍՊՈՒՐ ՊԱՄՊԱՄԱԽՈՍՆԵՐԸ, ԱՄԵՆՔԻՆ ԸՆՏԵԼԱՑՆԵԼՈՎ և ԺԱՆՈԹՎԱԳՆԵԼՈՎ Առաքինի գործերին ու ՀՈԳԵՎԱՄՈՒՄ ՊԱՄ-ԳԱՄՆԵՐԻՆ.

724 ԻՍԿ ԱՍՄՎԱԺԱԾԱԿ ԱՅՐԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԱՆԴՆԵՐՆ ԷԻՆ ՔԱՐՈՂԵԼ ԾՂՄԱՐՏՈՒԹՅԱՄԲ, յուրաքանչյուրին իր աստվածամուխ կյանքով ու վաստակասեր Հոգենոր վար-ՔՈՎ, ՎԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՐԸ, ԱՄԵՆ ՄԻԿԻՆ ՀԱԿԱՆԵ ՀԱՆ-ՎԱՆԵ ԺԱՆՈԹՎԱԳՆՈՒՄ ԷՐ, ԵՎ ՆՐԱՆԳ ՀԱղորդում ԷՐ ԱՍՏՃՈՒ ԽՈՍՔԵՐՈՎ ԿԱՐԴԱՎՈՐՎԱԺ ՈՒ ՀԱՐՄԱՐԻՑՎԱԺ ՍՊՈՒՐ ՀՈԳՈՒ

ասած բոլոր պատգամները, նույնպես էլ մեկնությունը գրում էր նրա զորությամբ:

725 Իսկ նրանք՝ հավաքված, կուտակված անթիվ մարդիկ, իրար վրա դիզվելով, հանդեսի էին եկել իրենց ականջները վարդապետության ունկնդրությանը տրամադրելու, անհուն, անշափ բազմություն անասելի շատությամբ հավաքվել էր, նրա հոչակի պատճառով, տեսնելու ու լսելու Աստծու արտակարգ հրաշքները, թոլոր զալառներից հավաքված այրեր, կանայք ու մանուկներ, Արարշի զորությունից ահարեկված, հնազանդվում էին և հավատում: Աճապարում էին տեսնելու ցուցադրված հրաշքները և սիրով վերահսու լինում Ավետարանի կենաց խոսքի կենսաբեր քարոզության օգտակար խրատներին: Ամեն ինչ հանձն առնելով, թաղավորն ու իշխանները շտապում էին կատարել ինչ որ նա հրամայեր:

726 Արդ՝ երր լրացավ վաթսունվեցերորդ օրը, և առավոտյան այգը բացվեց, մոտեցան իշխանները, թաղավորի նախարարների ու խառնիճաղանց ամբոխի հետ մեկտեղ, ինչպես նաև կանայք՝ մատաղ, անմեղ մանուկներով, հավաքված, երամ-երամ, խմբավորված՝ ընկնելով սուրբ Գրիգորի առջե, աղալում էին ու խնդրում հասած պատուհասի հարվածներից բժշկություն զտնել, քանզի զարնված էին արդար դատաստանի բարկության զավագանով:

727 Մանավանդ թագավորը՝ աղը որոնող խոզերի կերպարանք էր ստացել, քանզի ամբողջ մարմինը մազուտվել էր, և մարմնի բոլոր մասերի վրա խոզի մազ էր բուսել վայրի խոշոր վարազների նման, իսկ ոտքերի ու ծեռքերի մատների ծայրի եղունգները կճղակացել էին գետին փորող և արմատակեր վարազի նման: Նրա երեսի տևսքը նմանվել էր եղեգնուտում բնակվող զաղանների պատկերին ու կնճիթին: Գաղանամիտ բնությամբ ու վարքով՝ թագավորական բարձր շուրբից ընկած, շրջում էր անբաւն, խոսակեր զաղանների կերպարանքով և զաղանների հետ թափառում եղեղնուտի ներսում՝ մեկուսացած մարդկանցից:

728 Իսկ երր եկավ վիրապի բանտից ելած, Քրիստոսի խոստովանող Գրիգորը և հասավ նահատակների տեղը,

աստվածային կարգադրությամբ բոլոր դիվահարները ի մի հավաքվելով այդ տեղում հայտնվեցին, Թագավորը խոզացած, բարձրածայն ճշում էր, կանչում, խոզի նման ճղճում և փրփրած, կատաղած կնճիթակերպ երեսով, շորբոտանունման դարձած, եղեղնարնակ գաղանների երամի մեջ ընթանալով այդ տեղը հասավ:

729 Իսկ երանելի Գրիգորը աղոթքի կանգնելով առաջին անգամ խնդրում էր ամենապարզն Աստծուց ոչ թե դիվահարների կերպարանքին առողջություն, այլ մտքերին՝ ցանկություն վարդապետությունն ունինդրելու, զգաստանալու և ի միտ առնելու Աստծու ասած պատվամները: Միայն այսշափ բժշկություն ստացան՝ քաջ լսելու, հասկանալու և համարձակ խոսելու: Մինչև վարդապետության վաթսունվեց օրերը [թաղավորը] նույն կերպարանքն ուներ՝ ձորձապատ, փաթաթված, հրապարակներում կուտակված մարդկանց բազմաթիվի աշխարհածողովի մեջ:

730 Երբ սկսեցին նրա առջե թավալվել, ընկնել և բժշկություն խնդրել, բանզի թագավորը արտաքինով մարդկային տեսքից հեռացած էր և խայտառակ կերպարանք ուներ՝ պահպանելով միայն բանիմաստ խոսքի և լսելու [ունակությունը], ապա նա աղաշանքներից հետո պատասխան տվեց՝ ասելով, թե «ես էլ ձեզ հետ, որպես ձեզանից մեկը, ձեր օգուտը կինդրեմ և դուք սրտանց խնդրեցեք ձեր բժշկությունը, քանզի մարդասերն Աստված կողորմի ձեզը թայց փութացեք, շինեցեք վկայարանները, որ Աստծու նահատակներին հանգստություն տաք, որպեսզի նրանք էլ ձեզ փրկեն պատուհասների տանշանքներից և ազատվեք պատրաստված սարսափելի ու դասն հանդերձյալ խոստացյալ դատաստանից և արժանի լինեք Քրիստոսի արքայությանը Նրանք խնդրեցին, որ իսկույն հրամայի անել՝ ինչպես և ինչ կկամենաւ իսկ նա պատմեց նրանց իր տեսիլքը՝ ասելով.

731 «Արդ՝ եկեք պատմեմ ձեղ, եղբայրներ, Արարչի ձեր նկատմամբ ունեցած սիրո ապացուցը, որն ինձ երեաց ահավոր տեսիլքով: [Տեսա] Աստծու իշնելը իր սուրբ նահատակների մոտ և սրանց անհամեմատ բարձրանալը, ան-

պատում վերացումը Երկնքի արքայության անգուգականության մեջ։ Նա հայտնեց ինձ գալիք կենսաբեր պարզեր, որը շնորհվելու է ձեզ, և ինձ աստվածակերպ սքանչելի անպատում տեսիլք երեաց, որը փոքր ի շատե հանդամանաւից կպատմեմ։

732 Այս գիշերվա կեսին, երբ դուք աշխատության ծանրությանից ու տքնությունից խոնջացած քուն էիք մտել, ես դեռ արթուն էի մնացել ու մտախոն՝ էի աստվածային ողորմության անքնին հրաշքների հանկածակի կատարվելու, նրա այցի և ձեզ աստվածագետ վարդապետության իմաստուն իրատների բովի մեջ ներդրավվելու մասին։ Մտածում էի նաև նահատակների իրենց սիրեցյալ Արարիշի հանգեալ ունեցած սիրո մասին և նրանց համար փոխարենը պատրաստված անպատում հատուցումը և թե ինչպիսին է դա լինելու։

733 Հանկարծակի ասստիկ ձայն եղավ, որսաման բոմբյուն, ահավոր թնդյան, ծովի խոսվյալ ալիքների սաստիկ ձայնի նման, Բացվեց Երկնքի հաստատության խորանաշեն ծածկը, և իջավ մի այր լույսի կերպարանքով, կանչեց իմ անունը ու ասաց. «Գրիգորս Նայեցի, տեսա նրա կերպարանքը և զարհուրած դողալով գետին ընկաւ, Ասաց ինձ. «Դու վեր նայիր և տես հրաշքները, որ քեզ ցույց եմ տալու»։

734 Եվ հս նայելով տեսա երկնքի հաստատությունը բացված ու նրա վրայի ջրերը նույն ձևով ճեղքված ձորերի ու լիոների կատարների նման այս ու այն կողմ բաժանված դիպված էին աշքի տեսսղության համար անբավ ու անկշռելի իսկ լույսը հոսելով վերևից ներքեւ մինչև երկիր էր հասնում և լույսի մեջ տեսա մարդկային կերպարանքով, լուսեղեն, երկթե անշափ զորք՝ թերը կրակի նման։ Մանր փոշու հյուլեի նմանությամբ, որ արեգակնակեազ գարնան ժամանակ պատուհանների կամ երդիկների լուսանցույցի վրա շողերի մեջ խաղում է, նույնպես և լուսեղեն զորքը լցրեց ամբողջ երկիրը, իսկ իշնող լույսը առաջը ցցվեց զորքի հետ մեկտեղ։

735 [Տեսա] մարդկային մի ահավոր կերպարանք, բարձր ու ահեղ, որն առջեից էր ընթանում և վերևից մինչև ներքեւ վայրէջքի առաջապահն էր, ձեռքին ուներ ոսկե մի մեծ կոան, և բոլորը նրա ետևից էին գալիս, ինքը գալիս էր

սլանալով, խոյանալով արագաթռիչ արծվի նման ու իշավ հասավ մինչեւ երկրի հատակը. քաղաքի մեջտեղը, խփեց լայնատարած գետնին և մեծ ու անշափի թնդյուններ հնչեցին անդունդների սանդարամետից^{*}: Ամրող երևացող երկիրը, աշքին տեսանելի լինելու շատի, հարթ հավասար դաշտածե տափակացավ:

736 Եվ տեսա քաղաքի մեջ, արքունի ապարանքի մոտ, ճախարակածե ոսկե խարիսխ, խոշոր բլրի մեծությամբ և նրա վրա հույժ բարձր հրեղեն սյուն, իսկ վրան ամառ խոյակ լուսեղեն խաշով:

737 Նայեցի ու տեսա երեք այլ խարիսխներ. մեկը այն տեղում, ուր նահատակվեց սուրբ Գայանեն երկու ընկերների հետ, մեկը այն տեղում, ուր սուրբ Հոփիսիսին նահատակվեց երեսուներկու ընկերների հետ և մեկը՝ հնձանի տեղում: Այդ խարիսխները կարմիր էին արյան գույնով, սյուներն ամպեղեն էին և խոյակները՝ հրեղեն: Երեք սյուների վրա կային լուսեղեն խաշեր, տնբունական խաշի նմանությամբ և այս սյուների խաշերը նման էին այն լուսեղենն սյունի խոյակին, որը նրանցից բարձր էր: Չորս սյուների խաշերի վրա զարմանատես կամարներ միմյանց կապվեցին և դրա վրա գմբեթաձե խորանարդ ու աստվածակերտ, զարմանալի ամպեղեն շինվածք տեսաւ Խորանից ներքեւ կամարների վրա տեսա այս երեսունյոթ սուրբ վկաներին սպիտակ հանդերձների լուսավոր կերպարնքով, որն անկարող եմ պատմել:

738 Շինվածքի կատարին տեսա զարմանալի, աստվածակերտ, սքանչելի, հրեղեն աթոռ և նրա վրա կար տերունական խաշը: Համատարած լույսը նրան պարուրելով խառնվեց խաշի ճառագայթներին և կպչելով միաձուլվեց: Շողացող լույսը սյուն դառնալով ցայտեց խարիսխների ներքին սյուների մեջ:

739 Եվ հորդաբուխ աղբյուր բխեց, հոսեց, ծալալվեց բոլոր դաշտերում ու ամեն ինչ լցրեց որշափ աշբը տեսնում էր: Եղավ լի ու կապուտակագույն ծով, և դաշտերն առհա-

* Գետնի խորթը, դժոխք:

սարակ հրկնագույն երեացին, Տեսա հրեղին սեղաններ, անշափ բազմությամբ և ամեն մի սեղանի վրա, մեկական սլուն՝ վրան մեկական խաչով, որոնք իբրև աստղերի բազմություն երեացին և անշափ փայլեցին:

740 Տեսա սե դույնի այծերի անթիվ հոտեր, որոնք ջուրն անցնելով ոչխարիներ դարձան, իրենց գույնը սպիտակության փոխվնց և ոչխարի լուսեղեն բուրդը առհասարակ փայլում էր, ու նրա ճառագայթները փայլատակում էին: Մինչդեռ նորից նայում էի, հոտերը հանկարծակի ծնվեցին ու բաղմացան, ծնունդներն ամեն կողմ լցրին, և ծնված գառները ամենքը լուսագեղմ էին: Հանկարծ այլ ծնունդներ շատացան, բաղմացան, և կեսն ընկնելով գետի մեջ ջրի այն յողմը ելան: Կառները դարձան թուխ գայլեր և զնացին հարձակվեցին հոտերի վրա, սկսեցին կոտորել, և արյան ճապաղիք եղավ: Մինչդեռ նայում էի, տեսա, որ հոտերին թևեր բուսան և գտրձան թևավորներ ու վերացան խառնվեցին լուսեղեն զորքերին: Հրեղեն հեղեղ բարձրացավ ու վերցրեց տարավ գայլերին:

741 Խսկ ես նայելով զարմանում էի: Եվ այն այրը, որն առաջ իմ սնունն էր կանչել, ցույց տվեթ ինձ և ասաց, թե «ով մարդ, ինչո՞ւ» ես զարմացած և չե՞ս ըմբռնում Աստծու մեծամեծ զործերը: Ասացի. «Ենչպէ՞ս, Տեր», Ասաց ինձ. «Եյս տեսիլը քեզ ցույց տրվեց, որպէսզի ըմբռնես: Եթե անտվասիկ բացված է երկինքը, զիանցիր, որ բացված են Քրիստոսի մարդասիրության դռները իր արարածների համար իմացիր, որոտման հնչող ձայնը այն է, որ Աստծու զմության ու ողորմության անձրեն է իշնում: Բացված են այս երկնքի դռները, բացված են և նրա վրա եղած ջրերը, որպէսզի արգելրներ չլինեն այս աշխարհի մարդկանց վեր ելնելու: Այս սուրբ նահատակները, որ այստեղ նահատակվեցին, հյուսիսային³² կողմերին ճանապարհ բացին, քանի որ իրենք ելան և այլոց շավիղներն ուղղեցին:

742 Ահա լույսը, որ այս վայրերը լցրեց՝ Ավետարանի քարոզությունն է. այն լցնելու է նաև հյուսիսի կողմը, Եվ լուսեղեն զորքերը շատ փափագեցին իշնել նահատակների վարդագույն արյան անուշ, ծաղկանման բուրմունքի համար.

մանավանդ այսուհետեւ հրեշտակների բազմությունները խառնվելու ևն մարդկանց հետ բնակվելու համար:

743 Իսկ ահավոր ու շքեղ այրը, որ գնում էր լուսի առցելից՝ ոսկի կուանց իր ձևոքին, հարվածեց սանդարամետին, ապա դա Աստծու նախախնամությունն է, «որը նայում է երկիր և դողացնում, մերձենում է լեռներին, և նրանք ծխում են»^{*}: Աստվածային այդ ահը հարթեց, կործանեց և տապալեց մոլորաթյունը երկրից իսկ այն, որ երկրի վրա հնչեց, ապա դա ծառայության հնագանդության ձայնն էր, որ խոսեց:

744 Իսկ սյունը, որի խարիսխը ոսկի է և ինքը՝ հրեղեն, խոյակը ամպեղեն և վրան լուսեղեն խաշ, ապա այդ ոսկի խարիսխը հաստատության անշարժ վեմն է, հրեղեն սյունը կաթողիկէ եկեղեցին է, որն իր թեսերի տակ հավաքում է բոլոր Խողովուրդներին հավատքի մի սիության մեջ: Ամպէ խոյակը ընդունելու է արդարներին, երբ տիրոջ գալստյան ժամանակ թոշեն նրան ընդառաջ՝ բարձրանալու:

745 Նրա վրայի լուսավոր խաշը ինքը մեծ բահանայապետությունն է ժողովուրդների մեջ, օրինակն է Քրիստոսի մարմնացաւ պատկերի աստվածուրդու քահանայապետության օծության: Այդ տեղում թող Աստծու տաճարը լինի, բոլոր հավատացալների աղոթքի ու խնդրանքների տունը և քահանայապետության աթոռը:

746 Իսկ երեք խարիսխները, որոնք արնագույն կարմիր էին, [նահատակների] նեղությունների, շարշարանքների ու մահվան համբերության համար են, քանզի իրենց մահը հավատքի ճշմարտության խարիսխ դարձրին իրենց արյունը թափէլով. Ամպեղեն սյուներն այն բանի համար երևացին, որ ամպը հարության երկինք վերանալու թեթև արադությունն ունի Եվ հրեղեն խոյակը նշանակում է, որ նրանց բնակությունը աստվածային լուսի հրի մեջ է լինելու:

747 Խալերը խորհրդանշում են նահատակների շարշարանքը, որը նման է տիրոջ շարշարանքներին, և [նրանք] մեռան նրա փոխարեն, քանի որ Աստծով ապրեցին ու

* Սաղմ. ՃԳ, 32.

Քրիստոսի հետ խաշվեցին, և Քրիստոսը կենդանի է մնում նրանց ոսկորների մեջ, որ բոլորին ցույց տա նրանց կենդանությունը՝ հայտնի դարձնելով նրանցից ստացված իր գիտության անուշ բուրմունքը և հոչակելով նրանց առաքինությունը ամբողջ աշխարհում։ Քանզի նրանք սպանեցին երկրավոր մարմինները և կախեցին տերունական խաշից. շարշարակից եղան իրենց Տիրոջը, նույնպես հաղորդակից են լինելու նրա փառքին ու զորությանը։

748 Եվ առաջին խաշը, որ քեզ ցույց տրվեց, քահանայական պատվի պարծանքն է՝ Քրիստոսի խաչի փառավորությամբ։ Իսկ մյուս երեք [խաշերը] տեղադրված էին սրբերի գերեզմանների մատունների տեղում, որպեսզի նրանց արյան թափլած տեղում շինվեն իրենց ոսկորների հանգստյան մատունները։ Իսկ որ առաջին սյունը բարձր է, նրանից է, որ կաթողիկե եկեղեցու պատիվը ավելի մեծ ու բարձր է, քան սրբերի ամեն բարձրությունները։ Կամարները, որոնք սյուններն իրար էին կապում, կաթողիկե եկեղեցու հավասար միաբանության նշանն են։ Իսկ վրայի խորանը վերին քաղաքի և երկնքի արքայության միաբան ժողովարանի օրինակն է։

749 Եվ քանի որ նահատակները քեզ երեացին, իմացիր, որ, ասում է՝ այս մահը ժամանակավոր է, իսկ նրանց կենդանությունը՝ հավիտենական, փառավորված ի փառս առավածորդու, որի համար էլ խաչի օրինակը իրենց անձի վրա են տպավորել։

750 Շինվածքի գագաթին, որը տեսնում ես, նույն ինքը բարձր ինքնադու Աստծու ամենազոր էության աթոռն է, քանզի նա ինքը սուրբ եկեղեցու գլուխն է և ամեն բարությունների կատարիչը։ Նրան պատշաճում է ամեն շինվածք, և աճում է նա աստվածային աճով, ու նրանով են բոլոր մարմինները հողերով, խաղերով, անդամներով հաստառված ու կազմված*։

751 Խաչին փարած լույսը հենց նույն աստվածային Հոգին է, որը փառավորում է Որդուն։ Եվ խառնվեց նրա ճառա-

* Հմատ. Եփես. Դ., 16; Պողոս, Բ, 19.

գալթներին, քանզի ինքը Որդուց է վերցնում և պատմում իրեն սիրողներին, իրար միացան, քանզի մեկ է աստվածային էությունը Եվ լույսը ծագեցրեց շորս սլուների մեջ ու հորդաբուխ աղբյուր բիւցրեց, որովհետև կաթողիկե եկեղեցուց են շնորհները, իսկ նահատակների ու քահանայության մեջ բխելու է մկրտության աղբյուր՝ լվանալու հոգու աղտը մարմնականով հանդերձ, Եվ այն, որ հորդեց, լցրեց շատ վայրեր, բազմաթիվ ժողովուրդների մկրտությամբ փրկություն է լինելու իսկ Եթե երկնադույն երեացին բոլոր դաշտերը, նշանակում է, որ Երկիրը երկնքի նման է լինելու, որպես Նբեշտակների ու մարդկանց խառնուրդ:

752 Հրեղեն սեղանների բազմությունը, որ բեզ երեսմ է, արդաքել իսկ լինելու են Աստծու սնվաններ, որոնք քավության կրաշխեն ամենքին: Եվ այն բանի համար հրեղեն երեացին, որպեսզի Հոգու պաշտամունքը փառքով լինի: Սեղանների վրա մեկական սյուները քահանայության աղոթքի ժամերգությունն են, իսկ նրանց վրայի խաչերը Թոփատոսի սուրբ անունը ամեն տեղ փառավոր դարձնելու մար են, նրանց՝ աստղերի նման շատ լինելը այն բանի համար է, որ սրբության պաշտամունքը աստղերի շափ բազմանա:

753 Առ այծերի բազմության հոտերը, որոնք զուրն իշնելիս սպիտակ ոչխարներ դարձան [նշան են այն բանի], որ ահա աստվածային շնորհների աջը հասնելու է քահանայապետության միջոցով, որի ձեռքը մկրտության աղբյուր է բիւցնելու բազմաթիվ մեղավորների թողության, բավության համար, իսկ նրանց լուսեղեն բուրդը, որ փայլած, պայծառացած էր, նշանակում է, որ մկրտվածները լույսով են զգեստավորվելու և խոստացված արքայությանը արժանի են լինելու Եվ եթե հոտերը ծնեցին, բազմացան և [բոլոր] վայրերը լցրին, ապա նշանակում է երկար ժամանակ աճեցնելու է քարոզությունը, և լինելու են նոր ծնունդներ, բազմացնելու է մկրտությունը:

754 Եվ այն որ հոտերի կեսը զուրն էր ընկել և ելել այն կողմը, որտեղից անցել էին, նշանակում է, որ հետագայում

[մարդիկ] անօրեն են դառնալու՝ հեռանալով ճշմարտությունից, աստվածային սրբության ուխտի գրոշմը մի կողմ են զցելու, և շատերը լքելու են սուրբ ուխտը։ Գառներից գայլեր են դառնալու, որոնք կոտորելու են սուրբ գառները, նշանակում է, որ նրանք, հեռանալով ճշմարտությունից քահանայության ուխտից՝ գայլեր կդառնան, և կլինի գառների, այսինքն ուխտի ու քահանայության արյունահեղություն և ժողովուրդների խոռվությունն իսկ նրանք, որ հավատարմությամբ համբերեն, [լինեն] գառներից, ժողովրդից կամ քահանանաներից, թերե են առնելու և վերանալու Քրիստոսի արքայությունը։ Իսկ որոնք գայլերի մտագրություն կունենան, կամ նրանց հափշտակության գործերը կկրկնեն, անշեղ հրի են մատնվելու։

755 Եվ դու, ասաց ինձ այրը, պինդ կաց, քաջ և զգույշ եղիր, քանզի գործը եկել հասել է քեզ, հեշտությամբ բարություն է արգելու. և ճշմարիտ մշակների հետ առնելու ևս Քրիստոսի անպատում պարզեները։ Արդ՝ զգույշ եղիր ավանդիդ, որը քեզ վստահվեց տեր Հիսուս Քրիստոսից։ Շինիր Աստծու անվան տաճար քեզ ցույց տրված տեղում, ուր հրեղեն սյունը ոսկի խարիսխ ուներ, և սրբերին վկայարաններ՝ այն տեղում, ուր զսհվեցին նրանք աստվածության հույսի. կենդանության համար, որպեսզի բժշկվեք հարված կրողներդ, քարոզությունը օրբստօրե, հարատերեն հաջողություն առաջադիմություն ունենա և Քրիստոսի հայատը մեջ ամենքը չափահաս դառնան։

Նր այս ասաց, ցնցում եղավ, և լուսաբացին տեսիլքը ծածկվեց։

756 Արդ՝ ամենարարը, ամենաստեղծը, ամենիմաստը, ամենատերը, ամենակալը. ամենազյուտն ու ամենաբժիշկը խրատեց ձեզ, որպեսզի իր աստվածությանը մերձավոր դարձնի։ Դրա համար էլ մեր միջոցով ձեզ ցույց տվեց կենաց նանապարհը և փրկության հանգամանքները՝ միամանակ թողությունը բերելու ձեզ հասցնելու համար։ Ահա թե ինչու դալիք բաների տեսիլքը ցույց տվեց ինձ, որպեսզի ձեզ պատմեմ, նրա կամբը ժամանակին ձեղ վրա կատարելով։ Արդ՝ դուք էլ ասածներս, ըստ հրամանների,

փութացեք կատարել, Եկեք շինենց վկայարանները, Նահատակներին գերեզմանները տեղափոխենք, որպեսզի նրանք ձեզ տանեն նորոգության։

757 Այս ասելով՝ հրամայեց շինվածքի նյութը շուտափույթ սպատրաստել Մարդկանց ամրող բազմությունը այս լսելով, լուրաքանչյուրը գնաց նյութերը պատրաստելու Հրամայված տեղերում կուտակում էին մեկը վեմ, մեկը քար, մեկն աղյուս, մեկը մայրի փայտ, պատրաստում էին խնդալց փութով և մեծ երկյուղով։

758 Իսկ ինքը՝ սուրբ Գրիգորը, շինողների ճարտարության լարը ձեռքե առնելով երանելիների վկայարան հանգստարանների հիմքերն էր պատրաստում։ Բազմության մեջ ամեն մեկն իր օժանդակությունը բերելով՝ ձգտում էր շինվածքի կառուցումն ավարտել գեղեցկադիր ու հարմար հիմքերի վրա։ Ամեն ոք մի գործի էր ձեռնարկում, և անգամ կանայք օգնելով, ըստ իրենց կանացի տկար ուժի, այսպես առհասարակ գործ էին կատարում հավատքով ու մեծ երկյուղով, որպեսզի ոչ ոք ամենեին անմասն չմնա շնորհերի փրկությունից և շրկվի բժշկությունից։

759 Կանգնեցրին երեք վկայարաններ, մեկը քաղաքի գյուսիս-արևելյան կողմում, ուր նահատակվեց սանտական* Հոփիսսիմեն երեսուներկու ընկերներով, մյուսը շինեցին նրա հարավային կողմում, ուր նահատակվեց Գայանեն՝ երա սնուցիչը, երկու ընկերներով, իսկ մի ուրիշը՝ հնձանի մոտ, այգու մեջ, ուր նրանց կացարանն էր։ Շինեցին կազմեցին այդ տեղերը և զարդարեցին ոսկի ու արծաթե լուսավոր կանթեղներով, վառ լապտերներով ու հրաբորոք աշանակներով։

760 Հրամայեց ամեն մեկի համար արկղի նման տախտակամած, մայրափայտե, բնեռապինդ, հաստահեղույս ու երկաթագամ տապան շինել։ Ամեն ինչ նրա ասածի, պատվիրածի համաձայն արեցին, կազմված սպատրաստեցին և ըստ տրված հրամանի սրբերի թաղման համար շինված արկղերը բերին հնձանի դռան մոտ՝ սուրբ Գրիգորի առջև

* Որդեգիր, ռան, զավահ գարձած

Իսկ նաև՝ ինքը միայն ներս մտավ և ուրիշ ոչ ոքի շնորհց մտնելու Ասաց. «Չպետք է մոտենաք, մերձենաք նրանց, քանի որ բժշկված լեք և սրբված լեք մկրտությամբ»։ Այս սիայն ինքը առանձնացած ամեն մի սրբին առանձին առնելով արկղի մեջ դրեց, յուրաքանչյուրին իր հանդերձներով և իր կազմությամբ ամբացրեց և կնքեց քրիստոսանշան կնիքով։

761 Խսկ թագավորն ու բոլոր արքայազուները, մեծամեծ-ները, նախարարները, աղատները և ամբողջ զորքը յուրաքանչյուրը բերում էր անուշահոտություններ ու ազնիվ խունեկեր, պատանքի գույնդգույն նարոտներ ու մետաքսահյուտ սսկեթել կերպաներ, թագավորի տիկինը, թագավորազուն օրիորդները, պատվականների կանայք և մեծամեծների դուստրերը բերում էին ծիրանի. ոսկեհուռ դիպակ և երկնագույն ու ձյունասպիտակ հանդերձներ սրբերի համար. Նույնպես ոսկին ու արծաթը և կտավը շտապով կուտակում էին հնձանի դռան առջև.

762 Արդ՝ դուրս գալով սուրբ Գրիգորը՝ տեսավ թէ ինչ-
պէս այս բոլորը շեղ-շեղ կուտակված էին հնձանի դռան
մոտ։ Իսկ նա նրանցից ոչինչ ըընդունեց՝ սրանց մատուցելու
համար [այլ] ասաց. «Զէ՞ որ նախապես ասել եմ, թէ
պատշաճ է ձեր որևէ բերածը նրանց մատուցել, քանի ի գեռ
չեք մաքրված մկրտությամբ, սակայն ձեր հոժարությունը
բարի է ձեր փրկության համար։ Այս ամենը թող արքունա-
կան գանձարանում պահված մնա, մինչև որ աստվածային
բարերար կարգադրությամբ ձեզ հովիվ ու վարդապետ տրվի,
Ճեղ մոտ երեան զան առաջնորդներ, քահանայապետներ,
տեսուչ-և պիսկոպոսներ և երեցներ Աստծու սիրո եկեղեցա-
կան կարգի լուսավորության համար։ Եվ այդ ամենը ըն-
տրված քահանայապետի ձեռքով ի սպաս կդրվի Աստծու
փառավորինկալ զոհասեղանի ծառայությանը։ Այլ այժմ
եկեղ սրանցից լուրաքանչյուրին իր հանգիստը մատուցենք»

763 Իսկ Տրդատ թաղավորը այնժամ զեռևս ամբողջովին խոզի կերպարանք ուներ, բացի միայն մարդարար խոռելուց։ Զեռի ու ոտքի եղունդները խոզի նման էին, և զեմքը՝ կնճիթի նման, մեծամեծ ժանիքներ ուներ վացազների պիս

և ամբողջ մարսնով խոզի թավ մաղեր ուներ։ Սակայն ծածկել էր սրեսն ու զլուխը՝ իր վրա բռւրձ դցելով և այսպիսի կերպարանքով երեսում էր ժողովրդի մեջ։

Արդ՝ մոտենալով աղաշում էր սուրբ Գրիգորին, որ գոնե ձեռքերն ու ոտքերը բուժելու հնար գտնի, որպեսզի սրբերի շինվածքի գործին գեթ սակավիկ մասնակցություն ունենալու արժանի լինի։

764 Իսկ երանելի Գրիգորը ծունկ դրեց ամենատեր, բարձրար չարդասեր Աստծու առջն, զնաց լնկավ քրիստոսական նահատակների երանելի մարմինների սուրբընկալ զագալուների յատ՝ պազատանք մատուցելու թագուկները համատարած երկինք բարձրացրեց և բոլոր հավաքվածներին թագավորին բժշկություն էր հայցում։ Ապա դարձավ թագավորին նրա ձեռքերն ու ոտքերը Քրիստոսի շնորհիվ բժշկեց. և նրա ստքերի ու ձեռքերի կաղակները թափվեցին. որպեսզի գեթ մի անգամ իր ձեռքի վաստակով մասնակից լինի սրբերի գործին։

765 Հարցըց Գրիգորին. թե ինչ կհրամայի, և նա տվեց սրբերի զագաղների շափք, որպեսզի յուրաքանչյուրի աւելյ մարտիրոսների հանգստյան բնակարանի ներսում պատրաստի։ Իսկ նու աղաշեց Գրիգորին, որ հրամայի նախ իր կնոջը՝ Աշխեն տիկնոջ և ապա իր հարազատ բրոջը, որի անունը Խոսրովիդուխտ էր. որպեսզի նրանք էլ իրավունք ունենան գործին մասնակցելու Հրաման տվեց, և նրանք գնացին նրա հետ գործին օդնելու Եկ գաղաղների շափր առան, տաճար-հանգստարանի ներսում սրբերի թաղման տեղը փոս փորելու համար։

766 Արդ՝ թաղափարը բրից՝ ու րա? առած փորեց սրբերի հանգստյան գերեզմանները, բայց զագաղների շափի։ Նույնպես և նրանք երկուսով՝ Աշխեն տիկինը ու թագավորի քույր Խոսրովիդուխտը, բրոջների նման, իրենց հանդերձի մեջ վերցնելով հողը, դուրս էին թափում։ Այսպես, կարգով, առջնի կողմում պատրաստեցին սուրբ Հոկիսիմեի գերեզմանը և նրանից հետո երեսուներկուսի [գերեզմանները]

* Բնագրաւմ՝ փալտառ

այն տեղում, ուր նրանց երանելի մարտիրոսական արյունը թափվեց՝ Քրիստոսի սուրբ և փառավոր սեղանի համար պատրաստված հանգստյան տեղում։ Սույնպես և վկայարանը, որը քաղաքի հարավային կողմում էր, պատրաստվեց նաև այն երանելի Գայանեի ու երկու ընկերների համար։ Ինքը Տրդատ թագավորը, իր քույր Խոսրովիդուխտը ու Աշխեն տիկինը միասին սրբերի գերեզմանները իրենց ձեռքով պատրաստեցին յուրաքանչյուրին իր հավիտենական բնակության վայրում։

767 Եկավ թագավորը հրաժեշտ խնդրեց սուրբ Գրիգորից յոթնօրյա ճանապարհ զնալու բարձր լեռ Մասիսն ի վեր։ Այնտեղ լեռան զլիսից առնելով կարծր, անտաշ, անկոփ, խոշոր, ծանր, երկայն, հաստ ու մեծամեծ քարեր, որոնցից մեկը ոչ ոք չէր կարող շարժել, թեկուզեւ մարդկանց բարձրությունը։ Արդ՝ հսկայազորը (թագավորը) հայկարար վերցնելով ութ քար, գրեց իր թիկունքի վրա և բերեց աւաճարների վկայարանները։ Մւն մենակ շորս քար շեմքին կանգնեցրեց անմիտ մարտի փոխարեն, որը սրբի հետ մղել էր իր սենյակում, ուր [կույսը] ամենապահ շնորհներով պահպանված այնշափ հրաշքներ գործեց։ Եվ սա [որպես] հաղթության պատակ իր ձեռքերի զորության վաստակը ցույց էր տալիս ամենքին։

768 Շինելով, կաղմելով՝ երեք սուրբ վկայականները շտկեցին, զարդարեցին, կարգով ու կանոնով հարդարեցին և տպա յուրաքանչյուրին վերցնելով իր նահատակության տեղը գրեցին։ Սուրբ Գայանեին իր երկու նահատակ ընկերների հետ գրեցին հարավային կողմը՝ տաճարի վկայարանում, նույնպես և երանելի Հոփիսիմեն երեսուներկու ընկերներով արեելյան կողմը շինված տաճարում զրվեց, իսկ մենավորը, որ հնձանի մեջ սպանվեց, սրա տաճարը գտնվում էր քաղաքի հյուսիսային կողմում։ Միասին հավաքված բոլոր սրբերը՝ Քրիստոսի խաչազգյաց վկաները մեկ առ մեկ տեղափոխվեցին իրենց մարտիրոսական բնակության համար շինված գերեզմանները։ Կատարվեց ըստ նախապես Քրիզորին երկացած տեսիլքի հրամանի։

769 Խորաններից ներս սրբերի տապանների հանգստառանների վրա, զոհասեղանների տեղը, երեք վկայարաններում, ամեն մեկի համար տերունական խաչի սուրբ նշանը կանգնեցրեց ասելով. «Միայն այս ամենակեցուց նշանի առջև պիտի երկրպագեք ձեր արարիշ Տեր Աստծուն, Ահա հաստատուն սյուներ կանգնեցվեցին ձեր խարխով շինվածքին: Այս այն սյուներն են, ասում է, որ տանում են ձեր փրկության շինվածքի ծանրության բեռք. ահա երեք սյուներ և չորրորդը՝ կենդանության սյունն է, որը ձեղ բարձրացնելու և Աստծու մոտ, Եկեղ տերունական տան որոշված և հրամայված տեղը եզերելով ի պատիվ շրջափակենք».

770 Եզ թագավորի ու ամբողջ ծողովրդի հետ մեկտեղ գնաց իսկույն, հասալ այն տեղը, ուր իրեն ցույց էր տրված հրեղին սյունը ոսկի խարսխի վրա, և իսկույն բարձր պարիսպով տեղը շրջափակեց ի պատիվ, դռներով ու փականքով ամրացրեց և կանգնեցրեց այնտեղ ևս փրկչական խաչի նշանը, որպեսզի առասարակ ամեն ոք, որ այնտեղ հասնի, ամենաղոր արարչին՝ Աստծուն երկրպագելով ծունկ դնի:

771 Այսպես քարոզությամբ, լուսավորելով ժողովրդի սրտերն ու հողիները, աստվածալին աղով աղեց, համեմեց, [և նրանք] թողնելով սնոտի, ձեռագործ կուռքերի ունաւն պաշտամունքը մարդասեր Աստծու պաշտամունքին դարձան:

772 Այնուհետև աճապարեցին անձնական կամքով պահքի ու աղոթքի, երկյուղի ու սիրո և Աստծո լարդապետության ունկնդրությանը փութալ:

773 Արդ՝ երբ միահամուռ հավաքված էին Աստծու տան հարկի աղոթավայրում, Երանելի Գրիգորը սկսեց խոսել և ասաց. «Ռունը դրեք ամենքդ, որպեսզի Տերը ձեզ բժշկի հարվածներից»: Ամենքը ծունը դրեցին Աստծու առջև, և Երանելի Գրիգորը մեծ աղոթքով ու պաղատանքով, ուժգին ճգնությամբ ու արտասուքով թագավորի համար բժշկություն խնդրեց. Իսկ թագավորը, մինչդեռ խոզի կերպարանքով կանգնած էր ծողովրդի մեջ, հանկարծակի դողի մատնվեց, և մարմնի վրայի խոզի մորթը, ժանտատեսիլ ժանիքով ու

կնճի՛ւադնմ երեսով հանդերձ վայր ընկալի Խոզանման
մազի թավությամբ խորխացյալ կաշին դուրս նետվեց։
Դիմքն իր իսկական կերպարանքն ստացավ, և մարմինը
նորածին մանկան նման փափուկ, մատղաշ գարծավ, և
ամբողջ մարմնով լրիվ բժշկվեց։

774 Այսպես էլ բոլոր մարդիկ, որ բազմությամբ կու-
տակված էին, յուրաքանչյուրն իր ախտերը թոթափեց,
ոմանք բորոտ էին, ոմանք անդամալույժ ու լորացած ան-
դամներով, ջրգողված որովայններով, դիվահար, խեղան-
դամված և ոտնախտավոր, Եվ այսպես՝ շնորհների մարդա-
սեր Քրիստոսը բացեց իր ամենակարող բժշկարանը՝ Գրի-
գորի միջոցով բուլրին բժշկելու Յուրաքանչյուր ախտավոր
թոթափում էր իր հիվանդությունը։ Այսպես էլ բացեց
Քրիստոսի գիտության աղբյուրը, ամենքի լսելիքը լցնելու
Ասսծու ճշմարտասլատում վարդապետությամբ։

775 Այնուհետև այնտեղ սրտալիք ուրախություն էր և
ինչ հաճելի տեսարան աչքի համար։ Որովհետեւ մի երկիր,
որ անունն անգամ չէր լսել այն կողմերի, ուր աստվա-
ծային սքանչելի բուլոր զործերը կատարվեցին³⁴, շատ շու-
առվ իմացավ եղած բաները, ոչ միայն իր ժամանակ կա-
տարվածները, այլև հավիտենապես նախասահմանված-
ները, հետո Եկածները, սկիզբն ու վերջը, և բոլոր ասւալա-
ծառուր ավանդությունները։

776 Իսկ երբ իրերի հաստատությունը փորձեցին, ապա
ալելի համարձակ ու ավելի շատ աշակերտաներ էին հավա-
քում նորազյուտ վարդապետությունը ուսուցանելու, [նրանց]՝
կրթելու և անդեռ մարդկանց քարոզի համար պատրաստա-
կամ դարձնելու։ Նրանք իրենք հենց վեր էին կննում Հա-
յաստան աշխարհի զանազան կողմերից ու դավառներից
բազմությամբ զալիս հասնում էին Քրիստությունն
շնորհների բացված ազրյուրը Քանզի Արարատյան նահան-
գում, թագավորանիստ կայանում Հայոց Խորզոմ
տանը բիւեցին Աստծու պատվիրանների Ավետարանի քա-
զության շնորհները։

777 Այնուհետև թագավորի ու իշխանների հետ, նախարարներով ու զորքով հանդերձ, [Գրիգորը] հավանության խորհուրդ առավ ընդհանուրի խաղաղության համար՝ զայթակղությունը քանդելու, կործանելու և մեջտեղից վերացնելու ու չնշելու նպատակով, որպեսզի այլնս ոչ ոքի արգելք ու խաշընդուռ լինի և չիանդարի վերին ազատությանը հասնելու Որպեսզի ամենքը քաջալերված հասնեն բարիքների կատարմանը, երանելի Պողոսի նշանակած նպատակին, թե ոմիասին հասնենք Քրիստոսի հասակի շափինս*։ Որովհետեւ աղաւանությունը երկնքում է, որտեղ սպասում են մեծ Աստծու Փրկչին և [կունենանք] պարծանքը խաչի վրա և գովությունը ի վասու Աստծու։

778 Ապա թագավորը իսկույն տիրաբար հրաման տվեց, ամէնքի հավանությամբ, զործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախկին հայրենի, հնամենի և նախնիների ու իր կողմից Աստված անվանված շաստվածները անհիշատակ դարձնի, մեջտեղից զնշի³⁵։ Ապա ինքն իսկ թաղավորը, ամբողջ զորքով հանդերձ, Վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը, ավերելու այնտեղ Անահիտ դիցուհու բազինը և այն, որ Երազամույն կոչված տեսլերում էր զանգում, Նախ ճանապարհին հանդիպեցին քրիմական զիտության դպիր, Որմզդի գրչի Դիվան կոչված, երազացույց, երազահան պաշտամունքի Տիր աստծու ճարտարության ուսման մեջանը և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել։

779 Այնտեղ երևացին կերպարանափոխված գեեր, այրումիու բաղմության ու հետևակազորի գնդի կաղմության նմանությամբ, մկնդավորներ ու մուրճավորներ, առաջ էին ընթանում մարդկային կերպարանքով, նիզակներով ու զինանշաններով, զենք ու զարդով զինավառ, մեծ գոշումով աղաղակ բարձրացրին և փախչելով ընկան Անահիտի մեհյանը։ Այնտեղից հարձակվողների դեմ սկսեցին կովել շինվածքի վերիից ներք մարդկանց վրա անուժ նետեր և

*ՀՅՄ. Եփես. Դ, 13.

Քանձրատարափ քարահոսք թափեցին, որոնցով և մի քիչ զարհուրեցրին նորահավատ մարդկանց ։ Նակ սուրբ Գրիգորը, երբ այս տեսավ, տերունական խաչի նշանը առած դիմեց մեհյանի դուռը և մեհյանի ամբողջ շինվածքը հիմնահատակ դղրդալով տապալվեց, և փայտակերտ [մասերը] հանկարծ բռնկվելով վառվեցին տերունական նշանի զորությունից և ծովալը ծառացած մինչև ամպերը հասավ:

780 Բոլոր գեերը, փախուստի դիմելով, մարդկանց առջև երևացին, օձիք պատուելով, ճակատը ծեծելով, ճիշ բարձրացնելով, մեծագույն լալով ասում էին, թե «Վայ մեզ, վայ մեզ, վայ մեզ, որովհետեւ ամբողջ երկրից մեզ փախստական արեց մարդու դուստր Մարիամի որդին՝ Հիսուսը Այստեղից էլ բանտարկվածի ու մեռածի ծեռքով մեզ վիճակվեց փախստական լինել, Արդ՝ ո՞ւր փախչենք, քանզի նրա փառքը լցրել է տիեզերքը, Եվ որովհետեւ մեզ առանց հանգիստ տալու, օդ ծեծելով անջատեց մարդկանց բնակությունից, ուստի մենք գնում ենք Կովկաս լեռան բնակիչների մոտ, հյուսիսի կողմերը, գուցե այնտեղ հնարավորություն լինի, որ կարողանանք ապրել և մեր կամեցածը նրանց միջոցով կատարել»^{*}:

781 Այս ասացին ամենքի առջև և մարդիկ, որ լսեցին, բոլորն էլ ավելի ևս հաստատ դարձան հավատքի մեջ: Իսկ սեագունդ դեերը աներեւույթ եղան, տեղից լքացան և ծխի նման վերացան: Այնտեղ հասած մարդիկ իսկույն հիմքերը քանդելով մնացածն ավերեցին և ամբարված գանձերը աղքատներին, տառապածներին ու լքավորներին բաժանեցին: Դաստակերտներն ու սպասավորներին, քրմերով հանդերձ, նրանց հողերով ու սահմաններով՝ նվիրեցին եկեղեցու պետքերին ծառայելու համար:

782 Եվ [Գրիգորը] առհասարակ ամենքի համար ասուվածապաշտության խոսքը սերմանեց և բոլորին տիրոջ նանապարհի վրա կանգնեցրեց՝ արարշի պատվիրաններին տեղյակ դարձնելով: Հայասսաւանի բոլոր քաղաքներում, գյուղերում ավաններում ու ագարակներում ցույց տվեց

* Բովանդակությունից ենելով բնագրի այս հատվածում կատարեցինք Խախաղասությունների վնասազգում և ըստ այդմ թարգմանեցինք:— Խմբ.:

եկեղեցու տեղերը; հայց հայտնապետ հիմքօր; ոչ դնում
և ոչ էլ հաեւն Աստծու տրեէ; տեզ սեղան էր կանգնեցնում,
բանի որ շուներ քահանայության աստիճան. այլ ուկ քա-
ղաքորմավ գարսպում էր այց տեղերը և տերունական խաչի
նշանն էր կանգնեցնում: Նույնպես և ճանապարհների ելքն-
րի ու մատքերի մոտ, փողոցներում, հրապարակներում
խաչմերուկներում որպես պահապան ու ապավեն կանգ-
նեցրեց ամենքի երկրապատճ նույն նշանը:

783 Այնուհետև առավ Արշակունյաց տոհմի իշխանա-
զուններին դպրոցներում վարդապետություն ուսուցանելու,
որոնցից առաջինի անունը Տրդատ էր, որ և հենց թաղավորն
էր՝ իր ամբողջ տնով մեկտնդ: Նույնպես և ամեն մեկին
շանում էր ճշմարիտ գիտությանը հասցնել: Երբ այսպես
բոլոր տեղերը լցրեց տիրոջ սուրբ Ավետարանի [քարոզով]
և ամենքին խրատեց անմեղությամբ անցնելու կյանքի
հանապարհը ապա բոլորին էլ հասկացնում էր, որ «միայն
իրենց տեր Աստծուն երկրապատճն ու նրան միայն պաշ-
տեն»*:

784 Ապա հանձնելով նրանց Աստծու ամենապահ շնորհ-
ներին, ինքն առավ թագավորին, շարժվեց գնաց, որպեսզի
Հայաստան աշխարհի բոլոր սահմանների վրա, ուրիշ կող-
մերում ևս կենաց խոսքը ոնքմաննեն: Գնաց հասավ Դարա-
նալյաց գավառը, որպեսզի այնտեղ ևս կործանեն սուտ
աստվայների բագինը, որը Բորդան զյուղում էր, սպի-
տակափառ թարշամինա անձանված աստծու մեհյանը:
Նաին այն կործանեցին ու նրա արծանը փշրեցին և բուր
գանձերը, ոսկին ու արծաթը ավարի մատնեցին ու աղջատ-
երին բաշխեցին: Եվ զյուղը բոլոր դաստակերտներով հան-
դերձ ու սահմաններով՝ եկեղեցուն նվիրեցին և ամենափրկիչ
եղանի օրինակը այնտեղ ևս կանգնեցրին:

785 Իսկ երանելին, իսկույն իր ավետարանական ար-
վեստը բանեցնելով, թագավորի անկեղծ օժանդակությամբ,
ոկսեց գավառում [քարոզել], ամենքին դուրս բերեց
նախնիների ավանդություններից, սատանայապաշտ դիվա-

* Հմմա. Մատթ. 7. 10:

կան սպասավորությունից և մոտեցրեց Քրիւտոսի հնագանդ ծառայությանը, Երբ նրանց մեջ կենաց խոսքը սերմանեց ու ամենքին աստվածապաշտությամբ կրթեց, գումառի բնակիչներին մեծամեծ հրաշքներ երեացին՝ դեերը այլակերպ ձեերով փախստական դարձան ընկնելով Խաղոյաց³⁸ կողմերը: Երբ նրանց ևս հաստատեց, դնաց հասավ Անի³⁷ անվանված ամուր վայրը՝ Հայոց արքաների գերեզմանների թագավորաբնակ կայանը: Այնտեղ կորանեցին բագինը Զես Արամազդ³⁹ աստծու, որը բոլոր աստվածների հայրն էր անվանված: Այնտեղ ևս տերունական [խաչի] նշանը կանգնեցրին, և ավանր իր ամրություններով հանդերձ ևկեղցուն ի ժառայություն նվիրեցին:

786 Դրանից հետո իսկուն ելան սահմանակից եկեղյաց զափորը, և այնտեղ Երեացին դեերը Հայոց թագավորների մեծ և բուն մեհյաններում, պաշտամունքի վայրերու ։, Երեսկ ավանի Անահիտի մեհյանում, ուր դեերը վահանավոր զորի նմանությամբ հավաքված հարանչում էին և մեծազոլ աղաղակով լիսները թնդանում: Նրանք փախստական դարձան, և նրանց փախչելու ժամանակ բարձրաբերձ պարիսպները կործանվեցին հարթվեցին:

Դարձի ևկած զորքերով այնտեղ հասածները, սուրբ Գրիպորը թագավորով հանդերձ, փշրեցին Անահիտ դիցունու սոկի արձանը, ամբողջ վայրը քանդեցին, փշացրին, ոսկին ու արծաթը ավարի տվին: Այնտեղից Գայլ զետի վրայով այն կողմ անցան ու քանդեցին Արամազդի դստեր՝ Նանեի մեհյանը Թիլ ավանում Երկու մեհյանների գանձերը ավարելով՝ Աստծու սուրբ եկեղեցու ժառայությանը նվեր թղեցին տեղերով հանդերձ:

787 Այսպես բազում տեղերից վերացրին ձուված, կոփված, քանդակված, անպիտան, անօգուտ, վնասակար ու ցնորդալ մարդկանց անմտությամբ արված զայթակղիլ, անմոռունչ [կուռքերը] և դարձյալ հավատի մեջ սրտանց հաստատվեցին: Արքան մեծասաստ իշխանությամբ հրաման տվեց այն կազմերի սատանայակուր և դիվամոլ ազգերին՝ թոթափել ու ազատվել ունայն, հնացած սնոտի-

ապաշտությունից և հնագանդ լինելու թրիստորի ժառայության
ամենահաճելի լծին:

788 Երբ այնտեղ ևս ամենքի նկատմամբ հավասարապես
այս բանը կատարեց՝ ավարտելով առհասարակ անհրա-
ժեշտ քարոզությունը, այլևս չէր ապավինում թաղավորի
ահին ու սաստին՝ ամենքին հնագանդեցնելու համար, և
ոչ միայն լոկ խոսքերով, այլև հնարներով ու հրաշքներով
և տեսակ-տեսակ բժշկություններով փառավորեց Թրիստո-
ռի սուրբ անունը: Այս ամենը կատարվեց մարդասեր
Աստծու կամքով, Գրիգորի ձեռքով: Եվ ամեն տեղ հասնե-
լով, ինքը՝ թագավորը, [կենդանի] քարոզ դարձավ՝ խոստո-
վանելով իր անօրենությունները. պատմում էր Աստծու
արած բոլոր հրաշքների մասին. որոնք իր վրա կատարվե-
ցին, բժշկության ողորմությունը. և այս ցույց էր տալիս
բարձրածայն աղաղակով, ամենքի առջև, հայտ հանդիման:

789 Ապա փուլով հասավ Դերջան գավառը, որպեսզի
այնտեղ ևս ջանասիրությամբ առաջ տանի առաքելական
քարոզության դորձը և կարողանա ազատել նրանց դար-
շնի, դիցալաշտ, սատանայակիր, ճիվաղային բարեկրից.
խուժադուժ կողմերին աշակերտ դարձնելով՝ հեթանոսու-
թյան կոշտ ու կոսիտ և անտաշ բարքերը աստվածուսուց
իմաստության զգաստության կողմն էր շրջում. ավետաբա-
նական ավետիսներին ծանոթացնելով և կոկելով
զատ դարձնում:

790 Եկավ հասավ Արտամադղի որդի կոշված Միքրի
Ճեհյանը, այն գյուղում. որը Բագայասիճ ևն կոչում գար-
թեերեն, և այն ի հիմանց րրելով քանդեցին, կուտակված
գանձերը ավարի մասնեցին ու աղքատներին բայանեցին
և այդ տեղերը եկեղեցուն նվիրեցին, իսկ երկրի բնակիչ-
ներին ճշմարիտ գիտության մեջ հաստատեցին: Դրանից
հետո նա ճիգ էր թափում իր մոտ եղած արքունիքը մեծա-
մեծ ավաղանու հետ մեկտեղ և ամբողջ աղատագունդ բանա-
կով աստվածեղեն իմաստությամբ կրթելու:

791 Իսկ Տրդատ թաղավորը իր կին՝ Աշխեն տիկնոջ և
իր քրոջ Խոսրովիդուխտի համաձայնությամբ հրաման տվեց
իր ամբողջ զորքերը միատեղ ժողովի կոչելու Ամեն կող-

մերից շստ հրամանի, շուտափույթ հասան նշանակված գայրը՝ Կաղարշապատ քաղաքը Ալրարատ գավառում, և հենց թագավորն էլ ճամփա ընկնելով այնտեղ հասավ։ Ամբողջ գորքը առհասարակ կուտակվեց՝ մեծամեծներ, կուտակալներ, զավառապետներ, պատվագորներ, պատվականներ, զորագորներ, պետեր, իշխաններ, նախարարներ, ազատեւ։ Դատավորներ ու գորագլուխներ հասան, ներկայացան թագավորին։

792 Խազավորը ամենքի հետ խորհուրդ արեց, որպեսզի փութան, հասնեն բարի գործերին ժառանգորդ դառնալու «հիւր, ասում է, փութանք Աստծու կողմից մեզ տրված կյանքի առաջնորդին՝ Գրիգորին Հովիվ դարձնել, որպեսզի մկրտությամբ լուսավորի և վերանորոդի մեր արարի Աստծու ամննուսուց խորհրդով»։

793 Իսկ Գրիգորը հանձն լատավ ընկունել քահանայացիւտության մած այիվը, «Չեմ կարող համբերել, դիմանալ անչափ լարձրությունը, քանզի անուան ում է քրիստոսատուր փառի առաջնորդության պատիվը՝ միջնորդ զատնալու Աստծու և մարգիանց միջև, այլ թող արժանի մարդու որանեն, դտնեն»։

794 Են Աստծուց սքանչելի տեսիլք Երեաց թաղավորին։ Տեսավ Աստծու Հրեշտակին, որը խոսեց նրա հետ ու ասաց, թե «Պետք է որ դուք ուսանց հապաղելու Գրիգորին քահանայապետության սկաշունը որպեսզի մկրտությամբ լուսավորի ձեզ»։ Աստծու Հրեշտակը տեսիլքի մեջ երեաց նաև Գրիգորին, որպեսզի չինի թե այդ մասին սկնդի, համառի, «Քանզի, ասում է, Քրիստոսից է այդ հրամարված բեզ», իսկ նա հավանելով անմիջապես դոշեց՝ ասելով, թե Աստծու կամքը Բող կատարվի»։

795 Այնժամ թագավորը շուտափույթ և Երկյուղածությամբ մեծ խնդությամբ հովարով՝ հավաքեց Երկրների դիմական նախարարներին ու կրտսակալներին։ Առաջինը՝ Անգլիա ան³⁹ իշխանը, Երկրորդը՝ Աղձնաց⁴⁰ իշխանը, որը մեծ բնեշխն է, Երրորդը՝ մարդպետության իշխանը, շորորդը՝ աւղետական իշխանության թագադիր իշխանը, Ճինդերորդը՝ սպարապետության իշխանը, Հայոց աշխարհի

Վորավարը, վեցերորդը՝ Կորդվաց⁴¹ երկրի իշխանը. յոթերորդը՝ Սոփիաց երկրի իշխանը, ուն անվանվում էր Մյուս բղեշխ, իններորդը՝ Ռշտունյաց նրբի իշխանը, տասներորդը՝ Մոկաց երկրի իշխանը, տանմեկերորդը՝ Սյունաց երկրի իշխանը, տասներկուերորդը՝ Ծագեից⁴² երկրի իշխանը, տասներերերորդը՝ Աւտիացոց երկրի իշխանը, տասնչորսերորդը՝ Հարավանդ⁴³ և Հեր զավառի շահապ իշխանը, տասնհինգ! բորբը՝ մաղիսաղության տան իշխանը, տասնվեցերորդը՝ նործունյաց իշխանը⁴⁴:

796 Մրանը են Հայաստան աշխարհի, Թորգոմի տան ընտիր իշխանները, Կուսակալները, Կողմնակալները, Հազարապետները. Րյուրավորները, որոնց հավաքեց Տրդատ թագավորը և ուղարկեց Կապուտիացոց Կողմերը, Կեւարիա քաղաքը, որը հայերեն Մաժաք են կոչում, որպեսզի տանելով Գրիգորին, իրենց երկրի քահանայապետ դարձնեն ու պատրաստվեցին ճանապարհ ընկնելու Եվ հրամայեց հրովարտակ զրել այս օրինակով:

ՀԲՈՎԱՐՏԱԿԻ ՊԱՏՃԵՆԸ

797 «Էկաղուց ի վեր կորած, մէղերի տգիտությամբ պաշարված, մառախլապատ, միզապ և ապշած էինք չկարողանալով նայել, իմանալ, նկատել, արդարության արեգակը տեսնել, որի համար էլ խավար էինք մթության մեջ թաթախված։ Իսկ երբ մեր արարիշ Աստծու քաղցրությաւնն ու մարդասիրությունը երևացին մեզ՝ արարածներիս իրատելու և լուսավորելու, նա իր կենդանի լույսի ճառագայթները ծագեցրեց մեր սրտերում և կենդանացրեց մեր մեռելությունը՝ իր սուրբ, սիրելի նահատակներին այս կողմերը ուղարկելով։

798 Նրանք գալով, մեր անմտության [դիմաց] իրենց

քաջ նահատակության, առաքինության հանգիստ ցույց տվին, եկ Տերը, որ գիտեր նրանց քաջությունը, թե ինչ-պիսիք էին, [ուղարկեց] որպեսզի մեզ՝ անժիտներիս ևս իմաստություն սովորեցնեն և թե որշափ սիրով սիրեցին նրանք իրենց Տիրոջը, այդ պատճառով էլ առաքինության համար մղած մարտի ժամանակ սխրագործ տեր Աստված այնշափ հրաշքներ ցույց տվեց և մեզ սաստիկ պատիժներով պատուհասեց Մինչև անդամ մեր թաղավորը խող հարձավ և արածում էր վայրենի գաղանների հետ Առաջ մեզ ողորմելով, նահատակների աղոթքների բարեխոսությամբ, այս նահատակված Գրիգորի միջոցով ամենքիս բժշկեց:

799 Քանզի սա առավել ևս նահատակ գտնվեց, ավելի քան նահատակված, որի համար Աստված նրան մեզ առաջ-նորդ տվեց: Մրա ձեռքով մեր նախկին ունայն սովորության կարգերը, հայրենի կուռքերը խլեց, մեջտեղից վերացրեց և մեղ ամենքիս սովորեցրեց իր օրենքներն ու հրամանները որպեսզի իր կամքով ընթանանք, մինչև որ մեզ հայտ հանդիման հրաման տվեց՝ նույն այդ Գրիգորին՝ մեզ հովիվ, տեսուչ և ճշմարտապատում վարդապետ կարգել:

800 Այդ պատճառով մենք ապավինեցինք ձեր աղոթքների ընդունելության օդնությանը և ձեր սրբությանը՝ Ղեռն-զիս Կևարիո արքեպիսկոպոս և սուրբ եկեղեցու քահանա-րության ալղտեղ գտնվող ամբողջ ուխտող, որպեսզի մենք՝ Տրդատ թաղավոր, Մեծ Հայք երկրի ամբողջ զորքով, Աշ-խեն տիկին և մեծ օրիորդ Խոսրովիդուխտ, ձեր աղոթքներով ողջույն առնենք Տիրոջ ողսրմությունից: Գրա համար ձեզ մոտ ուղարկեցինք զիխավոր մարդկանց՝ մեր մեծ երկրի սրբագրական իշխանների, որպեսզի պատժեն ձեզ Աստծու բոլոր հրաշքները, որոնք այս երկրում մեզ հետ կատարվեցին:

801 Եվ մենք ձեզ մոտ բերել տվինք Գրիստոսի սուրբ խոստովանող Գրիգորին և մեր այս հրովարտակը ձեզ գրեցինք, որպեսզի ըստ Գրիստոսի Հոգուր աստվածատուր շնորհի ավանդության պարգևի, Գրիգորին տեսուչ, առտվածագնաց ճանապարհների առաջնորդության վարդապետ և մեզ հովիվ ու բժիշկ կարգեք, ինչպես մեզ հրամայված է

Աստծուց: Աղոթք արեք, որպեսզի Աստված մեջ իր ողորմությանն արժանի դարձնի. որ առողջությամբ գնանք նրա ճանապարհներով և ձեր սերն ու ողջունը հասնի մեզու.

Այս օրինակով գրվեց հրովարտակի պատճենը:

802 Եվ կազմվեցին, պատրաստվեցին իրենց հետ առան ընծաներ՝ ոսկի ու արծաթ, ծիեր ու ջորիներ, զանազան հանդերձներ, որպես զարդ ու սպաս եկեղեցիների սկալվական սուրբ տեղերին, ուր ուղարկված էին. իրենց անցած վայրերում բոլոր եկեղեցիներին ընծաներ էին մատուցում:

803 Հանեցին Գրիգորին արքունական ոսկեպատ կառը՝ լթված սպիտակ չորիներով, Եվ բոլոր իշխանները նրա մոտ հավաքված կառուերով երիվարներով, զորքով, զինանշաններով լուրաքանչյուրն իր գնդով շարժվեցին գնացին Ալրարատան կավառից, Վաղարշապատ քաղաքից և հասնելով հունաց սահմանները հյուրամեծարության բաղում պատիվներ զտան այլեայլ քաղաքներում։ Շատ զվարճություններ, ցնձորթյան և ուրախության խնձույքներ կազմակերպեցին, երբ լսեցին Աստծու արած հրաշբները և փրկության դարձն ու օդուակար ճանապարհներով դնալը։

804 Այսպես ճանապարհներում պատիվներ ստանալով՝ եկան հասան Կոստարիա⁴⁵ քաղաքը և այնտեղ տեսան սուրբ կաթողիկոս Ղեռնդիոսին ու բոլոր եկեղեցական խումբներուն սուրբ կղերականներին ու զտաս-դաս հրեշտակակրոն սոլասավորներին։ Ողջուն տալով և պատմելով նրանց, թե ինչ էր մի անդամ արել Աստված, թաղավորի թուղթը մատուցեցին սուրբ քահանայակետին, և նա, ինչպես և բոլոր քազաքացիք, մեծ խնդությամբ ընդունեցին։ Ամենքը ցնծության տոն կատարեցին և, սուրբ Գրիգորին պատվելով, ինչպես արժանի է նրա առաքինություններին, ճգնություններին ու մարտիրոսավայհել մարտին, կանթեղներով, սաղմոսներով ու հոդեսոր երգերով փառավորեցին նրան։ Քաղաքի իշխանները եղածներին շատ մեծարանքներ ցուց տվին և հոգատարությամբ ընդունեցին, ըստ Քրիստոսի սահմանած կարգի։ Այսպես, ամեն-

թեզ 865 պատիվներով մեծարվեցին մարտիքոսի երանելի անվանը արյանի ձևով։

805 Բազմաթիվ եպիսկոպոսների ժողով եղավ Կեսարիա քաղաքում, որպեսզի ձեռնադրեն սուրբ Գրիգորին և նրան ավանդեն Քրիստոսի քահանայության խոնարհ աստիճանը, և Աստծու փառավորության, եպիսկոպոսության բարձր աստիճանն ու մեծ փառքը Սուրբ Ավետարանով նրան ձեռնադրեց Եպիսկոպոսների ժողովը, որի գլխավորն էր Ղեոնդիոսը, որպեսզի նա իշխանություն առնի երկնքում ու երկրում, երկնքում արքայության փականքը առնելու, իսկ երկրում՝ կասկելու ու արձակելու։

806 Մեծ պատվով, թղթով ու յողովով սուրբ Գրիգորին իշխաններով հանգերձ այնտեղից հանապարհ գրեցին։ Հրաժեշտ տվին և ճանապարհ ընկնելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով Նկան հասան Սեբաստիա քաղաքը ու այնտեղ որոշ ժամանակ իշխանեցին։ Նա գտավ այնտեղ կրոնավորների բազմություն, որոնց համոզեց իր հետ գալ, որպեսզի նրանց իր երկրի քահանայության կարգը տա. և բազմաթիվ խմբեր կուտակվեցին, որոնց նա առավ իր հետ ու շատ մեծարանքների արժանացավ երկրի եպիսկոպոսներից, իշխաններից ու ժողովրդից։

807 Ի՞ւրոք բարեղից որ անցնում էին, ժողովուրդը կուտակվում էր տեսնելու սուրբ եպիսկոպոս Գրիգորին, որպեսզի օրհնվին նրանից Ասում էին իրար «Եկեք տեսնենք սուրբ Եպիսկոպոս Գրիգորին, քանդի սա այն մարդն է, որ Քրիստոսի սիրուն համբերեց շարշարանքներին, հավատարիմ վկա եղավ» խոստուանողի անուն ժառանգեց»։

808 Սրանից հետո իր հետ առավ կամակիցների բաղմությունը, նախարարակույտ զորքով հանգերձ։ Հրաժեշտ տվեց այնուհետև շնորհատուր պարգևներով ու բոլոր յուրայիններով անձնատուր լինելով Աստծու շնորհներին՝ ճանապարհ ընկապ և այսպես բազմաթիվ օթևաններ անցնելով առողջությամբ, հաջողությամբ ու հոգելից ուրախությամբ Նկան հասան Հայաստան աշխարհը։

* Հմատ. Մատթ. ֆջ. 19.

809 Երբ եկավ հասավ Հայաստանի սահմանները, Գրիգորը լսեց, թե Վահեվանյան մեհյանը մնացել է Տարոնի երկրում՝ մեծաղանձ մեհյանը լի ոսկով ու արծաթով և մեծամեծ թագավորների ձոնած բազում նվերներով։ Պաշտամունքի ութերորդ հոչակավոր [վայրն] էր Վիշապաքաղն Վահագնի անվամբ, Մեծ Հայքի թագավորների զոհերի տեղը, Քարքե լեռան լանջին, Եփրատ գետի վրա, Տավրոս մեծ լեռան դիմացը, որը և պաշտամունքի վայրերի հաճախաշատ լինելու պատճառով անվանված էր Աշտիշատ։ Քանզի այնժամ դեռևս շեն էին նրանում երեք բագինները, առաջինը՝ Վահեվանյան մեհյանը, երկրորդը՝ Ոսկեմայր Ոսկեծին աստվածունու և բագինը այս անվամբ էլ կոչված էր Ոսկեհատ Ոսկեմայր դիցունու, երրորդը, Աստղիկ դիցունու մեհյանը, Սենյակ* Վահագնի կոչված, որը հունական ձևով Ափրոդիտես է։ Արդ՝ այնտեղ դիմեց սուրբ Գրիգորը, որպեսզի այն ևս քանդի, քանզի տակավին տգետ մարդիկ շփոթությամբ զո՞հ էին մատուցում այս մնացած բագիններին։

810 Երբ վերադառնում էր նա հունաց կողմերից, իր հետ բերել էր մեծ մարգարե, երանյալ Հովհաննես Մկրտչի ու Քրիստոսի սուրբ վկա Աթանագինեսի⁴⁷ ոսկորների նըշխարները։ Երբ եկան հասան մեհյանների դիմաց, Եփրատ գետի մոտ, կամենում էր նրանց վեր հանել մեհյանների բարձրավանդակ տեղը, կործանել բագինները և նրանց վկայարաններ շինել։

811 Երբ եկան մոտեցան Եփրատ գետին Երկու ձիրնթաց (հեռավորությամբ) և դեռ կամենում էին անցնել մի փոքր ձորակ, սակավ լրի միջով, կանգնեցին կառքերի սպիտակ շորիները, որոնց վրա գտնվուած էին աստվածային գանձերը՝ սրբերի նշխարները և չկարողացան հանել ձորակի միջով։ Հայտնվեց Տիրոջ հրեշտակը Գրիգորին ու ասաց. «Տերը կամեցավ, որ Աստծու սրբերն այս տեղում բնակվեն»։ Ապա իսկույն բազմաթիվ զորքերը բոլորը միասին

* Տարու-

օգնելով յինեցին մատուռը և սրբերին գերեզման փոխառնուցին:

812 Երբ մատուռն էին կառուցում, Գրիգորը հրաձան ալիք զորականին ու իր հետ եղած իշխաններին, որպեսուի ևլնեն ու մուրճերով տապալեն մեհյանի շինվածքը: Նրանք ելնելով շատ ջանացին, բայց չկարողացան բագինների դանելը զտնել, որ ներս մտնեն, քանի որ գները նրանցից ծածկեցին, Դրսից ջանացին, սակայն երկաթը լներգործեց այնտեղ, ապա իշխանները, փութացին հասան և նրան ամեն ինչ պատժեցին:

813 Իսկ նա առավ տերունական խալի նշանը և ձորակից ելնելով կանգնեց շինվածքի բարձրաբերձ տեղերին գեմ հսնդիման ու ասաց. «Թող քո հրեշտակը, Տեր, հալածի նրանց: Այս խոսքերի վրա ուժգին հողմ փշեց խաշանիշ փայտից, որը ձեռքում բռնած էր սուրբ եպիսկոպոսը: Հողմը բարձրացավ, ուոեց լեռան հավասար և եկավ հարթեց, տապալեց. Վայր զցեց բագինների ամբողջ շինությունները: Այնպես կործանեց, որ դրանից հետո ոչ ոք աչդ տեղում չէր կարող որևէ հետք նշանալ, ոչ քարի, ոչ փայտի, ոչ սոկու, ոչ արծաթի և բնավ չէր երևում թե այնտեղ որևէ բան էր եղել: Այն տեղում դանվող քրմությանը ծառայող մարդկանցից շատերը կոտորվեցին, և նրանց ոսկորները անհետ եղան: Տեսնողներից անթիվ մարդիկ հավատացին: Սուրբ Գրիգորը ասաց «Արդ՝ տեսեք, թե ինչպես ջնջվեցին ձեր գալթակղությունները, քանզի ոչինչ էին. բայց սրանից հետո ծառայեցեք տեր Աստծուն, որն ստեղծեց երկինք: Երկիրը»:

814 Սրանից հետո ելավ նա մեհյանների վայրերը և Երկրի մարդկանց ժողովելով գեպի աստվածապաշտություն դարձրեց և այնտեղ նկնջեցու հիմքեր դրեց ու Քրիստոսի փառքի սեղան կանգնեցրեց. որովհետև նախ և առաջ այստեղ էր, որ եկեղեցիներ շինելու սկիզբը դրեց: Հանուն սուրբ երրորդության սեղան կառուցեց, մկրտության ավագան շինեց և նախ մկրտությամբ նրանց լուսավորեց, որոնք իր հետ էին: մեծամեծ նախարարներին, որ իր հետ գնացել էին Եւարիա քաղաքը և ապա գավառականներին՝ երկրի

թնակիշներին, թսան որ իջևանեց և այնտեղ մկրտեց ավելի քան տասնինը ոյուր՝ Տարդկանց և սնդառ կանգնեց սըրբերի գերեզմանի էր շինած վկայարանում. փրկության պատարագ ժատուցեց և այնտեղ թաշխեց կենարար Քրիստոսի ժարմին. արյունը:

815 Հրամայեց, որ տարեց ուարի այդ նույն տեղում ամենը հավաքվեն՝ սրբերի հիշատակը կատարելու, որի օրը սահմի ամսի ոթն էր, որպեսզի. խնդությամբ հավաքվելով, տոնախմբություն անեն քանզի այնտեղ էր նախ և առաջ Եկեղեցիներ շինելու սկիզբը դրել. Տարբեր տեղերում քահանաներ կարգեց և այդ վայրերը լցրեց Եկեղեցիների շինությամբ ու քահանաներով:

816 Ծգ ինքը հեռացավ այնտեղից, Քրիս խաչի գլուխության մեծապանծ պարբերով լի և վերցրեց սրբերի նշիւսրների մի մասը, որպեսզի այլ տեղերում ես նրանց հիշատակը հասատածի. Շրջում էր ամեն տեղերում ու դավանականերում, Եկեղեցիներ շինում ավաններում ու ուղարկելու մեջ և մկրտություն կատարում, քահանաներ կարգում:

817 Կուղ ապա և մեծ թագավոր Տրդուար, որ Քրիդորը Եկել հասել է մեր Հայոց Երկիրը Առաջ իր գորքը, Աշխին տիկնոջը և իր քույր Խոսրովի դուխտին ու չվեց Այրարաւայան գավառից, Վաղարշապատ բարդաբից՝ Քրիդորին ընդառ: Եկավ հասավ Բաղավան գյուղաքաղաքը, որը պարթևերն լեզվով կոչվում է Դիցավան և այնտեղ սպասեց մեկ ամիս ժամանակով: Իսկ նա շրջում էր որպեսզի տարբեր կողմերը լցնի Եկեղեցիներով, քահանաներով, {Եկեղեցու} սպասավորներով ու ամեն տեսակ աստվածադղործ պաշտամունքային կարգերով և շատերին լուսավորի մկրտությամբ:

818 Ապա Եկավ հասավ վերոհիշյալ Դիցավանը ամենայն մեծամեծներով, զորքով ու աշխարհակույտ ամբոխով, որոնք տարբեր կողմերից էին հավաքվել, գնում շըրջում էին նրա հետ, բժշկություն գտնում և նրանցից յարաքանչուրը իր պետքերն էր հոգում նրա միջոցով: Եվ նա ամենասպիցու վարդապետությամբ ամենքի համար

* Բլուր՝ տասը հազար:

կճնաց խոսքն էր սերմանում և Ավետարանի բոլոր սպասավորներով հանդերձ, որոնք իր հետ էին, և հնարավոր չէ յուրաքանչյուրին անուններով եշել՝ քարոզում էր Խվետարանը, Երանելի հպիսկոպոսը Նրանց հետ միասին հանձնվելով Աստծո շնորհներին, եկավ հասավ Նպատ լեռան ստորոտը:

819 Ընդառաջ ելավ նրան թագավորը, ամբողջ զորքով հանդերձ. Եփրատ գետի ափին և հենց որ նա նրանց պատահեց, ամենքին լիացրեց Քրիստոսի Ավետարանի ողջույնով ու բազում ցնծությամբ և ուրախությամբ դարձան ավանը: Այնտեղ վերադարձած իշխանները թագավորին մատուցեցին ողջունաբեր թղթի բերված պատասխանը, որի պատճենը այսպես էր դրված.

ՊԱՏԱՍԽԱՎ ԹՎԼԹԻ ՊԱՏՃԵՆԸ

820 Գանահարված ու խրատվածներ, զարնված ու համոզվածներ, տանջված ու նվաճվածներ, կորած ու գրտնըվածներ, մոլորված ու դարձի եկածներ, ուշադրության սունված ու Տիրոջից սիրվածներ՝ Տրդատ Մեծ Հայքի թագավոր, Աշխեն տիկին. մեծ օրիորդ Խոսրովիդուխտ և Մեծ Հայքի բազմամբոխ ժողովրդի ամենայն բազմություն. Ղեռղես արքեպիսկոպոս մեծ* Կեսարիայի մետրոպոլիտ և ամենայն ուխտ սուրբ Եկեղեցու քահանայության, եպիսկոպոսների, Երևաների, սարկավագների ու ժողովրդի ի Տեր ողջուն:

821 Աստծուց ձեզ հասած կենսատու փրկության համար, ինչպես մեզ պատմեցին, անպայման ուրախությամբ գոհացանք Քրիստոսի անզեղական փառքի և Աստծու այն սուրբ նահատակների համար, որոնք ձեր մեջ և ձեր երկրում

* Բնագրում մեգաղէ, հունարեն՝ մեծ:

փստավորվեցին նրանք ուղարկելով նրանց ընթացքէ պահճանին և նմանվելով նրանց հավատքին՝ փառավորված, նրանց պսակներով պսակավորվեցին:

822 Քանզի ամենքի ն բոլոր երկրների որարիշը, որն ամենքին համոզում է, որ [նրա] որդեգրությունն ընդունեն, իլ հաճոյական կամքով ամենքին խրատում է, որով միխիթարելու է սնավաստակ աշխատությունից, իր արքույթյան մեջ հանգստացնելու է բեռնավորվածներին ու հոգնածներին «Փանդի նրա լուծը բազցր է և բեռը թեթև»։ Իր թեկրով պաշտպանում է. վարդապետում, որպեսպի ամենքին իր հանդիտյանը արժանի դարձնի:

823 Քանդի դուք կանխավ արժանին շճանաշեցիք, այդ պատճառով էլ անարժան զավաղանը բերեց ձեզ գրաքնից ընդուստ արթնացածի նման, որպեսզի ճանաչեք զբաստությունը, որ արժանավորն է։ Եվ որովհետեւ դուք մարդկայինը շճանաշեցիք մարդկայնորեն, ձեզ տեղյակ դարձրեց ու յարդկայնապես եվ որին անդիտությամբ արհամարհեցիր ձեզ հաստատեց անշարժ զիտության մեջ, քանզի այն վեմը, որ շինողների կողմից անաբոված էր, ձեզ համար անկյան զլուխ եղավ* *։

824 Նա, որին ուրախությամբ բարկացրիք, արցունքներով հաշտվելու եք նրա հետ և այն, որից ձեր աշքերը փակելով խավար էիք համարում, ծագեց, բացեց լուսավորեց ձեր աշքերը, վերացրեց ձեզանից հեթանոսության խավարը և ճառագայթարձակ պատմուման հազցրեց։ Բակ նա, որին անմիտ էիք համարում և ամբարտավանորեն սպանել ցանկանում նույն ինքը ձեզ իմաստուն դարձրեց և նույն ինքը ձեզ տրվեց. որպես [փրկություն] զտնող:

825 Արդ՝ երբ մենք տեսանք այսպիսի հրաշալի մարդուն և լսեցինք մեծամեծ հրաշքների մասին, որոնք նրա ձեռքով ձեզ ժոտ կատարվեցին. Աստծու սիրո խորության մեջ քնիղմեցինք ինչպես ալիքների բազմությունը ահեղ զրերի մեջ, անհատնում գովարանությամբ և դեռ ավելին՝ անդա-

* Մատթ. ԺԱ, 30.

** Դոռչք, 7, 11.

յար բերանով և անհանգիստ լծվով օրհնեցինք մեր բարերար, սքանչելագործ պարգևաբաշխ տեր Հիսուս Քրիստոսին: Հոհություն մատուցեցինք առ Աստված: Հայրն ամենայնի, շնորհելու Գրիգորին սուրբ հոգու անապական պարզեները, որով և դուք արժանի եք լինելու երկնքի արքայության ողջույնի շնորհին: Եվ մեզ [թես] մարմնով հեռու, հոգով մերձավոր համարելով՝ հիշեցնեք ձեր նոր ազոթքներում, ձեզ պարզե տրված փրկության մեջ, մանավանդ, երբ ձեր սըրբերի հիշատակը տոնեք ձեր ուրախությամբ:

826 Եվ Ռող ուխտը հաստատուն մնա երկու կողմերիս միջև, որպեսզի ձեր երկրի նորոգ քահանայապետության մեր կողմից պարգևաբաշխումը անշարժ մնա Կեսարիայի և կեղեցու մեջ, որտեղից պատրաստվեց ձեր փրկության ձևնադրությունը: Այսպիսով, խորհրդի անապական պարզեները ձեզ կրաշխվեն մարտիրոսացած աջով, շնորհիվ վերանորոդ մկրտության ու փրկվի խաչի, Քրիստոսի կենդանարար մարմնի ու քավիչ արյան և բազմացյալ քահանայությանց երանությամբ, որով և դուք կլինեք վերանալով իւառնվածներ աղոթաբուխ մշտնշենավորներ քրիստոսակեցուց գնդի զորքին: Ողջ եղեք Քրիստոսով և շարունակ վայելեցնեք Տիրոջ փրկությամբ:

827 Ուրախ եղան թղթի մխիթարությամբ և որովհետեւ ուղեգնացնելը լուսավորությամբ եկել հասել էին ու երեացել աստվածաշնորհ պարգևներով, առավել հոգեոր սիրո անձկությունն էին սկսում և շատ ավելի հաստատվեցին հավատքի մեջ մեծ ու ցնծալի բերկորությամբ:

828 Իսկ նա խսկույն, ընդունված սովորությամբ, անդադար վարդապետությունը գործի դնելով, Տրդատ բարեպաշտ արքայի մասնակցությամբ այնտեղ իր գործն էր առաջազրում, իրատում էր հորդարելով, որով առավելագույնս հնազանդվում էին նրան ըստ Աստծու հրամանների թագավորը և ամբողջ զորքը աշխարհախումբ բազմությամբ հանդերձ, որոնք բոլորը հանձն առան նրա խնդրածը կատարել և հրամայածները գործադրելու

829 Եվ նա հրաման տվեց արքայագունդ բանակներին մի ամիս ժամանակով պասի աղոթքի մեջ մնալ: Սկսեց

Նա սովորական [ձեռվ], իր հետ այնտեղ բերված ընկերներով միասին պասն ու աղոթքները, տքնությունները, արտասվալից պաղատանքները, խստակեցությունները, աշխարհաճեծ հոգսերը, հիշելով հոգեպատում մարդարեի ասածը, թե «Երբ որ հեծեծես, այն ժամանակ կապրես»*:

830 Այսպես շատ աշխատանք կատարեց՝ [ջանալով] ամբողջ երկրին բարիք գործելու որևէ միջոց գտնել, որի համար էլ ամենաշնորհն Աստված իր պարզեաբաշխ սուրբ աջով իշխանություն տվեց [նրան]՝ հայրական ձեռվ ծնելու նոր ու սքանչելի ծնունդ, ամենքը զրիթ ու հոգուց, [ինչպես] արգանդից, մյուս անգամ վերստին ծնվելու մկրտությամբ, և կատարյալ դարձնելու, սրբելու, դրոշմելու նրանց որպես ծիրոջ մեկ ժողովուրդ:

831 Այնտեղ հիմքեր դրեց, եկեղեցի շինեց ու սրբերի ոսկորների նշխարները, որ ուներ, տեղավորեց տերունական տանը: Սույնպես և գավառների ամեն կողմերում եկեղեցիների հիմքեր դրեց, սեղաններ կանգնեցրեց և քահանաներ կարգեց: Ամբողջ երկիրը սրտանց դարձ կատարելով ձգտում էր պասի, պաշտամունքի ու Աստծու երկյուղին:

832 Իսկ երբ լրացավ պաս կատարելու տրված ժամկետը, երանելի Գրիգորը առավ աշխարհաբնակ զորքը և իրեն՝ թագավորին, նրա տիկին Աշխիենին, մեծ օրիորդ Խոսրովիդուխտին, ամենայն մեծամեծներին և բանակի բոլոր մարդկանց, առավոտյան այգը լուսանալուն պես ծփրատ գետի ափը տարավ և այնտեղ մկրտեց⁴⁸ առհասարակ ամենքին հանուն Հոր և Որդու և սուրբ Հոգու:

833 Երբ բոլոր մարդիկ ու թագավորը իշնում էին այնտեղ՝ ծփրատ գետի ջրերի մեջ մկրտվելու, Աստծուց սքանչելի հրաշք երևաց, քանզի գետի ջրերը կանգնելով ետ դարձան: Սաստիկ լույս երևաց լուսավոր սյան նման և կանգնեց ջրերի վրա ու նրա վրա տերունական խաչի կերպարանքը. և լույսն այնքան ծագեց, մինչև որ արգելեց ու նվազեցրեց արեգակի ճառագայթները: Օծության յուղը, որ Գրիգորը մարդկանց վրա էր թափում, գետի մեջ շրջան

* Յ. 1, 18:

կատարելով մարդկանց շուրջն էր պատվում։ Ամենքը գար-
մացած օրհնություն էին տալիս ի փառս Աստծու Սրվա երե-
կոյան հրաշքը աներեւոյթ եղավ, և նրանք դեպի վեր՝ ավան
վերադարձն նրանք, որ այն օրը մկրտվեցին, ավելի քան
տասնհինգ բյուր էին, արքունական զորքից։

834 Ելան այնտեղից մեծ ցնծությամբ, սպիտակ հան-
դերձներով, սաղմոսներով ու օրհնություններով, վառ
կանթեղներով ու մոմերով և լուսավառ ջահերով, մեծ ուրա-
խությամբ և սաստիկ զվարթությամբ լուսավորված ու
հրեշտակացած։ Աստծու որդեգրի անուն ստացած մտան
սուրբ Ավետարանի ժառանգությունը և սրբերի վիճակին
խառնվելով, Քրիստոսի անուշ հոտով ծաղկելով, վեր ելան,
տերունական տունը դարձան։ Այնտեղ [Քրիստոր] օրհնու-
թյան պատարագ մատուցեց, ամենքին հաղորդություն տվեց
գոհության խորհրդով, բոլորին բաշխեց սուրբ ժամինն ու
պատվական արյունը ամենափրկի; Քրիստոսի. որ կենդա-
նաբարն է ու կեցուցիլը ամեն մարդկանց, արարիչն ու
աշխարհագործը բոլոր արարածների և աստվածատուր
չորհները ամենքին առատապես մատակարարեց։

835 Դրանից հետո հոգեոր մխիթարության համար այն-
աւեղ յոթ օր մնաց։ Այդ յոթ օրերում արքունական բանակից
Հկրավեցին ավելի քան շորս հարյուր բյուր այր, կին
մանուկ։

836 Ել կարգադրեց բերված մարտիրոսների հիշատակ-
ների համար մեծ տոն սահմանել սնոտի պաշտումունքը
ժամանակներում ամենաբեր նոր պտուղների Ամանորի
աստծու՝ Հյուրընկալ Վանատուրի* տոնին, որը առաջներում
հենց նույն տեղում ուրախությամբ տոնում էին նավասար-
դի օրը։ Որպեսզի հավաքվելով մեծ երանելի Հովհաննեսի
և Աստծու սուրբ Շահատակ Աթանազինեսի հիշատակին
այդ օրը նույն ավանում իմրևած տոնեն։

837 Ուր և երանելի Գրիգորը իր ուսուցչությունը ի գործ
դրեց և հավաքվածներին ընդունելի դարձնելու համար
քաղցրացրեց ու ծովացրեց վարդապետության խորու-

* Հմմտ. Բ. Մակար. Զ, 2:

թյունը, լիքը լցրեց ամեն հոգեոր բարություններով, Դրանից հետո նա շրջվեց, վերահասու եղավ Հայաստան աջխարհի բալոր կռղմերին՝ շինելով եկեղեցիներ բոլոր նահանգներում գավառներում, կռղմերում, քաղաքներում, ավաններում, շեներում, զյուղերում ու ազարակներում։ Այդպես էլ թագավորը իր ամբողջ իշխանության մեջ առհասարակ նշանակեց շորսական ծխի հողաբաժին բոլոր ազարակ տեղերում, իսկ ավաններում՝ յոթական ծխի հողաբաժին⁴⁹-ի ծառայություն սպասավորության քահանայության [որպես] նվեր պտղի՝ Տիրոջը մատուցեց։

838 Թահանաներ կարգեց ամեն տեղերում և հրաման տվեց, որ պաշտվի միայն տեր Աստվածը՝ երկնքի ու երկրի արարիչը, Ամեն տեղ բաղմացրեց Տիրոջ սեղանի սպասավորներին, բոլոր եկեղեցիներում յուրաքանչյուր սեղանին քահանաներ կարգեց։ Այսպես էլ եպիսկոպոսներին Տիրոջ ժողովրդի ղիխավորությունը հանձնեց և հրաման տվեց նրանց հավատարիմ առաջնորդությամբ լուսավորապես Քրիստոսի հօտին վերակացու լինել։

839 Նույնպես [Գրիգորը] համոզեց թագավորին, որպեսդի զանազան գավառներից, կռղմերից, այլև ալ տեղերից մանկանց բազմություն հավաքեն ուսուցանելու նպատակով, գագանամիտ. վայրենագույն և ճիվաղաբարո դավաուների բնակիչներին, որոնց ընդդրկեց ուսուցման մեջ և հոգեոր սիրով ու եռանդով վերացրեց դեմք ու սնոտի կուռքերի պաշտամունքի շարավահուտ աղտն ու ժանուր և այնչափ հեռացրեց իրենց բուն բարերից, մինչև որ նրանք ասացին, թե «Ճողովրդին ու իմ հոր տունը»^{*}։

840 Տրդատ թագավորը Հայոց երկրի տարբեր կռղմերին հրաման տվեց՝ իր իշխանության նահանգներից, զավառներից, ուսման համար մատաղ մանուկների բազմությունը բերել և նրանց վրա հմուտ ուսուցիչներ կարգել։ Առավելապես քրմերի պղծագործ ցեղին և նրանց մանուկներին պյուտեղ հավաքել, հարձար տեղերում դաս-դաս խմբել և սպուստի թոշակ նշանակել։ Նրանց երկու մասի բաժանեցինք

* Հմատ. Սաղմ. Խ7, 11:

ունցանց տվյալին ասորի դպրության և ոմանց՝ հեղենականին, Դրանով իսկույն, մի ակնթարթում, երկրի վայրենամիտ, գտառարկասուն և անասնաբարո բնակիչները արագորեն մարզարեացիտ, առաջելածանոթ և Ավետարանի ժառանգորդներ դարձան ու աստվածային բոլոր ավանդությաններին ոչ մի բանով անտեղյակ [շմնացին]:

841 [Գրիգորը] հասավ իր առաջին դաստակերտը, Այրարատյան գավառի մայրաքաղաքը⁵⁰ Վաղարշապատ⁵⁰, որտեղից առաջին աստվածատուր հրամանների սկիզբը եղավ, ուր նախ նշմարեց և նշանակելով կանգնեցրեց սուրբ խաչի նշանը, ուր և Աստծու սուրբ նահատակները զետեղվեցին և նրանց վկայարաններում, սրբների գերեզմանների վրա, Աստծու սեղաններ կանգնեցրեց, նշանակված տեղամ եկեղեցի շինեց՝ տեսիլքի մեջ իրեն ցուց տրվածը, որը նախապես իր կողմից կնքված էր, այստեղ կանգնեցրեց Քրիստոսի եկեղեցին. Նույնպես էլ մեջյանների տեղերում, որոնք նախապես կործանեց և Արտաշատ քաղաքում ու ամեն տեղերում, նահանջներում դավառներում առասարակ, այս ձեռվ վարվեց և բազմացրեց եկեղեցիները, քահանաներ կարգեց ու քրիստոսյան զրաշմով ամենքին առհասարակ պատվում էր, որպեսզի բոլորը սուրբ հոգով լինեն:

842 Այսպէս ամբողջ Հայոց երկրում, ծայրից ծայր, շանաց, սփռեց, տարածեց քարոզության ու ավետարանության գործը՝ Սատաղացիների⁵¹ քաղաքից մինչև Խաղուաց Կոկիրը, Կղարջիք⁵² մոտ, ընդհուպ մինչև Մասքութների⁵³ սահմանները, մինչև Ալոնաց դռնները, Կասպից սահմանները և Հայոց թագավորության Փայտակարան քաղաքը Ամիդ⁵⁴ քաղաքից մինչև Մծբին քաղաքը, անցնելով Ասորիքի սահմանները, նոր Եփրական⁵⁵ երկիրը, Կորդուք գավառը մինչև Մարաց ամուր աշխարհը, մինչև Մահքը—Տան⁵⁶ իշխանի երկիրը և Ատրպատական՝ սփռում, տարածում էր իր ավետարանական քարոզը⁵⁷:

* Բնագրում՝ ռոտաստակ:

843 Իր կյանքի բոլոր ժամանակներին՝ ամառ և ձմեռ,
ցերեկ ու գիշեր անվեհեր, առանց հապաղելու իր իսկ ավե-
տարանական ողունատու ընթացքով, առանց ընդդիմու-
թյան հակառակորդների կողմից, ամենափրկիչ Հիսուսի
անունը կրեց թագավորների, իշխանների ու բոլոր հեթանոս-
ների առջև և ամեն մարդու զարդարեց Քրիստոսի զգեստով
ու հոգեւայես:

844 Եվ բազում բանտարկյալների, կալանավորների ու
բռնակալների ձեռքում շարշարվածների փրկություն տվեց՝
կորզելով նրանց Քրիստոսի փառքի ահավոր զորությամբ և
անիրավագիր, ապօրինի շատ մուրհակներ պատռեց։ Շատ
վհատված սգավորների համար իր միխթարական քարո-
զությամբ մեծ Աստծու և ամենափրկիչ Հիսուս Քրիստոսի
փառքի հայտնության համաձայն հույսի ակնկալություն
նվաճեց և ամենքին միանդամայն փոխեց, աստվածապաշ-
տության ու կարգ ու կանոնի մեջ դրեց։

845 Եվ դարձյալ շեն ու անշեն տեղերում հաստատեց դաշ-
տաբնակ, շենարնակ, լեռնական, անձավաբնակ, արդելա-
քնակ վանականների բազում ու անհամար խմբեր Թրմերի որ-
դիներից ոմանց առավաշակերտ, ձեռնասուն դարձրեց, զա-
նում էր ուսում տալ նրանց հոգեոր խնամքով ու երկյուղով
դաստիարակել։ Ով որ եպիսկոպոսության աստիճանին արժա-
նի էր, նրան ձեռնադրում էր նրանցից առաջինի անունը
Աղքիանոս էր, որը հետո Եփրատ գետի կողմերում եպիս-
կոպոս եղավ, երկրորդինը՝ Ելտաղիոս, որը Բասեն գավա-
ռի կողմերում հոգեոր հովիվ կարգվեց, երրորդինը՝ Բասոս,
չորրորդինը՝ Մովսես, հինգերորդինը՝ Եփսիրիոս, վեցերոր-
դինը՝ Հովհաննես, յոթերորդինը՝ Ագապես, ութերորդինը՝
Արտիիլես, իններորդինը՝ Արսուկես, տասներորդինը՝ Ան-
տիոքես, տասնմեկերորդինը՝ Տիրիլես, տասերկուերորդինը՝
Կիրակոս⁵⁸, Սրանք էին, որ առանձնացվեցին քրմերի որդի-
ներից՝ տարբեր կողմերի եպիսկոպոսներ լինելու, քարոզու-
թյունը տարածելու համար։ Մյուսների անունները եթե
որևէ մեկը կամենա, չի կարող թվել։

846 Եվ Աղքիանոսին՝ ճշմարիտ ու աստվածասեր մար-
դուն, թողեց արքունի գոան բնակիչների եպիսկոպոս և ինքը

ժամանակ առ ժամանակ անրնակ լեռներն էր ելնում, ուր և ինքն իր անձով իսկ օրինակ էր ցույց տալիս: Թողոր մենատաններից առնում էր որոշ աշակերտների և գնում դառնում էր լեռնակյաց, մենակյաց, մտնում էր խոռոչների ու ճեղքերի մեջ և առօրյա սնունդը հայթայթում խոտեղեն ուտելիքներով: Այսպես՝ վշտակյաց տկարության էին անձնատուր լինում, մանավանդ, որ աշբի առցեւ ունեին առաջելական խոսքերի մխիթարությունը, թե «Երբ տկարանում եմ Քրիստոսի համար, այն ժամանակ զորացած եմ լինում»* և թե «ավելի լավ է պարծենալ տկարությամբ, որպեսզի իմ մեջ բնակվի Քրիստոսի զորությունը»**:

847 Այնուհետև այնուղ չէին հարբում գինով, այլ լրցվում էին հոգով, ու սրտերը հոգերով երգերով էին պատրաստում ի փառս և ի գովություն Աստծու: Այնտեղ վարժվում էին հոգեպատում գրքերի քաղցրուսուց ընթերցանությամբ: Այնտեղ քուջալերիում էին հորդորող լսւավոր քարոզությամբ՝ հասնելու Քրիստոսի նշանակած պսակառատնպատակակետին: Այնտեղ հոգով եռում էին աստվածապատական սպասավորությամբ: Այնտեղ աղերսալի աղոթում էին, փառվելով պաղատում և ամենքի կյանքի համար հաշտեցուցիչ խնդրանքներ էին անում մարդասեր Աստծուց:

848 Այս միենայն հոգեկրոն գործով շատ օրեր անց էր կացնում անրնակ տեղերում, Եփրատ ղետի ակունքների մոտ, բնակիվելով երկրի քարայրներում ու քարածերպերում, լեռների կատարներին, օրինակ առնելով մեծ մարգարե եղիացից և երանյալ առաքինի Հովհաննես Մկրտչից, որոնց բարի գործերին նախանձավոր եղավ, նույն առաքինի ապրելակերպը և աստվածամուխ կյանքը իր անձի վրա ցույց տվեց:

849 Եկ եթև երբեմն երբեմն անհրաժեշտ էր լինում իշնել, շրջել՝ հոգով զորացնելու ճշմարտության աշակերտներին, բոլոր եկեղեցիներին, պիտանի օգտակար բաների համար օդնության հասնելու Աստծու շնորհներով, առանց

* Բ Կորնթ. ԺԲ, 10:

** Բ Կորնթ. ԺԲ, 9:

հապաղելու, առանց բնավ դանդաղելու շարունակ իշնում էր պատահող դեպքերին օգնելու և Աստծու զորությամբ գործելու Անփակ բերանով ավելի հորդ ու առատ էր ծավալում վարդապետության վտակները ու սերմանում՝ լսողների սրտերի մեջ և այս անում էր նա ամբողջ կյանքում իր անձի ու աշխարհի համար։

850 Քանզի ճշմարիտ ուսուցիչները սովոր են իրենց ուսությունները աշակերտների համար օրինակ դարձնել, մանավանդ որ մտաբերում են տերունականը, միմիայն իմաստուն Աստծունը, որովհետև ասում է. «Սկսեց Հիսուսը գործել և ուսուցանել»*, նա շատ անգամ իր աշակերտներին առնում մի կողմ էր տանում և իր անկարու անծով կարույալների համար օրինակ էր դառնում, երբ Իարորական լեռան վրա տալիս էր խոստացած երանությունը և երբ նույն լեռան վրա կանոնական աղոթքն էր առնում, մինչդեռ աշակերտները նավում էին Տիբերական ծովի վրա. Եվ դարձյալ բաղարջակերաց օրերին, հին օրենքներով սահմանված տոնին, Զիթենյաց լեռան վրա առանձնացած երեք անդամ զիշերլա առոթքն էր առնում. Ուստի և հաստատապես հայտնի է, որ առևենատերը ոչ թե իր անձի, այլ համայն աշխարհին սովորեցնելու համար էր այն անում, ինչ որ օրինակ է բոլոր հնագանդվածներին, որի համար էլ ասում էր. «Արթուն կացեք, աղոթեցեք, որ փորձության մեջ չընկնեք»**:

851 Խսկ արդ՝ եթե երկրածին մարդիկ թեթև գործերի վերաբերմամբ զիտությունից պակաս են, մարդս որշափ տղետ պիտի համարվի այն դործի հանդես, որով Աստծու հետ է խոսում և որի մասին երանելի Պողոսն ասում է, որ ամենքը տղետ են***. Դրա համար էլ ամենակեցույց Հոգին օդության հասնելով՝ անմոռնչ հեծությամբ բարեխոսում է****:

* Գործք. Ա. 1.

Դուկ. ԽԲ 46.

Հմմա. Ա. Կորեթ. ԺԴ. 36—38:

**** Հմմա. Հոռլի, Ը, 26:

852 Արդ՝ երբ լսում ենք, թե «սկսեց Հիսուս գործել և ուսուցանել», պետք է հասկանալ իսկապես՝ գործում է. որպեսզի ուսուցանի, և ոչ թե պարզենի, Եվ նրա բարեխոսելը սրբերի համար և սուրբ Հոգու բարեխոսելը մեզ սովորեցնելու նպատակով է, որպեսզի միմյանց փոխարեն բարեխոսնենք և ոչ թե կարծենք, թե Միածնին կամ սուրբ Հոգուն կարող են բարեխոսել բարձրագույնի մոտ, քանզի աստվածայինը [հավասարապես] միապատիվ է և ոչ թե բազմապիսի [սկատվով]:

Իսկ երանելի սուրբյալները ճշմարտության վարդապետից ընդունելով օրինակը նախ [իրենց] կարոտ անձերին մատակարարեցին և առաջ վերցրին տարան աշակերտածներին: Երբեմն առանձին և երբեմն ժողովարաններում հավաքված ավելի ու ավելի բարձրացնում էին Քրիստոսի փառքը:

853 Քանդի իսկապես ավելի օգտակար է բոլոր աշխարհային զբաղվունքներից մի կողմ քաշվել, առանձնանալ և միայն աստվածապաշտությամբ սլարապել, ինչ որ նախապես անում էին մարդարեները, որոնք լեռներում, անապատներում, քարայրներում և քարերի փառարներում աստվածային կրոնի սղասավորություն էին անում: Նույնպես և բոլոր հայրերը, որոնք հաջորդեցին, կրելով առաքելական կանոնները իրենք անձամբ վերցիններին օրինակ ցույց տվին: Բայտի և այս երանելին իր վրա էր տանում ավանդածների սկատիվը և նույնը պատվիրելով ազգարարում էր բոլոր իրեն մոտեցողներին: Եվ այսպես հետո էլ բոլոր աստվածային դանձերի վայելշրւթյամբ ամենքին հաստատաբար լցրած, պարարտացրած կենցաղավարում էր շատ ժամանակներ՝ նույնով նույնի համար, առավոտը կանուխ վեր կենալով և նույնի մեջ ամեն օր հարատեսելով:

854 Այն ժամանակ երանելի, ցանկալի և անշափ սքանչելի եղավ մեր Հայոց երկիրը, ինչպես Մովսեսը, որը միանգամից երրայական բանակին օրենսուսուց էր եղել, ամբողջ մարգարեական դասի հետ և կամ ինչպես առաջադեմ Պողոսը բովանդակ առաքելական զնով Քրիստոսի աշխարհակեցուց Ավետարանի հետ, նույնպես և սա [Գրիգորը] գա-

լով հասնելով, երեալով հայաբարբառ հայերենախոռ գարձավ⁵⁹¹,

855 Արդ՝ գավառից գավառ անցնելով իր անձի համար անբնակ տեղերում հանգստյան կայան էր ընտրում և այնտեղ բնակվում էր ու անբնակ տեղերից ամենքին լուսավորում:

856 Հայաստանի՝ իր իշխանության տակ եղած բոլոր գավառներում բազմացրեց, կարգեց տեսուշ-եպիսկոպոսներ. նրա կողմից ձեռնադրվեցին ավելի քան չորս հարյուր եպիսկոպոս, որոնք տարբեր տեղերի տեսուշ նշանակվեցին և հսկ երեցների, սարկավագների կամ գրակարդացների կարգը, և որոնք Տիրոջ համար ուրիշ սպասավորության կարգը-վեցին, անթիվ էին իրենց բազմությամբ:

857 Իսկ Տրդատ թաղավորը այս ուխտը դրեց ամեն մի մարդու հետ, որ նրա տիրապետության տակ էր գտնվում, յեծին ու վորքրին, որպեսզի ամենքը հաստատապես անխորշ ու անխեթ, առանց երկմտության և ամբողջ սրտով հնագանդվեն աստվածահրաման պատվիրաններին՝ հավատան արարչությանը: Այս բանին բոլորը հսկածայնելով՝ անմիջապես փութացին հրամանները կատարել:

858 Իսկ թագավորը շատ աղաշեց Գրիգորին մշտապես իր մոռա մնալ, որպեսզի իր հետ շրջնցնի. այս բանին համաձայնելով [Գրիգոր] հանձն շառավ, այլ կամեցավապրել անբնակ տեղերում, ինքն իրեն պասով խոնարհեցնելով, որ վինի թե հպարտությունը զլում բարձրացնի և ոտնակուա անի իրեն: Այլ ժամանեց դրեց ինքն իրեն՝ իր կյանքի բոլոր օրերին քառասուն-քառասուն օր պասով մնալ մինչև իր վախճանի բրիսառոսակոյ հանգստյան օրը:

859 Երբ թագավորը, երկրի [մարդկանցով] հանդերձ, շատ փափագեց նրան, որուեսզի իրենց մեջ ապրեր, և դանգատվում էին կարոտյալները, որ նու մնար, այն ժամանակ լսեցին տեղյակ մարդկանցից, որոնք սուրբ Գրիգորի մասին գիտակ գարձրին թաղավորին, թե նախկինում, երբ երիտասարդական տարիքում զինվորական էր, անուսնացել և երկու որդի էր ունեցել, որոնց առաջինի անունը Վրթանես էր, որը աշխարհական կյանք էր [վարել], ու ապա քահա-

նայության Եկեղեցական աստիճան ընդունել. երկրորդինը Արիստակես⁶⁰, որը մանկությունից աստվածապաշտական ծառայության համար էր դաստիարակված, որ միայնակեցաց, լեռնաբնակ, կրոնական [կարդն] էր մտել և բաղում ու տեսակ-տեսակ տառապանքներ էր կրել, ըստ Ավետարանի, ամեն տեսակ վարժություններով, իրեն տայիս էր ամեն ինչի, որ հոգեսր էր՝ միանձնության, լեռնակներովյան. քաղցի ու ծաբավի, բանջարանաշակ կյանքի, անլույս արդելարանների, խարազանազդեստ ու գնտնատարած անկողինների, բազում անգամներ դիշերված հաճելի հանդիստքն ու քաղցի արդեր ստքի վրա տքնությամբ վերջացնում էր մի ակնխարիստ, և այս անում էր ոչ բիշ ժամանակ: Մի քանիսին ես դժու իր կողմն էր քաշել՝ հետեւող գարձնելով սույն ավելարանական ծառայությանը: Այսպես, կամավոր քաջությամբ տանելով բոլոր վրա հասած փորձությունները և դրանով լուսավորվելով ու պայծառանալով՝ ծանոթ ու հաճելի էր դարձել Աստծուն և բոլոր մարդկանց:

850 Արդ՝ երբ Տրդատ թաղավորը այս ամենը լսե, անմիջապես, փութաջան և անդանդաղ ուղարկեց Երևանի ավագ փառավոր, պատվական մարդկանց, հրավարտակներու: Հանդերձ, սրահեսպի Գրիգորի երկու որդիներին շուտով իր մոտ հասցնեն: Եվ նրանք, որ ուղարկվեցին առքայի կողմից, սրահեսպի բերեն նրանց, հետեւյալներն են. առաջինի անունն էր Արտավազզ՝, որը Անձ Հայքի բոլոր զորքների սպարապետն էր, երկրորդի անունն էր Տաճատ՝ Աշոցք⁶¹ գալասի իշխանը, և երրորդի անունն էր Դատ՝ արքայի սուրբանդակը:

851 Եկան նրանք շատան Կապուտիացիների երկիրը և Վրթանեսին դաւան Կեսարիա քաղաքում ու սուրբ Արիստակեսին՝ անբնակ վայրում իր մենաստանում կենալիս նա շհամուձայնեց ինել այն ահաւուրից մինչեւ որ քրիստոնյաների բազմության ժողով Եպով, որոնց համոզեցին նրան զնալ այսուկացից. «ավելի լավ է քեզ, առում են, Աստծու մշակի, բծը, բան մենակոր բնակ-աթյունը այդ անապատում»: Այսուհետեւ նրանց ճանապարհ դրին այնտեղից իսկ նրանք եկան հասան Հայոց երկիրը և թագա-

վորի առջև ներկայացրին բերվածներին՝ Գրիգորի երկու սրդիներին, որոնց առավ թագավորը անձամբ նրանց հետ մեկտեղ սուրբ Գրիգորին որոնելու գնացին, ուր որ պետք է գտնվեր: Եկան գտան Դարանաղյաց գավառում Մանյա Այրք կոչված լեռան վրա, անբնակ տեղում:

862 Ապա երանելի թագավոր Տրդատը աղաշեց սուրբ Գրիգորին, որպեսզի այն բանի փոխարեն, որ չհամաձայնվեց մնալ ու շրջել իր հետ և նախընտրեց մենավոր կյանքը՝ ձեռնադրի և եպիսկոպոս դարձնի իր սուրբ որդուն՝ Արիստակեսին, որին նա բերել էր տվել: Նրան եպիսկոպոս ձեռնադրեց իր փոխարեն, ինչպես որ դրան համապատասխան գրված է, թէ՝ «Հայրերի փոխարեն կլինեն որդիները՝ իշխան կդառնան երկրի վրա»*: Նա հորից ավելի բարձր էր ցույց տալիս իր վարդապետությունը հոր [կենդանության] օրոք, և նրանից հետո ստանձնեց հայրենի երկրի [իշխանությունը] և ապա հստեց Սեծ Հայքի կաթողիկոսական աթոռին: Ապա ինքն իսկ, մեծ Գրիգորը, դուրս եկավ նշանակված տեղերը և Հայոց աշխարհի կրոնավոխված դավառները՝ ամենքին զվարթացնելու, զորացնելու, նորոգելու և հաստատելու համար:

863 Եվ աստվածասեր թագավոր Տրդատը, բարեպաշտությամբ ծառայելով քրիստոնյա հետեւողի հավատքով, դարձավ երկյուղած և տեղեկանալով ու վարժվելով աստվածային հրամաններին, օրինապահ ընդունվածների հետ սիրելի դարձավ և բարի օրինակ՝ ամբողջ երկրի համար: Եվ հենց այնտեղ փութաջանությամբ ուշազրություն էր դարձնում աստվածային պրեսի ընթերցվածներին, մանավանդ նախապես տեղյակ էր հունական աշխարհիկ դրաբությանը, երկրավոր իմաստությանը, առավել ևս հմուտ լինելով փիլիսոփայական մտքի հանճարագիտության մեջ՝ սովորած լինելով այն:

864 Արդ՝ ընդունելով նաև երկնային պարզեների շնորհները, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց աստվածատուր հրամանների հանդամանքների մեջ և ամեն պատ-

* Սաղմ. ԽԹ, 17:

բաստությամբ իրեն զարդարելով, ըստ ավետարանական կանոնների՝ դարձալ մարդասեր Աստծու ծառայությանց Այնուհետև մերկացնելով հեթանոսակիր ցանկությունները, փառքի խաչն իր վրա առնելով ու գնալով ամենակեցուց խաչյալի ետևից՝ հավանեց հրամանների կանոնները, հետեւ Քրիստոնին աշակերտյալների խաչակիր գնդին։ Եվ իր անձը ստուանափակեց պասով ու տքնությամբ, մշշաւամսունչ աղոթում էր և բազկատարած պաղատում Աստծուն և շարունակ արտասվում իր երկրի համար Նույնպես և իր անձի համար խնդրում էր, որ շհիշվեն այն մեղքերը, որ նախկին տղիտության մեջ հեթանոսության ժամանակ գործել էր։

865 Ամբողջ մեծ ուժով նպաստեց Ավետարանի քարոզության գործին և հնագանդությամբ հպատակություն ցուց տվեց ու ծառայեց՝ Ավետարանին վայել ձեռվ։ Այսպես խրատելսվ ու զզաստացնելով կրոնավորական վարժով, աւեն ուղղությամբ, բոլոր բարի գործերի մեջ առավել ևս պայծառորեն օժանդակում էր քարոզչական գործին։

866 Իսկ մեծ արքեպիսկոպոս երանելի Գրիգորը իր սուրբ որդու՝ Արիստակեսի հետ, բոլոր երեսելի օգնականներով ու աշակերտածներով շրջում էր և [Հորդորում] նրանց հաստատ մնալու ճշմարտության պատվիրանին։

867 Սյոյ ժամանակներում Սովանիայում և Գաղիայում Բագավարեց Կոստանդին արքայի սրբի Կոստանդիանոսը նա հավատաց Աստծուն երկնքի ու երկրի արարչին և նրանից ծնած Բանին՝ միաժըն Որդուն և նրա աստվածության սուրբ Հոգաւոր Եվ կուտակեց, հավլաքեց իր մոտ զարքեցի բազմությունը Օվկիանոս մեծ ծովի ափին և ուխտ արեց առնելի համար, որ առհասարակ հավատան ճշմարտությանը՝ կապված մեկ աստվածալին պատգամներով, մեկ կատարյալ աղջ և մեկ Աստծու փառարանիշներ գառնան։

868 Եվ Աստծուն ապավինելով շարժվեց հեթանոս Բագավարների վրա և իսկույն ամենքին սպանեց առհասարակ, նրանց կործանեց աստվածային խաչի զորությամբ, պիղծ

* Խոսք. իսկ բանն Աստուծո՞ւ որդին Աստուծու

ու անօրեն Դիոկղետիանոս, Մարկիանոս, Մաքսիմիանոս, Կիկիանոս, և Մաքսենտիոս թագավորներին ու պղծալից հեթանոս թագավորների բոլոր զավակներին մեջտեղից ջընչեց։

869 Շինեց նաև ավերված եկեղեցիները և կանգնեցրեց Տիրոջ տան կործանված սեղանները։ Շինեց և նահատակների վկայարանները, ճոխացրեց երանելի մարտիրոսների հիշատակների փառաբանությունը և բազմացրեց Աստծու քահանաների աստիճանը, որպեսզի միանդամայն խաղաղություն լինի երկրավորներին, գայթակղությունը մեջտեղից վերանա, և ոչ ոք որևէ բանով չայթաքի Աստծու մոտ տառադ ճանապարհից։ Ավերեց գեերի պղծալի մեհյանները և նրանց առհասարակ իրենց պաշտամունքի ծառայողների հետ մեկտեղ փախուստի մատնելով՝ պակասեցրեց։ Պատիվներ ու պարզեներ տվեց նրանց, որսնք ճշմարիտ աստվածապաշտության հավատարիմ էին մնացել և երբեք չեին թողել հաստատուն [Հավատքը]։ Սրա համար նրան հաղթություն տրվեց ամեն ինչի վրա, որովհետև նա իր անձի վրա կրեց խաչի հաղիական նշանը։

870 Եվ Տիրոջ նկատմամբ ունեցած հավատքի մեջ հաստատուն մնալու ճշմարիտ պատվիրանի սաստիկ հրամանը իր հրովարտակներով տիեզերքի մեջ տարածեց հաղթող զորությամբ սպառնալով [որպեսզի] Տիրոջ լույս հավատքը բարեպաշտությամբ [պահպանեն]։ Սրանով հալածում էր խավարի զորքերին և վերին հղորությամբ ամեն ինչի վրա գերազանց էր։ Իսկ նրանք, որ այս բանին համաձայն եղան և ճշմարտության երկրապատուներ գարձան, այդպիսիների հետ բարեկամանալով, մերձենալով, պատվելով՝ իրեն մոռեցրեց։ Այսպես հզոր երեալով իր թագավորությունը հաստեց մարդկանց վրա իր թագավորությունը աստվածուկարգ անվանեց և այնշատի հզորացավ բոլոր մարդկանց մեջ, որ իրոք պայծառացավ։

871 Այսպես հաղթող լինելով իրեն հաստատուն դարձրեց, այնպես որ իր կյանքի բոլոր օրերում երկնքից իջած գրեշտակը մշտապես նրան էր ծառայում, ամեն առավոտ

թագի քրիստոսական նշանը վերցնելով՝ նրա գլուխոն էր դնում: Եվ այսպես՝ երանելի և բոլոր թագավորների սիրեց Կոստանդիանոսը Նրկնավոր Հրեշտակին տեսավ իրեն սպասավորնիս: Նույնիսկ իր թագավորական ծիրաննիները Քրիստոսին էր նվիրում աստվածասեր, աստվածաւաշտ և ամենին հաղթողը, որ թագավորությունը հավատքով հաստատեց և բոլոր Նկեղեցիներում հաստատ պահեց հրշմարիտ հավատքը:

872 Այն ժամանակ այս բանը լսվեց Մեծ Հայքում, Արշակունյաց Դագավորության արքունիքում, Մեծ Հայքի արքա Տրդատի կողմից: Սա երր իմացավ, ամենքի տիրոջը մեծ փառարանություն մատուցեց, խնդությամբ և մեծ ուրախությամբ գոհացավ նրանից, որ ամբողջ աշխարհում իր սուրբ անունը փառավորում էր:

873 Առաջ մեծ արքա Տրդատը, երբ այս ամենը լսեց, խոր ուրդ արեց այն ձանագարձների մասին³², կազմեց, պատրաստեց, իր հետ տռավ մեծ արքեսլիսկոպոս Գրիգորին, նրա որդի Արիստակես նպիսկոպոսին և մյուս եղիսկոպոս Աղբիանոսին³³ Զինվորական կողմից՝ իր պալատի շորս գահերեցներին, որոնք բգեշին են կոչվում. առաջինը՝ նոր Շիրական կողմի սահմանակալը, երկրորդը՝ Ասորեստանի կողմի սահմանակալը, երրորդը՝ Արուաստանի կողմի. շորրորդը՝ Մասքութների կողմի: Ապա [վերցրեց] Անդեղ տան մեծ իշխանին, թաղադիր ասպետին, մեծ սպարապետին, Մոկաց իշխանին, Սյունյաց իշխանին, Ռըշտունյաց իշխանին, Մաղիաղության տան իշխանին, Շահապիվան շահապին, սպասկապետության իշխանին: Եվ այլ բազմաթիվ մեծամեծներով ու յօթանասուն հագար ընտիր զորքով հանդերձ Այրարատ դավանից Վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց անդնելու Հունաց սահմաններու

874 Բազում օթևաններ անցավ մեծ ուրախությասը և հանդիպած քաղաքներում ու պատահած իշխանների կողմից հպատակության շատ պատիվներ և ընդունելության մեծարաններ գտավ: Յամուշի ու ծովի վրա փութաշան աճապարհին մինչև զնացին հասան իտալիա, Դաղմատիա, Հռոմ թագավորանիւտ քաղաքը:

875 Նրա մասին իսկույն պատմեցին արքունական պալատում, որ երբ լսեցին պատվակալ աթոռի աստվածակարգ թագավոր Կոստանդիանոսը և մեծ հայրապետ արքունի դուռն արքեպիսկոպոսը, որի անունն էր Եվսեբիոս, մեծ սիրով պատիվ անելով ընդառաջ եկան և իրար հավասարապատիվ ողջույն տալով՝ ուրախ եղան։ Որոշ ժամանակ մնացին այնտեղ տիեզերական քաղաքում, ապա աստվածասեր կայսր Կոստանդիանոսը զարմացած հարցրեց Տրդատ արքային, թե «ինչպե՞ս կամ որպե՞ս քեզ պատահեցին Ա. ուծու հրաշքները»։

876 Իսկ նա կայսեր առջև պատմեց Աստծու բոլոր գործերը ու նրա արած բարերարությունները։ Ամոթ չհամարեց պատմել նրան իրեն հասած ահավոր պատուհանները, նասունի կերպարանք ստանալը և նահատակ քաջ վկանների տոկունությունը, նրանց կատարած զործերը և նրանց զորավոր էությունը։ Կամ՝ այնտեղ իսկ կայսեր առջև ցույց տվեց իր հետ տարված Գրիգորին, թե «Սա այն մարդն է,— ասաց,— որի ձեռքով մենք ճանաչեցինք Աստծու մարդասիրությունը և նրա տոկուն համբերության նշանավոր հրաշագործությունները։ Սրա վրա զարմանալով Կոստանդիանոս կայսրը խոնարհեցրեց իր անձը, ընկավ Գրիգորի առջև, որպեսզի օրնվի նրանից և բաղում վայելուզ մեծարանքներով պատվեց նրան իբրև Քրիստոսի խոստովանողի, ըստ նրա արժանավորության։

877 Նույնպես և Տրդատ արքային, իբրև սիրելի Եղբոր, մեծ ուրախությամբ սեր ցույց տվեց, մանավանդ նրա աստվածածանոթության համար առավել դաշինք կնքեց նրա հետ՝ միջնորդ դարձնելով տիրոջ Քրիստոսի նկատմամբ ունեցած հավատը, որպեսզի միշտ հաստատուն պահեն մտերիմ բարեկամությունն իրենց թագավորությունների միջև, և Հայոց արքայի հավատը Երրորդության հանդեպ առավել ևս հաստատ լինի։ Իսկ Տրդատը պատմեց նաև Աստծու նահատակների մասին, թե որպե՞ս կամ ի՞նչ ձեռվ մարտիրոսացան։

878 Ապա Կոստանդիանոս կայսրն սկսեց պատմել նրանց ազնվական վարքի մասին, որն առաջվանից գիտեր,

երբ դեռ այնանդ իրենց երկրում էին, թե ինչպիսի հաճելի վարք ունեին և կամ որպիսի ազնվականներ էին ծագումով Պատմեց Աստծու կողմից իրեն տրված զորության, հաղթության զործերը և նշանաբանը թողոր թշնամիների դեմ հաղթող դառնալը, Ասաց. «Դիաեցիր, եղբայր, որ Աստված իր ողորմության զորությունը ցուց է տալիս ամբողջ աշխարհում, որպեսզի նրա բոլոր արարածները ճանաչեն նրան և նրա փառավորիշները լինեն ճշմարտությամբ ռքանզի այսպիսի Նրկրպագուներ է որոնում իր համար»*:

879 Ապա զբանից հետո նրանք մեծարվեցին արքունիքի, եկեղեցիների ու քաղաքի պատվական իշխանների կողմից նշանակված ապրուստի ու մեծապատիվ շքեղության կարդով և մեծամեծ ընծաներով ու երկելի պարզեներով սիրով մեծարվեցին:

880 Ապա հրաժեշտ տալով ծիրանափառ օդոստականներին ու սուրբ կայլողիկոսին, ընզունելով եկեղեցու ու քաղաքի երկելի իշխանների ողջույնը և ամեն ինչում հաջողելով ելան սոկելուտ, արբայական կառքերը և մեծ շուրջով ու բազում վայելությամբ արքունական ճանապարհներն ընկան:

881 Եվ բոլոր հանդիպած քաղաքներում փառավոր էին երեսւմ, և այնանդ ըստ Բաղավորական արժանավորության մեծամեծ սպատիվներ ընդունելով՝ եկան հասան Հայոց երկիրը, Այլարատյան զավառը, Վաղարշապատ քաղաքը, ուր սրբերի գերեզմաններն էին:

882 Բերեցին այնտեղ տրված սպարգեները՝ ոսկին ու արծովը և Ռմանկազին կարասին, նվեր տվեցին Աստծու եկեղեցու սպատիվորությանը և սուրբ մարտիրոսների նվիրական տանը դրեցին: Նաև կայսեր տված ոսկի սպասները նույն սրբերի զերեղմաններում դրեցին և իրենց եկեղեցիները առավել ևս շենացրին ու հաստատուն դարձրին:

883 Եվ մեծ Գրիգորը առաջվա աշակերտների մոտ շըրջում էր ու հաստատում նրանց ճշմարիտ վարդապետության մեջ:

884 Ապա սրանից հետո մեծ կայսր օգոստական Կոստանդիանոսը հրաման տվեց բոլոր եպիսկոպոսներին հավաքվել Նիկիա քաղաքում։ Այնժամ մեծ արքա Տրդատը և սուրբ կաթողիկոս Գրիգորը պատրաստեցին և ուղարկեցին Արիստակեսին, որ բոլոր եպիսկոպոսների հետ գնար հասներ Նիկիայի մեծ ժողովին ուր սիրտի որոշվեր ամբողջ տիեզերքի ընդունելի ավանդության հավատքը, լուսավորության կարգը, հաստատված կանոնները, Աստծու անշափ բարձր կամքի աստվածառուր չորությունը։ Ուր և մեծ կայսր Կոստանդիանոսը մտնելով խոստովանեց հավատքը և օրհնությամբ պսակվելով ժողովից՝ անոն թողեց Երկրի վրա և արդարություն հաստատեց երինքում։

885 Իսկ երանելի Արիստակեսը եկալ պայծառ հավատքով փայլած և նիկիական առև վաճառածու կանոններով հաստատուն երեաց Հայաստան աշխարհում և Բաղավորի ու սուրբ կաթողիկոսի առջև դրեց բերլած ավանդները Դրանց վրա սուրբ Գրիգորը ավելացրեց սուրբ լուսավոր կանոնները՝ իր ժառանգությունը, Հայաստան Երկիրը առավել պայծառացնելով Տրդատ արքայի միարանությամբ մեկտեղ իր կյանքի բոլոր օրերը լուսավոր դարձրեց։

886 Ապա այսպիսի գործերից հետո դարձյալ երանելի Գրիգորը սկսեց ավելի բարձր ուսումով հաճախագույն, գժվարապատում ճառեր կարգել ու հորինել, խորիմաց, զյուրալուր, բազմադիմի շնորհազիր, մարդարեական գըրքերի զըրությունից ու նյութից հորինված, ավելեարանական ճշմարիտ հավատքի բոլոր ճաշակներով լիւ Դրանց մեջ ավելի հանդերձյալ կյանքի հարության հուզակ վերսրերյալ շատ նմանություններ ու օրինակներ հորինեց, կազմեց աշխարհիս անցավոր բաներից, որպեսզի տիսմարենքին ու մարմնական բաներով զբաղվածներին հաճելի ընդունելի ու զյուրահասկանալի լինեն՝ սթափեցնելու, արինացնելու, սուրբին բաշալերելու համար։

887 Ավետարանական ընթացքն ու սուրբ եկեղեցու վերակացությունը Աստծու չնորհներով, առանց պակասու-

թյան առաջ էր տանում ու ավելի ևս ճղնում, զանք էր թափում, ամենքին հորդորում էր բարդությունների մղելով:

888 Գիշեր ցերկ պասով ու աղոթքով և ուժին խընդրանքով ու բարձր ձախով հիշեցնելով աստվածադիր պատվիրաններն ու հրամանները՝ ղգուշացնում էր ամեն մարդու «Քուն չէր տալիս իր աշքերին, ոչ նինջ աբուանունքներին, ոչ էլ հանդիսաւ իր մարմնին», մինչև Տիրոց հանգստյան հասնելը:

889 Այսպես թաղավորի ու բոլոր աշակերտների հետ մեկունդ ամրող ժամանակը օր ղիշեր զրբերի ընթերցանությամբ էին անցկացնում և դրանով ծարկած ու շահված՝ բարի օրինակ էին դառնում սոսումնաւեր ունկնդիրներին:

890 Մանավանդ որ ղղուշացուցից պատվիրաններ ունեին Աստծու կարդած պատղամավորներից, որոնց առաջինը հրամայում է, թե «Տիրոց օրենքի մասին պիտի խորհուս ղիշեր և ցերեկ»** և երկրորդը նմանապէս ողատվիդում է. «Ուշաղղություն դարձրու ընթերցանության մխրիմարության, վարդապետության, անփութ մի լինիր շնորքիդ վերաբերմամբ, որ կա քեզանում, այդ մասին խորհիր և դրանում կաց, որ քո առաջադիմությունը ամենքին հայտնի լինի. Զգույշ կաց անձիդ և վարդապետությանդ և դրա մեջ հարատեիր, Եթե այդ անես, կազատես թե քեզ, և թե քեզ լսողներին»***:

891 Արդ՝ այս կերպով իր կյանքի բոլոր օրերը առաքելական, առաքելագործ [եղանակով] վարեց, զնաց ընդունված հրամանների հետքերով, տարեց տարի այս արեց մինչև դեպքերի վախճանը և թաղվելով Թրիստոսի սիրո մեջ՝ լուսավորում էր:

892 Իսկ մենք, երբ ստացանք քո թագավորական հրամանները, ով այրերի մեջ քաջ Տրդատ, այս ամենը գրելու, ըստ այնմ մատյանների ժամանակագրին վայել ձեռվ ղրոշ-

* Սաղմ. ՃԱԱ, 4:

** ՀՅՅՄ. Սաղմ. Ա-2:

*** Տիրոնթ. Դ., 13-16:

մեղինք, ամեն ինչ շարադրելով հունական ճարտասանության օրինակով:

893 Բայց [միաժամանակ], ինչպես հայելու մեջ նայել ենք շնորհված հրամանների աստվածադիր բարձրությանը, որոնք տրվել էին երանելի Մովսեսին՝ տեղի ունեցած բոլոր դեպքերը և ավանդված աստվածային պատգամները մատենադրելու ի պահպանություն զալիք հավիտենականությանը:

894 Նույնպիսի ձեռվ այլ մարգարեներին էլ է հրամայնուծ. «առ, ասում է, նոր ու մեծ քարտ և զրիր վրան ճարտար դպրի գրշով», և այլուր, թե «զրիր տեսիլքդ տախտակի վրա և հաստատիր գրքի մեջ, որպեսզի ով որ այն կարդա, համարձակ լինի»* * *:

895 Իսկ Դավիթը առավել հայտնի ձեռվ ակնարկում է, որ աստվածատուր օրենքը ամեն ազդերին պիտի վիճակվի, ասելով, թե «պիտի զրվի այս եկող ազգի համար»** * և թե «Տերը ժողովուրդներին պատմելու է զրով»*** *:

896 Որ եկավ լրացրեց ամենափրկիչ Քրիստոսը իր շնորհատուր հրամանով, թե «Եկեք բոլոր ազդերի մեջ»**** և թե «Այս Ավետարանը պիտի քարոզվի երկնքի ներքո»*****: Ուստի և այս երանելին համարձակություն առնելով, հուսալից ջանքով իր մշակությունը երևելի և արդյունակատար դարձրեց ըստ Ավետարանի:

897 Արդ՝ քանզի մեր զրածների համեմատ ավարտին հասանք, այդ ոչ թե հին զրույցներից տեղնկանալով և մատենադրելով կարգեցինք, այլ մենք ինքներս ականատեսմ⁶⁵ եղանք նրանց կերպարանքներին և առկա հոգեոր գործերին և լսող՝ նրանց շնորհապատում ուսման և նրանց ծառան ըստ տվիետարանական հրամանների: Ոչ թե ստապատում ճարտարակուս լինելով [գրեցինք] մեր խոսքերով,

* Առ. Է, 1:

** Ամբակ. Բ, 2:

*** Սաղմ. ՃԱ, 19:

**** Սաղմ. ԶՃ, 6:

***** Հմմտ. Մատթ. ԻԾ 19:

***** Հմմտ. Մատթ. ԻԾ, 14. ԻՃ, 13 Մարկ. ԺԾ, 9:

այս հաճախագույնը թողնելով և նշանավոր գիտակներից քաղելով այս համառոտը կարգեցինք, որը ոչ միայն մեզ, ով թաղավոր, այլև երր քո առջև կարդան այս մատյանը, հայտնի կղառնա [ճշմարտացիությունը]:

898 Քանդի մենք չէինք հանդուրժի սրբերի ամեն մի արարքը զրքերի մեջ նշանակելու, այլ պատսպարվեցինք այս ավելի հեշտ ու զյուրիխնով՝ առաքելականով: Սրբերի բազմախուսն վաստակները թողեցինք, որպեսզի մանրակրկիտ ուստմենք կարեռագույնն ու օգտակարագույնը:

899 Աւստի և մենք այս կերպ ասացինք ոչ թե [ավելացնելու] Աստծու ընտրյալների սպատիվը, որոնք ամենապարծ և կենդանատուր խաչով ճանաշված հարդվեցին, այլ որպես քաջալերիշ օրինակ իրենց հոգեսր զավակներին և այն ամենքին, որոնք նբանց միջոցով սերնդեսերունդ աշակերտելու են, ըստ հոգնոր երգի խոսքերի, որ ասում է. «Այն որ մի անգամ պատվիրեց մեր հայրերին՝ ցույց տալ այս իրենց որդիներին, որպեսզի ճանաշի նոր սերունդը: Այն որդիները, որ ծնվելու են, պիտի ելնեն ու պատմեն իրենց որդիներին, որ հույսը Աստծու վրա դնեն, շմոռանան Աստծու գործերը և նրա պատվիրանները ընտրեն, պահպանը, որպեսզի շինեն իրենց հաւրերի նման**:

900 Որպեսզի նրանք իրենց Արարշին այսպիսի խոսք ուղղելով ասեն. «Եմք Տեր Աստվածը զու ես, և նա ասի նրանց՝ «Իմ ժողովուրդն եք դուք»:

* Սաղմ ՀՀ, 5—8:

** Ազա. Բ, 24:

ՀԱՄԱՌԱՋՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ներածականի և ծանոթությունների)

Ազարանգեղոս — Ազարանգեղայ Պատմութիւն Հայոց Աշխատութեամբ
Գ. Տէր Մկրտչեան և Ստ. Կանայեանց էջմիածին—Տփղիս, 1909։
Յուշարձան — Յուշարձան, գրական ժողովածոյ, Վիեննա, 1911։

Agathangelus — Agathangelus und die Akten Gregors von Agde, neu herausgegeben von Paul de Legarde, Göttingen, 1887.

Արք. Ազար. — Ազարանգեղոսի արարական նոր խմբագրությունը, Հրատ. Ա. Տէր-Ղեռդյան, Երևան, 1968.

Garitte — G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Rome, 1946.

Հունարեն Վարք — Ազարանգեղոսի Պատմության հունական նորահալտ խմբագրությունը (Վարք), թարգմ. հունարեն բնագրից Հ. Բարթիկյանի, առաջարան և ծանոթ. Ա. Տէր-Ղեռդյանի, էջմիածին, է. թ., թ-ժ, 1966։

Mapp — H. Mapp, Крещение Армиян, Грузии, Абхазов, и Аланов святым Григорием (Арабская версия). С.-Петербург. 1905։

Տաշյան — Հ. Տաշյան, Ազարանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին և ուսումնասիրութիւն Ազարանգեղայ գրոց, Վիեննա, 1891։

Ածոնց — H. Ածոնց. Арmenia в эпоху Юстиниана, С.-Петербург, 1908.

Մանանդյան — Հ. Մանանդյան, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության (Հատոր Ա, Հատոր Բ—մասն Ա,) Երևան, 1944, 1957։

Կարիւն — Կորիւն, Վարք Մաշտոցի, բնագիրը... թարգմանությամբ, առաջարանվ և ծանոթություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Ս. Աբեղյանի Երևան, 1941։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ազարանգեղոսի առաջարանը առեղծվածային է և չէ որիվ պարզ նրա էությունը։ Ուսումնասիրողները այստեղ նկատել են հակասություններ։ իսպում է Հեղինակի մասին որպես Շռոմեաթու, Շռոմեական և հունական գյորությանն հանոթի, որը եկել է Տրդատ թագավորի արքունիքը և զարձել բարտուղար, սակայն մի օֆի ներքե նա իրքն Գայ է ներկայանում։ Կամ ականատես վկա է Համարկում, երբ ասկում է, թե կարդացել է Թորգոմյան աղջի և Հայաստան աշխարհի մեջ բրիստոնեռոյունը տարածելու գրվածքը։

Բանե այս է, որ առաջարանը միատարր լի և հավանաբար այնտեղ կան որոշ շերտեր, գուցե և ան աղավագումներ։ Համենայն գեսս, լի ժխրտովում, որ առաջարանը օ դարսու Ազարանգեղոսի գրքին կից է եղել, մասնավանդ որ իր լեզվական հատկանիշներով բնագրից լի հեռանում։ Դասական մատենագրության ուսումնասիրողները (Նորայր Թյուզանդացի, Ն. Ակինյան) Աղարանցեղոսի ամբողջ բնագրի նաև միասին առաջարանը և Համարում են դասական գրարարով հորինված։

Ազարանգեղոսի հունարեն թարգմանությունը ունի մի ուրիշ առաջարան, նույնպես առեղծվածային, հետեւա, բովանդակությամբ։

«Նավարկողները հոժարակամ մտնում են ծովերի վտանգների մեջ, նավեր են պատրաստում և ծովի ալիքների վրա սուրույն հեռավորություններ։ Ոչինչ նրանց լի վախեցնում է իրենց կյանքը վտանգի են ննիարկում ցանկացածք եեղք բերելու համար Ամանց բաղաքները ուրանքի երով մատակարարելու համար և անապառ չեն քննում, ուրիշները ժարդանք վարդերի համար գինչե և նդկաց եռվէ ճակարկում։

Ես ևս ձեռնամուխ լինելով Հայաստան աշխարհի առևտրին, գրի առա եղած դեպքերը, Պարսից ու Հայաստան երկրներում պատահածները և նրանց միջն աւելի ունեցած պատերազմները

Երբ Պարթևները ուժեղացան, իրենց սահմանակից Պարսից, Հայոց ու Հնդկաց Բաղավորություններին, ինչպես նաև Մասրությաց պղղին հափառակեցրին հետևյալ կարդով՝ Պարթևաց կամ Արշակունյաց տոհմի ավագագոյն անդամը՝ հասակով շքեղ և արի, ստացավ Պարսից արքայական իշխանությունը, նրանից հետո երկրորդը ստացավ Հայոց թագավորությունը, երրորդը՝ Հնդկաց տերությունը, իսկ նրանցից չորրորդը վերցրեց մասրությաց Բագավորական իշխանությունը։ Այս էր Պարթևաց տոհմի կարգը։

Սկսենք պարթևների անկումից։ Վաղարշ Պարթևի որդի Արտավանը, որ աստղագուշակ էր, մի զիշեր նայեց աստղերին ու, հասկանալով նրանց խորհուրդը, ասաց իր լաղուճուն, «Աստղերի ընթացքը ցույց է տալիս, որ եմ մեկը ապստամիրի իր տիրոջ զեմ, հաջողություն կունենա և կաղթիւ Այս ասէլով քուն մտավ։

Նամիշտներից մեկը, որ գիշերները սպասարկելու համար նրանց առագաստի մոտ էր քնում, ելավ անմիջապես և հայտնեց գլխավոր իշխաններից Սասանի որդի Արտաշերին, որին նա տոփանքով սիրում էր։

Մտավ նրա տաղավարը և այսպես խոսեց. «Իմ սիրեցյալ Արտաշերը, քաց թող քունը քո արտեանուններից, զորացիր և քաջ եղիր, քանզի ծամանակն է գործելու Թագավորը, քննելով աստղերի ընթացքը, ասաց. որ եմ ծառաներից մեկը այժմ իր տիրոջը զեմ կանգնի, կհաղթիւ Արդ, եմ հաջողեցնես ձեռք բերել Պարսից թագավորությունը, ինձ կնության առնել չես մոռանա, ինչպես հաճախ խոստացել ես»։

Արտաշերը, նրա ձեռքերը իր աջով երկինք բարձրացնելով, ասաց. «Անավասիկ թող լսեն աստվածները, արևն ու հորը, օդն ու հողը, որ այսոր ենթ խորհրդակիցելու ևմ Պարսից ավագների հետ և շուտով քեզ տիկնության պատվին պիտի բարձրացնեմ։ Ապա Արտադուխտը զնաց արրայի տաղավարը ու գաղտնի իր մահճեց մտավ։

Արտաշերը ժողովի հրավիրեց Պարսից ու Ասորեստանի մեծամեծներին և հիշեցնելով, թե ինչպես պարթևները հափշտակել են իրենց իրավունքները, կոչ արեց զենքի դիմել ասելով, որ ավելի լավ է մեռնել, քան ին ծառայել անիրավ թագավորին։

Պարսիկ իշխանները ուրախությամբ ընդունեցին այս խոսքերը, քանզի կամ նույն էին թոլավիել պարթևների լուծը և ունենալ թնիկ պարսիկ թագավոր. «Դու եղիր մեզ առաջնորդու, — ասում էին Արտաշերին, — և մենք պատրաստ ենք հետևելու քո խոսքերին։ Նրանք Արտաշերի առաջնորդությամբ պատվիրակ ուղարկեցին Արտավան արքայի մոտ Զիկ և Կարեն զորավարներին։ Ներկայանալով մեծ արքային՝ այսպես խոսեցին. «Սուրճանակ ենք աւղարկված Պարսից երկրից, և եթե տրամադիր ես մեղ լսելու, աներկյուղ կպատմենք մեր առաքելության մասին, քանդի միշտ օրենք

է եղել ամեն զտանգից զերծ պահել պատվիրակներին։ Արտավան թագավորը հրաման տվեց ասելու, ինչ որ Կկամենային։

Այնժամ ասացին «Մենք՝ պարսիկներս, հավատացած ենք եղել, որ ծառաները պետք է հպատակ լինեն տերերին, իսկ թագավորը հավասարությամբ ու արդարությամբ իննամատար լինի նրանց։ Սակայն ինչպես կարող է նա անիրավությունները պատճել, եթե ինքն է շարիք հասցնում։ Արդ՝ մեզ հասցրած քո շարիքների պատճառով մենք որոշեցինք դուրս գալ քո իշխանությունից՝ ոչ թե հպատակությունից ձանձրանալով, այլ խուսափելով ապիրատ թագավորից։»

Զգաց Արտավան թագավորը իր թագավորության վերահաս կործանումը և, նայելով պատզամավորներին, ասաց. «Ես ինքս եմ այս շարիքների պատճառը, քանզի ձեղանից օմանց իշխանությամբ ու ավագությամբ մեծարեցի, այլոց հարստությամբ ճոխացրի, իսկ շատերին ազարակների ու կալվածների տեր դարձրի։ Ապա դուք փոխացեք կատարել ձեր խորհուրդները, և ես ձեզ ցույց կտամ, թե ինչպես կարեի է ընդդիմանալ թագավորին։ Գնացիք և այլևս այսպիսի նպատակի շծառայեք, թե չէ հենց ձեզ պահից կակսեմ վրեմ լուծելու։»

Երր այս րաները լսեցին, Զիկն ու Կարենը զնացին պարսից խորհրդի ատյանը և ամեն ինչ պատմեցին Արտաշիրին ու պարսից ավագանոն և ավելացրին նաև թադավորի հանդուզն գայրույթը, որ որոշել էր դիմագրել իշխաններին։ Իսկ Արտաշիրը բերել տալով Արտադուխտին՝ փակեց նրան ունեցվածքով հանդերձ ամուր դղյակում և ինքը պարսից ու ասորեստանցիների հետ կովի պատրաստվեց ընդեմ Արտավան մեծ արթայի իրազեկ լինելով, որ իր դեմ մարտի են պատրաստվում, Արտավան արքան ինքն էլ պատրաստվեց պարթեների հետ՝ ունենալով իր կողմը ոչ սակավ պարսիկ համակիրներ։ Առաջին ընդհարման ժամանակ երկու կողմից շատերը՝ պարսիկներ ու պարթեներ թագալգոր ընկան, սակայն Արտաշիրի կողմը զորացավ, երբ շատերը լքելով Արտավանին՝ Արտաշիրի կողմն անցան։ Երկրորդ անգամ ընդհարվելիս՝ պարթեներից շատերն ընկան, իսկ ինքը՝ Արտավանը, աճապարեց փախելի, սակայն մարտը շղաղաբեց։ Արդ՝ երբ տասներկու ամիս իրար դեմ ճակատեցին, երբեմն կովելով։ Երբեմն դադար տալով, ապա կովի ժամանակ Արտաշիրը ձայն տվեց Արտավան արթային ու ասաց... Թագուվորեց (նա) պարթեների մնացորդի, պարսից ու ասորեստանյանների վրա, ամեն ինչ լարեկարգությամբ ուղղուց և արդարության սիրող եղավ, քանզի ճիզ էր գործում գովության արժանի դառնալ այն բանի համար, որ կորզել էր Պարսից թագավորությունը։

Այս րոլոր անցքերը որ պատահեցին, Մեծ Հայքի թագավոր Արշակունու ականջը հասան, թե Սասանի որդի Արտաշիրը գորացած խլել էր Պարսից թագավորությունը և կորստյան մատնել երա եղբորը՝ Արտավանին։ Փուժկաններն ավելացրին, որ պարթեները խիստ հավանել են և նախընտրել Արտաշիրի թագավորությունը, քան երա համազգի ու արյան հարազատին, և որ լուսափույթ լքել են...»

Այս հատվածի լրիվ թարգմանությունը Հունարենից տես՝ Պ. Զարրհան-նալյան, Հայկական շին զգրություն, Վանեստրկ, 1953, էջ 134—191:

Հունական այս առաջարանի սկզբնական փոքր հատվածը, ուր խոս վում է Նավարեկության մասին, հայկական առաջարանի առողջին մռւի ամփոփումն է, սակայն մնացյալը բոլորովին նոր նյութ է Հայկական՝ ոչ մի չեռագիր նման նյութ չունի, իսկ Աղաթանգեղոցուի երկիր հունարեն աշխատագրերից, որոնք բնագրի միջնորդ պատահել են, միայն մեկը՝ Քողենթիայի Լավունտյան մատենադարանի գրչակիրը, ունի առաջարանց Մնացած բոլոր գրչագրերը սևու են և են մեջը կան ու աթանգեղոսի բուն սկիզբն է առաջարանից հնատ։ Հունական առաջարանի նյութերն անցել են նաև Մետարափրասայան խմբագրության մեջ։

Դազար Փարաբեցու ու Մովսես Խորենացու վկայություններից չի երեսվում, որ նրանք այսպիսի առաջարան տեսած լինեն Հայութ Փարաբեցին Աղաթանգեղոսի բնագրի բովանդակությունը տալու ժամանակ սկսում է. «Սա զնուազումն Բագաւորութեան Արշակունյայն Արտաւանայ...» խսրերու, որոնք գրեթե նույնությամբ Աղաթանգեղոսի սկզբնամասի կրկնութեան են. «Ընդ նուազել ժամանակաց թաղաւորութեանն Պարթևաց...»։

Ա. Յ. Գուշշմիդը իր ժամանակին ձեռքի տակ ունենալով միայն վերաբերյալ ֆլորենտյան օրինակը՝ ենթադրել էր, որ այս առաջարանը թարգմանչի կողմից է ավելացված Սակայն, ինչպես եղվեց, ։ նական ոչ մի տրիշ ձեռագիր այն լունի, ուստի չէր կարող լիրագմանչի ավելացրածը լինել, Այս պարզ է, որ այս հատվածը ավելացված է հունարենի թարգմանվելուց հետո Սիմեոն Մետարիաստեսի ամփոփումից առաջ։

Հունական առաջարանի խորհություն տարր լինելը նկատանգեղոսի բնագրի մեջ երկում է հնեց այն բանից, որ նրա հնդինակի համակրանքը Արտաշիր Սոսանյանի կողմն է՝ ընդդեմ Արշակունյաց, իսկ Աղաթանգեղոսի պատմության մէջ՝ ընդհակառակը, Հունական առաջարանի լիզուն ու ոճը նույնպես տարրեր են Աղաթանգեղոսի երկի հունարեն լիրագմանությունից։

Բ. Նեղողերն զտնում է, որ Հունարեն առաջարանի համար Արտաշիր ապստամբությանը վերաբերող նյութերը բաղկել են «Արտաշիր Բարական Կարնամակ» գրքից։ Հունարեն առաջարանում եղած բացահայտ հայկարանությունները նկատի ունենալով բանասերները լուսակացրել են, որ Կարնամակի և Հունական առաջարանի միջև եղել է մի հայկական ժիշանկյալ որինակ (տես՝ Կ. Մելիք-Օհանջանյան, «Ֆիրդուսի», Երևան, 1934, էջ 25—29)։

Այս առթիվ հարմար է բերել Կարնամակի համապատասխան հատվածը Հ. Թիրյարյանի թարգմանությամբ։

«Արտաւան զեղանի հարս մ'ունէր որ ուրիշներէն աւելի յարդի էր նման Արտաւանին ամեն տեսակ գործերը [նա] կը կատարեմ։

Օր մը Արտաշիր ախոռոտառնը նստած նուազարան կ'ածեր, կ'երգէր և էց զուարենամար աղջիկը դիտեց զայն ուսիրտը կ'ապուիցաւ անոր հետ այնուհետև Մտերմութիւն, ոչը և համաձայնութիւն պատուաստեցաւ անոնց

մեզ և ամեն գիշեր, մինչ տարաբախտն Արտաւան կը ննջէր, աղջի՛ց գաղանապէս Արտաւիրին մօտք կուզար և մինչն բամ (լուս) այնտեղ կը մնար. յետոյ Արտաւանին րովը կը դառնար

Օր մը Արտաւան Կրան զիտնըր և ախտարհամարները առջեց բեր. տւաւ և հարցուց ին—ի ոչ կը ունանէր ևլիսից և երկոտասանից հանգամանրէն և ասուղաց գիրըէն և ըսմացքէնու եւ քաղաքաց քաղաքաց տէրերու ժամանակի մասին և աշխարհի մարդոց և իմ իսկ և որդոցս և մարդոցս մասին ի՞նչ կը գուշակիրս:

Ախտարհամարց սարդարն (աւետ) ի պատասխանի ըսաւ. «Երկոտասանի ինկած են (ի վայր իտոնարհէւալ), և Որմզդի աստղը գարձեալ բարձրէ, և Վահրամ և Անահիտ դէսի ելինարցն կոյս և յԱռիւծ կը դիմէն և Որմզդի օնութեան փութալ կը թուին:

Ե Ե՛նութիւնն այսպէս կը ցուցանէ, որ նոր տէր և յաշաւոր մը պիտի Երհնայ և շատ տիրապէտներ պիտի մեռցնէ և աշխարհ վերստին մէկ միահեծան պետի մը ձեռք պիտի անցնիս:

ԱՅսոց մէջէն ուրիշ գլխաւոր մը յառաջ եկաւ ու ըսաւ. «Այսուես կ'երես վի որ ծառայ մարդ մը եթէ սա երեք օրուան մէջ իւր տիրոչմէն ապսամբէնով գլխաւոր վղրկութեան և իշխանութեան կը հաւսի և իւր ահրոց վրայ իշխան և յաղիշական կը լինիս:

Աղջիկը այս խօսքը, ինչպէս որ Արտաւանին ըսած էին, երբ գիշերը Արտաշրին բովի եկաւ, անոր հազորդեց:

Արտաշիր աշուլուրը իմացածին պէս միտքը դրաւ փախչիլ անկէւ, Եւաղջկան ըսաւ. «Եթէ քո սիրուն ուղիղ և անկեղծ է, եկ, սա երեք օրը շանցուցած, քանի որ ախտարաց գլխաւորը իւր տիրոչմէն վտարանցողին մեծուրին և թագաւորութիւն դուշակեց, փախչինք այս տեղաց և երթանք մինչն աշխարհի տիրներ. Եւ եթէ Աստուած և Արեաց աշխարհի բախտը զօրսափելինին մեզ որ պատինք և բարձր զիրքի մը հասնինք, այնպէս ընեմ, որ աշխարհին մէջ քենէ աւելի բարեբաստիկ մեկը զգտնուիս:

Համաձայնեցաւ աղջիկը և ըսաւ. «Աղաւատէ զիս և ինչ որ հրամայես կը կասարեմու:

(Լուսաբացին) մօտ աղջիկը վերստին իւր տեղը՝ Արտաւանին բովը դւրձաւ և պիշերը, մինչեւ Արտաւան բնացած էր, նորա գանձսրանէն հնդիկ սուր և ոսկի թամր և կամար մեծասարտ և լագ ոսկի և բաժակ ուինի լի ակամբը և դրամ ու զենար բազում յոյժ և զրահ և շքեղ ասպազներ և այլ շատ բաներ վերցնելով Արտաշրին բերաւ:

Արտաշիր Արտաւանի նմոյներէն օրը եւթանառուն հրասանգ ճամբար կարող երկու ձի թամբեց, միոյն վրայ ինք նստաւ և միւսոյն վրայ աղջիկը հեծցուց և Փարսիստանի ճամբան բանհցին և շտանլաւ կ'երթային:

Արտաւան իսկոյն շորս հաղար զօրք սպառազինէց և ի Փարս Արտաշրի

ետևէն պնդեցաւ, և օրը կծոօթ եղաւ տեղ մը հասան, որ Փարսի ճամբան անկէ կանցնէր:

(Արշակունի արքան իմանում է երկու փախստականների մասին)

Արտաւան երբ որ առ այսպէս լսեց ետ դարձաւ և վերստին իւր տեղը զետք:

Եթու այնորիկ գունդ մը կազմեց և իւր որդույն հետ Փարս ուղարկեց Արտաշիրը բռնելու:

Իսկ Արտաշիր ծովեղերքի ճամբան բռնեց:

Յու մինչեռ այսպէս կը յառաջանար Փարսի մարդիկներէն մի քանի Հոգի որ Արտաւանէն դժգո՞ւ էին իրենց բոլոր ունեցածները և իրենց անձերը Արտաշիրին առջնը գրին և անոր հնազանդութիւն և ծառայութիւն յայանցին:

Երբ Ռամեշն-Արտաշիր ըսուած տեղը հասաւ Արտաշիր Բանակ անուն Ճեծիմաստ մարդ մը որ Արտաւանի ձեռքն փախչող սսլաններէն մին էր և այնտեղ բռնակութիւն Քաստատած էր, եկաւ յարեցաւ Արտաշիրին իւր վեց որդուցը և բազում քաջ սպայից հետ:

Արտաշիր կասկածու էր նորա մասին, թէ մի գուցէ Արտաւանի կողմէն վինթ բռնելու ապապրուած լինի:

Եթոյ Բանակ Արտաշիրն բովը եկաւ, երդում ըրաւ և ալպակումանութիւն տուաւ, որ— «Ճորշափ կենդանի եմ ես և որդիքս» քո հրամանէն գուրս չենք կելէրու:

Ուրախացաւ Արտաշիր և հրամայեց որ այն տեղ աւան մը շինուի որ Թամեշն-Արտաշիր կոշուեցաւ (անդորրավայր):

Բանակը այրումիոյն հետ այն տեղ թողուց և ինք գէպի ծովելով փութաց:

Երբոր ծովը աշքովը տեսաւ Աստուծոյ փառք տուաւ և աւան մը հիմնեց Արտաշաւուխա անուն և տասը վրամական կրակ ծովու մօտերն հրամայեց հաստատել և անկէ Բանակին և այրումիոյն մօտը եկաւ և զօրք գումարելով Ատր-Հրուրայ մեհեանը օւխտի գնաց և անկէ յաշողութիւն խնդրեց և Արտաւանի գեմ պատերազմի ելաւ և Արտաւանի բոլոր զօրքը շարդելով դանձ, հարստութիւն, անասուն, կամ կարասի աւարեցին և ինք Ստահր նոտաւ:

Յու Կրմանէն և Մակրիստանէն և ի կողմանց կողմանց Փարսի անհամար զօրք ժողվեց և պատերազմի զրկեց Արտաւանի վրայ:

Չորս ամիս որ մարտ և ջարդ կար անխնայ: Արտաւան ի կուսից կուսից ինչպէս ի Հուգեսէ, Պուրաւանդէ, Դայլամանէ և Բաղաշխարկարէ զօրք և եթ ուզեց: Յու սրովհետեւ Կայեանց փառքը Արտաշիր հետն էր՝ Արտաշիր լաղթող ելաւ:

Արտաւանը պահնեց և եռոր բոլոր ինչը և Գարստութիւնը Արտաշիրին ենոքը անցաւ և Արտաւանին զուստրը կին առաւ և գարձեալ Փարս եկաւ և Արտաշիր-Խորայ ըսուած լահաստանը լինեց: Մօտերը մեծ վիր (գուր, նոր, վիճ) մը փորել տուաւ և լորս առուի զուր անկէ վիժեցուց և (Վոտմա-

կանյ կրակն այնտեղ Պաստասեց (Նստեցուց) և ստուար լեռ մը սկզբել աւալով մարուր չուր անիէ յորդեցուց և բազում գիւղեր և դաստակերտներ շնչուց և շատ Վուամական մեհեաններ հրամայեց այս հիմնել:

(Արտաշիր Բարական Կարնամակ, Պահաւության թարգմանեց Հանողիր ծանօթութիւնամբ դօքթ. Յ. Թիրեարեան, Փարփա, 1907, էջ 3—11):

Սկամանդեղոսի Վարք կոչված խմբադության հունարեն բնագրի հրամատարության առթիվ Ժ. Գարիտը մանրամասն համեմատելով նրա և հունական վերոհիշյալ առաջարանի լեզվական հատկանիշները ակնրախ նմանություն է զանում. սակայն զգուշանում է եղբակաղություններ անելո Այս հարցի շուրջը ն. Ակինյանը որոշ և բաղադրություններ է անում և նկատի ունենալով, որ Աղաբանզեղոսի այս խմբագրության (Վարք) հունական թարգմանությունը սկիզբ չունի, այն տեսակետն է առաջ քաշով, թե հունական Ազաթանգեղոսի լավքենալուան դրազդում եղած վերոհիշյալ առաջարանը (Արտաշրի ասյաստամբության մասին) աւտոնկից է հանված (Արտաշիր Բարականի վեպը յունարէն Ազաթանգեղոսի մէջ և Ս. Գրիգորի նորագիտ յունարէն վարքը. Հանգէս Ամսօրեայ, 1947, էջ 567—581): Այս տեսակետը ուժեղ կավանների կարէք է զգում:

Վիւննալի կրինակիր օրինակը որու տարբերություն ունի այս տեղում.

«...[Ընդ էլլակի հանապաղորդեալք Երթեւեկն տարուցեկիալ վաճառովք զիսորք մանունս յարդել եւ Էաշաք ծւ թնիւրս բազմացուցանելով վասն այսորիկ իսկ ընդ ծաղկաձեւ արիսն բազմութիւն համատարած ծովուն լնդիսառեալք շահատակիցեն ուշ ըստ անհաջող համի այլ վարդիլ աւուն վարելու բռնալիքաւալք ի վերայ յործանա. աճախաւտարած լախացելոցն զանդաշիցեն վասն աւզուտն գտանելոյ...» Ցուշարձան, 72—73):

Թարգմանության մէջ մուցքել ճնք ռվարսիչ օգուն արտահատությունը, որն ավելի արամարանական է, բայ պարի: օգուն:

3 Այս պարբերության խոսքերը ակնարկում են Աղաթանգեղոսի ազրյունները (Մ. Արեգյան, Երկեր, Գ., 182): Յ զարդ Շեղնակը ձեռքի տանունցել է ամենից առաջ հայոց գարձի սրամության Պ դարձում զգված նախնական հիմրագրությունը:

Ազաթանգեղոսի համար բազմաթիվ աղբյուրներ են նշվում հայագիտական գրականության մեջ: Գ. Տեր-Մկրտչյանը հիշում է Գորհայի և Շամոնայի ասորական վկայաբանությունը և Արքահամ Խոսսովանուլ: Վկայաք Արևելիցը (Ազաթանգեղոսի աղբյուրներից, Վաղարշապատ, 189), էջ 3—62), Ն. Ակինյանը զանում է, որ Ազաթանգեղոսի պատմության մէջ Դրիգոր Լուսավորչի վարքը ձևած է Ս. Արեկելիսի վարքի հետևողությամբ (Քննութիւն վարուց Ս. Արեկելիսի Յերապօլսոյ եպիսկոպոսի Հանդէս Ամսօրեայ, 1913, էջ 513—526), սակայն այս տեսակետը դընունում Պ. Պետերսց (Revue des Etudes Arméniennes. 1, I, 1920/1921 թ. 385—387): Ակինյանը և նաև այլ Ազաթանգեղոսի վկայաբանությունից (Վկայագլածքներ աւելի Կյուրեղ Երաւաղեմացու վկայաբանությունից (Վկայա-

բանութիւն սրբոյն Կիւրդի (Կիրակոսի) և մօր նորա Աննայի, Ազաթանգեղոսի աղջուրներէն, Հանդէս Ամսօրեայ, 1948, էջ 129—135):

Ազաթանգեղոսի պատմության մեջ առատորին օդաազործված է Աստվածաշունչը, որից շատ վկայություններ կան: Հ. Գաթրճյանը մատնացույց է անում, որ Ազաթանգեղոսի մէջ կան Բարսեղ Կեսարացու պատարագից հատվածներ, թէն այլ պատարագներ ևս ծանոթ են եղել հեղինակին (Սրբազն պատարագամատոյցք Հայոց, Վիւնա, 1897, էջ 90—91):

Ազաթանգեղոսը մերտ աղերս ունի Կորյունի հետ, ընդ որում բանասերների մեծ մասը համոզված է, որ Ազաթանդեղոսի իմբաղիրն է բաղել Կորյունից:

4. Պարթևների թագավորության վերանալու թվականն է 224 և բնականաբար չէր կարող Տրդատ Գ-ի հոր, Խոսրով Բ-ի օրոք տեղի ունեցած լինելը Ազաթանգեղոսի սույն հատվածում վիպական տարրի ներթափանցման պատճառով որոշ շփոթություններ կան:

Թ դարի վերջում և Դ դարի սկզբին Արշակունյաց թագավորությունը Հայաստանում դարձել էր ժառանգական և Վաղարշ Բ-ին հաշորդել էր նրա որդի Խոսրով Ա (մէռ. 216), Սրա օրոք սկիզբ առաջ Սասանի բոռ Արտաշիր Պապականի պարտարը Արտավան Արշակունու դեմ, որ Խոսրովի որդու Տրդատ Բ-ի (216—252/3) օրոք վերջացավ Պարսկաստանի Արշակունիների պարտությամբ: Արտաշիր Սասանյանը լինամական վերաբերմունք ունեցավ զեսի ՄԵծ Հայքի թագավորությունը, որովհետև Հայուստանը Սրբակունիների երկրորդ թագավորությունն էր և այստեղ էին ապաստանել Արտավան Ե-ի որդիներն ու Սասանյաններին հակառակորդ իշխանները:

Տրդատ Բ ետ մղեց Արտաշիրի առաջին հարձակումը Հայաստանի վրա, որը նա կատարել էր Մարաստանը Նվաճելուց հետո 223 թվին: Ապա հայերը Միջագետքում մասնակցեցին Հռոմեացիների մղած Կոիվներին, ներխուժող պարսիկների դեմ: Որոշ դադարից հետո Արտաշիրը 237/38 թվերին վերստին հարձակեց Միջագետքի վրա և գրավեց Մծրինն ու Խառանը: Պատերազմը շարունակեց նաև Արտաշիրի որդի Շապուհ Ա (241—272), որը երկար պայքարից հետո կարողացավ 252/3-ին նվաճել Հայաստանը, իսկ Տրդատ թագավորը հնուցավ արեմուտք:

Տրդատ Բ-ի պարտությունից հետո Հայաստանի զահին նստեց Արտավազդ (252/3—272/3): Նրանից հետո ՄԵծ Հայքի թագավորությունն անցավ Խոսրով Բ-ին, որը կարծվում է, թե Տրդատ Բ-ի որդին էր (Սաննդյան, Հա. Բ, Ճ, Ա, էջ 99): Ազաթանգեղոսի այն տեղելությունը, թե Հայոց Խոսրով թագավորը արշավել է Պարսկաստանի խորքերը, հավաստի հիշողություն է: Խոսրովի սպանությունից հետո մանուկ Տրդատին տանում են արևմուտք: Վերջապես 298 թվականին Հաղթական Հռոմեացիք դաշինք են կնքում Սասանյան Ներսենի հետ, և ՄԵծ Հայքի թագավորություն զահին հաստատուն կերպով նստում է Տրդատ Գ, որի օրոք Հայերն ընդունեցին թրիստոներությունը:

Ինչպես տեսնում ենք Ազաթանգեղոսի տեղեկությունները թեն խառն և

Վիպական տարրերով և որոշ չափով շփոթ են, այնուամենայնիվ զուրկ չեն պատմական արժնություն Աղաթանգեղոսի մոտ Գ դարի սկզբին ալրող Խոսրով Ա ու որդին՝ Տրդատ Բ մասամբ միաձուլված են դարի վերջում ապրած Խոսրով Բ-ի և որդի Տրդատ Գ-ի հետո:

Այս առթիվ հարմար է տալ Հայաստանի հըմանոս Արշակունիների ժամանակագրական ցուցակը (հիմնականում ըստ Հ. Մանանդյանի):

<i>Տրդատ Ա</i>	66—75
<i>Սանատրուկ</i>	75—110
<i>Աշխաղար</i>	110—113
<i>Պարուամասիր</i>	113—114
<i>(Հոռմեական նվաճում)</i>	
<i>Վաղարշ Ա</i>	117—140/4
<i>Սոհենս</i>	140/3—161
<i>Պակուր</i>	161—163
<i>Սոհեմոս</i>	164—180
<i>Վաղարշ Բ</i>	180—191
<i>Խոսրով Ա</i>	191—216
<i>Տրդատ Բ</i>	216—252/3
<i>(Արտավազի Դ</i>	252/3—272/3;
<i>Խոսրով Բ</i>	272/3—287
<i>(Պարսկական նվաճում)</i>	
<i>Տրդատ Գ</i>	298—330

(Տե՛ս Համեմ C. Toumanoff, The third-century Armenian Arsacids Revue des études arménienes, t. VI 1969, p. 233—281).

5. Ստանը արար. Խսուխոր. պարսից Աքեմենյան ժամանակաշրջանի մայրաքաղուք Պերսեպոլիսի կողմէն էր:

6. Ալտիաց դռներ. միջնադարում այսպես էր կոչվում այժմյան Դարիալի Կիրճը Կոլկասյան լեռներում:

7. Ինչպես այժմ պարզված է, Աղաթանգեղոսի երկի նախնական բնագործում պետք է եղած լինէր ողջորաց պահակինս, սակայն գրի սխալով դեռ շատ վաղուց դարձել է ոգիբոր պահակին, Այսպես է եղել հենց Զգարի վերջին, երբ Բարդմանովել է հունարենի:

Նորահայտ արարական թարդմանությունը նույնական ունի շքեւաւելաձեր (արար. Աղաթ. 2)

Աղաթանգեղոսի գրեթե բոլոր ձեռադրում այս վերջին ձեզ կատարում է, որ խառնուրդ է ուգրական և ասկական ցեղերի Դ դարերում և կարծով է, որ խառնուրդ է ուգրական և ասկական ցեղերի Դ դարերում շարժվել են դեպի արևմուտք քախչելով զոթերի հետև Ե դարում նշանակուր էր նրանց պետք՝ Աղիլլան, որը մեծ տագնապ պատճառեց արևմտյան հոռմեական կայսրությանը և Բյուզանդիային Հոների մի ճյուղը հաստատված

8. Հոներ. աշու ցնդախումբը հանդես եկավ Բ—Դ դարերում և կարծով է, որ խառնուրդ է ուգրական և ասկական ցեղերի Դ դարերում շարժվել են դեպի արևմուտք քախչելով զոթերի հետև Ե դարում նշանակուր էր նրանց պետք՝ Աղիլլան, որը մեծ տագնապ պատճառեց արևմտյան հոռմեական կայսրությանը և Բյուզանդիային Հոների մի ճյուղը հաստատված

Էր Հյուսիսային Նովկաստամ և պայծարի մեջ էր Սասանյան Պարսկաստանի գլուխը:

9. Լիիների (Լիինք, Եիշտ ձեռ և Լիինիք) թեղը ապրում էր Կախեթի (Վրաստան) Լիինիք աղգագավառում: Հայտնի էր Լիինաց քաղաքը (Վ. Օրեմյան, Հայաստանն ըստ Աշխարհացուցիքի, Երևան, 1963, էջ 54—55): Ճիղբերի թեղը ապրում էր Կովկասյան լեռների ճիղբք գավառում (Կախեթից Հյուսիսի): Կասպերը կովկասյան թեղին են, որոնք ապրում էին Աղվանքի արևելյան տափաստաններում, ծովի ափին, որը նույնական կոչվում էր Կասպից ծով: Առաջին անգամ Եիշում են Ճերողդոտոսի պատմության մեջ:

10. Թուշանաց թագավորությունը տարածված էր Միջին Ասիայում, այժմյան Աֆղանստանում և Հյուսիսային Հնդկաստանում: Իր ժաղկման շրջանն ապրեց Ա—Պ դարերում: Վաշկատուն թեղերի մի խումբ էր, որի զինավոր թեղը կոչվում էր Թուշան և հունա-քաղաքական թագավորության անկումից մեկ զար հետո թագավորություն կազմեց: Քարարայից Պ դարում և վերածվեց մանր թագավորությունների: Թուշանների օրոք բուղդայականությունն սկսեց Հնդկաստանից և երթափանցել Միջին Ասիա:

11. Փոսադու լեռնանցքը չտնվում է Կարինից դեպի Կողոնիա տանող և անապարհի վրա, Գայլ գետի ակունքների մոտ:

12. Գոթեր. գերմանական թեղերի մի խումբ է, որը Թ դարի վերջում շարժվեց գեպի Հարավ-արևելքու: Գոթերը պայրարել են հոռմեական կայսրության գեմ: Կային արևելյան քոթեր (օստգոթ) և արևմտյան գոթեր (գեստգոթ):

13. Դիոկղետիանոս կայսրը (284—305) իրեն գահակից էր ընտրել Մաքսիմիանոսին և երկուսն էլ օգոստոս տիտղոսն էին առել: Նրանք մեծական տեղապահ՝ կեսար ընտրեցին Թլորոսին ու Դալերիոսին, և այսպիսով ստեղծվեց լորրորդապետությունը: 803 թվին Դիոկղետիանոսը իշխանությունից քաշվեց. և սկսվեց կատաղի պայքար իշխանության համար: Կեսար Գալերիոսի մահվանից հետո պայքարում էին: Որևէ օգոստոսներ՝ Լիկինիոսը, Մաքսիմիանոսը և Կոստանդիանոսը (Կոստանդին):

Լիկինիոսը (250—325) Հայտնի էր սրպես զորավար և կայսերակից էր ընտրվել Դալերիոսի կազմից: Որի մահվանից հետո գաշնակցեց Կոստանդիանոսը և կայտեցին բոլոր Հակառակորդներին և 813 թվականին երկու կայսերերը իշխանության մեջ: Սակայն 324-ին Կոստանդիանոսը հաղթեց Լիկինիոսին և սպանել տվեց երան:

Կոստանդիանոսը (308—337) գարձավ միահեծան կայսր և ամրապնդեց հոռմեական կայսրությունը՝ եսոր Մայրաքաղաք ընտրելով Բյուզանդիոնը (Կոստանդնուպոլիս): Միլանի Հրովարտակով (318 թ. ըրիստոններությունը ազատ կրոն հռչակվեց:

14. Տրգատ Գ Արշակունին Հայոց պատմության մեծ գեմքերից է եղանակույն գնահատվել է, թէ միջնադարյան պատմիչների, թէ նոր տառմնասիրողների կողմից:

Խոսրով թ-ի սպանությունից հետո նա տարվել է արևմուտք և հոռժեառ Հայկական զորքերի հաղթանակից հետո վերստին նվաճել Հայոց թագավորությունը:

Տրդատ Գ-ի (298—330) ժամանակաշրջանին վերաբերող մի շարք հունարեն արձանագրություններ են գտնվել Հայաստանում: Տիգրանակերպարի պարիսպների վրա գտնվել է մի արձանագրություն, որը Յ. Մարկովարտը, Հ. Մանանդյանը և վերջերս Գ. Սարկոսյանը (Գ. Սարկոսյան, Տիգրանակերտ, Մօսկվա, 1960, ստ 85) գտնում են, որ Տրդատ Գ-ին է վերաբերում: Դա մի հրաման է՝ ուղղված քաղաքի բնակչներին, որոնք, ինչպես երեսում է, նախապես ապստամբվել էին: Ապարանում գտնված հունարեն արձանագրության մեջ ոՄեծ Հայքի Տրդատ Մեծ արքան մի Գնրունի իշխանի պարգևում է նիգ քաղաքը (Մ. Ռոստովց, Անարանская надпись царя Тиграна II, С. П. 6,—1911): Հ. Մանանդյանը Տրդատ Գ-ին է վերագրում նաև Գառնիի արձանագրությունը տաճարի շինարարության մասին, ուր հիշվում է, թե Տրդատ Մեծը, Մեծ Հայքի արքան, կառուցել է այն և այլին Գառնիի արձանագրության տարբեր վերծանումներ են եղել բանասէր-սպատամբանների կողմից. ըստ որում մեծ թվով ուսումնասիրողներ այն վերադրում են նաև Տրդատ Ա-ին: (Կ. Վ. Տրեվեր, Օчерки по истории Египетской Армии и. Ա. Լ., 1953, ստ. 174—211):

Տրդատ Գ-ի ժամանակ գլուխ նրա նախնիների օրոք համայնքների ձեռվով, Հայաստանում տարածված բրիստոնեությունը պետական կրոն դարձավ: Փոքր Հայքի ու Կապաղովկիացի կողմերից եկած Գրիգորը և նրա հւտուրդները նաև Հայածիւցին ու չարչարվեցին, ապա Գրիգորը ընդունվեց որպես Հայոց կալողիկոս: Թրիստոնեության հաղթանակը Հայաստանում պատճառաների մեծ մասի կողմից վերագրվում է Պ դարի սկզբին Եղանական պատմիչ Սողոմենոսը հետեւյալ վկայությունն է տալիս Հայաստանում բրիստոնեության հաստատման մասին, ուստի անդեկացած, որ Հայերն բնկունեն են բրիստոնեությունն ավելի առաջ լրան վրացիներն ու ուրիշները: Ասում են, որ Տրդատը, որն այս ժողովրդի առաջնորդն էր, մի ինչ-որ ասովածանշան հրաշքի պատճառով, որ նրա տան մեջ պատահել էր, իսկույն դարձել էր ինը քրիստոնյա ու նաև հրամայել էր, որ քարոզության միջոցով այդ կրոնն ընդունեն բռոր իր հպատակները (Մանանդյան. Հտ. Բ, մ. Ա, էջ 126):

Ինչպես ընդունված է պատճառիտության մեջ, Հայաստանը առաջին երկիրն էր աշխարհում, որ ոչ միայն ապատ դարձեց բրիստոնեությունը, այլև պետական կրոն հռչակեց այն: Հոռմեական կայսրությունը 313 թվականի Միլանի հռովարտակով քրիստոնեությունն ընդունեց որպես հանդուրժելի կրոն, իսկ պետական կրոն դարձավ սոսկ դարի վերջում:

Տրդատ Գ-ը դաշինք կնքեց Հռոմի Կոստանդիանոս կայսեր հետ, որն առավել ես սերտ դարձրեց Հայաստանի մշակութային հարաբերությունները հռոմեական կայսրության երկրների հետ:

Տրդատ Գ-ը զորավար էր և քաղաքագետ։ Նա կայունություն մտցրեց Մեծ Հայքի թագավորության մեջ և վերահստատեց նախարարական տիրութների ահճմանները, որի մասին վկայում է Աղարանի վերոհիշյալ արձանագրությունը։ Սկիզբ առավ Հայոց պատմության մեջ մի ժամանակաշրջան՝ որը պարարտ հող նախապատրաստեց գրերի գչուտի և հայ մատենագրության ստեղծման համար։

15. Երեղ (կամ Երիզա) ավանը այժմյան Երզնկա քաղաքն է Կարսո նահանգի Եկեղաց ղափառում։ Հեթանոսության շրջանում այսուղ գտնվել է Անահիտ դիցունու հողակավոր տաճարը։

16. Գայլ գետ. վտակ է, որը թափվում է հիրատ վետք մեջ՝ Երզնկա քողաքի մոտ։

17. Գրիգոր Լուսավորչի ծագման մասին Ազաթանշեղոսի տառեր իշխագրությունները և նրանից քաղած կամ նրա հետ աղեցս ունեցող մառա պատմինները տարբեր վկայություններ են տալիս։ Ըստ Աղաթանշեղոսի Հայոց պատմության նրա հայրն էր Անակ Պարթիկը, պարթիկ կոնց չոր տռնմից, այսինքն ցեղակից Տրդատ Արշակունուն։ Անակի տռնմի եւորդվելուց հետո դայակները Գրիգորին տանում են Կեսարիա, որտեղ բարիստոնեական ոգով դաստիարակվելուց հետո վերադառնում է Հայաստան։

«Տարթիկ Պատմության» մեջ, ինչպես նաև Մովսես Խորենացու գրքում է, որ մի այլ տարրերակի Բուրդար անունով պատուի գաղաքանը վախճան էր Գրիգոր (Կապադովիկիա) և Կապարիայում ամռուացել Սոփիի հետ, որը մեծատուն Եվթաղի քոյրն էր։ Վերցնելով իր կնոշը՝ Բուրդարը կամեն է էր գնալ Պարսկաստան, բայց ճանապարհին կանգ է տոնում Վաղարշաւատում և Սոփիին դառնում է Գրիգորի սանտուն։ Անակի տռնմի կոտորվելուց հետո Բուրդարը վերցնում է մանուկ Գրիգորին նրա մոր՝ Ոգուհու մոտից և փախցնում Կապադովկիա։ Գրիգորին ուսուցանում են հունական ու ասորական զալորդյուններ Նա ամուսնում է աստվածապաշտ Դավթի զառիկը՝ Մարիամի հետ և ունենում երկու որդի՝ Արիստակիս ու Վրթանես անուններով (Պատմութիւն Տարօնու, Երևան, 19-ր, լ. 69—72)։

Եթե առաջին տարրերակի մեջ Գրիգորը Կապադովկիայում միայն զաստիարակվել էր, ապա ըստ Երկրորդ տարրերակի՝ նա զեռ Հայաստանում ունեցել է Կապադովկացի ստնտու, և նրա կապը Կապադովկիայի հետ աշխելի է շեշտված։ Նկատի ունենալով այս փաստը, ինչպես նաև Գեորգ Անոքու այն վկայությունը, թե Գրիգորը հռոմեացի էր. Ն. Աղոնցը Եղրակացնում է, որ Գրիգորի ծագումը պետք է փնտրել Փոքր Հայրի կողմերում (Grégoire l'Illuminateur et Anak le Partie. Revue des Et. Arm., t. VIII, 1828, p. 233—215), որի հարեան Կապադովկիայում նույն տառեռով և գրեթե նույն ժամանակ ապրել են Եկեղեցու Երևելի հայրեր ու մասենողիրներ (Գրիգոր Նյուացի, Գրիգոր Նազիանդացի)։ Ահա Գեորգ Ասորու խռոքերը։

«Գրիգորիսն այն որ աշտկերտեց զՀայս, ով ուսումնասէր հռոմայեցի

էր ազգաւ, ինչպէս որ յայտնի է իւր կենա ագրութեան խօսքերէն, բայց տղայութեան ժամանակ Հայոց աշխարհն եկաւ կամ Դիռկղետիանոսի քրիստոնէից դէմ յարուցած հալածանաց կամ ուրիշ մէզ անծանօթ պատճառաւ. Եւ երբ Հայոց երկրին մէջ սնաւ և ուսաւ անոնց գիրն ու լեզուն՝ իւր անունը տարածուցեաւ...» (Տաշլան, 4):

Գրիգորի ծագումը պարթև թագավորական տան հետ կապելու ձգտման նպատակն էր, ըստ Աղոնցի, նրան աղղակից դարձնել արեւելքում այնքան հոչակված և Հայոց գաճին էլ տիրացած պարթև Արշակունիներին. Այս հւերցում նկատվում է իրանական վիճական զրույցների աղղեցությունը, և Ն Աղոնցի կարծիքով Ազարթանգեղոսի պատմական մասը պարսիկ վիճականական դրականության աղղեցության ևնթակա է:

Ինչ վերաբերում է պարթևի ձևորով հոսրովի սպանության փաստին, առաջ դա պատմական հիմքեր ունի Եղիշն հիշում է, որ երբ Հայոց նախարարական—Նկեղեցական ժողովը Թուղոս կայսեր նամակ ուղարկեց, աշխատեղ ասված էր Եկան որոյ և նախնին մէր Տէղատիոս յիշելով զառացին սկրն ձեր, որ ի աղայութեան վիճակութեալ ի հայրասպան մարզափղողող հօրեղացն իւրոց՝ ապրեալ. սնաւ յերկրիդ Յունաց...» (Եղիշէ, Երեան, 1957, էջ 72):

Ուրիմն, իւրեք Տրգատի հայր Խոսրովը սպանվել էր Արշակունու ձեռքով և այս իրական գեղաքը միահյուսվել էր այլ տարրերի հետ ու ստեղծել Գրիգորի պարթևական ծաղման պատմությունը:

Պատմական հիմք կարող է ունենալ նաև երկու պարթև եղբայրների (Անսակի ու Եղիշը) գաղթը Հայաստան, քանզի իրոք Պարսկաստանի Արշակունյաց անկումից հետո Հայաստան զաղթեցին պարթև ազնվականներ, որոնց մէջ էին Հնաց Արտավան Ե-ի որդիները, Ենթաղրվում է, որ ահա ալդ ժամանակ Հայաստան եկան Կամսարականներն ու Մամիկոնյանները (Կ. Արևան, Etudes historiques sur le peuple arménien, Paris, 1909 թ. 139 Մանանդյան, հտ. Բ-մ, Ա, էջ 69), ինեւ այս հարցերը գեռուսումնասիրման կարոտ են:

Գրիգորի տոհմի ծագման մասին ավելի հոտակ պատկերացում է տաւիս նորահայտ հունարեն Վարքը՝ Գրիգորին դիմելով Տրդատ թագավորն առաւ տառած է. «Երբ դու ի՞ն մոռ Եկար, ասացիր, որ Հայոց աշխարհի առաջիններից ես, բայց այժմ յի երկում ոչ քո աղնվական ծագումը, ոչ էլ քո [հոչակված] Երիքը...» (Հունական Վարք, 2). Բացի սրանից, այլ տեղում ևուն Հունարեն Վարքը հիշում է, որ Գրիգորի ազգականները գըտնը վում էին Կեսարիայում:

Այս բոլորից կարելի է եղբակացնել, որ Գրիգոր Լուսավորիչը հայ իշխանական երեւելի տնից էր և հավանաբար Փոքր Հայքի որևէ իշխող տառմից:

18. Հայկական ձեռագրերի շաւուրն լորրորդից արտահայտության դիմաց Վիեննայի կրկնագիրն ենի շաւուրն երրորդից (Յուշարձան, 111).

արը կա նաև այլ ձեռագրերում, ինչպես նաև հունարեն ու արաբերեն թարգմանությունների մեջ:

19. Ըստ Հայկական ձեռագրերի, Գրիգորը նոր վիրապում մնաց «ամս երեքտասան»։ Սակայն Վիեննայի կրկնագիրն ունի «ամս չորեքտասան» (Ցուշարձան, 115), որը կրկնված է նաև հունարեն ու արաբերեն թարգմանությունների մեջ։

20. Տրդասի հորովարտակի խորապրում եղած «առ շինականս» բառերը լուսն Վիեննայի կրկնագիրը (Ցուշարձան, 122—123) և հունարեն ու արաբերեն թարգմանությունները։

21. Հոփիսիմանց վկայաբանությունը ինքնուրույն դիրք ունի Աղաթանգիրուի տուրուչ լուսպի մեջ։ Ուշագրավ է Հ. Տաշլանի այն վարկածը, թե Հոփիսիմյու կույսերը հավանաբար Փոքր Հայքից պետք է Նկած լինեն (Տաշլան, 137). այսինքն ոչ թե Հոռոմից էին եկած, այլ հոռոմների կողմից։

Քրիստոնեությունը շատ վաղ զրշանից տարածվել էր Փոքր Հայքում և նրա քաղաքներում (Մշկատինե, Սեբաստիա) կային ուժեղ համայնքներու հնչպես Գրիգոր Լուսավորի, այնպես էլ Հոփիսիմյան կույսերի ծագումը ըստ Երեւույին պետք է Փոքր Հայքի սահմաններում փնտրել, որի հայ աղքաբնակչությունը հունական բարքերին ևնթարկված լինելով՝ հոռոմ կը համարվում րուն Հայաստանի հայության կողմից։

22. Զեռապրերի մի մասում կա «ապա յետ երկուց աւուրցն», իսկ մյուսների մեջ «ապա յետ երից աւուրցն»։ Գ. Տեր-Մկրտչյանը և Ս. Կանայանցը նախընտրել են առաջին ձեզ, սակայն Վիեննայի կրկնագիրը (Ցուշարձան 129) ունի երկրորդը։ Հունարեն և արաբերեն թարգմանությունները նույնպես ունեն՝ երեք օր։

23. Անազրում դրված է՝ դար, որը նշանակում է թե՛ հարյուրամյակ, թե՛ հաղարամյակ և կամ որեւէ երկար ժամանակամիջոց։ Միշնադարյան մատնադրության մեջ երրեմն Ազամից մինչև Նոյ դրվում է ութ դար, իսկ Երրեմն Ազամից մինչև Թրիստոս վեց դար և յոթերորդը՝ Նրանից հետո մինչև աշխարհի վախճանը (Նոր բառովիրք Հայկաղեան լեզուի, Վենետիկ, 1836, Ա, 603)։ Որպեսզի հասկանալի լինի, թարգմանել ենք դարաշրջան։

24. Ծուշանը բարելացի մեծատուն հրեա Հովակիմի կինն էր, նշանազրը իր քեղեցկությամբ, երկու ծեր դատավորներ ցանկացան նրան, բայց պարկեցա կինը մերժեց, և ծերունիները, նենդորեն ամբասաւանելով Ծուշանին անբարոյականության մեջ, համոզեցին ատյանին՝ մահվան դատապարտել նրան։ Դանինը մարգարեն, վերաբնիկով գործը, ապացուցեց երեկու ծերունիների խարդախությունը, մահվան դատապարտեց նրանց և ազատեց Ծուշանին (Դանիէլ, Փթ, 1—64)։ Ծուշանը Ազաթանգեղոսի երեկում իրը լարության անմեղ զոհ քիչեցնում է Հոփիսիմնեին։

25. Դերովրան և Հայելը (Յայէլ) հրեաների պատմության դատավորների լրշանից են։ Քանանացից հարձակվել էին Խորայիլի վրա, և այն ժամանակ Խորայիլի դատավոր Դերովրա մարգարեռւհին կազմակերպեց

պայքարը թշնամու դեմ, Քանանացիների զորավար Սիսարան փախազ հրեաների առզեից և ապաստանեց Քաբերի կող՝ Հայելի վրանում, սրաեզ սակայն Հայելը սպանեց նրան, և հրեաները գուրս թշեցին թշնամուն (Գիրք Դատաւորաց, գլ. Դ—Ե), Ազգաթանգեղոսի գրքում այս երկու կանայք հիշված են իրեն չար իշխամու դեմ կանացի թաշության խորհրդանշան։

26. Արարեների երկիր կամ Տաճկաստան ասելով վաղ միջնադարի հայ պատմիչները նկատի ունեն Միջազգետքի ու Ասորիի անապատց, սրաեզ վաղուց թափառել են արարական վալկատուն ցեղերը։

27. Հոռին հին Հայկական ամիսներից է Հայկական ամիսներն էին՝ Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրի, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Աչեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից, Աւելսաց, Այս ամիսները երեսունական օր ունեին բացի վերջինից՝ որն ընդհանրապես հինգ օր ուներ, իսկ նահանջ սարում՝ վեց օր։ Նավասարդի մեկը ավանդաբար ընկնում է օգոստոսի 11-ին (Տես՝ Հ. Ս. Բաղալյան, օրացույցի պատմություն, Երևան, 1970)։

28. Փառական Ընմակացի նիշա տեղը հայտնի է Հ. Գ. Նահապետյանը նախ առաջարկելի է կարդալ «Փառական էջմակաց», Փառականը տեղանուն համարելով, իսկ երկրորդ բառը բացատրելով վրացերեն դեռ նշանակությամբ (Ուղղադրութիւններ Ազգաթանգեղեայ Պատմութեան, Բաղմավկա, 1907, էջ 147—148), ապա տվել է նոր բացատրություն՝ Փառական նամակաց, այսինքն ճահճախուտ և եղեգնուտ դաշտ (Թազմավկա, 1907, էջ 268—269)։ Նրան հակածառելով Հ. Գ. Տեր-Սահմականը առաջարկեց [թա]-փառական լիրամակաց ուղղումը (Թազմավկա, 1907, էջ 270)։ Վերջապես «Փառական նշանակաց» հոգիածով Հ. Գ. Նահապետյանը եղրակացրեց (Բաղմավկա, 1907, էջ 403—407), որ Փառական դաշտը սեմթք է գտնվեր Մասիս լեռան ստորոտի մեծ շամրի մոտ և այդ տեղանունը կապ ունի Մովսես Խորենացու հիշած Փառախոտի հետ, որը կառուցել էր Ամասիայի որդի Փառոխիր Մասիս լեռան մոտ (Պատմութիւն Հայոց, Ա, գլ. ԺԲ), Ըստ Անանունի Փառականը որսադաշտ էր (Սեբեռոսի Պատմութիւն, Երևան, 1939, էջ 7)։ Տես՝ Գ. Արդարյան «Սեբեռոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 116։

29. Տրդատի խոզացումը կապ ունի Հայ-իրանական հեթանոսական շրջանի մատածելակերպի հետ։ Պարսիկների համար վայրի խոզը՝ վարազը արքունի անսասուն էր և արքայից արքայի կնիքը վարազի պատկերն ուներ։ Հ. Աճառյանը վարազ ձևից երկու տասնյակ հայկական անուն է հիշում՝ Վարազ, Վարազ-Գնի, Վարազ-Գրիգոր, Վարազզատ, Վարազդին, Վարազ-դուրիտ, Վարազ-Խոսրով, Վարազման, Վարազ-Ցոհան, Վարազ-Ներսէն, Վարազ-Շապուհ, Վարազպերոժ, Վարազ-Սահակ, Վարազվաղան, Վարազ-վաշէ, Վարազտիրոց, Վարազ-Տրդատ և Վարազ-Թուրդակ։ Լատիներենում նույնպես կան վարազ կենդանու անունով անձնանուններ (Հայոց անձնանունների բառարան, Ե, 62—69)։ Դ. Ալիշանը (Այրարատ, 879, ծան. 8) Տրդատի խոզացման մեջ տեսնում է գալլամարդության ախտք (Լյո-

сандропи). Այս սյումի չուրշը տես՝ Գ. Ցովաչիկևան, Նիթեր և ուսումնասիրութիւններ, պարակ Գ, Նիւ-Սորբ, 1944, 61—63. Տաշյան, 139—140.

30. Սույն պարբերության վերցին տողերը Վիևնայի կրկնագրում են մասամբ այլ ձեռագրերում հետեւյալ և ունեն «որպէս դի համարեալ իսկ իցի զերանելիսն իսկ ի գլխովին յանդիման տեսանել» (Յուշաբծան, 148):

31. Այս պարբերությունից անմիջապես հետո սկսվում է վարդապետությունը, որը ծավալով հավասար է Ազաթանգեղոսի դրբի ամբողջ մնացած մասին։ Վարդապետությունը թեև նյութի տեսակետից թույլ է կապված Աղաբանվելուսի րուն բնագրի հետ այնուամենայինիվ նրա հետո որոշ ամենալույսն է կազմում, լողական տեսակետից չի տարրերում մնացած մասից և անտարակույս եղարից և Ազաթանգեղոսի հունարեն թարգմանվելու մամանակի ջղարից վերցում, վարդապետությունը եղեւ է նշան կազմում։ Այդ վկայում են հունական, ինչպես նաև նորանայտ արաբական թարգմանությունները, որոնք թեև զեղեւ են այս ընդարձակ հատվածը, այսուամենանիվ պատմության առաջին (վարդապետությանը նույնորդող) մասի վերցում վարդապետության սկիզբը ուղղացնարդ սկսենք Քրիստոսի ջնորհներով... և Վարդապետությանը անմիջապես հաջորդող «Արդ՝ եկեղեց եղբայրներ...» խոսքերը բառացիորեն են թարգմանվել և ստացվել է որոշ անկատ շաբաղրանք, քանի որ երկրութ մեջ ինչ որ վաճ պահպանում է (Տաշյան, 158) ներկա աշխարհ ուրաք թարգմանության մեջ մարդապետական մասը նկատի չի առնված։

32. Հայաստանը հյուսիսային երկիր է համարվել, ինչպես հայ, այնպես էլ ասորական ու արարական մատենագրության մեջ. Զ. դարի ասորի մատենագիր Զաքարիա Հոնետորը հյուսիսային երկիր անվան տակ հասկանում է Հայաստանը և նրան հարող ու եկեղեցականորեն ենթակա Վրաստանն ու Աղվանքը (Խ. Պիցցուեսկայ Սիրիական պետօպանի ու պետօրին արօնօս ՀՀՀ. Խ.—Լ., 1941, ստր 165), իսկ Թ գարի արար աշխարհագրադես իրն Խորդագրությը, այս բոլորի հետ հիշելով նաև Ալբաբատականը. Զարրի (ասորելեն՝ Հյուսիս) է կը զում (Ա. Տեր-Ղեոնդյան, Հայաստանի վարչական բաժանումները բատ արար աշխարհագրագիտների Տեղեկագիր 1961 թ. էջ 66), Վարչին Սաստան կայսրության հյուսիսային բուստանն (Երկրամաս) էր:

33. Վերցիրս էջմիածնի Մայր տաճարը և Հոփիսիմե եկնդնցին վերանորոգելիս Ա. Սահմանակատարած պեղումները շատ բան բացահայտեցին Վաղարշապատի հնագույն եկեղեցական կառուցվածքների վերաբերյալ։ Մայր տաճարում Վահան Մամիկոնյանի կողմից վերակառուցված հիմքների ու մույթերի տակ գտնվեցին ավելի հին հիմքեր ու մույթերի խարիսներ, իսկ խորանի տակ՝ կրակարանի մնացրդներ և նույնիսկ Հայոսաանի ուրարտական ժամանակաշրջանի հոգիած բարձրությունը Ա. Սահմանը եղբակացնում է, որ էջմիածնի մայր տաճարը իր նախնական ձևով Ֆրդատ Գ-ի և Գրիգոր Լուսավորչի ժամանակ եղել է բաղդիկելին կառուցված թաղակապ ծածկով։ Եղբարձրից

Աշտարակի, Տեկորի և Երերույքի բազիլիկ տաճարներին: Պեղումների նյութերը հաստատում են Մայր տաճարի մասին Աղաթանգեղոսի ու Հաղպատակացու վկալությունների ճշմարտացիությունը և դարում Վահան Մամիկոնյանը տաճարը վերակառուցել է և տվել նրան գմբեթակիր հորինվածքը, բնդ որում նրա խարիսխները դրվել են հների վրա:

Հոփիսիմին ու նարի պեղումների ժամանակ նույնպես հայտնաբերվել են մույթերի ժին խարիսխներ, որոնք հեթանոսական մեջյանների ճարտաշապետական զարդեր ունեն:

Այս նյութերի շորոր տևո՞ւ՝ Ա. Սաման. Նորые данные об архитектурном облике эчмиадзинского собора. XXV Межд. Конгрес. Вост., Москва, 1960 Ա. Սամինյան, Էջմիածնի Մայր տաճարի սկզբնական տևոքը, Պատմաբանական հանդես, Երևան, 1966, 3, էջ 71—83:

Սույն նյութերը հեղբում են Հ. Գեղցերի այն տևոակետը, թե քրիստոնյա Հայաստանի վաղ ժամանակաշրջանի Ակեղցական կենտրոնը Վաղարշապատը չէր, այլ Աշտիշատը և որ նույնիսկ այդ ժամանակ վաղարշապատում կաթողիկոսական Ակեղցու գոյությունը կասկածելի է (Հ. Գեղցեր, Փաւատոս Ռիւզանդ կամ Հայկական Եկեղեցոյ սկզբնաւորություն, Վենետիկ, 1896, էջ 57—64): Այս բոլորը ճիշտ է միայն այնքանով, որ Աշտիշատը իրոք կրոնական շատ մեծ նշանակություն ունեցող կենարոն էր ին հեթանոսության ժամանակ, թե քրիստոնեության օրոք Այստեղ կին Վահագին, Անահիտի ու Աստղիկի նշանավոր մեջյանները և այնտեղ էր որ գումարվեց Եկեղեցական հայտնի ժողովը Ներսես Պարթևի օրով; Սակայն դա չի կարող նսիմացնել Վաղարշապատը, որի գեռ Դ դարում կաթողիկոսանիստ կենարոն ինելու փաստը հնադիտական պեղումներով հաստապված իրողություն է:

Վաղարշապատը եղել է Արշակունյաց Հայաստանի հիմնական մայրաքաղաքը և միաժամանակ՝ մշակութային ու կրոնական կարևոր կենտրոնը Նրա տեղում գեղ շատ վաղուց գոյություն է ունեցել Վարդդեսավանը, ուի հիմնադիրն է, ըստ Մովսես Խորենացու, Հայկաղյան Երվանդ Սակալակյաց արքայի քրոջ ամուսինը՝ Վարդգևսը:

Վաղարշապատը Ա. Արշակունի թագավորը (117—140) նախկին Վարդգեսավանը պարսպով պատեղ և դարձրեց մայրաքաղաքը: Հունական աղբյուրները Վաղարշապատը կոչում են Նոր քաղաք, որը կա նաև Աղաթանգեղոսի և այլոց մոտ՝ նորաքաղաք: Վաղարշապատը դարձավ Արտաշատի Կողքին Երկրի մյուս մայրաքաղաքը, իսկ Դ դարում Խորով Կոտակ արքան Դիմեր դարձրեց իր մայրաքաղաքը՝ Այսուհանդեր Արշակունիների հիմնական մայրաքաղաքոր (մինչև Ե դար) միշտ էլ Վաղարշապատը մնաց: Բ դարում, երբ Հոռմը ուժեղ պայքար էր մղում Հայաստանում իր աղդեցւթյունը պահպանելու համար, Վաղարշապատում հռոմեական կայադոր էր մնում: Վաղարշապատում գտնվել են մի հունարեն և երկու լատիներեն արձանագրություն՝ գրված Բ գարի երկրորդ կեսում հռոմայեցիների Կողմից: Լատիներեն արձանագրությունները վերաբերում են Վաղարշապա-

თოւმ կատարված ռազմական կառույցներին և առաջին հերթին քաղաքի պարիսպներին (Կ. Տրեվեր, Օւերքի ու պատմությունները, Արմենիա, Մ. Լ., 1953 տր. 251—270):

Վաղարշ Բ թագավորի ժամանակ (180—191) Վաղարշապատի հովմեական կայազորը գուրա բերվեց Հայաստանից, և Հայոց թագավորության կախումը Հոռմից մեծ չափով պակասեց: Այս Վաղարշին հաջորդեցին նրա որդիներն ու լոռները և ըստ էռվիյան նրանով սկիզբ առավ հայ Արշակունյերի ժաւանակական իշխանությունը: Տրդատ Գ-ի օրոք, ինչպես տեսանք, Վաղարշապատը հայ եկեղեցու պաշտոնական կենտրոնը դարձավ: Արշակ Բ-ի պարտությունից հետո 369 թվին պարսից Շապուհ արքան մտավ Հայաստան և ի շարս այլ բաղաքների գրավեց նաև Վաղարշապատը և բնակիչներից 19 հազար տուն գերեվարեց: Սակայն դրանից հետո էլ քաղաքը մնաց Արշակունյերի նստավայրը և գրերի գյուտի ժամանակ վեռամշապուհ թաղավորն ու Սահակ Պարթե կաթողիկոսը, նախարարների բարձրացության հետ, հանդիսավոր կերպով, Վաղարշապատում ընդունեցին Մևսրոպ Մաշտոցին, որն այստեղ բացեց առաջին հայկական զպրոցը:

Ծ գարում Վաղարշապատն ու Արտաշատը միաժամանակ լրվեցին, և Դվինը երկուսին էլ փոխարինեց որպես մայրաքաղաք ու կաթողիկոսի արքունիսու: Է դարում Վաղարշապատը վերածնունդ աւլրեց, կառուցվեցին մի շարք հուշարձաններ՝ Հռիփսիմե, Գայանե ու Զվարթնոց տաճարները և ժամանակավորապես նորից դարձավ կաթողիկոսական նստավայր: Վաղարշապատը հայ կաթողիկոսների երկրորդական նստավայրն էր նաև Բաղրատունյաց ժամանակաշրջանում և երր Դվինի հայրապետանոցում գրությունը վատանում էր, այստեղ էին տեղափոխվում քահանայապետները թ գարի վերջում Դվինի երկրաշարժի ժամանակ Գեորգ կաթողիկոսը նկավ հաստատվեց Վաղարշապատի Զվարթնոց տաճարի մոտ կառուցված կալողիկոսական պալատում (թողեալ գրնակելին ի Դուինն՝ եւեալ լնակեցաւ ի նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոցն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանեւոյ աւառն ներսեսի երկրորդի Հայոց կաթողիկոսի (Թովմայի Վրդ. Արծրունուց Գաւամութիւն տանն Արծրունեաց, Պետերուրուգ, 1887, էջ 23!):

Իլիկիան թագավորության անկումից հետո, ամենայն հայոց կաթողիկոսական արոր, 1441 թվին, վերջնականապես տեղափոխվեց Վաղարշապատ (էջմիածին):

84 Այս արտահայտությունը շափականցված է, քանզի կան ստույգ տեղեկություններ, որ քրիստոնեությունը Հայաստանում շատ վաղոց սկսվել էր տարածվել, Այստեղ հեղինակի նպատակն է սոսկ չեշտել Գրիգոր Լուսավորչի կատարած գործի մեծ նշանակությունը: Ավելացնենք նաև, Ազաթանգեղոսի սույն տողերը Կորյունից են քաղված, սակայն վերջինիս քրքում ասլած է այն իմաստով, որ հայերը մինչ այդ մայրենի լեզվով Բաղրոդակից լին եղել քրիստոնեությանը:

85. Այս մի քանի էջերում նկարագրված նյութը, որն անզնահատելի աղբյուր է հայ հեթանոսական կրոնի ուսումնասիրման համար, հունարեն Վարքի մեջ թե՛ հիմնականում նույնությամբ է տրված, սակայն Տրդատի

ու Գրիգորի երթուղին որոշ շափով տարբեր է Ներկայացված. Ըստ Ազա-
թանգեղոսի՝ նրանք դուրս են գալիս Վաղարշապատից և ապա զեռում են
Տիր աստծո մեջանը Արտաշատ (Անահիտի մեջանը)՝ Պարանաղյաց
գալառի Թորդան գյուղը (Բարշամինա մեջանը)՝ Անի (Արամաղդի
մեջանը)՝ Եկեղյաց գալառի Երեզ ալանը (Անահիտի մեջանը)՝
Թիկն ալանը (Նանեական մեջանը)՝ Դերջան գալառի Բաղայառին
գյուղը (Միհրի մեջանը), և վերջապես Կրկին գալիս են Հաղարշապատ:

Հունարեն վարրը (ինչպէս նաև արարերենը) տալիս է Հետեյալ երթու-
ղին՝ Վաղարշապատ—Արտաշատ—Ապոլոնի (Տիր) մեջանը՝ Արամաղդի
մեջանը—Դարանաղդաց Թորդան գյուղը—Անի ամրոցը—Երիցա գյուղը—
Թիկ ավանը—Դերջան գալառի Բաղայառին գյուղը—Վաղարշապատ:

Հետաքրքրական են հունարեն վարքի խոսքերը աւա ամբողջ գործու-
նեության մասին.

Նախ և առաջ Տրդատ թագավորը հրամայեց իորժանել եախնյաց
[իուոքերի] տաճարները: Այնուևսուն ո. Գրիգորի հւա թագավորներով և
բոլոր մեծամեծներով նա զնաց Արտաշատ քաղաքը իրամայեց կործա-
նել Արտեմիսի տաճարը, նուանապես և այսպես կոչված Ապոլոնի պատգա-
մարանը: Նա ջարգ ու փշուր արեց ոսկե և արծաթե սովասները ու հրամայեց
պահնել, որպեսզի (դրանցով) հետապայում զարդարեն կառուցվելիք վկա-
յարանները:

Դեռքը տեսնելով տեղի ունեցածը, ինչպես և թագավորների և ամբողջ
ժողովրդի ջերմեռունդությունը, մարդու կերպարանք ստանալով դարձան
հեծյալ ու հետեակ սաղմիկների և փորձում կին նիդուկներով դիմադրել.
Նրանք տաճարների միջից նետեր, նիզակներ և բառեր էին արձակում.
Իսկ դրանք անդոր էին և ոչ որի վնաս չին հասցնում իսկ սուրբ Գրի-
գորը պատվական և կենարար խաչի նշանն առնելով զիսվեց ընդդեմ ճրե-
վացող զորքի, և բոլորն աներեռութացան: Լսվում էր երանց ձայնը, որ
առում էր. «Վայ մեղ, Քրիստոսը մեզ ամեն տեղից հաւածեց, և այդ մեզ
արեց մարդկային արարածի դուսար Մարիամից ծնվածը Ահա մենք աշ-
տեղից էլ ենք դուրս բշվում կապյալ մարզու կողմից: Մենք շագր մ փոր-
ձանրներ բերեցինք [նրանց զլիսին], բայց ապարդյուն. Խստի հեռանանց
լեռներու:

Սուրբ Գրիգորը, կործանելով տաճարները, առաջարկեց ճրգատ թա-
գավորին՝ քրիստոնյա դարձ..-լ քրմերին. իսկ տաճարական սպասները
տալ՝ մի մասը լքավորներին, իսկ մնացածը պահել թագավորական գան-
ձարանում: [Քրմերը] միաբան լինելով փութացին կատարյալ [հավատքն]՝
ընդունել, գրկվելով կուպաշտության մոլորությունից, ամօւր կանգնել
Քրիստոսի հալաւտքի մեջ:

Թագավորը փութաց կործանել նաև Զեսի տաճարը ու ոսկե և արծաթծ
սովասքը գանձարան տեղափոխել նա հրամայեց պահպանել [տաճարնե-
րին պատկանող] գյուղերը, մինչեւ որ կառուցվեն եկեղեցիները, և եա, ում
կընկնի քահանայության զիճակը, թող տիրություն անի նրանց ըստ իր
ցանկության:

Սուրբ Դրիգորը կառուցվելիք տաճարների տեղերում խաչեր կանգնեցրեց և ցանկապատճեր կառուցվեց, ապա թագավորի ու մնացած ժողովրդի հետ գնաց մի այլ վայր, բայց զոհասեղան չկառուցվեց, որովհետեւ շունելո քահանայության պատիվը Նա ասաց, որ քաղաքներում, գյուղերում, ազարակներում կանգնեցնեն խաչի նշանը, որպեսզի դեմքը ամենուրեք գիւ. խուստի մատնվեն Նա ամեն տեղ քարոզում էր խոսքն Աստծոյ լինելով շատ ուսչալ և իր ջերմեռանդության մեջ զորովիզ ունենալով Սուրբ Հռոգին:

Նա թագավորի հետ հասավ Դարանալլաց գովառի Շուրջան գյուղը, որտեղ գտնվում էր Հոռեայի տաճարը. այն ևս Կործանելով, եղած գույքը տվշեցին Յագաբրիներին, ինչ վերաբերում է Կուռքերին, ոսկե ու արծաթի և բան աղին քարերով ազուցված սրբազան սղամներին ու նվիրատվությունների՝ ապա դրանք չարդուիշուր անելով պահեցին ապագալում կառուցվելիք սուրբ տաճարների համար, իսկ Թորդան գյուղը դարձրին Քրիստոսի եկեղեցուն ենթակա:

Նրանք այնակ կանգնեցրին պատվուիան խաչը և շարժվեցին գեպի այլ շրջաններ. թագավորը մեծ ջերմեռանդություն էր ցուցարեցում տիրանութու կուպապատության մոլորության [ապավինած] բոլոր մարդկանց և ս. Գրիգորի վարդապետության միջոցով բերելու Թրիստոն Աստծուն:

Նրանք եկան նաև Անի ամրոցը, որի միջնարերդում էին դանիվում նախկին թագավորների դամբարանները. Ճայռո Մագավորուց որտեղ էլ որ վախճանվեր, բերլում էր Անիի միջնարերդու Այնտեղ էր զւնվում նաև թագավորների թանկագին նվիրատվություններով լի Զեսի տաճարը: Նրանք այնտեղ ևս նույն բանն արեցին, կանգնեցրին Քրիստոսի նշանը և շարժվեցին դեպի այլ գավառ:

Նրանք հասան Երիզա մեծ գյուղում գտնվող Արտևմիսի տաճարը, որտեղ սովորության համաձայն Մագավորները տոնակատարություններ էին կազմակերպում, և որտեղից Գրիգորը սկսեց իր մարտիրոսությունը՝ Ենթարկվելով սարսափելի պատիմների ծրբ նրանք, այսինքն թագավորը իր ամբողջ զորքով ու սուրբ այրով նկան՝ զերը զինվորների կերպարանք ստացած ուղեղին վախեցնել նրան: Բայց սուրբը խաչի նշանով հալածեց նրանց, և զշանով իսկ ավելի բորբոքվեց ժողովրդի սերը գետի կենդանի Աստվածը, նամանավանդ երբ տաճարի պատերը ինքնարերար տապալվեցին:

Թագավորն իր բոլոր ենթականերով անցավ Նիքատ գետը և հասավ Թիլ ալվանը: Այնտեղ ևս նա Կործանեց Աթենայի տաճարը, իսկ սրբազան սպասները նույնպես հրամայեց պահել Թիլ ալվանում՝ նվիրելով այն կառուցվելիք և կեղեցում:

Այսպիս, ամեն տեղ շրջելով նրանք քրիստոնեական հավատքի հիմքն էին դնում: Բոլորը շուտագրւ էին նրանց մոտ թե որովհետեւ վախենում էին թագավորից և թե որովհետեւ տեսնում էին Գրիգորի գործած հրաշները: Քանզի նա ճառով, և աղոթքով կործանում էր կուռքերի տաճարները, բուժում էր երկարամյա արատներով տառապող և իր մոտ բերված հիւանդներին:

Բակ Տրդատ թագավորը չեր դադարում յուրաքանչյուր շրջանում ան-ամբ քարոզելուց, նախկին անքարշառությունն ու դավանանքը պիղծ և նսուրբ անվանելով: [Պատմում էր] իր և իր մեծամեծների ստացած տամի մասին, ապա նաև թունավոր և ամենասարսափելի օձերով լի վի-ապից Աստծու կողմից փրկված Գրիգորից բուժվելու մասին:

Նրանք հասան նաև Դերջան զավասի Բագայառիճ զուուր, որտեղ [Գրի-որր] կործանեց Դիռնիսոսի տաճարը և հոգեոր վարդապետությամբ բո-տին համոզեց Հրաժարվել կուալաշառության մոլորությունից և դիմել ճըշ-արիտ աստվածածնոթությանը»: (Հունարեն Վարք. 103—115):

Հայկական հեթանոսական կրոնի մասին տես՝ Ա. Էմին, Օчеркі ՀՅԱՆՈՒ և ՎԵՐՈՎԱՆԻ ՅԱՅՆԵՍԿՈՒ ԱՐՄԵՆԻԱ. Մոսկվա, 1866.

Թարգմանված ֆրանսերներ և ապա հայերներ՝ Հետազոտութիւնք ի վե-այ հայկական հեթանոսութեան, Արմաշ, 1875:

Դ. Ալիշան, Հին հավատք Հայոց, Վենեսիկ, 1895:

II. Gielzer. Zur armenischen Götterlehre, 1896.

A. Carrière, Les huit sanctuaires de l'Arménie paléenne. Paris, 1899. Հայ. Թարգմ. Հ. Տաշյան, Վիեննա, 1899:

Դուրյան, Հայոց Հին կրոնի կամ հայկական դիցարանություն, Երևա-ն, 1933:

Հեթանոսական տաճարային ձարտարապետության և քանդակագործու-թյան մասին տես.

Ա. Սահմանյան, Քասաղի Բաղդիկայի ճարտարապետությունը, Երևան, 955 (գլուխ ութերորդ) Հայաստանի վաղ ֆեոդալիզմի շրջանի ճարտարա-պետության տեղում ստեղծվելու նախադրյաները):

Առաքելյան, Քանադակագործությունը Հին Հայաստանում, Պատմա-ւա սիրական հանդես, 1969, № 1:

Խաղաղիքը Կարեն քաղաքից Հյուսիս-արևմուտք գտնվող Ապեր գ. ոի կողմերում է, Պոնտական լեռնաշղթայից հարավ:

Անի. շատ հին բնակավայր է նիրաատ զետի մոտ Կարնո նահան-ուել և սրբավայր և արքայական զամբարան Այստեղ էր գտնվում անոսական գերադույն աստված Արտմազդի զլիավոր մեհյանը: Անիի ո գտնվող Կամախուն էին մատվում Հայաստանի Արտաշիսան և Արշակ սի թագավորները (Երեմյան, Հայաստանի բատ Աշխարհացուցի, էջ 33 հ.):

38. Անորոշ է հայերներ բնագրի «զբագին Ձես դիցն Արամազդայ հօրն անու» սի դիցն ամենայնի» արտահայտությունը: Որո՞շ ձեռագրեր ունեն ողբա ևս դիցն Արամազդայ», որը թեև պարզ է զարձնում իմաստը: Իսկ ունեութիւն զրիների ձեռքով կատարված պարզեցում է: Հու-նարեն անությունն ունի քիչ այլ բովանդակություն (Ագա-թանգել): ըստ որի քանդիվող բագինը ձեսի հոր՝ Կրոնոսին է: և թարգմանությունը մասամբ սույն ձեռք է արր-գած (Ա. Ագաթ., 284): Հայկական Արամազդը նույն Ձեսն է, ուստի

Ազաթանգեղոսի հայկական բնագրում խոսք չի կարող լինել աստվածահոր և աստվածորդու մասին:

Հստ երևոյթին այստեղ հեթանոս աստվածության անոնը տրված է իր կրկնակի հելենանայկական (կամ հելենաբրանական) ձեռվ՝ հսս Արամացդ: Խման ձեռվ Ազաթանգեղոսը իբրում է նաև Ափրոդիտեն: Աստղիկին (Ալգամանակեղոս, ՏՕԴ): Այսպիսի կրկնակի անվանումով չ'ըտնի են Կոմմագենե երկրի Երվանդյան թաղավորների կանգնեցրած աստվածների արձանները՝ Զես-Սրոմազդես (Զես Արամազդ) և այլն: Տես Գ. Աւրգստան. Հելլենիստական դարաշրջանի Հաւասար: և Մովսես Խորենացին, Յրեան, 1966, էջ 29-30:

39. Անգեղուուր հայկական գավառ է Աղձնիքի բղեշխության կազմում: Այս գավառը կոչվել է նաև Մեծ Սոփիք:

40. Աղձնիքը հին Հայաստանի 15 նահանգներից է և Արշակոնյաց Բագավորության չորս բղեշխություններից մեկը: Այստեղ էր գտնվում Մեծն Տիգրանի կայսրության Տիգրանակերտ մայրաքաղաքը:

41. Կորդուքը հին Հայաստանի Նորմայր նահանգի գավառներից էր: Այստեղ է Արարագ լեռը, որի հարսավում էր գանվում Ասորեստանյան արձանագրություններում հիշվող Թման վայրը (Երեմյան, Հայաստանն ըստ Աշխարհացուցիք, էջ 60):

42. Մագդեկից երկիր. Արցախ նահանգը (մոտավորապես այժմյան Լեռնային Ղարաբաղ) և Սյունյաց նահանգի Սողբ գավառը կազմում էին Հայոց Բագավորության նավդեւցող իշխանությունը:

43. Հարավանդը հին Հայաստանի Պարսկահայր նահանգի Հյուսիսային կալան էր, որը դրացի էր Վասպուրականին:

44. Հայաստանի 16 նախարարական անեղի այս ցուցակը բատ երեւլութին հիմնականում անաղարտ է, մնացել, և Ն. Աղոնցի այն ենթադրությունը թէ սա Զ դարի վերջի վիճակն է արտացղում, գուցե միայն որոշ չափով վերաբերեր նրան:

Մենք աւմամ ունենք նաև նորահայտ հունարեն Վարդի համապատասխան ցուղակը որը դրւթե նույնն է և ունի միայն որոշ մանրամասնություններ:

«Հերավերի համաձայն ներկայացան երկը թագավորները, այն է Լաղերի, ևրաց և Արվանից, ապա Հերիականությամբ Բագավորներից հետո առաջին տեղում գտնվող Անգեղ տօն և Անհիափ կուսակալը, Երկրորդ՝ Աղձնիքի մեծ բղեշխը, երրորդ՝ Մարդերի կուսակալը, չորրորդ՝ ասպետության իշխանը, որը պաշտպանում էր Կովկասյան լեռների կողմերը և Ճանիքը, հինգերորդ՝ Մամիկոնյանների նախարարը, սպարապետը, որին էին նսթարկվում Հայոց ամբողջ Հեծելազորն ու Հետեկակը և միշտ Հայոց թագավորի հետ էր լինում և սրաւերագմուն նրա զորավարության էին ենթարկվում բոլոր վերոհիշյանները և նրանք, որոնց մասին խոսք կրինի ստորեւ. վեցերորդ՝ կոսահալը այսպես կումած Կորդվաց աշխարհի, որը գտնվում է Անդրեկողրիտինների մոտ, յոթերորդ՝ իշխանը Մեծ Սոփիքի, որը Միջագետքի մոտ է գտնվում, ութերորդ՝ Գուգարացոց աշխարհի առաջնոր-

ոք, որը ևս բգեշինի աստիճան ունի: Խններորդ՝ Աշտառնյաց կուսակալը, տասներորդ՝ Մոկաց շահապը, տասնմեկերորդ՝ Սլունյաց ցեղազեաը, տասներուերորդ՝ Մավզեից զորավարը, տասներեքերորդ՝ լիշխանն Աւտիացոց աշխարհի, տասնչորսերորդ՝ շահապը Զարավանդի և Հեր զավարի, որանք ևս գտնվում էին Կողրիտների մոտ: տասնհիւերորդ՝ Խորխոսունյաց Նախարարը, որը որպես առաջնորդ ունի Մասդաղության իշխանույթը, տասնվեցերորդ՝ Արծրունյաց իշխանը: Մնացած նախարարներն էլ հավաքվեցին բատ իրենց գրաված հերթականության: (Հունարեն Վարք, 93):

Մեկ հասած Ագալպագեղոսի հայկական լուսպիրը կամ նույնարեն ու արարերեն իշարպանությունները չունեն աշխատ և այլ գեկուերում հիշված Վրաց. Աղվանից և Լաղերի (արաբական իշարգմանության մեջ՝ Աւանների) թագավորներու: Հայկական տասնվեց նախարարություններից ինը ունի նահանգների իշխաններ և Աղոփք, Աղձնիք, Կորճայք, Գուգարք, Մոկիք, Այունիք, Մավզեից (Արցախ), Ուտիր, Զարավանդ-Հեր (Պարսկահայք): Վասպորականից հրչած են Արծրունիք, Եարդպետական իշխանությունը և Թշուունիք. Տուրուբերանից՝ Մամիկոնյաններն ու Խորխոսունիները: Ասսեա Բագրատունիներին հանձնարարված Կովկասյան լեռների ու Հանիք երկրի այլառաջնությունը, գուցե, արձադանքն է Սպեր զավառում նրանց տիրությունը ունենալու: Հետաքրքրական է նշել, որ Անգեղտունը Շահիւաթունյանի հրաւարակած ցուցակում (Խարուաղութիւն կաթ. Էջմիածնիք, թ. 59) նորինիւ (արևմտյան դռան) առաջին անդում է:

Հ. Կապագրգիլիայում ըրիստունեռ Շյունը շատ վազ և ամանակներում է տարածվել: Արգեն Գ զարո Ֆ Կեսարիայի եկեղեցին ունի: Հաշակ ունիր, մանափանդ. Երբ նրա աթոռակալներն լին Աղեքսանդր Եպիփուլուսը՝ ուստափուակն 200 լինն և Փիրմիլիանսուր (մեռ. 269), որոնք Աղեքսանդրիայի են չեցու երեւելի հայրեր Կուելեսի ու Արտուրեսի մերձավորներն լին: Փիրմիլիանսուի օրոք Կեսարիուն աստվածաշահանական ուստանի կինորոն Եր զարձելու Կեսարիայի աթոռէ հետ էր կապված Գրիգոր Նեռկեսարացու գործունեությունը, իսկ Գ զարուն Կեսարիան հշանավեր դարձավ շնորհիվ Երեւ մնած մատենագիրների՝ Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյու ուացի և Գրիգոր Նաղիանդացի:

Կեսարիք: Օք աթոռի աղեղությունը Փոքր Հայքի վրա սկսվել: Էր վազ ժամանակից և առաջ Փոքր Հայքի ու Կապագովկիայի հայությունը մի կարեր ունի զարձավ և աստանում ըրիստունեռներու տարածելու համար: Այս միջազգայրի ծնունդն էր Հենց Գրիգոր Լուսագորիչը (Ա. Ալաոյանցան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գաճիրէ 1947, Ա. 276—289):

Գրիգորի ու բնեկերակիցների Կեսարիայում անցկացրած օրերի մասին հունարեն Վարքը ավելի մանրամասն նկարագրություն ունի.

«Հասնելով Կեսարիայի մոտակայքը՝ մարդ ուղարկեցին հայտնելու Ղեղոնդիոս արքեպիսկոպոսին, ինչպես և քաղաքի իշխանին, Հարցնելով նաև, թե ուր պետք է իրենք իշխաննեն և իրենց ծախսերի համար ուղարկեցին բազում ուսկի:

Սուրբ Հայրապետը, ապա նրա հետ նաև քաղաքի իշխանը ու մնացած քաղաքացիք, իմանալով այդ մասին՝ շատ ուրախացան և ամեն ինչ նախապատրաստեցին նրանց սպասարկելու համար. նրանք կարգադրեցին, որ մեծամեծներից յուրաքանչյուրը բնակի մեծ աներից մեկում իսկ Ա. Գրիգորին համացիւց եկիմկոպուսարանի շենքը:

Իոլոր քաղաքացիք, մեծ ու փոքր իրենց կանանցով ու երեխաններով քաղաքի իշխանի հետ միասին նրանց զիմավորեցին քաղաքից չորս մզոն հեռավորության վրա, ողջունեցին սրբին. Երբ նա իշակ Մագավորական կտորից: Այդ ամենը նրանք մեծ ուրախությամբ արեցին և այնուհետեւ մտան քաղաք:

Երբ յոլորը հասան եկեղեցու մոտ, նրանց զիմավորեց Կեռնդիոս արքեպիսկոպոսը՝ յոլոր քահանայապեաններով և ողջակուլիելով Գրիգորի և յոլոր տասնվեց մեծամեծների հետ քաղաքացիներով ու մեծամեծներով մտավ եկեղեցի և եպիսկոպոսարանում աղոթելուց հետո...: Նա նրանցից ամեն ինչ իմացավ, վարդապետեց նրանց աստվածածանոթության ձևապահնը, այնուհետեւ մեծամեծներին և վկա Գրիգորին բնիրիցի հրավիրեց, իսկ մյուսներին արձակեց, որպեսզի գնան յուրաքանչյուրն իրեն հատկացված բնակարանը:

Ամբողջ քաղաքում պրի գալուայան և այնքան ժողովրդի վրկության առթիվ մեծ ուրախություն էր, հրավառություն. լ'Իրիգորի/ կնոջ մերձավորներն ու բարեկամները, բացի դրանից լորդիների/ դաստիարակները շատ ուրախացան և միշտ սրբի հետ էին:

Արքեպիսկոպոս Կեռնդիոսը ոմանց ուղարկեց մինչև Բյութանիա-քաղկեդոն [քաղաքը] իրեն ենթակա եպիսկոպոսներին ու մետրապոլիտներին հրամանագույն Եկեղեցիներին նվիրարերում լին ոսկյա ու արծաթյա սպասներ: Մեծամեծները նման նվերներ բերել կին նաև իրենց տներից և սևական հայրենիքի ամենաթանկագին իրերը նվիրարերում էին ոչ միայն սուրբ տներին, այլև քաղաքի իշխաններին:

Սուրբ Կեռնդիոսը կեսարիա քաղաքի յոլոր բնակիների հետ շատ ուրախացավ և շտապեց հոգալ ու հյուրընկալել վկա Գրիգորին և մեծամեծներին. որոնք սրբազնացույն Եկեղեցիներին նվիրարերում լին ոսկյա ու արծաթյա սպասներ: Մեծամեծները նման նվերներ բերել կին նաև իրենց տներից և սևական հայրենիքի ամենաթանկագին իրերը նվիրարերում էին ոչ միայն սուրբ տներին, այլև քաղաքի իշխաններին:

Կեսարիա քաղաքը մեծ երանության մեջ էր, որովհետև ընդունել էր մի վկայի. որովհետև այսքան և այսպիսի մարդիկ հարեցին Աստծու սուրբ Եկեղեցուն, ազատվեցին մոլորությունից և կործանումից, վերադարձան կենդանի Աստծուն, քանզի այսքան հեթանոսներ Գրիգորի համբերությամբ և վարդապետությամբ փրկվեցին:

Սրբազնագույն եպիսկոպոսները սրբաղնագույն հայրապետ Կեռնդիոսի հետ հավաքվեցին, մատան սուրբ Եկեղեցին. սրբին ըեմ բարձրացրին և բացելով սուրբ Ավետարանը գրին վկա ու խոստովանող Գրիգորի վրա,

նրանք բոլորը իրենց սուրբ ձեռքերը դրին նրա վրա և կարդացին բնդունքած աղոթքը, ապա նրա ուսին զցեցին եմիփորուն և ասացին՝ «Արժանի, արժանի, արժանի»: Նրանք պատարագեցին՝ բնթերցելով սուրբ Ավետարանի բնթերցվածը: «Ես եմ բարի հովիվը և շարունակությունը: Սաղմոսերգությունից հետո բոլորը ողջունում էին վկային:

Բոլոր Նպիսկոպոսները և իշխանավորները, Կեսարիայի երեւագույն մարդիկ և մնացած ժողովուրդը՝ տղամարդիկ, կանայք ու երեխաներ, նրաց բազում օրեր հյուրներից հետո, ջաներով ու մոմերով, փառավորելով՝ [Աստծուն]՝ ‘անապարհեցին մինչեւ քաղաքից դուրս:

Արքեպիսկոպոս սուրբ Կենդիկոսը սուրբ Գրիգորի խնդրանոր տվեց սուրբ Կարապետի ու Հովաննես Մկրտչի մասունքներից: Ինչպես նաև պատասխան նամակ և մյուս եպիսկոպոսների հետ համբուրեց նրան: Այս նստեցնեով թագավորական կարքը՝ հրամեցաւ տիին, իսկ իրենք վերապարձան քաղաք, կատարված իրողության վրա զարմացած և բնդ՛անրական եկեղեցուն միացած ժողովրդի համար ու բախացած: (Հոնարեն Վարք, 128—147):

46. Փոքր Հայքում քրիստոնեությունը վաղ ժամանակներից էր աւարածվել՝ կենարոն ունենալով Մելիտին քաղաքը: Հետագայում մետրոպոլիտ ունեցավ նաև Սերաստիան: Մելիտինի ու Սերաստիայի Նպիսկոպոսների կախումը Կեսարիայից ձեական բնութիւնը էր կրում, ինչպես Մեծ Հայքի աթոռինը:

Հետարիբական են հունարեն Վարքի տեղեկությունները Գրիգոր Լուսավորչի Սերաստիայում հայ հոգևորականներ հագարելու մասին:

«Նրանք հրձվանքով դուրս եկան ի Կեսարիայից՝ և հասնելով Սերաստացոց զավառ, Տրիոդիա կողման վայրը, վրաններ խփեցին ու հանդրտացան, քանզի շուկացին որեւ մեկին ձանձրութիւն պատճառել՝ զյուղում կամ ազարակում: Իսկ բոլոր սերաստացիք իրենց սրբազն եպիսկոպոս Պետրոսի և իշխանի հետ միասին դիմավորեցին նրանց և մեծ ուրախությամբ քաղաք մտցրին:

Քաղաքացիների խնդրանքով նրանք այնտեղ մնացին վեց օր և ապա շարժվեցին զեսի իրենց երկիրը: Առոք Գրիգորը իր հետ վերցրեց երեցներ և մենակյացներ, որպեսզի վիճակեցուցանե նրանց Հայոց եկեղեցում: Նա Հայրապետ Կենդիկոսի կողմից ուներ նաև բնդ՛անրական թղթեր հասցեղրգած սրբազն եպիսկոպոս Պետրոսին, որպեսզի սուրբ կանոնների համաձայն իրեն աթոռակալ նշանակեա: (Հոնարեն Վարք, 152—153):

Այս Պետրոս եպիսկոպոսին, որն առաջ հունարեն Վարքի Գրիգոր Լուսավորչի հետ եկավ Հայաստան, պետք է աարքերել նույնարես Սերաստիայում ապրած մյուս Պետրոսից (Garițte, 229—230):

Սերաստիայի Պետրոս եպիսկոպոսը Գրիգոր Լուսավորչի հետ եկավ Հայաստան և թաղավորի ու նախարարների կողմից բնդունքելուց հետո վերապարձագի Հետարիբական է, որ դրանից հետո Գրիգոր Լուսավորչը ձեռնադրեց և Սերաստիա ուղարկեց իրինարքոս քահանային ու վանահոռը: Փոքր Հայքի բնակչությունը, ինչպես երեսում է, կապված էր Մեծ Հայքի

Հայրապետական աթոռին, զուցե նաև որոշ ժամանակ ենթակա էր նրան:

Դ դարում հայտնի էր Սեբաստիայի հվատաթիոս հայաղդի Եպիսկոպոսը, որի և Կեսարիայի աթոռի միջև հակառակություն կար, ուստի նա կարգավորէ եղավ: Սա խստակաց էր նաև էր վարում ու նրա հորինած վանական կուրգը տարածվեց Փոքր Հայքում և ամրող Փոքր Ասիայում: Մարտիրոսնիրի պատվին և լուծ պայտամունքը ար համարձակությունը հար Գանգրայի ժողովը, նրան զրկելով աղոռից, վուարենը նշանակեց Բարսեղ Կեսարացու Եղրորը՝ Պետրոսին (Պատմութիւն Հայ Կեսարիոյ. Ա. 291, է. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պահմությունից, Երևան, 1951):

47. Աթանագիննեսը Աղել է Սեբաստիայի Եպիսկոպոս Նրա կենսագրությունը տես՝ Ավգերյան, Հիակատար վարք սրբոց, Դ. 319:

48. Արածանիի ջրերում Հայոց արքոնիքի և բանակի մէկու վիյան տեսարանը Հովնարն վարդը մի րի: այս էլքը է նկարագրուած:

«Եր Երեսուն օրը լրացավ [Գրիգորը], երեցները, ամրող կզերը, ոզ ժողովրդին բերեցին Արածանի զետու, թագուարական հաղափան զուզի մոտ: Նրանք շուրջ Երեսունյոթ բյուր մարդ էին, նրանց թվում նաև Տըրդատ թագավորը, յագերի, վրաց և ազգանից Ռազավորներն ու մեծամեծները, կուսակալներ, նախարարներ և ցեղապեաներ, նրանց ամրուց դորքը, մեծաթիվ սպասարկություններ, կանայք, տղամարդիկ ու Երեխաններ:

Այնուհետև զետի մէջաւետում Երկարացրին վարագություններ ու ժամկություններ, որպեսզի թագուհիները և րոլոր կանայք ծածկույթների տակ իջնեն մկրտության ավազանը: [Տըրդատը] Հրամայեց անցյալում մկրտված մեծամեծներին ու նրանց կանանց սրբի և նրա հետ կողդ բահանաների մոտ բերվող մարդկանց սպասարկել, տղամարդիկ՝ տղամարդկանց, իսկ կանայք՝ կանանց:

Երր բոլորը գետի ափին հանեցին իրենց հանգերձները, նախ և առաջ թագավորը, առաջ մնացած մեծամեծները, [Գրիգորի] մատուն բսեց նրանց և յուրաքանչյուրին խուակներց:

Նա վերցրեց մյուսոն և յուղ և գետը թափեց խաչի նշանն անելով: Տեղի ունեցավ սրանքի հրաշք, գետը ևս զարձավ ու խաղաղվեց, հոսանքը կանգ առավ: [Գրիգորը] մարդկանց իշեցնում էր սրբացած չուրը, յուրաքանչյուրի վրա զնելով իր ձեռքերը և մկրտելով հանուն Հոր և Որդվո և Հոգվոյն Սրբո: Բոլոր մարդկանց նկատմամբ նույն բանն էին անում նաև մյուս բահանաները: Զրի մէշտեղում Երեաց խաչակ հրեղն սյուն: Յուրօք տեսնելով ջրերի սանձահարումը և հրեղն սյունը՝ ապշեցին և մեծ երեւուրի մեջ էին ու առավել ևս ամբապնդվեցին ուշագիտ ավատիք մեջ:

Զրից գորս զարով ամեն մեկը սրայձառ հանգերձներ հագափ: Նրանք մեծ ուրախությամբ սպատմում էին սկզբից կատարված Հրաշքների մասին և այն մասին ինչ չիր վրա տեղի ունեցավ: Այնուհետև բոլորը սրբերի ու բահանաների հետ Աստծուն փառարանելով մոռերով և աներով գնացին թագավանում կառուցված Եկեղեցին: Այնտեղ նրանք սպատագ մատու-

ցեցին և սուրբ Հաղորդություն ստացան։ Ամեն մեկը խնդրում էր սուրբ Հաղորդության խամանակից լինելու։ (Հուն. վարք 164—168):

49. «Հող երդոյ քառահայտությունը պատճաղիտական դրականության մեջ բացատրվում է որուես որոշ չափ հոգարամին (Մանանդյան, Բ. մ. Ա, 5:3—349): Փափստառ են հիշում է, որ «Պար թագավորը եկեղեցուց կորեց հոգը, որ Կէ իգոր մեծ բանաւուքեափ ժամանակ ավել էր Տրդատ թագավորը Հայոց ամրոց աշխարհում եկեղեցու սպասավորության ու աշխանգության համար որպէս իր հոգից ինոր կարում էր լուս արքականությունը և միաւն եր՝ հոգն էր թողնում։ Եվ հողերի հաշվով ամեն մի գյուղում երկու երկու հասավոր էր խոնանու մի բանական և մի սարկավագ, իսկ ոյլուներին ալտինըն քանանաների սարկավագների եղբայրներին որդիներին իւ նրանակության էր ենթարկում» (Փափստոս Բուշանդ, Գառանություն Հայոց, Երևան, 1968, և դար, լի-Ա):

Ազաթանգիզոսի վասոսի տեղեկություններից պարզվում է, որ Տրդատ թագավորը զյուղական եկեղեցիներին հատուկ հոգեր էր ավել՝ նրանց տնտեսապես ավանդություն համար։ Ավելի պարզ է և մահրամասն Աղաթանգեղոսը, որի համաձայն ավաններում ի թ-յոթ հոգարածին էր հատկացված, իսկ ագարակներում՝ չորս-չորս և բար աղնմ և ավաններում ավելի մեծ իմուզ եկեղեցու սպասավորներ էին նշանակվում։

Այս հողաբարձինները հատկացվում էին զյուղական հոգերությանությանը որպես «Բառոտակ» ժառանգուհան օգտագործման իրավունքով, սակայն գերազույն սեփականության իրավունքը պատկանէ է եկեղեցուն (Մանանդյան, Գիողակիցմբ հին Հայաստանում, 104—109): Հողատիրության աչձեր պայմանական էր, ուստի, եթե եկեղեցու գերագույն իշխանությունը որեւ ժումանակ մանր հողերականներ հանցավոր էր համարում, իրավունք ուներ հողաբարձինը ետ վերջներու և ուրիշներին տայս։

Այս հողաբարձինների վրա հոգեկանները հաճախ ժառանգարար էին իշխում, մի երեսություն, որ շատ բնորոշ էր Հայաստանի նախարարական կարգերին։ Աղբյուրները հաճախ են շեշտում, որ Տրդատ թագավորն ու Գրիգոր Լուսավորիչը Հայոց եկեղեցին դասել են «ազատաց տոհմի» կարգը, որի հիմքում բնկած էին ու միայն նրանց հողատիրական իրավունքները, այլև այն, որ ազատ էին շինականների վճարած հարկերից։ Այսպիսով՝ ըրիսւանությունը պետական կրոն դառնալուց հետո հաւ հոգեկանությունը դարձավ առանձին ինքնամփոփի դաս և ազահարկությամբ հավասար էր համարվում աղատների դասին։

50. Խոստանակ բար ունի նուկ Կորյունը. և ընդհանրապես սույն Հառավածքը Կորյունից է քաղված Կորյունի ձեռադրերում կա շատ ուստանա ձիք. իսկ բանասերներից ումանք կամեցել են կարդուլ շատ ուստանա (Կորին, Վարք Մաշտոցի, ուղղեալ և լուսաբանեալ ի. Գ. Ֆնդիկեանէ, Երրուսաղեմ, 1930, Ներածութիւն, էջ ֆթ)։ Հետարրբրական է Արիշանի առաջարկած ստուգաբանությունը, ին Ռոտաստակը պարսկերեն Ռոտատկ բառից ծագում, որն արար աշխարհազրագետների մոտ (օրինակ Յակուտ) օգտագործված է (Այրարատ, էջ 204 ա)։ Մ. Արեգյանը համեմատելով

Հայերեն Քաղաք ու Դաշտ (Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն տիկեղեռական, Պետերբուրգ, 1885, էջ 77, 282) արտահայտության հետ, որով կոչվել է Վաղարշապատ քաղաքը, հավանական է գտնում Խուստակ սարդարանությունը: Ըստ Հ. Աճառյանի ոռոտաստակ Նշանակում է գյուղավոր քաղաք, գավառի կամ նահանգի մայրաքաղաք (Հայերեն արմատական բառարան, ե, 1282—1283), ՏԵՇ՝ Կորին, 113—114, ծան. 96):

51. Աստաղ քաղաքը գտնվում էր Փոքր Հայքում Մեծ Հայքի սահմանի մոտ:

52. Կղարջը Գուգարաց բղեշխության զավառներից մեկն էր: Հայաստանի Հյուսիսային զավառներից էր և Տայրին դրացի:

53. Մասրութները կամ մազրութները պատկանում էին իրանական ցեղերին: Մասրիմաց Արշակունիների թագավորությունը գտնվում էր Կասպից ծովի ափին (Արքանքի արկելքում) և բնդգրկում էր Չորա (Ճորա) երկիրը, որի անունով էր կոչվում Ճորա պահակի լեռնանցքը:

54. Ամեղը քաղաք է Աղձնիք նահանգի հարավ-արևմտյան կողմում, Տիգրիսի ափին: Այժմ կոչվում է Դիարբեքիր:

55. Նոր Ծիրական երկիրը Թարսկահաւաք նահանգն է, որին Հայաստանում:

56. Մահրը-Տունը կամ Մահկերտ-տունը պատմական Հայաստանի ամենահարավային հայրածան էր, որը Արշակունյաց ժամանակաշրջանում մտնում էր Նոր Ծիրական բղեշխության կաղմում:

57. Այստեղ ցուց են արված Հայոց եկեղեցուն Ենթակա երկրների սահմանները, որոնց մեջ մտնում էին ոչ միայն բուն հայոց թագավորության մաս կազմող տասնհինգ նահանգները, այլև Վրաստանն ու Աղվանքը, Վաղարշապատում նստող Հայոց կաթողիկոսի աղեցությունը այնքան ուժեղ էր Վրաց ու աղվանից եկեղեցիների նկատմամբ, որ Զ դարի ասորի պատմիչ Զաքարիա Հռենորը այս ամբողջ մեկ եկեղեցի համարելով՝ նրա դրույն և նկատում Կիլինում նստող Հայոց կաթողիկոսին:

58. Ն. Աղոնցը իրավացիորեն նշում է, որ այս ցուցակը անաղարտ չէ հասել և մինչև Զ դարի վերջը կատարված բնագրային փոփոխությունների հետևանքով առօտեն է:

Հիշյալ տասներկու եպիսկոպոսների իշխանության տակ եղած գավառների կամ նահանգների անունները (բացի առաջին երկուսից) չեն հիշված Ագաթանգևոսի գրքում, սակայն Վարքի Հունարեն ու արարերեն թարգմանություններն ունեն համապատասխան նշումներ և, ի դեպ, բոլոր այս եպիսկոպոսություններն լլ արեմտան նահանգներում են: Մրանից ն. Աղոնցը եղրակացնում է, որ այստեղ արտահայտվում է Զ դարի վերջի քաղաքական իրազրությունը, երբ Հայաստանի արևմտյան նահանգները կայսրությանն էին միացված: Ն. Աղոնցը իր ձեռքի տակ ուներ միայն արարերեն Վարքը, իսկ Տունարենը, որ վերջերս հայտնի դարձավ բնականարար ավելի մոտ է այս բնագրի նախնական ձեին:

59. Առ Կորյունից քաղված հատված է, սակայն Կորյունի գրքում հրատակ է, արտահայտված. «Են ժամանակ անպայման սքանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխանք, ուր երկու հավասարակից-

ների ձեռքով հանկարծ միանգամից եկան հասան, հայաբարբառ և հայերենախոս դարձան Օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասի հետ և առաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական զնդով, Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ միասին (Կորին, 57): Կորյունի խոսքը Մովսեսի ու Պողոսի, այսինքն Հին ու Նոր Կոտակարանների հայերեն թարգմանվելու մասին է, իսկ Ազգաբանգեղոսը Գրիգոր Լուսավորչի հանդես գայն է համեմատում Մովսեսի ու Պողոսի հետ, սակայն վերջում հայերենախոս ու հայաբարբառ դառնալի մնում է անորոշ:

60. Գրիգոր Լուսավորչի որդիներ Արիստակեսի ու Վրթանեսի իրենց հոր հաջորդել արդեն հաստատումն էր նրանց տոնմի ժառանգական իրավունքների: Լուսավորչի տունը Վաղարշապատի կաթողիկոսական աթոռը մեկ ու կես զար իր ձեռքում պահեց՝ տալով վեց գահակալներ՝ Գրիգոր, Արիստակես, Վրթանես, Հուսիկ, Ներսես և Սահակ: Սահակ Պարթեր դարձավ արական վերջին ներկայացուցիչը: բանի որ նա ուներ մեկ դուստր՝ Սահականուց, որին կության ավեց Համագառպ Մամիկոնյանին:

Քրիստոնեության ընդունման ժամանակ քրմական բոլոր հողերը, ինչպես նաև մենանների ոսկին, արծաթի և նույնիսկ ստրուկները եկեղեցին արվեցին: Ալյարատառում Արտաշատը շրջակա դաստակերաններով: Դարանայաց զավառում Թորդանը իր դաստակերտներով, Անի ամրոցը, Եկեղեցաց զավառում երեք ու Թիլ ավանները և Դերձան զավառում Բաղաջանին գյուղը զարձան Եկեղեցական կալվածները: Բացի այս բոլորից Աշտիշատը ամրոց շրջակայրով (Տարոնի մի մասը) խլվեց Վահունի քրմական տոնմից և արվեց Լուսավորչի տանը: Ըստ Փափստոսի՝ վերջինիս էր տրված նաև Ամոռ գյուղը (Դպր. Զ, գլ. Զ), իսկ Հովհաննես Դրաստանակերտցու մկայությամբ Կոտաչի Արամոնի գյուղը Տրդատ թագավորը հատուկ կալվածագրով (Եեկտար) տվել էր Գրիգոր Լուսավորչին (Պատմութին, Երուսաղէմ, 1867, գլ. ԻՊ), Բագրենանդ զավառում Բազավանն իր շրջակայրով նույնպես Լուսավորչի տան տիրութներից էր (Աշուաւ, 308):

Լուսավորչի տունը մեծ հեղինակություն ուներ Հայոց թագավորության մեջ, իսկ Եկեղեցական հարցերում անվիճելի էր նրա առաջնությունը: Նիկոհայի տիեզերական ժողովին (325) մասնակցեց Արիստակեսը և ժողովի արձանագրության մեջ հիշվում է որպես եպիսկոպոս Մեծ Հայքի (Տաշյան, 149): Հոր մահվանից մինչև 333 թ. նստեց կաթողիկոսական աթոռին՝ խստությամբ հանդիմանելով հնթանոսարարության նախարարներին, որոնցից մեկը՝ Սոփիքի Ալյարատայոս իշխանը նրան սպանեց: Արիստակեսին հաջորդեց եղբայր՝ Վրթանեսը (333—341), որը Խոսրով Կոտակ թագավորի մահվանից հետո օգնեց զահաժառանգ Տիրանին թագավոր դառնալու: Վրթանեսի որդի Հուսիկ կաթողիկոսը (341—347)՝ նախատելով Տիրան արքային անկարգ վարքի համար, բրածեծ սպանիցեց: Հայոց արքունիքի և Լուսավորչի հզորացած տան միջև հակասությունները շարունակվեցին, և Հուսիկի որդիները՝ Աթանագինեսն ու Պատր շկամեցան իրենց հոր բարձր պաշտոնն ստանձնել, գերադասելով մեալ գինորական ծառայության մեջ, Զինվո-

բական էր նաև Աթանագինեսի որդի Ներսնաը, որին սակայն Արշակ գավորն ստիպեց օծվել կաթողիկոս (353—373): Հայոց արքունիքի և Հուսավորչի տան միջին հակասություններն առավել են սրբացին, և Արշակունիքի նրա փոխարինն կաթողիկոս նշանակեց Զունակին, սակայն շաւառվ ներսնաը կրկին և բարձրացավ: Պատրիարքությունը որոք նորից սրվեցիս հակառակ թյուններն արքայի ու կաթողիկոսի միջև, և վերջինս Ռունավորվեց: Դրանից հետո կաթողիկոսական գանձ արվեց Ազրիանոսի տան անդամներին, որոնք արքունիքին և նմարկվում էին:

Հուսավորչի տան վերջին ներկայացուցիչ Սահակ Պարիքեր (387—439 ընդմիջումներով) անմահացավ նրանով, որ Մեսրոպ Մաշտոցի մահացեց հայ գիրն ու զրականությունը: Երբա մահամբ Հուսավորչի տանը պատմության առշարժելից դուրս եկավ: Հաղար Փարպեցու վրա՝ թյան համաձայն Սահակն իր աղջկա որդիներին՝ Վարդանին ու Կարայրներին, որպես ժառանգություն, ավեց իր ունեցած զյուղերն ու ագարակները (Հաղար Փարպեցի, 37):

61. Աշոցքը Այրարատ նահանգի գավառներից էր և գտնվում էր Հյուսիսում: Համապատասխանում է արդի Հայուսանի Գուկասյանի շրջանին: Աշոցքը ուներ իր տեղական նախարարական տ մեր:

62. Տրդատի ու Գրիգորի Հռոմ ճանապարհվելու տարրեր ձեռվ և նկարագրում հունարեն Վարքը, բայ որի կայսը ինքը նամակ է գրում Հայոց թագավորին՝ Հռավիրելով նրան՝ Գրիգոր Հուսավորչին:

«Մեծ Հռոմում Կոստանդին կայսը լսելով Տրդատ թագավորի հետ կատարվածի, վկա Գրիգորի կործած հրաշքների մասին, վութաց դեսպաններ ուղարկել երկա բան ձեռք բերելու նկատառումով, այն է՝ իր մոտ բնդունելու վկային և քահանայապեսին, ապա Հայոց թագավորին դրզելու դաշինք կնքել և բարեկամություն հա տառել» (Հունարեն Վարք, 174):

Հայ Քարշունի Վարքի Տրդատն ու Գրիգորը գնացին ոչ թե Հռոմ, այլ Կոստանդնուպոլիս, որի նրանց բնդունեց Կոստանդինոս կայսը:

M. van Esbroeck, Un nouveau témoignage du livre d'Agathange, REA, VIII, Paris, 1971, p. 88—89.

63. Ազրիանոսը Հնիանոս քրմի զավակ էր, որին Գրիգոր Հուսավորիչը կրթեց և ապա Խոյիսկոպոս Ճեռնապեց Արաւանիի կողմերում: Հայոց առաջին կաթողիկոսը նրան արքունական դռան վերակացու, այսինքն եպիսկոպոս էր կարգել: Աղամանգեղոսի խոսքերից հետևում է, որ Ազրիանոսը սկզբում եպիսկոպոսական աթոռ (թեմ) չի ունեցել և մնացել է արքունիքում որպես կաթողիկոսական տեղապահ: Ինչ վերաբերում է Մանագերտում իշխելուն, ապա իրոք Ազրիանոսը սկզբում չի ունեցել այդ քաղաքը և ինչպես վկայում է Փավստոսը (Դպր. 9, գլ. Պ): Մանավազյան նախարարների կուտորվելուց հետո է, որ նա ստացավ Մանավազկերտ քաղաքը «ամենայն սահմանօքն և գաւառական հանդերձ, որ շուրջ զնոքք էր, որ կայ ի կողմանս գետոյն եփրատաւ» իրեն ժառանգական տիրույթ:

Աղբանոսի տունը նախքան Մանազկերտն ու շրջակային ստանալը որոշ տիրույներ ուներ Տարոնի կողմերում և պատճական չեր որ նա և պիտի պոս ձևանագրվեց Եփրաւ (Արածանի) գետի կողմերում (Ե. Վրդ. Հար-Մինայանց, Հայոց Եկեղեցու յարարերութիւնները Ասորւց Եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 37—39):

64. Արուաստան. Հունարեն կոչվում էր Միզդոնիա, կննուրոնն էր Մը-քին քարարը. Արոշ ժամանակ եղել է Մեծ Հայքի թագավորության կազմութիւններին. Հայաստանը բառ Այսարհացուցի. էջ 40):

Յն Վերչարանում Հեղինակն իրեն համարում է բոլոր զետքերի ականատես վկա: Հունարեն Վարքի մեջ նույնպես Հեղինակն իրեն համարում է ականատես, բայց ավելացնում, որ մի մասը ուրիշներից է լսել. «Ի՞ն աշխարհու շարադրանքը ճշմարիտ է, բանդի ես զետքերի մի մասի մասնակիցն եմ և ականատեսոր: Մյուսների մասին լսել եմ զատահելի մարդկանցից: [Նարարարացի]՝ որպեսոր մեզանից նետո եկողները անզի ունեցած բարի և առարինի գործերով սովորեն բարեկացառությունը, որպեսոր մենք կենանի Աստծոն հաւելի լինենք: Քանզի նրան է փառքն ու իշխանությունը հավիայանս հավիանից ամեն» (Հունարեն Վարք. 199):

Սակայն Ազաթանգեղոսի վերջարանը շատ բան է կորցնում իր պատճական արժեքից, երբ նկատի ենք ունենում, որ Կորյունից է քաղված, «Այդ ու թե հին գրուցներից տեղեկանալով և մատենալու հետո կարգեցինք,

մենք հենց ականատես նպանք նրանց կերպարաններին և ընթերակա՝ [նրանց] լողերը գործերին և լսով՝ նրանց շնորհապատում ուսման, և նրանց արրանցակն՝ բառ ավետարանական հրամանների: Ոչ թե սուսապատում ձարտարախոս լինելով... (Կորին, 199):

ԱՆՎԱՆԱՑԱՆԻ

Ա

- Աբրահամ 71, 76, 101
- Ագաթանգեղոս 21, 27, 31
- Ազապէս 140
- Ադամ 26
- Աթանագինես 130, 137
- Ալանաց դռներ 32, 139
- Աղրիանոս 140, 149
- Աղձնիք 125
- Աղվանք, Աղվանից գորք, աղվաններ 32
- Ամանորի աստված 137
- Այիդ 139
- Այրարատ, Այրարատյան գավառ, Այրարատյան նահանգ 33, 35, 63, 71, 125, 127, 132, 139, 149, 151
- Անակ 34, 63
- Անահիտ 39, 40—42, 45, 64, 120, 123
- Անգեղ տուն 125, 149
- Անի 123
- Անտիոքէս 140
- Աշիւն 116, 117, 124, 127, 132, 133, 136
- Աշոցք, Աշոցաց գավառ 63, 145
- Աշտիշատ 130
- Ասորեստան, Ասորիք 32, 33, 63, 64, 87, 139, 149
- Աստղիկ 130
- Ատրպատական 87, 139
- Արարների երկիր, արարները կողմեր 86, 87
- Արարների գորք 33
- Արամազդ 41, 45, 64, 123, 124
- Արարատյան—տես՝ Այրարատյան
- Արեգ դուռն Վաղարշապատի 83
- Արիստակէս 145—147, 149, 152
- Արծրունիք 126

Արշակունի 27, 33, 66, 122, 149

Արսուկես 140

Արուաստան 149

Արտաշատ 28, 63, 84, 90, 91, 120, 139

Արտաշատի կամուրջ 36

Արտաշիր, որդի Սասանի 31, 32

Արտավազզ սպարապէտ 145

Արտավան՝ որդի Վաղարշի 31, 32

Արտավան սպարապէտ 3

Արտիթէս 140

Ափրոդիտես 130

Բ

Բարելացիներ 80, 90

Բազայառիճ 124

Բազավան 132

Բաւեն 140

Բասոս 140

Բարշամինա 122

Գ

Գաղիացիներ, Գաղիացիների երկիր 147

Գայանե 68—70, 75, 79, 81, 83, 86—89, 108, 114, 117

Գայլ գետ 39, 123

Գոթեր 37

Գոթերի թազավոր 39

Գուգարաց երկիր 126

Գրիգոր 29—31, 37, 40, 41, 43, 45, 49, 59—62, 66, 67, 90—93, 97, 98, 105—107, 114—121, 123—132, 136—139, 143—147, 149—152

Դ

Դաղմատիա 149

Դանիել 80

Դավիթ 21, 82, 83, 154

Դատ 145

Դարանաղյաց գավառ 122, 146

Դեբովրա 81

Դերջան 124

Դիոկեստիանոս 67, 72, 148

Դիվան գրշի Որմիզդի 120

Դիցավան—տևո՛ Բագավան

Ե

Երրայեցիներ, Երրայական բանակ 101, 143

Եկեղյաց գավառ 39, 123

Եղիա 141

Ենովք 47

Երակամույն 120

Երասի 35

Երեկ ավան, Երիտա գյուղ 39, 123

Երուսաղեմ 85

Եվա 49

Եվսերիոս Էպիսկոպոս 140

Եվսերիոս արքեպիսկոպոս 150

Եվտաղիոս 140

Եփրատ 86, 87, 130, 133, 136, 140, 141

Զ

Զարավանդ 126

Զես Արամաղդի 123

Թ

Թարորական լեռ 142

Թիլ ավան 123

Թորգոմ, Թորգոմյան աղք. Թորգոմյան տուն 30, 119, 126

Թորդան 122

Ի

Իսահակ 77

Իսրայել 69

Իտալիա 149

Լ

Լիկիանես կոմս 36, 38

Լիկիանոս թագավոր 148

Լիիներ 32

Խ

Խաղիւաղ քաղաք 34

Խաղտյաց Երկիր, Խաղտյաց կողմեր 123, 139

Խոսրով 28, 31—34, 36, 63

Խոսրովիզուխտ 90, 91, 116, 17, 124, 127, 132, 133, 136

Խոսրվիրապ 64, 67, 90, 96, 99

Ծ

Ծալդեից Երկիր 126

Ծոփաց Երկիր 126

Կ

Կայեն 49

Կապաղովկիա, Կապուտկացոց կողմեր 36, 126

Կասսկեր 32

Կասպից սահմաններ 139

Կարմիր ծռք 79

Կևսարիա, Կևսարացիների քաղաք 36, 126, 128, 129, 133, 145

Կիրակոս 140

Կղարշը 139

Կոկտանդին 147

Կոստանդիանոս 29, 147, 149, 150, 152

Կովկաս 121

Կորդիաց Երկիր, Կորդոր 126, 139

Հայաստան. Հայաստան աշխարհ:

Հայոց աշխարհ: Հայոց Երկիր:

Հայոց կողմեր. Հայոց սահմաններ

28, 30, 33, 36, 39, 44,

45, 63, 64, 66, 71, 73, 74,

89, 99, 102, 119, 121, 122,

125, 126, 129, 130, 132, 138,

139, 143—146, 151, 152

Հայոց արքա. Հայոց թագավոր

31—33, 35, 57, 71, 123, 150

Հայոց թագավորություն 34, 139

Հայոց տիկնություն 78

Հայել 81

Հեր 126

Հիսուս, Հիսուս Քրիստոս 50—52,
55, 56, 63, 69, 70, 79, 84,
100, 104, 113, 121, 129, 135,
140

Հնդկաց աշխարհ 25

Հնկեր 32, 64

Հոռի ամիս 89

Հովհաննես Մկրտիչ 137, 141

Հովհաննես Եպիսկոպոս 140

Հովհանն 80

Հոփսիմե 68—70, 75, 78—83,
86—89, 94, 108, 114, 116,
117

Հռոմ, Հռոմայեցիսերի աշխարհ:
Հռոմայեցիների երկիր 27, 29,
67, 87, 89, 149

Հռուներ, Հռունաց աշխարհ, Հռու-
նաց Երկիր, Հռունաց սահման,
Հռունաց կողմէր 29, 36, 39,
65, 72, 73, 81, 87, 127, 149

Հռունաց զորք 64

Հռունաց թագավոր 37, 41

Զ

Զիթենյաց լեռ 142

Ղ

Ղետոնդիոս 127, 128, 129, 133

Ճ

Ճիղբեր 32

Ճորա պատճակ 32

Մ

Մածաք 126

Մահքը-Տուն, Մահքը-Տան իշ-
խան 139

Մաղիսաղության տան իշխան,
Մաղիսաղության տուն 126, 149

Մանյա այրք 146

Մասիս լեռ 117

Մասքութներ 139, 149

Մարաց աշխարհ 139

Մարդկանության իշխան, իշխա-
նություն 125

Մարիամ 121

Մարկիանոս 148

Մարսենտիոս 148

Մեծ Հայք 31, 39, 66, 72, 74,
127, 139, 133, 145, 149

Մեծամորի կամուրջ 36, 88

Մետրոպոլիտ 133

Միհր 124

Մծրին 139

Մոկաց Երկիր 126

Մոկաց իշխան 149

Մովսես 101, 143, 154

Մովսես Կողհակոպոս 140

Ն

Նորուգուդոնոսոր 90

Նոանե 123

Նովաստարդ 137

Նորիա 152

Նոր 76, 77

Նորադիր, տես՝ Վաղարշա-
ան.

Նոր Շիրական երկիր, Նոր Շի-
րական կողմէր 139, 149

Նորատ 133

Շ

Շահապիվա՛ 149

Շուշան 80

Ո

Ողիմոյի ական խաղեր 86

Ոսկեծին, Ոսկեատ, Ոսկեմալը
ոիցուհի 130

Որմէդդ 120

Պ

Պահապահ, Պահապահների աշխարհ
35

Պարբե, Պարբեներ 35

Պարթևաց թագավորություն,
 Փարթևաց կողմեր, պարթևների
 տերություն 31, 35, 36, 66, 87
Պարսից արքա, Պարսից թագա-
 փոր 33, 34, 36, 66
Պարսից զռբք 31, 39, 64
Պարսից թագավորություն, Պար-
 սից կողմեր, Պարսից տերու-
 թյուն 31, 32, 33, 39, 63
Պողոս 94, 142, 143

Բ

Ռեբեկա 76
Ռշտոնյաց Երկիր 126
Ռշտոնյաց իշխան 126, 149
Ռոտաստակ Ալյարատ դավառը
 139

Ս

Սահմի ամիս 132
Սառու 77
Սասան 31
Սատաղացիների քաղաք 139
Սերաստիա 129
Սլունյաց Երկիր 126
Սյունյաց երկիր իշխան 149
Սպանիս 147
Սոգոսկապետության իշխան 149
Ս աղետ, սողարս պետության
 իշխան 125, 149
Ստարացի 32
Ստուր զավառ 31
Սուրբն 36

Վ

Վահագն, Վահագնի սենյակ 64,
 130
Վահեգանյան մեհյան 130
Վաղարշ 31
Վաղարշապատ 33, 35, 63, 71—
 73, 91, 120, 125, 127, 132,
 139, 149, 151
Վաղարշապատի կամուրջ 38

Վանատուր 137
Վիշապաքաղ—տես՝ Վահագն
Վրաց զռբք 32
Վրթանիս 144, 145

Տ

առ 63, 145
Տարվաս 130
Տարոնի երկիր 130
Տափերակաւ կամուրջ 36
Տիբերական ծով 142
Տիգրս 32
Տիբր 129
Տիբրիս 140
Տրդատ 27—29, 31, 36—39, 57,
 62—64, 66, 74, 78, 80,
 116, 117, 122, 124, 126,
 127, 132, 133, 135, 138, 144,
 146, 149, 150, 152, 153

Ո

Ուտիք գայուռ 34
Ուտիացոց Երկիր 126

Փ

Փայտակարան 139
Փառական Շևակաչ 89
Փղշուցիներ 77
Փասից զռունք 36

Ք

Քանանցիներ 76
Քարքի լեռ 130
Քրիստոս 26, 28—30, 37, 41—
 43, 76, 78, 81, 94, 95, 99,
 102, 104—106, 109—113, 116,
 117, 119, 120, 123—125, 127,
 129—133, 135, 137—139, 141,
 143, 150, 153, 154
Քրիստոնյաների աղանդը 87
Քուշանաց կողմեր 32

Օ

Օռա նախարար 91
Օվկիանոս 147

**ԱԴԱՐԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՅ Ագատանցոս, ИСТОРИЯ АР-
ՄЕНИИ.** Издательство «Советская Армия», ул. Теряна, 91, Ереван, 1977;
Խմբագիր՝ Ա. Գ. Սարգսյան, նկարիչ՝ և գեղ. խմբագիր՝ Ա.Բ. Վ. Կասպար-
յան, տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Խիմոնյան, վերստուգող սրբագրիչ՝ Մ. Ա.
Մկրտչյան: Հանձնված է շարվածքի 15/XI 1976 թ.: Ստորագրված է տպա-
դրության 18/IV 1977 թ.: Թուղթ № 1, 84×108^{1/32}, տպագր. 6,0 մամ.=
10,08 դրամ. մամ.: Պատմվեր 1545: Տպագրանակ՝ 20000, Գինը՝ 1 լ. 14 կ.:
«Սովետական գրող» հրատարակություն, Երևան—9, Տերյան—91:
ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակությունների, պոլիգրաֆիայի և
գրքի սովետի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալա-
վերդյան 65:

Типография № 1, Госкомитета Совета Министров Арм. ССР по
делам издательств, полиграфии и книжной торговли,
Ереван, ул. Алавердяна, 65.